Վարդան Դանիելյան

# ՉՖԻԼՏՐԱԾ

39|34

2024

# ՁՖԻԼՏՐԱԾ
# ՍԵԿ

*Միքելանջելոյի ամենալավ ստեղծագործությունը դիր նայի, կիհանաս, բան, բայց դու չես պարի, չես նայի արձանին կամ նկարին ու պարես: Բայց որ երաժշտություն ա լինում, պարում ես, Գրիշ ջան: (Թաթա Սիմոնյան)*

«Սաղ մի ֆլեշկի մեջ էր, բայց չհասցրինք վերցնել»,- ասացին նույն բանը, մի քանի բարեկամ, ովքեր եկել էին նույն տարածքից, հարկադրված:

Բլագո ամբողջ ընտանիքի համար, գրված էր մեքենայի վրա, առանց չակերտների:

«Վայլդբերիզում» մի տղամարդ պլիտա էր զակազ տվել,
Միացրել էր հոսանքին, որ փորձի:
Գրկել, տաքանում էր:

Պրանկաֆոնիա

Էլ ջի բի թի
Էլ քաչալ շուն:

Մեջբերումներ և դուրսբերումներ

Հեղինակներ և պարեղանակներ

Հեղինակներ և պարեկներ

Պարտվում էր Կարլսենը
Նորից, կրկին
Հերթական հնդիկին:

Մենք որ սիրում ենք խորոված ի հոտը
Բայց ոչ համը:

«Ով է հորինել այս կանոնները, ատում եմ կանոնները»,- ռուսերեն ասեց մի ռելոկանտ երեխա շախմատի դասին:

Ռընե Դեկանտ
Փիլիսոմելյե կամ Փիլիսոփելյե

*Գիտեք «եթե» չկա, «եթե»-ն ցանում էս չի աճում, Կարպիս ջան, էս ի՞նչ ենք է խոսում: (Էդուարդ Շարմազանով)*

Այս վերքի երևացող մասը

Խոսքի և ձեռնաշարժության վարպետներ

Տեկտոնիկ ձեռնաշարժեր

«Ռուբենն ու մամուլյան» ֆիլմ

«Էդ նրանից ա որ իմ ինքնաացենկեն ցածր ա»,- արագ ասեց Կայծը:

- «Այս կյանքից հոգնած, ողջ աշխարհին է քնած» արտահայտության մեջ իմացաբանական սխալ կա: Հավանաբար խոսքը միայն մի կիսագնդի մասին է: Ի՞նչ կասեք:
- Էս թեմայով ոչինչ, բայց ես իրեն հարգող մարդ գիտեի, ով սակայն ուրիշներին չէր հարգում:

Մտամուդ

*Տակ բիլը ուժէ նեսկոլկո ռազ վ իստորիի. զադումաննոե իդեալնո, վազվիշեննո՝ գռուբելո, օվեշչեստվլյալոս: Տակ Գրեցիյա ստալա Ռիմըմ, տակ ռուսսկոե պրոսվիշչենիե ստալո ռուսսկոյ ռեվոլյուցիեյ:*
*(Բորիս Պաստերնակ, «Դոկտոր Ժիվագո»)*

Արցախը Հայաստանում է:
Եվ վերջ:

Պրեզերվուար
Ռեզերվատիվ

Աժ ամբիոնից հեղինակի կողմից կարդացվեց բանաստեղծություն գիծ հայտարարություն, որը նաև բնորոշվեց որպես դառնագիր ու հականերբող:

Երկու օր ա
Երկու ագռավ
Կանգնում են
Բալկոնին:

Մենք տեսել ենք
Տախտակների կոտրվելը
Մեր առջևի
Ու ետևի
Եվ ստիպված
Մնացել ենք տեղում:

Գրգռված ճեղքերի կիրճը

Համ և բուրգեր

Յանրահայտնի

Ավանդներ և դարավանդներ

Որովհետև փոսի կեսը հայեր են

Չարը հաղթեց բարուն
Եվ եկավ գարուն:

Ստեղծագործակալ

*Ժան-Պիեր Ժանկոլա ապրեդելիլ «նե պրեդուսմոտրեննոյե գրամատտիկամի իզմերենիե», եդվա լի նի օնտոլոգիչեսկի պրիսուշչեե ֆրանցուզսկոմու կինո, կակ «նեապրիդիյոննո սավրեմեննոյե» իլի «ուսլովնը նաստոյաշչեե»: «Վ նյոմ սաբլուդենի լիշ վնեշնիե պրիզնակի սավրեմեննոստի». Սաատվետստվեննո ի սոցիալնայա պրիրոդա գերոյա տակ ժե ուսլովնա, եմու, պա իզյաշնեյ ֆորմուլե Ժանկոլա՝ սվոյստվեննա «նեկոտորայա ժիզնեննոսծ»: Ինաչե գավարյա, սոցիալնիյ գեռոյ նեսկոլկո ժիվ - նո նե բոլեե տավո: (Միխայիլ Տրոֆիմենկով)*

Քանզի սիրո ոլորտում
Չունենք շահ և շահառու:

Կայծը
Խմում էր, որ մոռանար,
Բայց շատ էր խմում
Ու մոռանում էր,
Թե ինչը կոնկրետ
Պիտի մոռանար:

Մարքս & Էնգելս
Էնգելս & Սպենսեր

«Գիպսի Միշիկն ա»,- ասեց Արմանը,
Ցույց տալով Ստեփանակերտում մենակ մնացած մի մարդու,
Ով ձեռքով էր անում անցնող միրատվորեցներին,
Իրենից հարմար խոսքեր պոկել փորձող
Հերթական ադրբեջանցու
Նկարած վիդեոյում:

Միկրոն և Մակրոնը

Մարկետից մինի
Էլի գնեցինք գինի:

Փաստահենակ

«Ես այդ մարմինը չեմ, որ զբաղվում ա դրանով, իմ պռատատիկը գաղթել ա Վանից»,- ասեց իշխող ուժի ավագանու մասնակիցը:

Պռատատիկներ և պռեգոմեշներ

Վատառողջացել եմ

Ինչը կիաղթի կյանքում հերոսին,
Եթե չլինեն Վայլդը և բերրին:

«Մեդիում, լարջ, ջամբո, արաբիկա»՝ գրված էր շատ փոքր բուդկի վրա:

Արցախուրդ

Բազմաբնակալիր

Հայտարարության տեքստը ճղել էին,
Մնացել էր միայն
«Հարցերի դեպքում զանգահարել»-ը
Ու «Վիվասել»-ի համարը:

Վերնագրերի մեղմացման գործակալություն

- Ամբողջ օրը գլխիս մեջ էս:
- Ես էլ ասեմ խի՞ ա կողքս դատարկություն:

Մի մարդ, ով փակում ա կյանքի լավ օրերի օդը, վրան գրում թիվ ու օր: Ու պադվալում լիքը բանկեք են՝ տարբեր չափի, տարբեր թվերի:

Պարկետաց դասեր

«Արա, դե նենց ա, որ տրամները հարյուրի վրա ա աշխատում»,
Ասեց Կայծը տելեգրամով:

- Իջնող կա՞,- հարցրեց չաղ վարորդը:
- Կանգարունեք,- ասեցին հնդիկները:
- Իջնող չկա՞,- քիչ հետո էլի հարցրեց վարորդը:
- Կանգարունեք,- ասեցին հնդիկները:
- Իջնում են,- վերահեռարձակեց մի կին:
- Բա ասեք, այ ջիմմիներ,- ժպտաց ու կանգնեց դեղին հիսունյոթի վարորդը երկու կանգառների արանքում:

Ծանոթ մի տղամարդ
Մահացել էր տարիներ առաջ
Կոնտակտներում մնացել էր բայց:
Մի օր նրա անունը հայտնվեց Տելեգրամում:
Անծանոթ ջահել տղա էր
Սթորի էր դրել անհոգ:

Տազըլ՝ տազիկներով փազըլ:

Հայրենիք հզոր, բայց մտամոլոր:

«Հիմա, նմանատիպ մի բան էլ մեզ հետ պատահեց»,- ասեց լավ դզված ու լավ քսված մի կին, պլյուս մինուս իր նման կանանց, կաֆեում, սալֆետկով բերանը մաքրելու ընթացքում:

«Յուրի ձյա, ավել էիր տվել»,- ասեց մի կին:
«Ես ճիշտ էի տվել, դու ինձ խառնեցիր»,- պատասխանեց վարորդը
Իջած, հետ եկած ու նորից գնալ պատրաստվող կնոջը,
Ում դրանից առաջ ետ էր կանչել սիգնալով ու դժգոհ հայացքով:

Օրբելու գետնանցումից խունկի հոտ էր գալիս:
Զազին էլ չի իջնում մետրո:

Հանգած հիրաբուխները
Ու մարած աբլիգացիաները:

Կոնցեպտուալ կոնցերտներ

Լերկապնակ

Մենք,
Որ կանգնել ենք գետնի տակ ու նստել ենք գետնի տակ՝
Դեռ առանձնապես չենք ուզում պառկել գետնի տակ:
Էդ պատճառով էլ
Շարժասանդուղքից օգտվելիս
Լինենք ուշադիր:

Շախմատ էին խաղում երկու ռելոկանտ երեխա՝
Գորդեյը ու Միրոսլավան:

Չաբաբուն

Թախծախում

Թախծաքուն

*Իրականում ես չեմ հասկանում տարվող քաղաքականությունը, ու ես կարծում եմ, որ միայն ես չեմ, որ չեմ հասկանում տարվող քաղաքականությունը: (Քաղաքագետ)*

Դուք,
Որ բացառության կարգով
Բացառեցիք բոլորին
Ձեզնից բացի:

Մետյու Պերրին մահացավ, ընկերներ:

«Հավաստիացնում եմ, որ մենք իրենց ատում ենք միանգամայն անվճար»,- լսվեց յութուբից:

Չհասկացման անխուսափելիությունը անխուսափելի դարձավ:

«Ծառայության մեջ գիտե՞ս որ օրերն էին լավը՝ որոնք վատը չէին»,- ասեց Արմենը:

«Արմատապես ապագայում հարուստների մեծ մասը զբաղվելու է ժամանակ և տարածություն գնելով»,- ասաց Երևան դարձած մի էրեբունցի:

*Ես ոչ թե լռել եմ, այլ ստիպել եմ ինձ լռել, և հավատացեք, որ շատ հաճախ լռելը ավելի դժվար է, քան խոսելը: (Նախկին պաշտոնյա)*

Մասկ & Էնգելս

«Դրանք վարկեր չեն, դրամաշնորհներ են,
Տրանսֆերներ են, էդպես են ասում»,
Ղնչեց Աժ ամբիոնից,
ՂՂ ավարտից երկու վարկյան առաջ,
Քսանյոթ կետ տաս կետ իննսունիննին:

Եկեղեցիները էլի քանդում են:

Մենք,
Որ ծննդյան վկայականը
Ուզում ենք փոխել կադաստրի թղթով:

Դուռ ու թվանք

Դրախտային քարտեզ

Թեզիսների գենեզիսը

Մի կին լիներ ստեղծասեր
Փողերը էստեղ ծախսեր:

Արևելք, արևմուտք
Չորրորդ պադյեզդ
Երրորդ մուտք:

Էքստրաօրդինարդի
Տարօրինակ նարդի

Ասա ով է քո փրադյուսըրը
Եվ ես կլինեմ քոփրըդյուսըրը:

Դրանք լավ գրական հյութ են կինոյի համար:

*Սերս երամ-երամ*
*Սիրտս տանի: (Իվետա Մուկուչյան)*

«Գնա ու գրի»,
Ասացի մի գրագրի:

Ոլորտու՝ անվնաս ոլորտ:

մթնոլորտու

Համասցենարիստները
Եվ Համասի սցենարիստները

Կյանքներս տրանսպորտում անցավ
Քանի սերունդ ճամփու դրինք
Մենք հլը մեջն ենք:

Մենք թշնամուն չենք ցանկանա
Որ Բաքվում չայ խմի
Բայց թշնամին հենց Բաքվում ա
Ու չայ ա խմում:

Թվային աբիժնիկները

«Ախպերս, ինձ ո՞վ պտի ճամփու դնի»,
Ասեց «Sony Z1»-ով կինոկենտրոնի օպերատորը
2010 թվին, «Ծիրանում»՝ ոչ սուպերմարկետ:
Նրան տեսա էս վերջերս «Սիթիում»՝ սուպերմարկետ,
Ուրախ առևտուր էր անում, չճանաչեց
Ու ես էդպես էլ չտվի հարցը
Որը ինձ տանջում էր ու կշարունակի տանջել.
«Ախպերս, քեզ էդ օրը ճամփու դնող եղա՞վ»:

Կեղծուալ աղջիկ

Մենք, որ դարձել ենք
Ծորերի նկարներ
Բնության ու քաղաքի ֆոնին:

Մենք տեսել ենք ուրիշներին հաճույք ստանալուց և տառապելուց, առաջինը՝ առավելապես հեռակա:

*Թատրոնը պատասխաններ չի տալիս, այն հարցեր է կախում օդում: Պատասխանը պետք է գտնի հանդիսատեսը:*
*(Պահանջված դերասան)*

«Առաքելությունը բացված է»,
Ասաց եվրոպացու տեսքով եվրոպացի պաշտոնյան,
Ու ավելացրեց իր լեզվով. «Խաղաղություն տարածաշրջանին»:

«Ինքնությունը ապրելակերպ է»,- կարդացի սխալմամբ:

«Մահանալու մշտաճոճ սպառնալիքի ներքո»,- ասեց բանախոսը:

«Գյոթըլո, գյոթըլո»,- երգեց էր մի ծանոթ բիձա, 2014-ին:
«Եվրատեսիլի երգն ա, Վարդան ջան»,- ասեց ինձ,
Աչքով տվեց ու շարունակեց լռվելը տեղում:

Վերջերս մի հոգի էլ հեռացավ
Ում շատ էինք տեսել հաճույք ստանալիս ու պատճառելիս
Իհարկե՝ հեռակա միայն:
Սկզբում կասետների վրա,
Հետո՝ վիսիդիների ու դիվիդիների,
Հետո արդեն օնլայն տեսանք:
Ու դեռ էլի կտեսնենք ու կտեսնեն:
Ողորմի:

*Պրիմերնո պերվոյե չտո յա ուզնալ պրո ֆեմինիզմ վ Ռասսիի, էտը տո չտո տրադիցիա վսյո վրեմյա պրիրիվաետսա, ի կաժդըմու նովոմու պակալենիյու պրիխոդիտսա նաչինաձ ֆակտիչեսկի զանըվը:*
*(Մարիա Կուվշինովա)*

Մենք, որ առաջ ապրեցնում էլ էինք՝
Հիմա միայն ապրում ենք:
Առաջ մոնտաժում էինք մեր ապրածը՝
Հիմա կյանքի Ադոբը էքսփայըրդ ա եղել:

«Արա մի խաբի, քո կերած մածունի չափ ժաժ եմ տվել»,- ասել էր Կայծի նեյբըրը մյուս նեյբըրի տղուն: Նրանք երկուսն էլ վաղուց արդեն արտագաղթել են:

*Արա համ Հիսուսն ա ասել, համ Շապակլյակը, խառըշիմի ձեւամի բլիժե կ Բոգու նի ստանեշ, ինչ տոչնի ա: (Կայծ, Տելեգրամի աուդիո)*

Գուրոշու հոտ

Վարձապետ

«Հայաստանի թվային ներկան»,- ասաց վարողը:

Անարհեստ ինտելեկտն ու արհեստական ինտելեկտուալները:

Բանան թուզ, բանան թուզ
Վալետ, դամա, կառոլ, տուզ:

*Այ նո իթս թրու՝ իթս օլ բիքոզ ըֆ յու:*
*(Բիթլզ, «Նաու ընդ դեն»)*

Մակիչը մահացավ, Բարոյանը մահացավ,
Ռինգո Գարեգինյանը մահացավ անցած օգոստոսին
Ու չլսեց իր պաշտած «Բիթլզ»-ի
Վերջին երգը:

Ես չեմ սիրում վիրավորել
Ու չեմ սիրում սուտ խոսել:
Դրա համար, դրա համար
Ինձ մի խոսեցրեք
Ինձ մի խոսացրեք:

«Վետե»-ի շենքի դեմը կանգնած էինք,
Հինգերորդ կորպուսի դեմն էինք կանգնած:
«Երեկ Հարիսոնն ա մահացել»,
Ասեց մեզանից մեկը
Մյուսներս ձեն չհանեցինք
Քանի որ գիտեինք արդեն:
Երկուհազարմեկն էր,
Լռեցինք,
Մոտիկացանք:

Բլոկնոտ, այ բլոկնոտ
Փլիզ, բլոք դը նոթ,
Հոգնել եմ արդեն:

Բոլորները

Իննսուներկուսին կամ իննսուներեքին,
Դպրոց էինք գնում երբ,
Պրոսպեկտ-Ամիրյան խաչմերուկում՝
«Բուկինիստ»-ի կանգառի մոտ,
Տեսանք Հոպարի ընկեր Կյաժին:
Արագ ու ջերմ խոսեց ինչ-որ բան մերոնց հետ
Որոշ ժամանակ հետո
Գնաց Ամերիկա՝ մշտական

Ֆինանսապես դզվեց,
Ամուսնացավ ու երեխաներ ունեցավ,
Հետո հիվանդացավ ու մահացավ՝
Տասականների սկզբին:
Ութսունականների կեսին
Կյաժը, Հոպարը ու մնացածը
Ռեստավրացիա էին արել
Սանահինի մի մասը,
Էդ օրերի պլյոնկեքը դեռ կան
Նրան ուրախ են, անհոգ
Ու սև-սպիտակ:
Վերջին հոկտեմբերին
Հոպարը Լոս էր թռել
Երկու շաբաթով
Գնացել էր Կյաժի գերեզման:
Տափակ հարթ քարեր էին,
Ստեղնաշարի նման
Հողի մեջ թաղված,
Կանաչ լանջին, համաչափ,
«Ուինդոուս Իքս Պի»-ի
Էկրանի նկարի նման:
Այնտեղ ժամանակ առ ժամանակ
Գալիս են մարդիկ ծաղիկներով
Ու եղնիկները ծաղիկների ետևից:

Մենք, որ հոգնել ենք բառախաղից
Ու արդեն անցել ենք տառախաղի:

Մանրամասնիկ

«Հայերի բունտը թողնել գնալն ա»,- ասաց Վալերը մի հարսանիքի ժամանակ: «Էսի էն հին ակկարդիոնների նման ա, որ երկրորդ օկտավից օդ են թողում»,- ասեց Յուրոն, նույն միջոցառման վերջում, ցույց տալով ականջը մի ձեռքով փակած ու «Բարի գիշեր, բարեկամներ» գոռացող երգչին:

Մենք
Արդեն գիտենք
Որ ցելը
Ինքնանպատակ չի:

«Ֆիլմը, սցենարը, պատմությունը պետք է ունենա սկիզբ, ավարտ, վերջ»,- ասաց մի քաղաքագետ, ով միշտ Յութուբում օրինակներ էր բերում իր հետ կապ չունեցող ոլորտներից:

Ես փոքր մարդ եմ,
Բայց կատարում եմ
Մեծ հաճույքով:

Շարժումների չենք մասնակցել,
Բայց լավ ծանոթ ենք ինքնաշարժությանը:

Արվեստի փոքրոգի տղամարդիկ:

*Հոգևորի բնագավառում տրամաբանական սիստեմներ չկան, մեռնեմ ձեզ: (Ռաֆիկ Բարոյան)*

«Արա նոր ապտեկա էի մտել, գանդոն էի առնում, քեզ հիշա»,- ասեց Կայծը՝ ոչ դայրեքթ:

Կամաց-կամաց հեռանում են
Վաթսունն անց ոռ մտնողները:

Ընդհանուր համարիչի եկանք

Պլյաժում նուդիստսկի
Չէր մնացել նուդիստ սկի:
Ոտանավորը կոչվում է «Դեկտեմբեր»:

Ավարայրն ըստ Ֆարենհեյթի

Մեզ մոտ
Ուր խնդիրը
Լինելը չի
Այլ առաջինը լինելը:

Մի կլրոտ պուց
Մի պցոտ բերան

«Կներեք, ո՞նց ասեցիք, Արմենակ Վալերիի՞»,
Յարգանքով հարցրեց միջին տարիքի մի տղամարդ,
Մթերային խանութի ետնամուտքի մոտ դրված
Դպրոցական նստարանին նստած:
Յետո գրեց լսածը՝ նույն սեղանին դրած թղթի վրա,
Ու ավելացրեց. «Քանի հոգի ե՞ք»:
Մյուսը ներսից բերեց դեղին մեծ տոպրակը,
Որի մեջ երևում էին պարենի տարբեր տեսակներ
Ու այլ չփչացող ապրանքներ:
Նրանց կողքը ցաքուցրիվ կանգնած էին մի քանի հոգի,
Տղամարդիկ ու կանայք, շատ մոլորված տեսքով:

«Հողն ու հոգին նույնն են»,
Ասաց հոգևորականը
Թաղման ժամանակ:

*Միլիոնավոր դրամնի ծախսելով, ուրարտական քարի վրա երդվելով, քաղաքապետ չեն դառնում: (Վարդան Ղուկասյան)*

Սուկայական հարաբերություններ

Գիշերը մեզ թվաց Մասկի պոեզդն ա անցնում
Պարզվեց անտենան ա
Հին, սովետական
Չգործող, միայնակ
Լուսավորված անհասկանալի տեղից՝
Դիմացի շենքի կտուրի:

«Էս սալաթը թե չես ուտում, դիր խառնարանը»,- ասաց Դիքեյը:

«Ասա ես Իսպիրենց տունն եմ, ուշ կգամ»,- լսվեց պադյեզդից:

Վայլդբերիզ դարձած իմ Էրեբունի

Մեր իռացիոնալ կոլաբորացիոնիստները

*Յա պրաիգրալ տրի պարտիի ի պադումալ՝ նի մագու ժե յա յիշո չիտվյորտույու պրաիգրած: Ա Միշա Գուրեվիչ գավարիտ. «Եսծ զակոն կազինո. Վսյո մոժնը պրաիգրած»: (Գարրի Կասպարով)*

«Արա Էն Արեստովիչին եմ լսում, ընդդիմադիր ա դառել, թեկնածությունը դնելու ա, թե չէ հոգնել են Զելենսկուց, մեռան մեռնելով»,- եզրափակեց Կայծը:

«Լավ կլնի, լավ ասենք որ լավ ըլնի»,
Ասեց փողոցում խմողներից մեկը:
«Լավ ասիր»,
Ասեց մյուսը ու երեքով խմեցին:
Սիրուն ջարդած պամիդոր էր, բիբար, պանիր, մի կտոր հաց,
Կոլայի կես լիտրանոց շշով տնական օղի՝
Որի կեսից ավելին արդեն չկար:

AI գանդոն

Հերոսն ու թանաթոսը
Էրոսն ու թանը

Պատումներ շրջապատից՝ շրջապատումներ:

Ստեղծագործնական

«Սա այն դեպքն է, որ մենք մեր աշխարհագրությունը դարձնում ենք աշխարհիքաղաքական պոտենցիալ»,- ձանձրացող Պետրոսին ասեց մի նախկին վարչապետ: Այն ժամանակներից, երբ դեռ իսկական նախագահ էլ կար:

«Հեսա քյոռլոխդ կտամ»,- սիրում էր ասել պապիի ախպերը, Սերոժ ձյաձան Կիրովականից, շախմատ խաղալու ժամանակ:
«Սուս, կամերն եմ ծակելու»,- սովորաբար պատասխանում էր Հոպարը հերթական ավանտյուրայից առաջ:

Չխնդցնող հումորներ

«Ի՞նչ կա, եղո»,- գրված էր Բարեկամության «Սաս»-ի ներքևի կանգառում, ստենդի վրա:

Յույսով հավեսով
Սիրո նավեսով:

Վարձովները ու վարձկանները

«Էն որ ասում ա փոս փորի, խորը փորի»,
Յեռախոսով ինձ ասեց մի մարտակերտցի տղամարդ,
Վաղուց արդեն Մարտակերտում չապրող:

Անզգային ու Ազգայուն

*Ում վրա ենք հույս դնում: Մենք Լիտվա չենք, մենք Լատվիա չենք:*
*(Լևոն Տեր-Պետրոսյան, 1991)*

Կորել էս արքա,
Լուր չկա քեզնից,
Դառել էս լրիվ
«Լուր» արքա:

«Մադոննա սանտա, մամմա միա»,
Երկարացնելով ասեց հռոմեացի մի կին:
Նա գիշերով պատշգամբից տեսավ
Իր տան փողոցով անցնող
Գազանանոցից փախած առյուծին
Ու նկարեց:

«Երկիրը իջացրիք ձեր հեղափոխության մակարդակին»,- ասեց մի ջղայնացած ընդդիմադիր:

«Չտո բիլո դավնո, էտը բիլը նիպրավդա, մոռացար»,- ասեց մի կնոջ ձայն: Հետո լսվեց նրա կաբլուկների կտկտոցը, թույլ ծիծաղի հետ համեմված:

*Ես կարծում եմ ապագա մոտակայում կլինեն էլի հանդիպումներ: (Տառասխալված երիտասարդ գործիչ)*

Մենք որ դասեր չքաղեցինք պատմությունից
Ու սեր չքաղեցինք պարտությունից:

Սիտուատիվ փերֆորմանսներ

«Յուղը շատ ա, յուղը շատ ա»
Գոռաց կինը:
«Տերտերիս շորը բերեք, տերտերիս շորը բերեք»
Գոռաց ամուսինը:

«Այլևս երբեմն»,- ասացի ես:
«Այլևս երբևէ»,- հակադարձեց կամանդիրը:

Տխուր նայում էինք
Օդին դիմոտ
Ինչպես երկու
Չընդունված դիմորդ:

Դիմորդի որդին

*Եսլի պյյոնկա վաժնա, տո էտը պատամու չտո անա սպասոբնա վիյըվիծ սադերժանիե վրեմենի, ա նի պրիդած վրեմենի սադերժանիե: Իլի տեմ բոլեե իյուզիու սադերժանիյա: (Ալեքսեյ Գուսև)*

Արի գնանք Պերու
Ապրենք լեռներում հեռու:

Սգո ցանցամատյան

Մեզ զգում էինք ինչպես տանը՝ տանը:
Տանը մեզ զգում էինք ինչպես տանը:

«Մենք պետք է մրցունակ արվեստ ունենանք»,- ասեց մի ղեկավար:

Եվ էն ինչն է, որ հավերժ է
Եվ էն ինչն է, որ չկա
Եվ էն ինչն է, որ անցյալը
Մեր դարձնում է ներկա:

Պատեհագրաֆ
Պատեհությունները արձանագրող

Նեվեստա գրաֆա դե լյա Խեռ

Կանգնիր կյանքիս քարավան

Տեսագրագետ

Փորձագիտական համույթ

«Այդ փողը ապրելուն միանգամայն հերիքում էր, իսկ կուտակելու կիրք երբեք չեմ ունեցել»,- կարդացի երկրորդ նախագահի ինքնակենսագրական գրքի քառասուն էջանոց թրայըլ կտորի վերջերում:

Տոլեռանդ, ենթադրաբար՝ մոլեռանդ տոլերանտ:

Բացակա մարդու օրագիր:

*«Ռուսաստանը պարզապես դեմ չէր, որ մենք ունենանք պատրանքներ»: (Բորիս Նավասարդյան)*

- Արա բաց նկարները միանգամից ուղարկեց, հետաքրքրությունս կորավ: Փուլ-փուլ էր պետք, փաթեթով ուղարկեց:
- Տենում էս, Լևոնն էր ճիշտ:

Հայրենիքի կորուստն այս
Մեզ դարձրեց էնթերփրայզ:

Մարդ էր նա շատ կենսունակ
Սիրո մեջ ամեն ինչի ունակ:

Սաղմոն զակազ տվեց
Ու սաղ մոնը կերավ:

*«Զըսթ լեթ մի թեյք յու թու ը բեթը փլեյս*
*Այմ գոննա մեյք յու քիսս դը սքայ թընայթ»*
*(«՛ԷՆՍԻՆՔ»)*

Անհանգ հրահանգներ

Եղեմներում արևելքի
Սպասում էին մեր վերելքին:

Սպերմանենտ
Սպերմահեն

«Մենք կհասնենք մեր նպատակներին, բայց ամենայն հավանականությամբ ոչ այս ընտրական փուլի շրջանակներում»,- ասաց մեկնաբանը:

Չրազրկվել
Չրերից զրկվել

«Արան պապըդ ա, որ տատուդ պոլե չուդեսով ա շահե»,- ասեց երեխան, հավանաբար հորից լսածը:

Բուք է, փակվել է Լարսը
Երկար կսպասի հարևանի հարսը
Մանրուքներին հազար ու մի
Վայլդբերիզից պատվիրած:

Յազար ու մի նետ

*«Ես հասկացել եմ: Էս մարդկանց համար կարևոր չի, որ ինչ-որ մեկը գործողություն անի, կարևորը՝ ասի»: (Վահրամ Սահակյան)*

Ապրեցինք այս կյանքը սիրով
Բայց կարոտ մնացինք սիրո:
Ոչ անձնական:

Ննջախաղի թատրոն

Մենք, որ լիտրանոց զեյթունի ձեթը
Սկսել ենք գերադասել նույն գնի գինուց:

Սանսարավոր ընկեր

Եկան տեսան Մասիսը
Մեր ինքնության բազիսը:

Շարժառիթ դարձած
Ըդալթ աստղերը:

Մենք, որ մտածում ենք
Որ մեր հաջողությունների պատճառը մենք ենք,
Իսկ անհաջողությունների պատճառը ուրիշները:

Անտուան դը Սենտ Էքսքյուզ մի

Տրեյլեռնիկ

Մենք մեծացել ենք
Ու էլ չենք խառնում
Մետրաժը ու լիտրաժը:

Ափփըրգել ա
Մեր
Ափփըր միդըլ քլասսը:

«Արա, էս կյանքում ժամանակավոր մարդիկ ենք»,- ասեց Արմանը Լոսից ու ավելացրեց. «Ցավս էն ա որ, մեզ ֆուլ քավըր անող չկա»,- արդեն անցնելով քաղաքականությանը:

Պոետի ստենտավորված հոգին

Լուսամպրոպի պես աղջիկ

Մաhվան Ծիրաններում

Մի պապի սթորի էր նայում ավտոբուսում
Առանց ուշադրություն դարձնելու կողքիններին
Որոնց մեծամասնությունը նույնպես կանայք էին,
Բայց ավելի հագնված:

«Խնվածիտ վիստի սիբյա կակ ռիբյոնըկ»,
Սկազալ մնե ածին ռիբյոնըկ:

«Գագո ստե յեմ, Գագո»,
Գոռաց մեկը
Սուպերմարկետի դիմացը կանգնած
Ու ես հիշեցի Ղուկասյանին
Ով հենց երեկ ասել էր նույն ֆրազը,
Ու ընդհանրապես նրա քաղաքական կատարումները,
Որտեղ կատարվողները ու կատարողները
Ժամանակ առ ժամանակ տեղերով փոխվում են
Որտեղ արջը նաև որսորդ է՝ վարորդը հսկիչ
Եվ կատարողը պետք է պահպանի տարածությունը
Վաղը մյուս օրը կատարվող չդառնալու համար:

*«Ւզբավծես ատ վնուտրեննեվո պամոշնիկա: Ատ վիրտուալնըվը բոյա ս սամիմ սաբոյ, բրոսծե դոնկիխոտստվը: (Վլադիմիր Շերիշով)*

«Էս «Ջերմուկ»-ն էլ դիր, մի լավ առիթով կբացենք»,- ասեց տարեց տղամարդը դժգոհ կնոջը, վերցնելով լիտրուկեսանոցը:

«Փառը փառասիրությունից ա լինում»,- ասաց Դիքեյը բուրատա ուտելիս:

«Ինքնաճանաչում ուրիշների միջոցով» սիմպոզիում

«Արա դե ոնց գլուխդ տանեմ, էէէ, ինչ գլուխդ տանեմ»,- ասեց Կայծը ու ավելացրեց. «Մի խոսքով, էսի հինգ մատի մեջ տեղավորվում ա»: Ու ես էլ չասեցի, որ մոռացել եմ, թե ինչի մասին ենք խոսում:

«Life is beautiful»՝ գրված էր ձեռագրով,
«Ձկնորսի մոլորակ» խանութի կողքը, շենքի պատին:

«Էս Կոմիտաս գնում ա՞»,
Ավտոբուսից իջնող ժիրիկ Սահակյանին
Հարցրեց մի տարիքով տղամարդ
Բարեկամության կանգառում:
«Չէ», արագ ասեց ժիրիկը ու իջավ:
«Բաղրամյան ա թեքվում»,
Ներսից հասցրեց ասել մի կին
Մինչև դռները փակվելը:
«Ես քեզ շոր չեմ կարե՞լ»,
Հարցրեց ակկուրատնի հագնված
Նույն տղամարդը:

Ժիրիկը չընկալեց,
Բայց մի բան ասելու համար ավելացրեց.
«Ես էլ եմ էդ կողմերի վրա գնում,
Հենց գա կասեմ, երեսունմեկ կամ վաթսունհինգ
Ավտոբուսները հաստատ գնում են»:
«Ասում եմ քեզ հեչ շոր կարած չկա՞մ»,
Քիչ հետո նորից հարցրեց
Կտորից շալվարով ու վերնաշապիկով տղամարդը
Թեթև բռնելով ժիրիկի թևքից:
«Չէ», ժպտալով պատասխանեց ժիրիկը:
«Քսանհինգ տարի ստեղ շոր եմ կարել»,
Շարունակեց տղամարդը
Ցույց տալով կանգառին կից շենքի առաջին հարկը:
«Էս գնում ա, նստեք»,
Ասեց ժիրիկը, ցույց տալով մոտեցող ավտոբուսը:
«Ձիմ Անդո, Տաշիրի Կարապետյաններ,
Գեներալ Սուրեն Աբրահամյան, սաղ իմ հաճախորդներն են եղել»,
Նստելուց առաջ հասցրեց ասել պապին,
Ու կորավ կապտանռնագույն
Վաթսունհինգ համարի ավտոբուսի մեջ:

Լիրտ

Զանգվի կողակները փիրուզ

Քյուբսաթլու

Բաց էին դռները սալոնի բյութի
Կիրակի առավոտ ժամը ութից:

Ավտոբուս նստեցինք
Պարզվեց տրոլեյբուս էր
Հարյուր դրամ տվեցինք
Պարզվեց հիսուն էր
Վարորդին նայեցինք
Զարմացանք
Տղամարդ չէր
Կին էր:
Ոտանավորը կոչվում է «Համար 10»:

Տարածքը տեսահսկվում է
Տարածքը տեսա, հսկվում է
Տեսա, տարածքը հսկվում է
Տարածքը հսկվում է, տեսա:

Մի կնոջ զանգ եկավ
Ավտոբուսի մեջ:
Կանգնած էինք
Նստած էր:
«Տագույ»,
Ռուսերեն գրվեց էկրանին:
Չվերցրեց, ներվային սպասեց,
Մենք էլ սպասեցինք,
Անջատվեց ինքն իրեն:

«Արա լավ է, սինթեզատրը ձեռս քե՞զ եմ ասում սինթեզ արա»,- ասեց Կայծը ութ րոպեանոց աուդիոյի վերջում ու ավելացրեց. «Լավ, առիթ ըլնի մի հատ էլ կաստ կթողեմ էս թեմայով»:

Ու այսպես տխուր օտար ափերում
Մենակ տղա եմ, ստվերս եմ փնտրում:

Ստվերչոկ

Ժիրիկը զարթնել էր արդեն քսան րոպե ու սպասում էր upcoming alarm-ին, որին դեռ յոթ րոպե կար:

«Ապե, ինձ ճիշտ հասկացի, դու էլի իմ ընգերն էս, բայց ես չեմ ուզում քեզ որպես իմ ընգեր ճանաչեն, ես ուզում եմ քեզ քեզանով իմանան»,- ասեց փողոցով քայլող մի դպրոցական մյուսին, ու ավելացրեց. «Ու ամեն տեղ պետք չի ճիշտը ասել, էդ հիշի»:

Էս վերջերս մտել էինք «Զիգզագ»,
Ու հիշել էինք լյոտչիկ Զիգզագին:

Սմեխք
Ի Սմեխք ի գրեխք

Հազար ճանապարհ ես դու իմ դեմ փակել
Իմ լավ, հարազատ իմ քաղաք:

*Ի վերջո օֆլայնի մասին էլ մենք իմացանք օնլայն:*
*(Հաղորդավարուհի)*

«Բեզլիմիտ, ո՞նց իս, Բեզլիմիտ»,- գոռաց մեքենայից իջնող մի հաղթանդամ տղամարդ:
«Իա, ստե խի՞ իս էկիլ, մարդ կա կուզիս քցիլ փո՞սը»,- վախվորած ժպիտով ասեց Բեզլիմիտը:

«Այտա, մենք մենք միշտ էլ փոս քցող ինք, մարդ ըլնի»,- պատասխանեց հաղթանդամը, շրխկացնելով մեքենայի դուռը:

«Դրանից մի հատ էլ տա՞մ, Սերոժ»,- գոռաց տրուբա ծախող Մայիսը նոյեմբերի սկզբին, երբ փեչի սեզոնը նոր էր բացվել:

Յոգնած լքեցի հերթը բանկի,
Յիսունյոթում տեսա ռեպերների ու պանկի,
«Ես ստուդիա եմ իջնում, ապե»,
Ասաց նրանցից մեկը՝ երկուսին,
Ժամը տասներկուսին:

«Կլիրս ձեր բոզի տղա կյանքի մեջ»,
Շպրտեց հոծ խմբից ամենաբոյովը՝
Յեռվում կանգնածների ուղղությամբ:
«Բռնեք չեթա»,- շտապեցրեց ներսից մեկ ուրիշը:
Բռնեցին, չգնաց:
Յեռվում մյուս խումբն էր,
Նայում էինք ավտոբուսի միջից,
«Ժամանակը թանկ թվում էր անժամանակ»,
Կողքներովս բարձր անցավ երգչուհու ձայնը:
Ավտոբուսը շարժվեց
Խմբերը ցրվեցին
Բախտներս բերեց
Ոչ աչքներս բան տեսավ
Ոչ էլ կյանքներս բան մտավ:
Էս քաղաքում անթիվ
Քֆուրներ են հնչում
Երբ պտի ձյուն գա
Գա, քշի, տանի:

*Աժիդանիե վեդյոտ կ պատերե դուխա: (Վլադիմիր Շերիշով)*

*Աժիդանիե սամիյ սկուչնիյ պովըդ: (Զեմֆիրա)*

Դռները փակվեցին, կապույտ ավտոբուս էր,
Շարժվեցինք իրար կպած, մութ էր արդեն:
Մյուս կանգառը մարդաշատ չէր,
Երկու հոգի խմում էին,
Նստարանին, հացով, խավիարով:
Ընթացքում հարմար լուսավորություն եղավ
Ու տեսանք մեր հոգնած դեմքերի դժգոհ
Բայց դինամիկ անդրադարձը
Ավտոբուսի կոլեկտիվ «Վարդանանք»-ում:
Հետո «Կներես, կներեք»-ների միջով անցանք,
«Տղա ջան, թող անցնեմ»-ի միջով անցանք,
Անքսուկ քսումների միջով անցանք,
Մյուս կանգառի կողքը լռված
Ֆիդայու բեղերով հնդիկների մոտով անցանք,
«Շիրակ»-ներով ու «Շանթ»-երով անցանք,
«Ախպերս մի բռթի, հեսա տեղ կտամ»-ի
Միջով անցանք ու իջանք:

Ոմանց ժամանակին տեսնում էինք երթերում,
Հետո արդեն ուղիղ եթերում՝ ուղիղ չխոսելիս:

«Ձյունանուշ ես, ինչ ես, քեզ ո՞վ ա ճանաչում»,
Ասեց մի կին մյուսին ավտոբուսում:
Հետո նայեց պատուհանից,
Տեսավ անկանոն լռված մեքենաները ու ավելացրեց.
«Հլը սրանց արարմունքին նայի, էս կանգնելու ձև ա՞»:

Ցուրտ էր, մի տղա անցավ
Չամալիրի դիմացով
Ամբողջովին սև հագած
Մազերը թրջած ու ճակատին ծեփած:
«Եռալեգենդ երեկո», գրված էր նրա ֆոնին, մեծ ստենդի վրա,
Կարեն Սերոբիչի արձանից հարավ-արևմուտք:
Հետո թեքվեցինք հյուսիսից արևմուտք,
Բայց միայն ավտոբուսը, երկիրը չէ:

«Արս, արի ստե ձեր կողմերի մասին գրած ա»,
Ասեցի ու ցույց տվեցի նոյեմբերյանցի Արսենին
Վեպի առաջին նախադասությունը:
«Նոյեմբերյան ցուրտ օր էր»,- կարդաց Արսենը:
Հոկտեմբերն էր, ցուրտ օր էր Արտաշատում:
«Դու Եհովական ե՞ս»,- հարցրեց մյուս օրը բեղերով մայորը:
Պաուզա տվեցինք:
«Էս քո՞նն ա»,- դիմացս դնելով «Հրաժեշտ զենքին»-ը
Սպառնալից ասաց պուց-մայորը:
Նրան այդպես էին անվանել մեզնից առաջ
Նրան այդպես էին անվանելու մեզնից հետո
Միգուցե մի բան փոխվեր
Երբ փոխգնդապետ ստանար:

«Փիլիսոփայության մեջ ոնց է.
Սկիզբ, զարգացում, վախճան:
Սկիզբն ու զարգացումը եղավ,
Հիմա սպասում ենք վախճանին,
Իսկ կյանքը զարգացում ա»,
Ասաց տեսքից ութսունևն անց
Մոխրագույն գլխարկով մի մարդ

Ամոթից ու ամոթխած իրեն
Լսող երիտասարդին:
«Էս Ռայկոմով էր չէ՞ գնում»,
Ասեց մի ուրախ կին
Դռները փակվելուց անմիջապես հետո
Նա քիչ էր մնում շուռ գար
Ավտոբուսի շարժվելու պահին:
Բռնեցինք երիտասարդն ու ես:
Նա խնդաց, դիրքը պնդացրեց
Ու հեռախոսի իր զրուցակցին ասեց
«Աղջի սուս, խայտառակ էինք ըլնում»:

«Քարածուխ»՝ գրված էր շատ-շատ մեծ պարկերի վրա, ճամփեզրին շարված: «Վախտին էս էր, վառում էինք, երկու լապատկեն սաղ գիշեր պահում էր»,- խոսք բացեց լոկալ տաքսիստը, հետո մուտքային զանգին պատասխանելով ասեց. «Էդքան սմետանն ինչ ես անում, այ մորդ սիրտը քունեմ»:

Ու պարտվում են մի օր
Վարպետները սիրո:

Ռեգիոնալ սիրո տրանսկրիպտները

Հիմնադիր Շահն ու
Հիմնադիր մայրերը
Թմկաբերդի բարումը:

Ապրեցինք քնելու ու հանգստանալու արանքում:

Մի ռելոկանտ անտարբեր զզվանքով ախկո էր հավաքում իր շան ետևից:

«Betonbohr»՝ էլի գրված էր սպիտակի վրա, կանաչով, ինչը դանիերենից նշանակում էր «Բետոնի դռել»:

Մի կին սպորտային կոշիկներ էր նայում
«Վայլդբերիզ»-ի ափփում,
Տասնութ ավտոբուսում:

Կփակի գազը
Գազարդը հայռուս
Կդառնանք
Walrus:

«Life is bea  iful»՝ գրված էր
Այս անգամ Ծինարարներում
Հինգ հարկանի շենքի պատին:
Նրա երկու տառերը ծածկել էր
Կրիշից տձև քաշած ժոլոբը,
Իսկ աջից սկսել էր նեղել
Նոր տեղադրված ու բանտարկված
Կոնդիցիոները:

«Կեր, խմի, խնայի» սկզբունքով ապրեցինք, ոչ մեկը չհաջողվեց:

Եկեք գործենք
Այլ ոչ ստեղծագործենք:

«Լրի մոտ» պանդոկ

Մի մարդու հետ
Մինչև Սերվիսի խաչմերուկ
Մանրամասն նայեցինք Յութուբով
Թե ոնց էր քյալլա սարքում
Մի հյուսիսկովկասցի:
Ինքը նստած էր, ես կանգնած:
Վերջը չտեսա, անջատեց, իջավ:

«Սա աբսուրդ է, սյուրռեալիզմ»,
Հայերեն ասեց մի ռեժիսոր,
Մեկը նրանցից՝
Ովքեր անհասկանալի բաները
Չհասկացած բառերով են բնորոշում:

«Մառոժնիանոց»՝ ամեն մի ոչ հաց ուտելու տեղին ասում էր Նվերը:

«Տեղումներ չեն սպասվում, այս մի քանի օդը օրի ջերմաստիճանը կբարձրանա, հետո կնվազի, այդպես է ընդունված»,- ասաց մեկնաբանը, ով կարող էր ավելացնել նաեւ՝ «այդպես է եղել դարերով»:

Դուք, որ անխնա խնայում եք ձեզ
Ուրիշների հաշվին:

Choose-ողները ու enter-ողները:

«Թինք տանկ»:
Տանկ, որի մեջ նստած մտածում են:

AI-ն և ԱԻՆ-ը

Սալվադորն հեռու
Դալին այդքան մոտ:

Սադամ Բովարի

Լանջրպետ

«Դու ուրիշ ես, իմ ուրիշը»,
Գրված էր ցածր կամրջի տակ, պատին:

Մենք, որ կասկածելի տեղերում
Միշտ կարտոշկա ենք ուտում
Կամ ուրիշ հոծ բան:

Փասուորդ սեղան
Պասպորտ Սևան

«Ինչ անենք, մենք էլ մտնե՞նք պետի մոտ, ով գալիս ա, ասում ա պետի մոտ եմ մտնում, սրբատեղի ա՞, ինչ ա»,- ասաց խոշոր մի մարդ, ջղայնացած, պասպորտ սեղանի հերթում:

Քյասիբը ժամանակով ա փակվում:

«Զանգիր նրան՝ ում շատ ես սիրում»,- գրված էր հուշարձանի վրա:

Պարեկներն ու պարիտետը

Ստեղծափործ

Մանուշակագուլպա

«Ինչ եմ շինվում էս ցեխերում, աղմուկի մեջ վայրենի»,- ասում ա էն աղջիկը աութդոր կատարման ժամանակ:

«Մոնդրիլիանի»՝ խառնեց մեկը շատ հաջող:

Ներվերը, ստվերները,
Եվ Հերցոգը:

«Իրա մաման շատ հայ ա»,- լսվեց յութուբից:

Կարճաժամկետ սիրո հեռանկարները
Հիվանդագին սիրո ցանցամատյաններում:

Մենք,
Որ պատվիրակեցինք ամեն ինչը,
Ոնց պատվիրակենք ցավը և ում:

«Ելք ելքոց»,
Կարդացի մի բանաստեղծի ժողովածուի վրա
Բուկինիստի պադվալում,
Որտեղ գրքերն էլ առանձնապես էժան չեն,
Քանի որ գրահրատարակչավաճառները
«Վայլդբերիզ»-ի մուռը մարդկանցից են հանում:
Հետո մի հատ էլ նայեցի՝
Պարզվեց վերնագիրը
Տառասխալով եմ կարդացել:

*Նիվերայատնոյե, նո վազմոժնոյե, էտը տո չտո մոժետ բիծ, էտը աբիչնիե սաբիծյա ի սավպաձենյա, պրեդստավլեննիե վ սցենարիի,*

*շտոբի ռազվիծ իստորիյու: Ա նիվազմոժնոյե նո վերայատնոե, Ետը Էկստրաօրդինարնոյե սաբիծյե՝ վ Ետը զրիծել վերիտ:*
*(Աարոն Սորկին)*

Մենք մարդկանց արածը նսեմացնելու երկու ձև գիտենք:
Մեկը՝ չնկատելը, երկրորդը՝ էնքան բարձրացնելը,
Որ իրա իսկական տեղից շատ ավելի բարձր լինելով
Իմաստազրկվի կամ ծաղրի առարկա դառնա:

«Hilde be wasse» գրված էր ֆուլգոնի վրա, որը թարգմանվելուց հետո ավելի անհասկանալի դարձավ, հավանաբար մի քանի տառ խառնել էի:

Լուրբ

Չպարտեզ
Չպարտների պարտեզ

Վերլուծողական խմեցի

«Կտրական»,- ասեց մի մարդ, ոչ փորձագետ, մեկ այլ բառի փոխարեն: Նա մի քանի տարի առաջ «ահավորի» փոխարեն «ահռելի» էր ասել:

Իրենց հանրային կերպարը անընդհատ հանրայնացնողները:

Անստերդամի ամտառները

Դեմիրելից Սուլեյման
Սուլեյմանից Բռնաբար:

*Ի պոմիծե՝ նամյոկ վսեգդա լուչշե աբյիսնենյա: (Ուոլտեր Մերչ)*

Գիտեի ծպտված մի նացիստի
Նա հաճախ էր ընկնում ցիստիտ:

Կաշքանդվել եմ

Կլրիկոս

*Իմ գիտեցածից իմ մասին, ես ու՞ր փախչեմ՝ ոչ մի տեղ:*
*(Ռաֆիկ Բարոյան)*

«Լսիր ուշադիր, Պետրոս, անընդհատ փորձում էս ընդհատել, ես կարող եմ քեզնից շատ քեզ ընդհատել»,- ասաց մի քաղաքական գործիչ և բանաստեղծ: «Ընդհատեք»,- ասաց Պետրոսը:

Սև Պարապը

Կառչապետ

Հայաստանը Հայաստան է և վերջ:

«Մարդուն երջանիկ ըլնելու համար մի պատառաքաղն էլ հերիք ա»,- մտածեց Ժիրիկ Սահակյանը, պատառաքաղը ձեռքին լիքը սեղանի մոտ կանգնած:

«Սինթեզվեք բնության հետ, գրկախառնվեք բնության հետ, կտրվեք սթորիներից»,- ասաց մի հաղորդավար ագրեսիվ տոնով:

*Իսկ ֆիզիկայի օրենքներով դատարկություն չի լինում, այն պետք է լցվի և իհարկե լցվում է, բայց ոչ թե բովանդակությամբ, այլ ծեսով:*
*(Գոռ Մադոյան)*

«Վախեցա. մարմինը քաղցր բան ա,
ոչ մեկ չի ցանկանա որ մահանա»,
Յութուբի մի ռեպորտաժում
Ասեց իննսուներկու տարեկան Ալեքսանդրը,
Ով մնացածից շատ ավելի ուշ էր տեղահանվել
Հարությունագոմերից:
«Լավ ա, որ կողմը նայում էս, հայ ա»,
Ժպտալով եզրափակեց նրա տղան, Աhարոնը,
Ով ամենավերջինն էր դուրս եկել գյուղից
Ու հասցրել էր հաջող անել
Գյուղի բոլոր գերեզմաններին:

Դրամա շորթ ֆիլմ ֆեստիվալ

«Մալյան, տրոսը, Մալյան»:
Հաճախ էինք լսում
Զամպալիտի պահանջը ֆիզրուկին
Երկու հազար վեցի կիրակի օրերին:

Սև սիրտ, ծանր ուրբաթ:

Մենք՝ ուրիշների
Հայրենիքը կորցրած:

Մենք,
որ տարիներով կրկեսի վերածելու կրկես չունենք:

Հասարակական կերպարանք ընդունել:

Ջաղջուռ
Սուդյաների գյուղ

«Գույքահարկը վճարել ե՞ս»,
«Դու»-ի անցավ ափից:

*Գիտեք, որևէ մեկը թող չհամարձակվի վիրավորվել:*
*(Պաշտոնաթող քաղաքական գործիչ)*

Մենք, որ այդպես էլ չտարբերեցինք
Մարտունու բարբառը Ասկերանի բարբառից,
Հիմա շուտ-շուտ ենք լսում
Արցախցիների խոսակցությունները,
Պասպորտ սեղանի մոտով անցնելիս:

Տեսանք
Տեղական փորձաստղերի
Աստեղային ժամերը Յութուբում:

Վանդակամարտ

Կամանդիրը գինի ղրգեց
Խաղողից գրենաշ
Հոգուս շլաքերը դրանով
Արեցի դրենաժ:

Եկենք խմենք մենք օղի
Ու հետո գնանք լողի:

Մի քսերոքս անող գիտեի հետաքրքրասեր
Նա լիքը բան էր կարդում գործի բերումով
Ու արագ:

Գիտակցության խոսք
Ատելության հոսք

Գաղտնալրող սարք

Անկամ կատարներ

Թոնրաքուն

Յանգած հարբուխ

«Թունելի վերջում լույս դրած կա՞ս»,- հարցրի մի դի-օ-փիի:

Ստոր Արո՝ օպերատոր, Կիլիմանջ Արո՝ սկալալազ:

Մենք որ պետությանը տվեցինք ոչինչ
Ու դրա դիմաց ստացանք անձնագիր:

*Մեր կինոն ոնց որ թատրոն լինի, տարածություն չկա ու անընդհատ բախվում էս կուլիսներին: (Տաթև Հակոբյան)*

Վարդանը կազմակերպում էր
Հայ ռեժիսորների ֆիլմերը
Ու նաև
Յեռացողների
Թաղումները:

Պեդալի հակառակ կողմը

Տիեզերաշինություն
Կատարումներ տիեզերքի եզերքում

Ինքնահավատ

«Էնքան մեծացանք, որ սաղ մեզանից փոքրացան»,- ասաց Դիքեյը:

Մեզ մոտ գենդերային հավասարություն միայն մի ոլորտում կա՝ բոզի տղեքի կեսը կնանիք են:

Ռոբլեմ
Քոչարյանի պրոբլեմը

«Իննսունականներին ավտոմատացման հետ կապված մի գործ էի անում Չորրորդ գյուղում, շաբաթը երկու օր, ամսվա վերջում ռոճիկի փոխարեն մի յաչեյկա ձու էին տալիս, էդ էր»,- ասեց Արմենի պապան Արուճում, ձու ուտելիս:

*Նաստալգիա նաչինաետսա տոլկը տագդա, կագդա էպոխա պերեստայոտ ուգրաժած վամ սվաեյ բեսպարյադըչնսծյու, սվաիմի պրատիվարեչյամի, անարխիեյ ի պրաբլեմամի վիբըռա:*
*(Միլոշ Ֆորման)*

Վերջին շրջանում մեկ-մեկ աննպատակ կանգնում եմ պասպորտ սեղանի հերթում, որ լսեմ արցախցիների մոտեցած ու հեռացող բարբառը:

Մենք հոգեհանգիստների չենք գնում, որ չհանդիպենք ապագա հանգուցյալներին:

«Էն ինչից մենք փախնում ենք, դառնում ա պրիչինա, որ մենք դառնանք սլեդստվիյա»,- ասեց Կայծը Տելեգրամի աուդիոյում:

Հողին հանձնեց հորեղբոր դին
Մեծ պոետի եղբոր որդին:

Աղբի կոնտրկուլտուրայի ջատագովն ենք մենք:

«Փուլառատ»,- ասաց մի գործիչ:
«Փուլի փաթեթ եմ առել»,- ասել էր Կայծի ընկերը Լոսից:

Անտեսակ ու անտեսված

Հայրամուտ

Փարմասի, փարմասի
Դեղ խմի, թարմասի:

Մխիթար Հերացու

Արտասովոր
Արտասվելու սովոր

Ձախիկների աշխարհում

«Փոշեպատ ուղի» ՀԿ

սաղրածու
ծաղրացուլ

վանդակապատում

Մեգ Ռայանը
Պլաստիկա էր արել.
Շուրթերը, բան:
Ու մենք տենց էլ չտեսանք
Թե էդ մարդը ոնց պիտի ծերանար:
Ինքն էլ:

Դավադիտ իշխանություն

Սյունիքոդ

«Զանգեցի հեռախոսին: Իրանց դռան դեմը կանգնած զանգեցի: Ներսից ձենը եկավ: Սա վերցրեց: Ասեցի՝ հեռախոսիդ ձենը լսել եմ, գիտեմ, որ ստեղ ես, դուռը բաց արա»,- պատմեց մի կին մյուսին:

Ես բարբառ չունեմ:
Տենց ստացվեց:

- Ձեզ ինչպե՞ս դիմենք:
- Ընկեր Վարդան:
- Դաշնակ ե՞ք:
- Ոչ, շախմատի դասատու:

«Ո՞նց էր, ջնջում ենք և պահանջում, ոբշմ ջոգիր»,- ասեց Կայծը հերթական աուդիոյում:

*Դա թեժացրեց նրա ցանկությունը, ցանկություն, որ արդեն նպատակ է: (Յ1-ի հաղորդավար)*

Նեյրոսուտ

Մերձիշխանական փորձագետ-հովիվները

Քաղաքական հովիվ

Յյուրասերը սիրեց հյուրին
Նրան գնահատեց ժյուրին:

Մայրամասներ

Քաքմեչինգ
Քաքմեջիք

«Յայ ժողովրդին ուսլովնի քյաբաբ ա պետք ու Ծենգեն»,- ասեց Բենոն ու ավելացրեց. «Գնանք մի տեղ հաց ուտենք ու Խզմալյանին լսենք»:

Յանապատասխան
Յամապազորյա

Յամատեքստամոլ

Մեր այցեքարտը վերածվել է այցետոմսի:

«Բարդ մարդը»՝ ֆիլմ բարդի մասին:

Համո Պեկնազարյան, «Պեկո»
Հարկայինի աշխատողի մասին

Մեկը, կանգնած «Հայփոստ»-ի դեմը, ասում ա.
«Ինձ փոստի առաջ են կանգնեցրել»:

Ռեժիսորական բազկաթոռ

Կլինի արդեն քսան տարի
Կպցնում ենք սանտավիկ:

Սարքաստիկ քասթ

Տագնապի ստագնացիան

Մեզ աշխատանք պետք չի,
Մեզ աշխատավարձ ա պետք:

Գենաց ծառ
Կրակադիլի գերեզմանի մոտ աճած ծառ

Ժամացույց նվեր ստացա:
Անհարմար էր, վերջին անգամ
Պոլիտեխնիկում էի կապել:
Որ հարմարվեմ, կապում էի նաև տանը:
Բայց չհարմարվեցի:
Ոչ ժամացույցին:
Ոչ ժամանակին:

Ճչակը սուր շչակն է:

- Իսկ դուք ինչի՞ մասին եք գրում:
- Ի՞նչ իմանամ, ես գրողն եմ:

Դառել ես հանրայինի լոգոն, սաղ օրը վրես ես:

*Եթե մեզ ձուկ անհրաժեշտ լինի, մենք կարող ենք այլ տեղից բերել: Բայց եթե մեզ ջուր անհրաժեշտ լինի, մենք չենք կարող այլ տեղից այն բերել: Եվ սա ազգային անվտանգության հարց է:*
*(Նիկոլ Փաշինյանը՝ կառավարության նիստում)*

«Ժաննայի դեպքում մենակ Վանոյի հետ են ինչ որ զուգահեռներ գալիս: Էն մեկը իրա սերնդի ամենաուժեղ գրողներից էր, Ժաննան էլ ինտելեկտուալներից, ու երկուսն էլ մտան ակտիվ քաղաքականություն: Վանոյի դեպքում դա միգուցե փոխարինում էր գրելու ազարտին, ոնց որ հեղինակից դառավ կերպար, որ տենա կերպարին ոնց կկատարեն: Տեսավ կերպարի կատարումը, իսկ հեղինակը հասցրեց թռնել ու սաղ մնաց: Բայց Ժաննան գիտնական ա ու էս ամեն ինչը շատ ավելի ծանր ա իրա համար: Դրա համար զոհաբերություն ա ընկալվում իրա արածը, Վանոյի դեպքում զոհաբերություն չէր, ինձ թվում ա»,- գրեցի կամանդիրին ու ստացա փըրփըլ սրտիկ վայբերում:

Մրգերը համր կինոյում

Ֆլիրոգրաֆիա

Մենմարտր

Երևանի հին, կիսատ կամուրջը, որ չես կարում անցնել ու ուրվականները չեն հայտնվում:

Նստի կյանքի կարուսել
Խաղա ջիար ու սեդ:

Փոքր սեղանը դրած էր մեծ սեղանի տակ: «Նայի, ոտքերս համ սեղանի վրա ա, համ սեղանի տակ»,- ասեց ԴիՔեյը:

«Ինչ ըլնում ա, մեռնողին ա ըլնում, ապրողը ապրում ա»,- ասել էր Արմանին տատը:

Մեր մտքերը մառախուղված

Ինձ քիչ պարզ ա սա
Մի քիչ պարզ ասա:

Ենթադրաբարո

Փոքրացու

*Էյջդին սպանում ա պոեզիան: Երբ բոլոր դետալները երևում են, դիտողը էլ մասնակից չէ, այլ ականատես:*
*(Սաշա Գրեյ, տարիներ առաջվա հարցազրույցներից մեկում)*

- Բա ի՞նչ եղավ վերջում:
- Պրծավ:

Դինամիկ սիրո ստատիստները

Նեոնային հույսեր

Հույս, սեր, հաճույք

Ես Լոսից աշակերտ ունեի:
Նրա հայրն ու մայրը
Երբեմն կռիվ էին անում,
Արևմտահայերենով,
Ջումի երկրորդ պլանում:

Դարակները սկսել են չփակվել:

- Չեղած փողերդ քամուն եմ տվել:
- Ոչինչ, մարդ կա փող ունի, քամի չկա:

Երկշերտ սիրո միջնապատը

Ցավոք սրտի այս աշխարհում
Ամեն մի այր
Ունի մի ծայր:
Ոտանավորը կոչվում է «Վերջավոր կատարման
անխուսափելիությունը»:

Կարաբասյո
Չար բաներ գրող թանկիստ

Անցյալի ներկա-յացման բյուրո

Անցյալի ֆասիլիտացման բյուրո

Ֆասիլիտ Վասիլի

«Գռոզնի ատեց», Պյուզո

Մի հարգված օպերատոր կա, շտատիվ ունեմ նրա ընկերը լինելու:

Ապրենք ուրախ ու առույգ
Ունենանք սիրո պատրույգ:

Աշխարհում այս անկանոն
Եկ սնվենք բնականոն:

Սերժավյու

Աշխարհում ստացիոնար
Լինենք ռացիոնալ:
Նաև ինստիտուցիոնալ:

Պետաց դասեր
Ղեկավարների պատրաստման դասընթացներ

Ասպետաց դասեր

*Ըստ մասնագետների, լոկացիոն առումով մեր երկիրը բավականին հարմար է ֆիլմարտադրության համար: Տարվա գրեթե բոլոր ժամանակահատվածներում միաժամանակ կարելի է և ձյունոտ սարեր ունենալ, և շոգից հալվող ասֆալտ, և գեղեցիկ ժամանակից շինություններ, փողոցներ, և լքված ու անմարդաբնակ գյուղեր ու գործարաններ: (Իշխող ուժի պատգամավոր)*

Երկիր-լոքեյշըն

Մենք տեսանք ինքնիշխանության գինը,
Բայց չտեսանք ինքնիշխանությունը:

Խուլիգարխ

Մենք, որ պրիվատիզացրեցինք պրիմիտիվիզացիան:

«Դառը կոֆեն քաղցր ստից լավ ա»,- ֆռթցնելով ասեց Ժիրոն ու ավելացրեց. «Եթե կանգնում ա՝ ուրախացի, եթե չի կանգնում՝ մի տխրի»:

«Սպասիր ինձ»-ում տեսնում էինք
Հայ տղամարդկանց սլավոնական կատարումների արդյունքները:

*Օրինակ, Հայաստանում մի այսպիսի հիվանդություն կա, որ սենյակում մարդ չկա, բայց այդ սենյակի լույսը վառվում է: Այդ գիտակցությունը չկա, որ պետք է անջատել և դուրս գալ: (Խաչատուր Սուքիասյան)*

«Մենք հիմա ո՞ր փուլում ենք»,- հարցրեց Պետրոսը:
«Մենք հիմա վերջնական հավանության նախորդող փուլում ենք»,- պատասխանեց նախարարը:
«Վերջնական հավանության նախորդող փուլում»,- դանդաղ կրկնեց Պետրոսը ու մեզ ցույց չտվեցին նրա դեմքը այդ ասելիս:

Արջը ժամանակին ուզում էր գնել էն տունը, որտեղ մեծացել էր: Մեր անցած ամեն մի ճամփին, ասինք՝ սա ստիպված էր արդեն:

- Սեր կա՞:
- Էլ չէ: Կոնկրետ չեմ ասում, ընդհանրապես՝ աշխարհում:

Լեղափարքինգ

Ձմռե պապ՝ հունգարացի Սանտա:

Ռեցեպտուրա

«Գեպարդ», «Բաբյոր», «Չեմպիոն»:
Սրսկելու բաչոկներ էին ծախում
Գյուղտեխնիկայի խանութի դիմացը:

Ասսասինիզատոր
Սպանիչ հոտ

Արագ էինք քայլում
Ձյուն էր գալիս
Վռազ էինք
Ետ չէինք հասցնում նայել
Քամի էր
Թողած հետքերը չտեսանք
Յետք մնաց թե չէ՝ չտեսանք,
Էդիկ ջան
Լիմոնով չայ խմենք եկ, ցուրտ է:

Թափանցիկ պատուհաններով մարզասրահի կողքով անցանք
Մեկը դժվարությամբ շտանգա էր բարձրացնում
Երեքը նայում էին:

«Մի հատ Գառնի, մի հատ էլ զաժիգալկա»,- փոքր խանութում ասեց հին ծխողի ձայնով մի ինտիլիգենտ կին, նրա հագած-կապածը սակայն «Պառլամենտ» առնողի էր:

*Հայաստանը Ռուսաստանի հետ կապված է արյունատար անոթներով: (Իշխող ուժի այլ պատգամավոր)*

«Ասա ինքնագնահատականդ էս անգամ դու մի բարձրացրա, թող ուրիշները բարձրացնեն»,- ասեց սպարտիվկով մի կին «Գազել»-ում, հեռախոսով, հետո երկար լսեց ու ավելացրեց. «Սաղ ներվերից ա Մարետ, ինչ ուզում էս ասա, սաղ ներվերից ա»:

*Սաղ սերվերից ա: (Միսադմին)*

Սրինգապուր

Հնդիկ ջահել տղեքը,
Որ մաքրում են պոլերը
Մեծ ու փոքր խանութների:

Մարշուտնիները մայրաքաղաքից գնացին:
Մարդիկ իրար հետ էլ չեն խոսում ավտոբուսներում:

Ձայն հետաց

«Ցավոք, խիղճը տանջում է ոչ թե նրանց ում պետք է, այլ նրանց ովքեր խիղճ ունեն»,- այսպես պատասխանեց երկրորդ նախագահը չորրորդ ղեկավարի պնդումներին՝ մամուլում:

Աիափորձ
Վախեցնելու փորձ

Աիառու

«Քո սև «Սիկո»
Մեր վարդագույն տրուսիկ»,
Մտածեց դեղատան աշխատողը:

Վես Անդերսոնի ֆիլմերում էլ չկան պատահական մարդիկ:

*Դեկորատիվնոյե աբայանիե գրուզինա: (Նիկիտա Միխալկով)*

«Վա՞ղն ա պանիխիդան»,
Հարցրեց մի տղամարդ:
«Ինչ ես ասում, էսօր ա»,
Մի օրվա վալիդ ինֆորմացիան
Հնարավորիս թանկ ծախողի մուննաթով
Ասեց աստիճաններին կանգնած կինը:
Մի քիչ հեռու, յոթ հնդիկ
Չինացիքի սինխրոնությամբ
Շեբեն էին լցնում արագ
Ինչը նոր կառուցվող շինության
Երրորդ հարկ էր պատրաստվում բարձրացնել
КС-45 կռանը:
Պրարաբը, ով մերոնցից էր
Հնդիկներին մեծահոգաբար
Ցույց տվեց որ հեռու գնան կռանի տակից
Երրորդ հարկում երկու հայ էին լռված
Մինչ շեբենի գալը
Նրանք իրար հետ ցույց տվեցին «V»,
Դիմացի մայթի քոֆեշոփի տիրոջը,
Ով գլխով արեց ու շատ բարձր ասեց.
«Հասկացա, հեսա երկու հատ սարքեմ, ախպերս»:

«Վեց հատ Մակկոֆե տու»,
Ասեց մի տարեց մարդ
Սեղանին դնելով
Տաս ու քսան դրամանոցներով
Մի ցելոֆան:
«Կարաս չհաշվես, հաշված ա»,
Ավելացրեց նա
Տնտղելով իր տարեկից կոլոտ կնոջը
Ով մի պահ կտրվելով «Արմենիա» թիվիից
Պոկեց կախած մակկոֆեներից վեց հատ
Տվեց տարեցին
Ու շարունակեց նայել
Բարձր կախված հեռուստացույցին
Որտեղից խռպոտ ձայնն ասեց.
«Լեռները կիիշեն, այսօր,
Քսաներկուսն անց տաս, մեր եթերում»:

Լեռնատանջ

Հայկական կինոյում իրար դեմ ոչ թե իդեաներն են պայքարում, այլ մարդիկ: Մարդը պայքարում է մարդու դեմ: Ռեժիսորը ասոցացվում է ոչ թե իր նկարածի հետ, այլ՝ ապրածի:

Երազների թագուհու երազանքները
Երազանքների թագուհու երազները:

Սքրինշոթեր սքրինշոթերից

Պրուստրացիա

Հանքապարտեզ

*Մենք լույսը դնում ենք աստղերի վրա, իսկ իրենք լուսավորում են դեկորացիան: (Ամերիկացի օպերատորի խոսքերը, 1920-կաններին գերմանական ստուդիաներում լինելուց հետո)*

«Արա ոռի լավ էր, պիզդեց լավ էր, չորս շիշ «Օհանյան»-ը ջրի պես գնաց, չնայած Անդոյին չդզեց, ասեց «Չայկովսկի» պտի վեկալեինք»,- լսվեց Կայծի վիսյոլի ձայնը տելեգրամից:

«Սեծեվոյ քաքել»: Հիշեցի Արտաշատի չաստում տարածված ֆրազը:

Կալամբուրնաշ

Կենձաբուրո ՕԵԿ

Ռուսական գազը պրուսական ամբարներում

Կրակադիլն ու Գենան

Կազմակերպինչ

Բառաշպար

Նեժինսկուն Դերժինսկու հետ փոխողները
Մեծ տերուարի կազմակերպիչ սոմելյեները
Սոցիալիստական պատասխանատվությամբ տղամարդիկ:

Հայաստանի հանրապետությունը՝ առկախ պետություն:

Ֆեստիվալներից
Նոր տարվա բերան
Շնորհավորանքներ էին գալիս:
Մաղթում էին անփորձանք տարի:
Նրանք չեն մոռանում նույնիսկ նրանց
Ում ֆիլմերը միշտ մերժում էին:
Նրանք մերժում էին ֆիլմերը
Այլ ոչ ռեժիսորներին:

*Պրիմեր խառոշ, եսլի իմ նաղը ապրավերգնուծ շտո տը, ա նի պաղտվերձիծ: Էտը պրաստոյ մատեմատիչեսկիյ զակոն:*
*(Ալեքսեյ Գուսև)*

Երազների աշխարհում
Վազելով եմ ման եկել
Գազելով եմ ման եկել
Երազների աշխարհում:

Ներսը և հույսը

Տառապատառ փախնել

Պսակապատում

Լավ ա, եթե էդ մարդուն տեսել ես մինչև մահանալը, երբ դեռ իրենից արձան չեն սարքել, ու դու հիշում էս ժիվոյ որպես: Հետո սաղ փչացնելու են:

Ոռից գլուխ փոխվել ես

Պոնտաբույծ

Առկայծագիր

«Հորրիդ Հենրի, Հորրիդ Հենրի, տնաքանդիկ գյադըլա»,- ասեց
մեկ ուրիշ, շատ ավելի փոքր երեխա:

*Հայֆիլմի սաղ ձայները մի պապկից են: Հայֆիլմի ձայն կա, առանձին ֆիլմերի ձայն չկա: (Դիանա Կարդումյան)*

Գյուլիվեր Թվիսթ

Էլ չկան «Դուխով» տոպրակները:

Միջին ծանրության կին

«Ասա ի՞նչ բլինչիկի միս, այ լավդ քունեմ, էսի հո՞ հարսանիք չի»,-
ասեց բեղերով տաքսիստը անմորուս տաքսիստին:

«Սարկազով(sic!) ասում ենք՝ մարդ մեռնի էլ, չի կարող ազատվել
ֆինանսական բեռից»,- ասաց մի երրորդական ընդդիմադիր:

Թաղման թափուր

Աղման թափոր

«Ի՞նչ ադրբեջանցի, Կովկասում իրար անկեղծ ատում են մենակ
վրացիք ու հայերը, էդ երբեք չի դզվի»,- ասեց ժամանակին Վալերը,
ով արմատներով Ջավախքից էր, ու լավ գիտեր, թե ինչ էր ասում:

Մարո Ծյոծյան մահացավ
Տատիի ծննդյան օրը:
Գերեզմաններ գնացի
Ծաղիկներ դրեցի
Տատիին, պապիին, պապային:
Մի ծաղիկ պահեցի
Որ Համոյի հոր ու մոր
Քարի մոտ դնեմ,
Նրանք մի գերեզման ներքև են:
Մտա, դրեցի
Բայց այնտեղ մի քար էլ էր ավելացել
Համոյի ախպերը նայեց վրաս
Սիրուն նկար էր
Բայց դե ծաղիկ էլ չկար
«Այ յիբյոմատ, չգիտեի՞ր որ Սամվելն էլ ա ընդեղ»,
Կասեր Համոն ու կխնդար ներողամիտ, հետո կավելացներ.
«Մյուս անգամ մի երկու ծաղիկ ավել կվեկալես»:

Մենք որ սմարթֆոնին հլը հեռախոս ենք ասում:

Մեծ հնդկական պատով
Գերեզմաններից առանձնացված
«Դեֆանս» թաղամասի մոտով անցանք,
Որի ապագա բնակիչները
Ստաբիլ լաց են լսելու
Ամեն օր՝ տասներկուսից երկուսը,
Նույնիսկ եթե փակեն ժալյուզները:

Պատռվակ
Մատռված պատրվակ

«Հին Ատկատներ» Լևոն Շանթ

Քեռին էր եկել, ոչ իմ
Հարյուր հազարից մեկը
Բոյով, լավ դեմքով, մոլորված:
Խոսեցինք, լսեցի
Ասի քեզ բան ունեմ տալու
Ու կլադովկի խորքից
Հանեցի լիտրանոց շիշը
Իր քաշած օղու
Որի վրա թղթի սկոչ էի կպցրել
Ու հետո գրել. «Խաղող, Արտուշ դադայ,
Մարտակերտ, 2022»:

*«Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհը փակ է բեռնատարների համար»: (Ամեն տարի սեզոնին օրը մեջ գրվող հաղորդագրություն)*

Pastաhավաք խումբ

Ձկո սրահների
Իշխանամերձ ստերլյաձները:

Սանչո Պանդա

Քուն-ֆու Պանսա

Պարզվեց, ճիշտը ոչ միայն ցուլն էր:

Կոնֆորմինիստր

Հայվանդանոց

Էութենական պետություն

Պսակեցին Մարիոյին
Տվին չոբան Կարիոյին:

Ջահառու

Փոքրիկ իշխանություն

*Արա հիշի, լյուբով էտը ինդիվիդուալնոյե սաստայանիե բեսամերտիյա: (Կայծ, Տելեգրամի աուդիոներից)*

Ծանոթներիցս մեկը
Երրորդ աղջիկն ունեցավ
Ուրախացա, շնորհավորեցի
Ընթացքում մի բան անցավ մտքովս
Բայց չասեցի
Մարդ ես
Կարող ա նեղվեր
Ուղղակի հեռախոսի մեջ
Նրա անունից հետո
Ավելացրեցի «արքա» բառը:

«Վարդան, կոֆեն որ սարքում ես, ջանիկ, մեջը վերջում, արդեն բաժակի մեջ, երեքից չորս կաթիլ ջուր, որ շլակները տանի ներքև»: Չգիտես խի հիշեցի դա, երբ կանգնած էի Մարո ծյոծյայի մոտ, սգո սրահում, ցուրտ դեկտեմբերին:

Սրտիֆիկատ

Մենք, որ մտահորիզոնի փոխարեն
Փորձում ենք ընդլայնել մեր կոմֆորտի տարածքը:

Հարմարավետության բարդույթ

Վարսավիրահայ

«Տեր-Բլյու»
Եկեղեցական պանիր

Հանվստացնել

«Հայկանիշ»՝ գրել էին «հատկանիշի» փոխարեն «Հրապարակ»-ում:

Մերժավյու

Կլարա Ծեր Կին

*Մենք ուզում ենք հնարավորինս մարդկանց մղել դեպի հանրային տրանսպորտ: (Քաղաքապետ)*

Մեր երկիրը
Նմանվել ա աշխատողի,
Ով կարող ա ստանա
Տասներեքերորդ աշխատավարձը
Բայց չի ստացել նախորդ տասներկուսը:

Պետրոս Հետադարձ

Ոլորտներում տարբեր
Կատարում էինք անտարբեր:

«Արա լավ էլի, մի արեք տենց բան»,
Չերթական անգամ ջղայնացանք
Չ1-ի՝ ֆիլմի տիտրերը
Արագացված տալու վրա:

Ես հոգնեցի էս կեղտոտ քաղաքում՝ ուր չկա ազատ տուն:

Անհիմն սիրո հիմնը

Բոզի տղու դեմքով բոզի տղեքը:

«Էն գյադի նոր երկը լսել ի՞ս»,
Ասեց ցրտին գործ անողներից մեկը մյուսին
Նոր կառուցվող Սիթիում:
Ու չիմացանք թե ում հետ էր
Քանզի իրենց ժամանակում
Նրանք շատ են:

Մի ծանոթ ատամնաբույժ ունեի,
Նա սիրում էր հավաքել հանած ատամները,
Կպցնել իրար, շրջանակներ սարքել՝
Անվանելով դրանց
Ատամնանիվներ:
Գեղեցիկ էր
Տարբեր կյանքեր տեսած, տարբեր բաներ կծծած
Ատամների միավորումը մի շուրջպարում,
Պիկասոյի հայտնի նկարի նման, Մատիսի:

Նիրիվաննա

Զալլոիմիտատոր

Լլիր

*Այնտեղ ծով չկար,*
*Բայց հիշում եմ ծովը:*
*Ես ճարեցի հացն իմ,*
*Բայց հիշում եմ սովը:*
*(Բորիս Գրեբենշչիկով*
*թարգմանությունը՝*
*Արմեն Շեկոյանի)*

Ականատեսին ականջալուր եղանք

Ականատնտես

Լավություն արա, հուրը գցի

Կյանքեր ու կայքեր

Սիլվեսթր Կապուտիկյան
Սիլվեսթր Ստալին

դոկտեմբեր

Ամբարտակված ամբարներ

*Մեզ այլևս պետք չեն պաշտոնյաներ, ովքեր բարձրացնում են հարցեր: Մեզ պետք են պաշտոնյաներ, ովքեր լուծում են հարցեր: (Նիկոլ Փաշինյան)*

Լուրջպար բռնել

Մենք դեռ հիշում ենք
Հին աղբ թափողներին
Դատարկ վեդրոներով
Վերադառնալիս:

Անցյալի աճանցյալները

Հետը մնացինք,
Հետ մնացինք:

«Բրբուրակ, չտո՞ էտը զնաչիտ պա արմյանսկի»,
Հարցրեց ռուսահայ երեխան:

Տարիներին մոտակա
Բան կունենա՞նք կուտակած:

Մարսը թողած, Մարսի այգին:

Հոլմսը Վաթսոնին մոտ մի տղամարդ էր:

Քեզնով ենք լի, Բրյուս:

Մաղթում եմ դառնանք,
Որ չդառնանանք:

«Սկզբից մտի «Վեգա», հետո «Օմեգա»»,
Կայծին բարի խորհուրդ էր տվել
Վարկեր, բայց նաև ցանկություններ ունեցող
Մի փորձառու կատարող:

Վինսենթը մտավ «Վեգա»:

Տարտարոսիկներ
Դժոխային
Հարսանիքներից:

Մարդիկ առանց անցյալի
Մարդիկ առցանց անցյալով:

«Ա տի զնայե՞շ Վաչագանա Բարսեգըվիչա»,
Հարցրեց ռուսահայ երեխան:

Ստոր անցեստորներ

Տարվա վերջ երեք միլիոնն անցանք, բայց սենց չէինք ուզում:

«Ալիսա, վկլյուչի Աշոտ Ոսկանյան»,
Գոռաց Ռուսաստանում մոլորված հայախոս երեխան:

«Հիշում է՞ս Ռեմբոն ինչ ա ասում երկրորդի վերջում»,- ասաց Նալբանդյանը:
«Ջոն, ո՞նց ես բա հիմա ապրելու»,- հարցրեց Կամանդիրը:
«Դեյ բայ դեյ»,- պատասխանեց Ռեմբոն ու հեռացավ օբշի պլանում:

Լացկանը պլացկարտում

Թափով տոլմա

Դիմ Դիմիչին տեսանք
Զիմ Զիմովին հիշեցինք:

Պյատիգորսկում, ամեն հունվարին,
Խեչոյանի պատմվածքներ էի կարդում,
Ու Շեկոյանի թարգմանությունները
Գրեբենշչիկովի գրածների,
Որոնք օրիգինալից լավն էին թվում:

Էն գյոթը էլի գերան էր բերել:

«Թող մենակ մենք վատ չլնենք»: Առաջարկեցի, չմերժեցին, խմեցինք:

Չինացիստ

Դուք դեռ էդքան չկաք
Որ կարանաք մեզ չհարգել:

«Ախպերս, մի հատ «Քավարան»-ը դիր»,
Ասեց խմած մեկը:

Դանթեի «Քարավանը»

Որկնամոլ

Կավալեռնիկ

Տարիներ և տրիներներ

Դուռլինգուս

Անտերվյու

*«Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհը բաց է բեռնատարների համար»: (Ամեն տարի սեզոնին օրը մեջ գրվող հաղորդագրություն)*

Հունվարին, չորրորդ անգամ,
Առանց մի տառ փոխելու,
Նույն տեքստը ուղարկեց MayrAtor-ը:
«Իմ մոտ երկրորդն էր»,- գրեց Արմենը,
Ով նախանցյալ տարի էր փոխել հեռախոսը:

Ազատների վիզայականցումը
Մոնաների լիզայականացումը:

«Քո համար մի հատ լավ բան եմ մտածել, գրի չմոռանաս»,- ասեց լավ խմած Արմենը, մյուս Արմենը, գիշերվա մեկի կողմերը, ու ավելացրեց. «Մի շիշ առաջ ասեցի գամ, չստացվեց»:

Սիրենք և կատարենք,
Հույսի մթնոլորտում
Իրար սատարենք:

Մարշուտնիների վերջին պրիզիվին
Ճամփու դրինք
Ու բարձրացանք ավտոբուս:

Խեռան հառաչանքը

*Ա վոտ ի Լիրովական: (Կիր արքա)*

Օգտագործակալ

Էլ իրար տեղ չեն ստանում, տխուր ա:

Վայնա ի լիր
Վաննա ի միր
Վայնա ի միրգ:

Յրավիրահայ

- Արխեպնակ, այսինքն արխետիպների պնակ:
- Միգուցե՞ արքեպնակ:
- Ոչ, ձեր ասածը ղեկավարի ափսեն է:

Բենոն ապրում էր «Երիտասարդական» մետրոյի մոտ: Սոտըլվի դեռ չունեինք: Երբ հասնում էի, հեռախոսով կաբինկեք կային, պադզեմկում, գրքերինում չէ, մյուսում, զանգում էի, երկու րոպեյից իջնում էր: Չեմ հիշում րոպեն ինչքան էր, քսանհինգ թե՞ հիսուն դրամ:

Յամային հայություն

Բեկված ֆիդբեքներ

Վարպետանց դասեր

Ի՞նչ իմանար Իսրայել օրին,
Որ Իսրայելը կիասներ էս օրին:

Դվարեցկու «Էնդշպիլ»-ը կարդացինք
Պալանսկու «Դվարեց»-ը չտեսանք:

«Հրապարակ կգնանք, Սեվեռնի պռասպեկտ, ընդեղի «Ադիդաս»-ը,
ուզում եմ ինձ ծյոմնի կռասովկա առնեմ, թե չէ սվետլի ա սաղ»,
Ասեց աղջիկ պադրոստըկը,
Ով մինչև դա նկարվեց Արարատի ֆոնին,
Բայց էնպես կանգնած, որ դեմքը չերևա՝
Միայն երկար մազերը:
«Սաղ ռազբիրատ արած կլնեն, էս սեզոնին ստեղ բան չես ճարի»,
Ասեց ջոգող մայրը, սպարտիվկով ու սև բոթասներով,
«Զվարթնոց»-ի պասպորտ կանտրոլի «Նոկիա»-ի օձի նման հերթի
Երեք պարունակներից՝ երկրորդում:

Ձյուն էր գալիս, մառախուղ էր:
Եմենին խփեց Զապըդը:
Ջերմությունս կամաց կամաց փոխվում է հազի:

Մենք, որ տեսել ենք Դոգի
Միայն սրեդնի պլանը:

Կարոտի լեռները մազլցեցինք
Ետ նայեցինք
Դաշտերը կարոտեցինք:

Ջոգումենտալ ֆիլմ

Սարգազմ

Հեռավարակ

*Վաղվա քամիները վաղը կփչեն:*
*(«Դռափս ըֆ Գադ»)*

«Մի հատ մոտո ունեի, դեղին, քշում էի դպրոցական վախտ, լավ էի քշում, բայց մի անգամ ուզեցի պատի վրով թռնեմ, խփեցի պատը քանդվավ, մոտոս էլ ցխվավ: Հետո նոր էի պրծել տասը, երկու գաիշնիկ ասին՝ արի նստի մոտոյի վրա մենք բռթենք, խոդի չի ընգնում, իրեք ականի էր, նստեցի, բռթեցին, խոդի ընգավ, չկարացա կանգնացնեմ, գնացի, հետևիցս վազեցին, էլի գնացի խփեցի պատին, գյաբառլամիշ եղա: Վերջերս էլ տղես թոռանս համար եսիմինչ էր առել, էն որ բռնվելու տեղ չունի, ակերով, ասի տու քշեմ, տվեց, տան մեջ չկարացի ինձ պահեմ, գնացի տվի պատին»,- խնդալով ասեց Շահենը:

Աստրոմելիորատոր

Գաստրոմելիորատոր

Կհավաքենք սիբեխ,
Սինդրուկ ու մանդակ
Եվ կեփենք ղազանում անտակ:

«Ռուզան ջան, առիթ ունենք, էն կոնյակից կարող ա՞ մնացած լինի»,- ասաց մի կին, հեռախոսով, փողոցում, ու պատասխանը լսելուց հետո միանգամից ավելացրեց. «Հինգ լիտր»:

Սուրճ և մանգաղ

«Ես քեզ սենց ասեմ էդ ինձ նենց մարդ ա փրեդիքըթ արել, որ հավատում եմ»,- ասեց մի աղջիկ մյուսին յոթ համարի ավտոբուսում, ու շարունակեց շարունակել խոսելը:

Ճամփեքին էինք:
«Հայրենիքը պետություն է»,
Գրված էր տարբեր փողոցներում, լուսացույցերի վերևներում:
«Կան բաներ, որ կանխորոշված են ու վերջ
Կան բաներ, որ պիտի լինի այդպես ու վերջ»,
Նրանցից մեկի տակ երգեց Դումիկյանը:

Հայրենիքը պետություն էր:

Գրիչս պանրաբար դրեցի
Բլոկնոտի մեջ:

*«Բաքո, դու սրանց հետ ընդհանրապես չե՞ս խոսում, չե՞ս ասում թե ի՞նչ ենք բանակցում: (Ըստ սլուխերի, Սերժ Սարգսյանի հարցը ԱՀ նախագահին, Արցախի ԱԺ խմբակցությունների ու ռազմաքաղաքական էլիտայի հետ հանդիպման ժամանակ, տասնվեցի ամռանը)*

Վարչապետը, ում խոսափողը մինչեւ տասնութ թիվը տասնհինգ րոպեից անջատում էին, հիմա կարող է խոսել այնքան, որքան ուզում է:

Արևադարձյալ

Տաղտկամած

Մենք դեռ հիշում ենք
Անսգոսրաի երկիրը
Ու մահացածի կողքին
Ամբողջ գիշեր նստելը
Քաղաքում:

Բորշչեցինք սպասը

«Հիմա ես չգիտեմ՝ ինչ անեմ»,
Ասեց մի փոքր երեխա
Ով ուղղակի կանգնել էր բակում
Եվ ում ձեռքից ծնողը
Քիչ առաջ վերցրել էր հեռախոսը:

Դեղձի սեզոնն անցավ:
Թիմըթի Շալամեն ու Քենդալ Ջենները
Հանդիպում են:
Դեղձ ըլներ, կիսեինք:
Վիլլի Վոնկա, լավ իմացիր
Էս դարդերին չենք դիմանում:

«Սա պուցամատն է
Պուցա-պուցա մատն է»,
Երգում ա էն աղջիկը:

Բախտակամած

«Բաքսի. երջանկության թերմոդինամիկան» ֆիլմ

Զաստերում աշխատող կանայք
Պլացերի կողքով քայլող
Անփործ որձերի
Յործանուտով անցնող:

Կլրիպտոարժույթ

Յառաչաբան

Կլրոտ պցերը
Վերջին կատարումից
Առավոտվա բերան
Մի կերպ դուրս պրծած:

- «Մենք տեսանք», «մենք լսեցինք», «մենք զգացինք»:
   Մենակ չե՞ք, չեմ հասկանում:
- Դուք դա կարդացիք, չէ՞:
- Այո:
- Դե տեսնում եք,  արդեն «մենք» ենք, երկուսով:
- Իսկ եթե ոչ ոք չի՞ կարդում:
- Այդ ժամանակ «ես» է գրված լինում:
- Բայց «մենք» է գրված:
- Ի՞նչ իմացաք:
- Կարդացի:
- Չէ, հենց կարդում եք, «մենք» է դառնում:
- Պրիդուռըկ:

«Իսկ այժմ համեմենք մեր վիդեոն մոնտաժով»,- լսվեց յութուբից:

Սրանք անառողջ մտքեր են՝ առողջ մարդկանց համար:

Թմրամիջյան կոնֆլիկտ

Միլֆ և
Պետրով

Քաղաքական միլֆեր

«Մարդուս գործն է միշտ անմահ»,- ասաց հայտնի մարդու այրին:

Ներվերս մի կեր
Կլիրս կեր:

«Էսօր մտածեցի, որ տասնմեկ տարեկանից անցել ա երեսուն տարի»,- ասեց մյուս Արմենը, ում քառասունմեկ ամյակն էր էդ օրը: «Ուղղակի ես տասնմեկում մտածել եմ, որ մեծացել եմ արդեն, ու էդ օրվանից մեծ եմ»:

Դուք, որ ամեն ինչը սկսեցիք ձեր կետից:

Մոլեգին հողմերի սարաբանդը

Թեկուզ կոտրած տաշտում
Իրար սիրում էինք ու պաշտում:

Չեմ հիշում, մի տեղ գրել եմ «Շիրիմիդ լույս, Քրիստափոր», թե՝ չէ, Կոլումբոսի մասին:

Ցիվիլ սիվիներ

Սգո սպասասրահ

«Հա արա, մոռացա ասեմ, էսօր աերոպորտ էինք գնում, ինչ տենանք պլակատի վրա խփած՝ երեկվա ստրիպտիզի ռեկլամը, վրեն էլ գրած էր՝ «Ասա մուտքանուն «վագռ» տոլի «ծիգռ» և կստանաս անվճար մուտք»: Արա խնդալուն լսի, հենց երեգ գնացել ենք, մարդա տաս հազար տվել ենք մտնելուն, արա երեսուն հազար մենակ մուտքի փող ենք տվել, բերնով էս ասում»,- ասեց  Կայծը Տելեգրամի աուդիոյում, խնդալով:

Կատարողի լիրն ա քաղցր
Բայց մենակ լրով չեն կատարում:

Կատարողի լիրն ա քաղցր,
Ու ոչ միայն կատարողինը:

Դաժանակիր աշխատանք

Օբյեկտիվ իրականության սուբյեկտիվիզացիայով էինք զբաղված
Անմատույց սիրո կառամատույցում:

Մենք, որ էս կյանքում
Ոչ հավատի աղբյուր ունեցանք
Ոչ հավաստի:

«Իթս մայ լասթ ուան դիջիթ դեյ, թըմորո այ ուիլ բի թեն»,
Ասեց օնլայն աշակերտը տխուր: Նա նեյթիվ սփիքըր էր:

Հիշեցի էլի, որ,
Անթրոպոմորֆ մի կատու
Ինձ անվանեց ոռատու:

Թարսնաքար

Անցան տարիներ
Եվ armlur.am-ում
Հայտնվեց մի վիդեո
Որտեղ կարծես ֆիքսված էր
Մարտակերտցի
Տեփնանց Արամի
Կոմբայնը,
Որի վրա
Ընդհանուր պլանում
Կրակահերթերի տարափ էր:
Նա առաջին զոհն էր
Քսան թվի պատերազմից հետո
«Խաղաղ» պայմաններում:

Մի մարդ էլ մահացավ
Մարտակերտցի
Ոչ Մարտակերտում:
Եվս մեկ մարդ գնաց
Կորող լեզվի կրողներից:

«Պրինցիպի բանաստեղծությունը էդ ափսոսանքն ա,
որ ոչ մի բան չհասցրեցիր անել»,- ասեցի ես:
«Էդ պահին էլ ես հասկանում, որ ափսոսալու ես,
բայց չես անում»,- պատասխանեց Արմենը:

Ճամփաներին կյանքի խաչվող
Ականջներիս չարեցինք օղ:

«Ախպերս, մի մետր փոքր գիրք ա պետք, տասնիինգը տասի վրա, մեբելի ու պատի մեջ արանք ա մնացել, պտի լցվի»,- ասեց գրավաճառին մի սալիդնի հագնված մարդ, տարիներ առաջ, բժշկականի գետնանցումում: «Արի ման գանք, ախպերս, կճարենք»,- պատասխանեց գրավաճառը ու գործնական կպավ գործին:

Դեռ հիշում ենք իզի քարտերը:

*Ֆանտաստիկ այլասերված իրավիճակ է: (Քաղմեկնաբան)*

Լեն կրուգների
Նեղ վիճակները:

Բեսպլատնի լիր վ միշելովկե:

Աղջիկների երկար եղունգների կտկտոցը
Ձեռախոսի մեջ տեքստ հավաքելուց:

Կիսալուսինե

Արագասաց

- Ձերը լավ ֆուտբոլիստ էր, դուրսն էլ ա խաղացել:
- Ես էլ եմ փոքր վախտ դուրսը խաղացել:
- Ֆուտբո՞լ:
- Չե, վաբշե:

Գորտֆոլիո

Կամուրճ
Մրճաձև կամուրջ

Ի՞նչ կա, այ լայվ մտնող:

Պրինցիպի սրանք ոտանավորներ են երեխեքի համար, որոնք սակայն պետք է կարդացվեն մեծ տարիքում:

Կյանք ու կլիպ

Բրդապատճառ

Կառապնարան
Կառապաններին պատժելու վայր

*Ես հիմնականում սոկի շշով եմ սրանց ռեգլիրովկա անում: Մեջը քար եմ քցում, չխկչխկացնում եմ, հետ են դառնում: (Չոբան Սեթո)*

*Ջանասիրաբար կաշխատենք, որպեսզի հասնենք վերջնագծին: (ԱՄՆ Պետդեպի փոխխոսնակ)*

Անսպասելինգուս

Կարոտի հանգանակ

Hope, hope
Ջիվանի:

Տարիներ և Տրիերներ

Անիոգ, բայց անհագ:

Դեղին «Ֆորդ» էր, վրան բան չկար գրած:

Մի պսակ էին դնում մեքենայի մեջ
Մեխակներ էին
Սպիտակի մեջ կարմիրով
Գրված էր «20»:

Ռետրոնսլյատոր

Գնում էինք ծնունդ
Կլանում սնունդ:

Լիրը հասավ պոռնիկ մորը:

Ութ համարի օքթոպուսը

Ղուրբան ըլնենք ուրբանիստներին:

Սրանք բանաստեղծություն չդարձած բանաստեղծություններ են:

Տասնվեցին
Դիլիջանում շատ մարդ տեսանք:
Նրանցից մեկը մահացավ երեկ:
Մյուսը նստած ա
Ոչ բարեկամ երկրի
Մայրաքաղաքում:

Քյասիբիր

Անցյալի ու ապագայի տակ մնացածները

Պրակալեզ

«Արա դու որ մեռնես, ես ու՞մ պտի խեռեմ»,- ասեց Կայծը:

- Ձեր կետադրական գիտելիքները խայտառակ վիճակում են:
- Գիտեմ, բայց ես դա անվանում եմ «հեղինակային կետադրություն»:

Մեզնից շատերը
Չվարկաբեկված
Բայց վարկերի տակ բեկված:

- Քո պլյուսն ա, որ դու վարչապետ չես եղել:
- Էդ իմ հիմնական պլյուսն ա:

Խեռագիր

Մենք,
Որ լավություն ենք անում
Գցում ենք մեր մեջ
Ու պղտորում ենք
Մեր միջի ջուրը:

- Գիտեք որոշ բաներ կան էս գրածների մեջ, որ անհասկանալի են:
- Իսկ միգուցե որոշ բաներ կան, որ հասկանա՞լի են:
- Սա փաստորեն ձեր թողած հետքն է՞:
- Ոչ, սրանք իմ վրա թողած հետքերն են:

Լացող սմայլիկներ

Դիակզարան

Յանգապարտեզ

Ծնվել եմ 1984-ին, ընտանիքում:

Մենք, որ հարևանների հետ նկարներ չունենք:

Յամայնապարտեզ

«Նի ունիժայ, նի սուծի, նի աբիժայսա, էս էլ գրի մոտդ»,- ասեց Կայծը:

«Վերնագիրը դիր «Կատարման փոխարեն»»,
Վախտին առաջարկեց Արմենը:

Չոր խաչմերուկների ու խաղաղության նավահանգիստների փակուղում:

«Մռռան գույնը»

Ամառակալել թե՞ ամռակալել:

Բնիկնեյմ

«Արա, բումերանգը նայի ինչ ա, սաղ կյանքս Նիվեն եմ ատել, մեկ էլ Ռենջ Ռովերի պուճուրը, Էվագը, բայց հիմա երկուսն էլ սիրում եմ, առնելու եմ»,- ասեց Կայծը:

«Ավարտելու քսան տարին էր, դասարանով գնացինք դպրոց, ուսուցչանոցի համար մի մեծ ժամ էինք առել, նստեցինք մի քիչ, հետո գնացինք գերեզմաններ, Ռուբ Կարպիչի գերեզմանը, դե մեզ դաս ա տվել, հետո եկանք տներով, արդեն բլոկադայի վախտերն էին»,- ասեց երեսունյոթամյա մի տղամարդ, ՅՅ-ում թեյ խմելիս:

Գեպարդյե

Մեգապնակ

Էդ ֆիլմի մի տեսարանը իմ ամբողջ կյանքի բյուջեն ա:

Չունեցանք նպատակ,
Որ չդառնանք ինքներս մեզ հպատակ:
Ապրեցինք սենց, գրեցինք սրանք,
Աննպատակ:

- Ես համոզված չեմ:
- Ինչու՞մ:
- Ընդհանրապես:

- Ինչու չեք նկարում, ձեզ մոտ ավելի լավ է ստացվում գրե՞լը:
- Գիտեք, ի տարբերություն ոմնաց, ինձ մոտ ավելի լավ է ստացվում չնկարելը, քան չգրելը:

Խորհրդային ընթրիք

«Տխուր լուր եղավ, բայց սրանից հետո միշտ լավ բաներ լսենք»,- ասեց մի կին: Ու մենք հիշեցինք մեր սիրած երգերը:

Պրոֆեսիոնալ շախմատիստները
Խոսում էին չիթերներից:
Նրանք նման էին ըդալթ աստղերի,
Ովքեր խոսում էին մաստուրբացիայից:

«Մի թոռս նորմալ, ժողովրդական, իջնում խաղում ա, մյուսը չէ,
սաղ օրը պարփակված ա հեռախոսի մեջ»,- ասեց մի կին:
«Եսիմ է, մի տարվա տարբերություն, բայց ինչ
անտարբերություն»,- պատասխանեց մյուսը:

- Յոգևոր պրակտիկաներով զբաղվում ե՞ք:
- Ոչ, միայն տեսությամբ:

Մի ցավացրեք ձեզ,
Ուրիշներին ցավացնելու համար:

«Երևան, գոռըդ ռավեստնիկ Ռիմա
Երևան, վկուսնիյ կանյակ ի վինա»:
Յնչեց մի մեքենայի միջից, ոչ Յռոմում:

«Meble kuchenne» գրված էր լեհական ու խոհանոցային անցյալ
ունեցող մեքենայի վրա:

- Ձեր սիրած ֆոնտը ո՞րն է:
- «Րիերը»
- Ծանոթ չեմ:
- Ինչպես չէ, գրեք «Ֆոնտ Րիեր», կբերի, չնայած ձմեռվա սեզոնին
փակվում է մեկ-մեկ:
- Ինչը՞
- Լարսը:

Արծանքագիր
Չվուկավիկ-Էխոպիսեց

«Ապե, Մելքոնյանին պետք ա պրյամո հարցնենք, էդ հիմնարկում մեկը կա՞ որ կացկածում ա մեր արածի վրա, վաբշե կացկածող կա՞»,- ասեց մի տղա, իր վրա չկացկածողներից:

Կատապուլտյանտ
Կատապուլյանտ

Եթե կուզեն
Ձերոնց տանեմ
Լեվերկուզեն:

Թախիղճ

Դեկտեմբերն էր, անձրև էր գալիս
Անարմատ եղևնիների միջով
Յեծանիվով
Բաղրամյանով
Բարձրանում էր
Դեղին յանդեքսով մի հնդիկ:

Երեք հարկանի պիոներ պալատը քանդեցին
Վերջապես լույս ընկավ
Յետնի սեփական տների վրա
Կարճ ժամանակով
Մաքսիմում մեկ երկու տարով
Մինչեւ նավաստրոյկեն սարքեն:

Ավերիչ վիրուսի հորիզոններում

Պիոները պալատում

Չինաստանի դեսպանատան ստենդերը
Դատարկ էին, սպիտակ էին, կարմիր չէին:

Մի տղա էր ծխում `
Նայելով գիպսից կնոջը,
Գեղարվեստի ինստիտուտի
Երկրորդ հարկում:

Ինքնաբավ կարոտի միջնորմը

Արուսիմյակի

Երվանդուհիներ ու
Արշակուհիներ

Մենք որ տարիքից ամաչելով
Կատարումների փոխարեն
Մեկ մեկ նայում ենք «Բիկինի ֆեշըն շոու»-ներ
Արդեն փոքր էկրանի մոտ լռված
Մոռանալով թե խի ենք ընդհանրապես հավաքվել:
Ու միջոցները էլ չեն մոտիկացնում նպատակը
Իսկ ժամանակին նույնիսկ արդարացնում էին:

Աստղաբաշխական խումհար

«Տղա ջան, դրա վրա ոտ մի դիր, կտրաքացնի, բիլի սլուչիի»,- ասեց հարևանը: «Բան չի ըլնի, էսի Հայկոն ձեռի մեջ ա պայթըցնում»,- պատասխանեց երեխան, հետո պտտվեց ու սպառնաց մեկ ուրիշին. «Վրես չքցես, թե չէ կկոխեմ էդ բոմբը բերանդ»:

Օգնատանջ

Լենոնի TDK կասետը
«Բիթլզ»-ի վերջին երգը վրան:

Մենք սիրում էինք քաշել, նայել ու ջնջել
Կամ քաշել չնայել ու ջնջել
Ռութրաքերից ու Ռառբըզըից:
Տենց ստացվեց, որ չսիրեցինք նայել օնլայն:

Գլխավոր սրբաբան

«Երկու հատ կոլայի համար մտնելու ե՞ս սիթի, լավ չե՞ս արա»,- նախատեց մեկը մյուսին, դեկտեմբերի երեսունին, մետրո չմտած: «Ապե, սենց ասեմ, օբշիով ես դրան բարև չեմ տալիս»,- լսվեց քսան մետր հետո: «Արա մեռնելուց պրծա, ես տենց գլխացավ կյանքում չէի ունեցել»,- ասեց մեկ ուրիշը, Բարեկամության իր լարյոկը բացելիս:

«Երկու երեխա ունեն, պուճուր են արդեն»,- ասեց Կայծը:

Հազպրոմ

«Մեկ զանգով դարձիր տրոլեյբուսի վարորդ»,- գրված էր տրոլեյբուսի վրա ու տրված էր 011-ով սկսվող համար:

Համայն Պրուսիո պատրիարք

«Ես չեմ գրում որ կարդան, ես ուզում եմ որ իմանան»,- լսվեց մի տեղից:

«Մի հատ էլ կա, Յովո, հենա»,
Ասեց սուրճի բաժակով կանգնած տղամարդը
Ցույց տալով կոֆեի ապարատի տակ ընկած հիսուն դրամանոցը
Կռացած Յովոյին:

Կուլինինգուս
Խոհարարական

Չպսակված, բայց բաժանված երիտասարդ էր:

«Դերեվյաննիյ վեկ»,
Գրված էր խանութի վրա, հայերեն
Նարդոսի ռադիոլյուբիծելի դեմը,
Որտեղ, ի զարմանս մեզ,
Ամեն ինչ վաճառում էին,
Բացի դագաղից:

«Վսյո սխվաչենո, վսյո»,
Ասեց մի նկարիչ
Երկու հազար ութի մարտին,
Սարյանի մոտի վերնիսաժում:

Ժաժիոտաժ

*Ինքը լեգենդ ա, մենք սաղս կգնանք, ինքը կմնա: Աշխատում ենք մենք էլ նենց անենք, որ մենք էլ մնանք, եթե կստացվի:*
*(Լեգենդի որդի)*

Չափըս ճանաչիր

Խմբերի անունից անորոշ թեմաներով խոսող անհատները:

Նար-Դոսի վրա
Մերսում դագաղում:

«Չեսա չորսն ա ըլնելու»,
Ասեց բանալ բաները
Ճեշտել սիրող մի մարդ
Չորսին հինգ պակաս:

«Ապեր, մի խոսքով, նենց չի որ դու գրել ես իքս իրանք տեսել են իգրեկ, ընդեղ լավագույններն են էդ ոլորտի, զգույշ կլինես»,- հոգնելով հեռախոսով երկար բացատրելուց՝ եզրափակեց մի բոյով տղամարդ:

Էթնիկ սիրո դեմարշը

Չիսունայոթ ավտոբուսում
Մի կին սերիալ էր նայում ռուսական,
Մյուսը գիրք էր կարդում
Որի հերոսի անունը միսթըր Էքրոյդ էր:
«Միրո, Միրո» գոռաց մեկը կանգառում
Ու բոլորը նայեցին նրան:

Գութանիա

Ցայսօր և վաղը

Բիզել

Դզակոթ

Դեղլու

«Քոուչ Վարդան, ես էսօր ֆուտբոլի եմ գնում, չեմ կարա պարապեմ»,- գրեց Մենուան Լոսից:

Ռոբերտ Քոուչարյան
Քաղաքական թիմի մարզիչ

Հազար ու մի մանրուք էին քննարկում
Կանգնած երկու կանայք ու տղամարդը
Ով մորթիով վարատնիկով վերակու էր հագել:
Կողքներով հիմնականում անտարբեր անցնում էին
Իրենց գործերին գնացող մարդիկ:
Տարիքով մի մարդ կանգնեց
Երկար նայեց գունավոր բրոշյուրներով ստենդին
Մեջքով քիչ հեռու կանգնածներին:
Հետո պտտվեց, հարցրեց. «Հա՞յ են սրանք»,
Ցույց տալով բրոշյուրների վրայի ժպտացող մարդկանց:
Պատասխանը չլսեցի, տեսա որ վերցրեց կապույտը ու գնաց:
Մենք, որ կտակարանը կարդալու փոխարեն
Տարի մեկ «Դեկալոգ»-ից էինք մի բան նայում:

Տերտերն էլ թաղման թամադան ա:

Մեր Գենետիկ թայմկոդը

Ապրեստագետ

Փնտրուք

«Այ ցավդ տանեմ, ես քեզ ասում եմ վեկալ էդ տվածդ քսան դրամները, ինձնից էդ չեն վեկալում կասսայում»,- ասաց վարորդը որերորդ անգամ ու ավելացրեց. «Ասում են էս տար, տեղը նորմալ փող բեր»:
«Հա բա հիսուն խի՞ եք վերցնում»,- շարունակեց  կինը, որ տվել էր էդ գումարը:
«Հիսունը ինձնից վերցնում են, տասանոց ու քսանանոց չեն վերցնում»,- նորից ասեց վարորդը:
«Խի՞ էդ փող չի՞»,- վրդովվեց կինը:
«Չեք հասկանում որ չեն վերցնում, տիկին»,- միջամտեց տարիքով մի տղամարդ՝ փեսուն հարսինով լավություն անողի դեմքով:
«Ես կզանգեմ թեժ գիծ»,- չհանձնվեց կինը:
«Զանգի, բան չի փոխվի»,- պատասխանեց վարորդը:
«Բանկերին, խանութներին, սդաչիի համար էդ փողը պետք ա, ես ինչ անեմ, որ խանութում ինձ էդ են տալիս»,- տխրեց կինը:
«Այ ցավդ տանեմ վերցրու բան պետք չի, քեզ մի բան կառնես»,- ասեց տղամարդը՝ մատով ցույց տալով քսանանոցները:
«Հարյուր դրամով ինձ ի՞նչ առնեմ»,- եզրափակեց կինն ու բոլորով ծիծաղեցին:

- Արդեն ուշ ա՞:
- Չլը ուշ ա:

«Էհ, էլ մի, դե հասկացար, արդեն»,
Ասեց մի աղջիկ հեռախոսով
Ակնարկալից ժպիտով:

Դերասպան

«Կատարելը երբեք այդքան արագ ու շահավետ չի եղել»,- ասաց ձայնը սուպերմարկետում: «Գնումներ» բառը չլսեցի, գլխի ընկա:

Խեռացատկորդ

«Կենսունակության ավարտին մոտ և գերհասուն ծառերը ձնատապալ են եղել»,- գրեց նորությունների կայքը:

«Ես դոշի ռակ եմ վերցնում իմ համար, ուզում ե՞ք ձեր համար էլ վերցնեմ, դոշի ռակ»,- կիսելով բառը, առաջարկեց մի խոշոր կին: «Չէ, ես սմետան տվարոգ կուտեմ»,- ասեց կողքինը: Իսկ երրորդը չլսեց, քանզի արդեն գնում էր մրգերի ուղղությամբ:

Ծերունական աղոթք

«Արա պիզդեց, շեդեվրալնի էֆիր էր էսօր»,- ասեց Կայծը կեսգիշերային տասնյոթ րոպեանոց տելեգրամյան աուդիոյի սկզբում, որը լսեցի առավոտյան:

Ֆնդիկները
Ձնագնդիկ էին խաղում,
Ձնահնդիկ էին խաղում:

«Խի չե՞ս վեկալում, լավդ քունեմ»,
Քրֆեց մի տղա տերմինալին,
Որը քիչ առաջ հետ էր տվել
Հազար դրամանոցներից մեկը:
Էս կյանքը, տրված օրավարձով
Մեզ թվում ա թե վերցրել ենք վարձով:

«Sauber gemacht!»
Գրված էր կանաչով
Ֆուրգոնի սևի վրա
Որի միջից դատարկում էին
Տեղական բնամթերքները:
«Մաքրված է»:

«Սեռի Արարատ, էէէ, չէ, չէ,
Կապույտ Գառնի տու»,
Ասեց մեկը խանութում:
«Գունավոր բիբարներ», գրված էր
Գունավոր բիբարների վրա:

Երազում երազում
Մեզ էինք անվերջ
Երազվում:

«Ախպերս, մենակ շատ արխային չընգնես,
սիդելնիկը մի քիչ ջարդած ա»,
Ասեց «Չրո Վեց»-ով լոկալ տաքսիստը
Երբ արդեն արխային էի ընգել:

«Մարդ որ իրեք օր միս չի ուտում, ոնց որ տկլոր ըլնի»,- հոգոց հանեց պաղյեզդի դիմացը կանգնած հարևանը: «Էտի մի գծի բանվոր ա, պտի՝ ասես սենց գնա, էս արա, նույն ճամփով հետ արի»,- ասեց անծանոթ անցորդը, հեռախոսով:

Մենք, որ
Ականջատեսին ականջալուր եղանք
Լինչի ֆիլմում:

Էս երկրում
Ուր կանանց
Մարդկայինով
Դուխ են տալիս
Միայն կանայք:

Կոմիկական ճառագայթներ

Բեկված դեկադներ
Բեկադներ

Փիսիկը նստել
Մի ութանկյունում:

Ապրում էինք ցասումով
Մի լավ բանի սպասումով:

Մարքսատուրք՝ կապիտալից:

Տասագիրք՝ տասներորդ դասարանի դասագիրք:

Հաստահավաք խումբ

Հյուղակավորել

Էս վերջերս շուխուր էր
Յոթերորդ դասարանի
Պատմության դասագրքի
Թեմաներով
Հիշեցի
«Պատմություն սիրեք,
դա շատ կարեւոր
Ու օգտակար բան ա» ֆրազը
Որը ասեց մի անգամ
Թևոսյան Վարազդատը՝ շախմատիստ
Իսկ շախմատիստներին մենք
Անկախ ուժից ու տարիքից
Միայն ազգանուն անունով ենք հիշում:
Նա ու շատ շատերը
Մայրաքաղաքից ու մարզերից
Տարվա մեջ մի քանի անգամ
Գալիս ու մասնակցում էին
Շախմատի տան մրցումներին
Բեմի վրա:
Ուրախ էր շփումը
Տուրից առաջ ու հետո
Նաև ընթացքում
Հատկապես նրանց միջև
Ովքեր
Էլ
Կամ

Արդեն
Ինչ որ բանի հասնելու
Շանս չունեին:
Հիշողությունս պրծավ
Զանգեցի Բենոյին
Միգուցե թարմացներ
Ասեց որ սև սպիտակի մասին հարցերով
Էլ իրեն չդիմեմ
Բայց կարանք խաչապուրի ուտենք
Եթե ազատ օր լինի
Որտեղ ես իրան կասեմ
Որ պատմությունը դաշնակների մենաշնորհին ա
Ինքն էլ կասի
Ապրես Գմփո, նստի, չորս:
ծաղկաշապիկ

զսպածաղիկ

Պատերին բանբաներկեքի պաչկեք էին կպցրած
Պլաստիկից, վիպուկլի, բարելիեֆի նման
Ձմեռ պապու ու Նոր տարվա
Խառը պատկերներով:
Ցվետամուզիկա կար
Փոքր, մութ զալ էր
Շատ մարդ չկար
Բայց քիչ էլ չէին
Յոթ սեղանից հինգը զբաղված էր
Բայց պարուհիները չէին հանվում
Ուղղակի պարում էին:
Մի աղջիկ կար, պլոտնի

Վրան քիփ մայկա էր, սև
Մեջտեղում «Ադիդաս»-ի
Շատ մեծ ու սպիտակ
Տարբերանշանով,
Որը հեռվից ավելի
«Արին-Բերդ»
Սիգարետն էր հիշեցնում:
Բեմը շատ փոքր էր
Բեմից ձախ
Մի նեղ դուռ կար
Միշտ բաց
Այնտեղից կոմպով երգ էին դնում
Տրուբկով մանիտորով կոմպ էր
Որին ընթացքում հա մի բան էր լինում
Ու ժամանակ առ ժամանակ
Ողջ անձնակազմը հավաքվում էր մոտը
Ուպրավլյայուշչին, պահակը,
Մի տղամարդ տարիքով
Մատուցողուհին ու երկու պարուհիները:
Մի հոգի էլ կար, քիչ երևացող
Բան ման էր դնում ուտելու:
Երեք հատ «Կիլիկիա» ուզեցինք
Բաժակ չուզեցինք
Բերողը մատուցողուհին չէր
Կոլոտ կին էր տարիքով
Անծանոթ էինք, կասկածանքով նայեց,
Ասեց, որ փողը միանգամից տանք,
Միանգամից տվինք
Զդաչու տեղը
Մոնոպոլյայի փողի նման մի բան բերեց

Որ հետո հետ տանք աղջկեքին:
Երբ որ երգը պրծնում էր,
Ջառի ձեն էր գալիս
Պահակն ու կին ուպրավլյայուշչին
Իրար հետ նարդի էին խաղում
Բեմից մի քիչ աջ, մթության մեջ:
Նրանցից ավելի աջ ստենդ կար,
Վրան նույն ֆիրմայի արաղներից
Հին «Ասլանով»-ների նման մի բան:
Մատուցողուհին կորավ
Հետո տեսանք փոխվել, պարում էր
Ուրիշն էր պիվա բերում,
Քիչ առաջ պարողներից  մեկը:
Պիվի յաշիկը բռնած
Դեմի մուտքով ներս մտան
Դրեցին ու հեռացան երկու տղա:
«Սրանք վայթեմ ուրիշ մուտք չունեն»,
Ասեց Կայծը:
Ռազդեվալկա կար, որտեղ սովետից մնացել էր
«Վերարկուները հանձնեք հանդերձապահին» գրությունը
Բայց ոչ վերարկու կար, ոչ հանդերձապահ:
Կողքը զուգարանն էր
Զուգարանի դուռը չէր փակվում
Վայթեմ դուռ չկար էլ ընդհանրապես
Մեծ դատարկ սենյակ էր
Առանց լվացարանի
Անկյունում
Դյուշանի ունիտազից էր, չֆռցրած
Դատարկվելիս հիշում էի
Բոյլի «Թրեյնսփոթինգը»:

Հետո զուգարանը փակել էին
Ու օրերով չէին բացել
Վահագը հարցրել էր
«Որտե՞ղ գնանք»
Կին ռազվադյաշչին պատասխանել էր՝
«Ստե զուգարան չկա էլ ապեր,
Հել, դուսը մի տեղ արա»:
Արեգը ըտեղ առաջին անգամ լսել էր
«Խնդրում եմ ինձ ներիր, առաջվա պես սիրիր» երգը
Ու հա հիշում էր պելմենու ու բոռշի հոտը զալում:
«Հինգ հազարի ժետոն առեք, դառեք վիպ»
Ասել էին Կայծին մի առիթով:
Մատուցողուհու թեմայով
Թե պարուհու թեմայով
Վեճ եղավ մի անգամ:
«Ա տհենց նայիլ մի, մեր հըմար ուրիշ չի»
Սենց մի բան լսվեց սկզբում
«Ղշլաղեցի աղջիկ ա»
Հետո սենց մի բան
«Հլա մի դուս գանք, ապո»
Հետո արդեն սենց
Դուրս եկան,
Հետ եկան
Բարիշած:
Կիրովականցիք ու
Դիլիջանցիք էին
Իրար համար երգեր զակազ տվեցին
«Դիլիջանցիք մեր ապոներն են» լսվեց:
Աֆիցերներ էլ էին գալիս
Նաև ծառայողներ

Ֆորմեքով, չստերով
Մոտակա չաստերից:
Մի անգամ նրանցից մեկը
Բոլոր սեղաններին
Գարեջուր ուղարկեց:
«Վիպ» դիվան կար
Կարիչնըվի, քրքրված
Հիմնականում դատարկ:
Մի անգամ մեկը եկավ
Նստեց, աչքերը փակվում էին
Մատուցողուհին մոտեցավ
Ու ասեց «բո»
Տղան վախեցավ, զարթնեց
Հետո ժպտաց, աղջիկն էլ ժպտաց
Ու սեղանին դրեց բացած «Կոտայքը»:
Հետո հայկական
Ուրախ պարեղանակ դրեցին
Կլառնետ, դհոլ,
Ու պարողները սկսեցին պարել
Հետո մնացածը միացան
Դիլիջանցիք, կիրովականցիք
սպիտակ սառոչկով մատուցողուհին
Ուպրավլյայուշչին, պահակը
Ռազվադյաշչին ու հերթապահը
Բեմին, բեմի  ափին
Սեղանների կողքը ու
Կառամատույցում:
Պարում էին բոլորը
Ծախով շուխով
Թռվռալով, տռճիկ տալով

Մենակ մենք չէինք պարում
Արդեն գնացած զինվորները
Ու դիվանին քնած տղեն:
Ամոթից դուրս եկանք,
Աստիճաններով բարձրանում էինք
Մուտքի վերևը ռուսերոն գրված էր «Բար»:
Ասում էին
Մեկ-մեկ
Գյուղերի գազելների
Վարորդներն են գալիս
Ովքեր հիմնականում
Կոլոտ մարդիկ են
Նրանք տխուր պարում են գրկված
Իրենցից բոյով աղջկեքի հետ,
Դանդաղ, ժիզնեննի երգերի տակ:
Էդ չտեսանք
Ափսոս:
Էլի բաներ կային
Գրված «Nokia 6500 slide»-ի
Մեսիջներում
Բայց էդ հեռախոսը ջրվեց
Ու մի օր էլ չաշխատեց
Իսկ տաս տարի հետո
Էսքանը հիշեցի
Էսքանը հիշեցինք
«Դեղձանիկ»-ից:

Սեքսում և հանրային մուլտիպլեքսում

Պատրիցիա Այվազյան, «Ռիպլիպիտո»

Խնդապետ

Ինքնապատ լեռներ

Բնի վիդեոներից մեկում
Երկրորդ պլանում
Հանկարծ հայտնվեց
Մի մարդ
Ով նայում էր սմարթֆոնին
Ու շարժումներ էր անում
Կտրուկ
Սկզբից չհասկացա
Հետո հասկացա
Որ պետք է շնորհակալություն հայտնել
Վիդեոքոլին
Որ պետքական դարձրեց սմարտֆոնը
Նաև խուլ ու համրերի համար:

*Գալիս է ժամանակ, որ ինքնուս լինելը բավարար չէ:*
*(Գունավոր նասկիներով երգիչ)*

«Շահենն էլ չի՞ աշխատում»,- հարցրեց մի կին
«Չէ, ինքը արդեն մենակ գյուղի  երեխեքին ա տանում բերում»,
Պատասխանեց բեղերով ու արցախցու ակցենտով տղամարդը,
Ով նոր վարորդն էր ծանոթ գծի:
«Միշտ եք է՞ս ժամին գնում»,- հարցրեց մի այլ կին,
Ով հենց նոր էր բարձրացել
Ու նստել ազատ նստարաններից մեկին:
«Հա»,- առույգ արձագանքեց տղամարդը
«Դե ես համարյա միշտ ձեզ հետ կգամ, շատ հարմար ա ինձ»,

Ուրախ ասեց  նույն կինը:
Երբ իջա, երեք ուրախ հնդիկ անցան
«Սիթի»-ի դիմացով:
Առաջինը գլխաշորով էր,
Էն մեկը չէր մրսում,
Մյուսի գլխարկին էլ
Ռուսերեն գրված էր
«Կըյիկ»:
Երկու կին դուրս եկան «Սիթի»-ից
Մեկի ձեռքի տոպրակը պատռվեց
Միջից մուգ կանաչ ավոկադոներ ընկան՝
Երեք հատ:

Բախտաջուր

- Դաշնամուր նվագում ե՞ք:
- Գիտեք, ավելի հարվածայիններ եմ սիրում:
- Դաշնամուրին կարող եք հարվածել:

«Արա էս ինչ լավ ստիկովկեք կան, դուխս հելավ մակերես»,- գրեց Կայծը:

Գրիմ եղբայրները և գրիմյոր քույրերը

Համամասնախառը

Հապկամարտ

Մերն Է լինելու անցյալը

«Արա էս ղախպեքին թվում ա, որ եթե իրանց մոտ կենդանիները խոսում են, ուրեմն հեքիաթ ա ստացվում»,- մտածեց Ժիրոն:

Մեղքի հանդերձները
Ու գարնան
Լերկի հանդերձները:

*Երգերը գրում ես, հետո ստիպված էդ երգերը ապրում ես:*
*(Աշոտ Գասպարյան)*

Վերցրու քեզ հետ
Ցրտերը մեր:

Նվիրահայ

Քարքաշ մարդ

Որպես շատ քիչ ծխող
Չհասկացա մի բան
Պետք էր ծխելուց հետո՞ խմել
Սուրճի վերջին կումը
Թե կոֆեն խմել
Ու նոր վերջին ծուխը քաշել:

Մի ժամանակ եկավ, երբ մոնտաժը էլ չէր ստացվում, ու մատերիալ հավաքելը սկսեց փոխարինել մոնտաժին: Էս ամենը դադարեց, երբ մատերիալ հավաքելն էլ սկսեց չստացվել:

Գցենք սթորի
Թող կորի:

«Արա բայց լավ չեմ ջոկում, պետք ա սա հա մնա, կողքից գրվի, հետո գա՞»,- հարցրեցի:
«Երևի, որ սկսում ես մտածել, պետք ա թե չէ, ուրեմն արդեն քեզ հետաքրքիր չի»,- պատասխանեց Արմենը:

*Յիդինստվեննոյե, ա չոմ յա դումայու, տակ էտը ա տոմ, չտոբի նայծի րիշենիե, կատորայա ուդավլիտվարիտ մայու սովեստ խուդոժնիկա: (Կարլ Թեոդոր Դրեյեր)*

Պալիգլյոթ

Շտոպրակ

Ձմեռվա խոհանոցների հմայքը՝
Ծխած ու նեղ:

Նոր Առինչ
Առինչվել

Ֆլրտել

Դժվար անանցանելի ճանապարհներ:

Ձեռնաշարժություն

«Ֆլամաստյոր տու ու օրսեթ թուղթ»,
Ասաց մի տղամարդ
Խանութում՝ ոչ մթերային:

Շնորհակալագետ

Առցանց տեղումների եղանակ

Նույնզգույն

Համապատառ

Ստիպվածք

Հարաքուն

Հավագործության խմբակ

Մենք, որ մնացել ենք
Բախտի բերմունքին:

Բարեպաշտանքներ

Ամբոխավարության դասընթաց

Յութուբն էի նայում:
Էս երկրում
Երկու կողմն էլ իրենց գտան՝
Բայց երկիրը կորցրինք:

Մենք, որ հանրային ասելիս
Առաջինը հիշում ենք
Ոչ հեռուստաընկերությունը
Ոչ էլ ձայնը
Այլ գրադարանը:

Սովորական միություն

Համամասնամոլ

Մենք,
Որ անցյալը
Ներկայից
Շատ ենք
Սիրում:
Մենք անցյալում էլ էինք անցյալը սիրում:

Էս վերջերս էլի նստած էինք
Մենք մերոնցով
Մի քիչ կոնյակ կար սովետական:
«Հարյուրամյակս առիթ եղավ,
որ սրանք պետությունից էլի փող քերեն»՝
Լսվեց մի ծանոթ ձայն դռան հետևից:
Արագ վեր կացանք, նայեցինք
Արդեն գնացել էր:

Մարդ-հոբեյան

Տնփեսագետ

Մի մարդ գիտեի
Նա դեղին «ճար» էր ասում:

«Խելագար վիճակ ա»,- լսվեց քաղաքում:
«Գուլյատ ենք անում ապե»,- ձայնակցեց մյուսը:

Յովսեփ Օրուելլի

Ամբիվալետ

Ժան Պոլ Սմարթր

Բաղրամյան մետրոյի շուշաբանդում ապրող էն կնոջ կառավաթն էլ չկար:

Յողմագին մոլերի սարավանդը

Կենդանական արվեստ

«Պատմությունը շատ լավ մատերիալ ա, էլաստիկ ա, չի քարանում բայց համ էլ ֆորմա ունի, քանի չես փոխել, իսկ երբ փոխում ես, հնից բան չի պահում»,- ասեց մյուս Արմենը:

Յիշողություններ հիշողության մասին

Ֆիշողություններ
Ձկնորսի հուշերը

Յուսադիրներ

«Մտաանցումները լավն էին»,- լսվեց յութուբից:

Ես չեմ ասում՝ դու գյոթ ես, ես ասում եմ՝ ես էլ եմ գյոթ:

Նվիրվում է մնացածին ու չորրորդին,
Ում ոչ հրաժարականի օրը տեսանք, ոչ դրանից հետո:

Մարդիկ քչանում են,
Տները թանկանում են:

Մենք էդքան չկանք,
Որ մեղավոր ըլնենք:

Կամանդիրս օֆ յեսթըրդեյ
Քուդ գրոու բըթ նեվը դայ:

Ժան-Պոլ Բարթր
Ռոլան Սարթ

Դեսերտիֆիկատ

Տեքստի ֆոն դարձած վիդեոները

Կծվաշ

Ղեկավարելի ղեկավար

Նսեմացու

Կանգառ չկա,
Որ իջնող չլնի:

Անկտուր քաղաք

Վատ երազ և խաղաղություն

Ցնծաղիկ

«Լավ էլի, հնդիկներ, մի քիչ քիչ խոսացեք»,
Լսվեց մի տարիքով կնոջ ձայն:
Բայց ոչ նրան տեսանք, ոչ նրանց,
Քանզի նոր ավտոբուսը լիքն էր ու երկար:

«Բաներ կան, որ ապացուցման կարիք իսկապես չունեն»,- ասեց Գեղարվեստի դալանից պրոսպեկտ դուրս եկող երեք աղջիկներից մեկը:

Բժշկականի պաղզեմկում հիմնականում հեռախոս են ծախում, վայփ ու ծաղիկ: Երկուհազարականների սկզբին շատը քյաբաբի տոչկեք էին:

«Ախպեր կաթիլ-կաթիլ աշխըղըմ ես,
հետո լիտրով հետ ես տալիս»,
Դժգոհեց կյանքից սևացած մի վարորդ:
«Լավ, դե ինչքան պիտի կանգնենք ստեղ»,
Դժգոհեց մի կին նույն ավտոբուսում:
«Ես որոշեցի վմեստը պադառկա, իրեն էմոցիա նվիրել»,
Գոհ ասեց մի աղջիկ
Կիրակի առավոտյան
Կիսադատարկ քաղաքի
Դատարկ կանգառի
Մոտով քայլող:

«Ապակիներից հեռու մնալ վտանգավոր է»,- գրված էր ծաղկի խանութի վրա, բայց տենց էլ գլուխս չմտավ, արանքում ստորակետ էր պետք թե՞ բութ:

Էլի տեսել ենք Կաուրիսմյակիի բոլոր ֆիլմերը:

«Զահել ջան, դու չես հիշի
Լուցկին վախտին մի կոպեկ էր
Որակով, հաստ
Հետո դառավ տաս դրամ:
Տալիս առնում ես
Բանի պետք չի,
Գլխիկները տեսել է՞ս դրանց
Բարակ, վառել չի լինում»,
Ասեց մի շատ տարիքով տղամարդ՝
Քիչ մնացածներից:

Միշտ հետաքրքիր էր դիտարկումը: Սկզբից կինոյում: Բայց սկսած տասնհինգ թվից, պրոցեսների մասնակիցների մոտ անհասկանալի դարձավ ուղղակի դիտարկողը: Իրենց պետք էր, որ մասնակից էլ դառնայիր: Թարգեցի: Աննկատ դիտարկելու միակ ձևը մնաց լսելը, հիշելը ու այդ ամենը գրելը:
Մի օր դա էլ կվերջանա:

«Մեռի»,
Ասացին մի զեմլեմեռի:

Ավագ որդու պահանջով
Զբաղվում էր նահանջով:

Ղազաններ և Ղազարներ

Հայկն ու Գելը

Սարթ մարդը

Ոլորտներում անհարմար
Կատարվեցինք անհամար:

Խնդակ
Խնդալու գնդակ

Ճպարապետ
Գրիմյորների արքա

Լևերկուզենի բայերը և Դյուսելդորֆի գոյականները:

«Նա ունի միջազգային պրոֆեսիոնալիզմի մոտեցում»,- ասեց մեկը: «Էդ ֆիլմը իմ սերընդի Փի-օ-վին ա, որը փորձում ա գտնի հնարավորություն, կատարել ընտրություն էս քեոսի մեջ»,- հաստատեց մյուսը: «Մի քիչ էդ մերկանտիլ գաղափարներից հեռանանք ու զբաղվենք ներդրումներով»,- շարունակեց մեկ ուրիշը: Երեքն էլ մշակութային առաջամարտի ոլորտներից էին:

«Ոտնահարդարում» գրված էր «Մատնահարդարում»-ի տակ:

Հիշու՞մ ես «Գինդ» թերթը:

Սմարթածին աղետներ

Ակնթարթային վարկեր և վարկային ակնթարթներ:

*Բեղնիե վսեգդա վազվրզշայուտսա տուդա գդե ժիլի բեդնեե վսեվո:*
*(Պետցոլդ, «Կուբա Լիբրե»)*

- Չլը հիշացրու, ինչերի ինչին էր ինչ իջե՞լ:
- Արևելքի եդեմներին, պայծառ իրիկուն:

«Ընտիր լիմոններ են, բարակ կլեպ, սաղ սոկ մեջը, արի մի քանի հատ տամ»,- ասեց մի կին մյուսին Օրբելու գետնանցումում:

«Գաղափարչական պարտիզան ա նա, թաղվում ա էնտեղ, որտեղ Վիկտոր Չյուգոն»,- ասեց մի պապի մյուսին երրորդի ներկայությամբ, սադի սկամեյկին նստած:

«Sevilla carrocerias»,- գրված էր ֆուրգոնի բրեզգավիկների վրա:

Բարեկամության գիրք ծախող բիձեն էլ չի գալիս:

«Cinemax» ալիքը հիշում ե՞ս:

*Արա, թվում ա որ հեշտ ա, բայց հեշտ չի: Էսի գլոբալ խաղ ա, ու վերջում նենց չի որ սերտիֆիկատ են տալու, խփես պատիդ: Դու ուզում ես ճիշտ ըլնե՞ս, թե՞ երջանիկ ըլնես, էս ա հարցը:*
*(Կայծ, Տելեգրամի աուդիոներից)*

Ստիլմուլյանտ
Ստիլմուլյակր

«Չլացող երեխուն ծիծ չեն տալիս»,
Ասել էր Արմանի տատը:
«Մեզ անհրաժեշտ է իրական անցուղային պիրիուդ»,
Օրերս ասաց նոր ծիծ փնտրող
Մի ռսախոս փորձագետ հայերենով:

Հավերժական մարզիչ

Հուշտարար

Հաղթոլոգիայից՝ գաղթոլոգիա:

Հերոս ե՞ս թե՝ հարկատու:

- Հարկատուն հարևանի կատուն է՞:
- Ոչ, ու շրջապատն էլ շրջված պատը չէ:

Ջի ուան Գասպարյան

Ձյան ճերմակ
Ձյան ճերմակ
Փաթթերնները:

Իրադարձամոլ

Իդի, սպի,
Որ մեջդ չավելանա
Եվս մի սպի:

*Վ ռամաննիխ պրավիլախ, կակ պիսալ կագդա տը Տինյանով, վաժնեե տո չտո դլիննեե, վ կինեմատոգրաֆիչեսկի-մանտաժնիխ՝տո չտո կառոչե: (Ալեքսեյ Գուսև)*

Հ1-ով, մի քանի օր, պիկ ժամին «Գոհար» անսամբլի համերգն էր:
Կոլեկտիվ նոստալգիայի կոլեկտիվները:

Մենք, որ ապրում ենք վախի մթնոլորտում
Ու հանգստանում տանը, Բախի մթնոլորտում:

Սպիրտային մարմնամարզություն

Պետականաշնորհել

«Ընդհանրապես, շատ կարևոր է երկխոսել աշխարհի հետ, մենք հիմա միայն մենախոսում ենք, իրենք մեզ չեն լսում»,- ասեց մի մանկագիր «Ծողակաթ»-ով:

Մենահոսել
Երկհոսություն

Աշխարհում այս էմոցիոնալ
եկեք լինենք մենք ռացիոնալ:

Օրբանիստ
հունգարացի ուրբանիստ

«Ինչ խեռիս դագավոռ»,
Ասաց մեզ մի թագավոր:

- Պահքի մեջ եմ:
- Պահի մեջ եղի:

Գործի բերումով՝ փործի բերումով:

«Մի խոսքով, անցողիկ ամեն ինչ կանցնի, կգնա»,- ասեց մի կին կոֆեին սպասելու ընթացքում:

«Արա մենք մեր վախտով չենք ապրել»,- ասեց Կայծը յոթ-ութ տարի առաջ ու սկսեց ապրել:

Մարցիպանյան Մերսիկ Շոկոյի

*Որովհետև երկրի պայմաններում, պետության պայմաններում, կտրուկ շարժումներ անելը լավ չի: (Ալեն Սիմոնյան)*

«Արա, մեռանք ուրիշի եղունգով մեր գլուխը քորելով, մենք պետք ա մեր եղունգը սրենք, մեր չափով, որ շատ մեծ էլ չլինի, ես չեմ սիրում մեծ, սենց կուլտուրական, նորմալ եղունգներ»,- ասեց ասողը Տելեգրամի աուդիոյից:

«Արա, Լոմոնոսովը որ Լոմոնոսով ա դառել, հո չի գնացել Լոմոնոսովի ինստիտուտը ավարտել, ինքը տենց ծնվել ա»,- ասեց Կայծը էլի նույն մեդիումով, ու ավելացրեց. «Արա, էս խալադիլնիկս լավ չի սառացնում , մածունս թթվում ա, չեմ ջոգում ինչի հետ ա կապված, հեսա էդ էլ ես չէ՞ մեխելու մի գրքի մեջ»:

Մարտի մեկը էլի գարնան առաջին օրն ա: Տենց ստացվեց:

Ապագայի անցյալացում

Դուք, որ վերադարձրիք մեր հողերը ձեզ:

Մեր գերեզմանները մեզ հրաժեշտ չտվեցին:

Վատ բան չեմ ուզում ասեմ,
Լավ բան չեմ կարում:

Համաստեղծամոլ

Գիտակցաբարո

Հենզելն ու Գլենդելը

Մենք, որ սիրում էինք ուրիշների ծնունդները:

Անառիկ որդու առումը:
Անառակ որդու վերադարձը:

Համառ-Քաթիպա

Գործանվել
Գործելով կործանվել:

«Ուլիցա Ագմաշեբելի, զդանիե պրոուիտեիուչիլիշչա»,
Ասեց մի ձայն, Շնարդնաձեյի ակցենտով, իննսուն յոթին,
Երբ շախմատի մրցումի էինք գնում Կոբուլետի:
«Արա այ Գամսախուրդիա»,
Ասեց մեկը մյուսին դպրոցում ու խփեցին իրար:
Մեր մանկության ազգանունները:
Վահագի հետ առաջին «Իքս մեն»-ը նայեցինք:
«Կարող ա՞ վրացերեն ըլնի»,
Մտածեցինք մինչև կինոթատրոն մտնելը:
Ռուսերեն էր: Երկու հազար թիվն էր:
Թիֆլիսը անփող ու մաշված:
Համ շախմատով գնացինք Վրաստան,
Համ էլ ֆիլմով, շատ ավելի ուշ:
Ուզում էինք սիրվել, չստացվեց:

«Էս պերգամոնտը լավ չայ ա»,- ասաց հեռու հարևանը:

Աբոնենտներ և օպոնենտներ

*Ամրաստանը քաղել էր Գրեմաստյուրը: (Չոբան Սեթո)*

*Հայրապետական մեր օրհնությունն ենք բերում բոլոր տիկնանց և օրիորդաց՝ ի Հայաստան և ի Սփյուռս: (Կաթողիկոս)*

«Կեսից ենք սկսում, ու չսկսած՝ պրծնում»,- ասեց մեկը մյուսին, անառիթ:

Օտարաշինություն

«Kühltransporte»՝ գրված էր շատ մեծ ֆուրգոնի վրա, ինչը գերմաներենից նշանակում է «սառնարանային տրանսպորտ»: Նրա վրա նկարած էր Ձմեռ պապի և պինգվին, կանաչ, կարմիր, սպիտակ գույների մեջ: Նույնը օրը հանդիպեց «großevollmer bau» և «spedition»: Լայնածավալ շինարարություն և բեռնափոխադրող:

Ֆունդամետրաժ

*Հայաստանի ինքնիշխանությունը սենց դիլիմ-դիլիմ տվել են Ռուսաստանին: (Հովսեփ Խուրշուդյան)*

*Ռուսամետներն ու արևմտամետները ոնց որ ԿԳԲ-ի աջ ու ձախ ձեռները ըլնեն: Կամ էլ տգետներ են: (Ծանթ Հարությունյան)*

«Համ հեռու բարեկամ ենք, համ էլ շատ մոտիկ ենք»,- ասեց մեկը մյուսին հանրային վայրում:

Յամալրվող ավանդ
Յամալրվող պատանդ

Թրամփագոռգոռ

Դեգեներատոր

Ժամկետանց դասեր

«Նենց որ տրամադրվենք լավին, պատրաստվենք վատին»,- եզրափակեց Արեգը:

Յարևանը՝ աշխատավարձը ցածր, ճնշումը՝ բարձր:

Մեռնելու տարիք

Ծառապան

Բորիկը բորինգ չէր:

Կեղծարվեստի պատմություն

Ինչ եղել ա՝
Էլ չկա:

Բոլորը մեծանում են:
Մեկը ուրախ ա դրանից,
Մյուսը՝ տխուր:

Ռոբերտ Չեթրակիչ

Դյութիֆուլ
Բյութիչ

«Որ չես անում, չարածդ երևում ա, բայց որ անում էս, արածդ չի երևում»,- բողոքեց մի կին մյուսին հանրային վայրում:

Հանրային ու վայրի

Հարսավիր

Դերվիշնիկ

Հաջողությամբ պատմություն

Թյուրընկալված ըմբռնումներ

Հնդիկ տեսանք, մեջքին ջութակի պատյան, չալմայով, ժպտերես: «Սիթի»-ից ոչ էժան ապրանք էր առնում:

«Խառն ես երևում, որ իջնես մի հատ սառը բան խմի», Կուլտուրական չորեց վարորդը, մինչև էդ իրեն կոպտած կնոջը:

Մեկը պուրի առավ, նստեց մոտոն ու գնաց, հնդիկ չէր:

«Ծիպիլին, Տիմբական և ծիծաղը» հիշու՞մ ես:

*Ինչ անելու եք, այսօր արեք, վաղը մթի ու ցրտի մեջ ենք:*
*(Գագիկ Սուրենյան, օդերևութաբան)*

«Կենդանաբանական այգին կհամալրվի նոր ազատավանդակներով»,- ասաց պատկերի վրայի ձայնը:

Ազարտավանդակ

«Ես քեզ հարյուր անգամ ասեցի, Նիկիտիչին մի զանգի»,
Նեղսրտեց խցանված փողոցի մայթին կանգնած
Տարիքով մի կին:

Էս տարիներին քիչ ֆիլմ նայեցինք
Սերիալ էր քաշում սրտներս ու տոռենտը:
Ոչնչի չսպասման տարբեր սեզոններին
Տալիս էր ինչ-որ ղեզոն դետող
Սպասելը նկարածների նոր սեզոններին:
Կապը լավացել էր
Մբպս-ն շատացել էր,
Ճաշակներս բարձրացել էր
Մինիմում որակը էլ չէինք քաշում
Մեծ ֆայլեր էին
Տեղ չկար
Որ պահեինք
Բայց արժեր պահել մի քանիսը
Տարբեր տարիներից.
«Motherland»-ը ու «The thick of it»-ը
«Avenue 5»-ն ու «Here we go»-ն
«Yes, Minister-ն ու Prime Minister»-ը
Անպայման «Columbo»-ն,
Որը նայել ափսոս լրիվ չհասցրինք,
«The Deuce»-ը՝ Ֆրանկոյով ու Ջիլենհոլով
Ու «Լեգենդների բյուրո»-ն՝ Մաթյու Կասսովիցով

«Sally 4ever»-ն ու «Bad sisters»-ը
«Call my agent!»-ի ֆրանսիականը
«Fleabag»-ն ու «Seinfeld»-ը,
Վերջինի մասին հուշեց
Նյույորքցի աշակերտ Էնդրյուն,
«The Kaminsky method»-ը, «Drops of God»-ը
Ու անպայման «Stanley Tucci: Searching for Italy»-ն:
Էս կյանքում, չեմ հիշում
Բերաններս բան մտավ թե չէ,
Բայց աչքներս հաստատ
Մի բան տեսավ:

«Մեզնից մի հինգ-տաս տարի մեծ տղա ա»,- ասեց Կայծը:
«Արա, մեզնից տաս տարի մեծերը արդեն հիսուն տարեկան են»,- հիշեցրեցի ես:

# ՉՖԻԼՏՐԱԾ
# ՎԱՅԸԼԵԹ

*Գիտեք, մեզնից յուրաքանչյուրը ցանկացած բառ ընկալում է յուրովի: (Սերժ Սարգսյան)*

«Word»-ում գրածը իրա ստիլն ա բերում:
Ձեռագրով ուրիշ բան ա ստացվում, ուրիշ տեղ ա տանում:

Չար լեզուները կունելինգուս չեն անում:

Գերմանտ-մլաղշիյ

Մենք, որ ոչ խոզ ունենք, ոչ մարգարիտ:

All that գազ

Բառոյա-դրացիական հարաբերություններ

Ֆեյսբուքյան երկգլուխ պրոֆիլներ:
Ֆեյսբուքյան ֆրոնտալ պրոֆիլներ:

Մետրոս

*Ճամփա տվեք սարեր*
*Անցնեմ գնամ: (Արկադի Դումիկյան)*

Մենք, որ արդեն շարժել ենք նավակները
Ու էլ ուզենք էլ՝
Չենք կարող փոխատեղում անել:

Լայքերը մինետիզացիայի ենթարկողները

«Ալռանթե, ցենտր ռեպ ա, լսեք»,
Ասեց 90-ականներին ինչ-որ ծրագրով
Ֆրանսիայում եղած հարևանը,
Որ այնտեղ, իր պատմելով,
Սռոկը չանցած «Վիսկըս» էր կերել:
All I want.

Անհյուրընկալ պատերը սեյֆ:

*Էս կյանքում ոչ մեկին ոչ մի բանով չես կարա զարմացնես, միայն վերաբերմունքով: (Գրիշա Աղախանյանի ընկեր)*

«Իրավիճակը իրոք էքզիստենցիալ է, գո-յու-թե-նա-բա-նա-կան»,
Յենց այսպես վանկատելով ասեց մեկնաբանը:

Մենք, որ ամեն ինչ պատվիրակել ենք
Ու հիմա արդեն միայն պատվիրում ենք
«Վայլդբերիզ»-ից:

Սիլիկոնյան Յովիկ

Կոնսերվաթոռ
Կոնսերվաներից սարքած աթոռ

Ստվերահսկողություն

Պարկուշտ
Փործագետք

*Ճիշտը երբեք, երբեք առ ոչինչ չի լինում: (Փործագետ)*

Պուցաիանդես

Խեռանկար

Դուք որ ձեր կյանքը ապրեցիք
Ուրիշի փոխարեն:

«Հետևաբար պիտի արվի հետևություն»,- ասեց մի նախկին վարչապետ:

Սամվելը դուրս եկավ եզրափակիչ և նրան անվանեցին Սեմի-ֆինալիստ:

Ապաշրջափակեցին
Ապա շրջափակեցին:

Մենք տեսանք թուրքերի
«վրացական» երազանքը:

Ֆորումներում մեդիա
Մոլորվել էր Ֆեդյան:

*Մեր հիշողությունը տեղն ա, Մաթևոսյան կարդա, մարդկանց էլ անասունի տեղ մի դիր: (Էդուարդ Ծարմազանով)*

Փորձեմբեր

Ղազարոս ջան, դու որ քնում էս, բանըդ դեպի ներքև ա թե՞ վերև :

Անփառունակ սիրո պարունակները:

«Ապե, Եգիպտոս գնացինք, մոծակները մեզ կերան»,- ասեց կոլոտը:
«Շարմ ե՞ք էլե»,- հարցրեց բոյովը:
«Հա»,- պատասխանեց կոլոտը:
«Հուրգադա ա պետք գնալ, ընդե վաբշե չկա»,- ասեց բոյովը:
Կոլոտը ձեն չհանեց:
«Բաա, ապե»,- վերջացրեց բոյովը, վերին Կոմիտասի ներքին բակերից մեկում:

Անորոշ ժամանակի որոշողները

Փողը՝ քունոռի կլրի պես քաղցր:

Վարտակերտ-Մարդենիս
Քարտակերտ-Վելբաջար-Մարդենիս

*Հեռացրու, Ստյոպա, հեռացրու: (Հ1-ի ֆուտբոլային մեկնաբանը՝ Հայաստան-Թուրքիա խաղի ժամանակ)*

Գիշեր էր
Շոգ էր
Ֆուտբոլ էինք նայում
Նստած էինք գոլի
Սպասում էինք գոլի:

«Գոոոոլ», մթության մեջ գոռաց դիմացի շենքի երրորդ հարկի հարեւանը, ում հեռուստացույցը քանչորս ժամ միացված էր:
դեղատու

Բեղատուն
լեչեբնի բեղեր

«Մինչև ամսի տասը, վադալեյները, վադալեյները, ում հետ կռվել են, ում հետ կռվել են, պիտի բարիշեն, մինչև էս ամսի տասը»,- ասեց բալկոնի տակով անցնող կինը, հեռախոսով, շատ բարձր:

Ինֆանտիրություն

Փառապան
Փառապանծ կառապան

*Ես սիրում եմ ռուս մարդու Շուկշինի տեսակին: (Սպարապետի եղբայր)*

Անփառունակ ապրելով
Եղանք ինքնաբավ:

Պուլակներն ու պուրպուրակները

«Յուսահատության գազելները էլ չկան»,- ասեց հուսախաբ արած ու անող մի շատ ծանոթ ձայն Պետրոսին:

Յիմա հասկացա
Կարևորը քանակն է:
Կարար ասեր Մեսչյանը:

Ուտեստավորել

«Արամ ձյա, դու վախտին Վերխնի Ուստյուգ էիր չէ՞»,- հարցրեց մի ջահել տղա: «Ստարի Ասկոլ արա, ի՞նչքան կարամ կրկնեմ»,- ասեց տարիքով վարպետը, ով  քիչ հետո հանգցրեց բարակ սիգարետը ու երկուսով գնացին գործը շարունակելու:

*Արա, պտի քեզանով ապրես, ժիծ սաբոյ անես: Ուրիշի մասին վատ չմտածես ու էս ռեալնսծի ցեննսծների գերին չդառնաս: Մեկ էլ յուբոյ մարդ կարա պահի տակ դառնա «ագենտ Սմիթ», ու ըլնի էս ռեալնսծի կողմից: Բայց շատ դեպքերում էդ միայն օրգանիզմն ա՝ մենք չենք: (Կայծ, Տելեգրամի աուդիոներից)*

Բեմագոգ

Փոոճառույթ

«Լավ մարդիկ աշնանն են մեռնում»,- ասեց մի տարիքով մարդ:
«Բայց ես կուզեմ էս դեկտեմբերն էլ տեսնեմ»,
Ավելացրեց նա ժպիտով, փոքր դադարից հետո:

pastահավաք խումբ

Քեզ տեսա համալսարանում
Մեր համատեղ լսարանում:

«Gemeinsam wege finden»,
Գրված էր սպիտակ ֆուրգոնի վրա, ինչը, ինչպես պարզվեց,
Չյուսիսային լեզուներից մեկում նշանակում էր՝
«Իրար հետ գտնենք ճամփաները»:

*Մենք կամ անցյալում ենք, կամ ապագայում, կամ էլ մեր տեղը ուրիշ մարդ ա, որովհետև մտածում ենք ուրիշի մասին: Բոլորս բացակա ենք: Էս խաղ ա, բայց իգրոկ դառնալու համար միշտ պտի ըլնենք զդես ի սիչաս: (Կայծ, Տելեգրամի աուդիոներից)*

«Onderhoud Aanleg», գրված էր ֆուրգոնի վրա, ինչը պարզվեց հոլանդերենից թարգմանվում է որպես «տեխնիկական շինարարություն»:

«Էթնիկական չանեք, բայց էթիկական կարող եք»,- խոսեց զտումների մասին Վլադիմիր Պուտինը Վլադիվաստոկից: Նրան այդ մասին ոչ ոք չէր հարցրել:

Անցած տարի, Մեյմանդարում,
Անցած դարի Մեյմանդարում:

Ատելու երկիր, ստելու երկիր:

*Խնդիրը այն չէ, թե ես որտեղ եմ ուզում հասնել, խնդիրը այն է, թե ես որտեղ եմ գտնվում: Եվ հարց տալ՝ թե արդյո՞ք ես կարող եմ այստեղից հասնել մի ուրիշ տեղ: (Աշոտ Ոսկանյան)*

Միջազգային հարամերություն

Ինքնաբավ հույսի մոլորաններում

«Բայդենյան արևն է մեր մեջ
Բլինքենյան հրով ճառագած»:
Քսանյոթ րոպեում
Մոտավորապես սա
Ասեց մի արևմտամետ:

*Տիգրան Մեծի պողոտայից Ագաթանգեղոսի փողոց է մտնում ՔՊ-ի քաղաքական թիմը: (Տիգրան Ավինյան, նախընտրական երթի ժամանակ)*

Ինքնասփոփ

Մենք մեղր քիչ ենք ուտում:
Դեռ կես բանկա կա
Քելբաջարինից:
Ուրց ու դաղձ կա
Մարտակերտից:
Ու մի լիտր էլ
Խաղողի օղի:

Էս վերջերս էլի Քերոլայն Քոքս էր եկել
Ու ես հիշեցի Յան Փորթերֆիլդին
Եվ էլի մարդկանց էդ կողմերից
Ովքեր մեզ լավություն արեցին
Չնայած կարող էին և չանել:

«BTB Beton Bohr» գրված էր հերթական ֆուրգոնի վրա, ինչը դանիերենից էլի նշանակում էր «բետոնի դռել»:

Քաղաքական կարաոկե տեսանք
Իշխող ուժի կատարմամբ
Քաղաքապետարանի մոտի միտինգի լայվի վերջում:

Ղալբայոբ

Անհեռանկար հասարակության հեռանկարները

Կարպագոռգոռ արտահայտություն

Նախամեռիկ բանաստեղծ

«Էսօր մեռելոց չի,
բայց դե սբխեչից հետո մարդիկ գնում են»,
Ասեց վարորդը,
«Ձեզ իջացնեմ, ես էլ գնամ,
համ էլ արդեն ընտրել եմ»,
Շարունակեց նա:
«Ու՞մ ես ընտրել»,
Հարցրեց կողքը նստած քսված, ակտիվ կինը
«Վարդան Ղուկասյանին,
համար մեկն ա ընտրաթերթիկում,
հույսս իրանք են,
թե չէ սրանք
միլիոն թալանածին թողում են,
բայց իմ պես հավ գողացողին բռնում են»,
Պատասխանեց վարորդը:
«Հավ է՞ս գողացել»,
խոսակցության մեջ մտավ
վերջում նստած կինը:
Ծիծաղեցինք:
«Դուք էլ գնացեք ընտրեք,
որ մի բան փոխվի»,
Նորից սկսեց վարորդը,
«Կնտրեինք ախպերս,
բայց Երևանի գրացնում չունենք»,
ասաց կողքի նստած կինը:
«Բալես նայի կովեր են տանում»
Ասեց դիմացինը հետևը նստած դպրոցականին,
«Բա էս կովերին
Ո՞նց են ավտո հանում, մամ»,
Ասաց երեխան նայելով կովերին,

«Զգիտեմ, ցավդ տանեմ»,
Պատասխանեց մայրը,
«Տակը փեդ են դնում,
թոկով քաշում են»,
Ասեց վարորդը,
«Մի օր էլ մեզ են տենց անելու»,
Դադարից հետո հոգոց հանեց նա,
«Չնայած մեռնելը որ կա,
խռխռալը ո՞րս ա»,
Շարունակեց վարորդը,
«Բայց պտի խռխռաս,
որ ղադրդ իմանան», ասեց հետևի կինը,
«Շատ մի մտածի ախպերս,
Քշի, քոնը ռուլն ա»,
Ասեց կողքը նստած կինը,
 «Դու մեզ մեր տան մոտ հասցրու,
մենք կավելացնենք»
Ավելացրեց նա:
Վարորդը ձայն չհանեց,
Գլխով համաձայնության նշան տվեց
Ու շրջանցեց կովերին տեղափոխող մեքենային:

Ես գերեզմաններ էլ չեմ ուզում գնալ
Ինձ էլ մաղթեցի անգերեզման մնալ:

«Եվ քանի որ մենք ապրում ենք էլեկտրոնային դարում»,- ասեց ԿԸՅ ներկայացուցիչը ու շարունակեց անիհետաքրքիր խոսել:

Փաստը մնում է փաստ
Որ հաստը չի մնում հաստ:

Պոլիէթնիկ սիրո մոնոգամությունը

Դուք կերաք էս երկիրը
Ու չքաքեցիք:
Հիմա նստած ենք
Ձեր մեջ:

«Դերասանների ընտրության ժամանակ գլխավոր դերերի դեպքում ավելի լավ է հակառակից գալ, իսկ երկրորդականների դեպքում փնտրել ճշգրիտ համընկնումներ»,- գրված էր Միլոշ Ֆորմանի գրքում, որը կարդում էինք, որ անջատվենք քաղաքականությունից, բայց չէր ստացվում:

«Ասում են Բոլոյանգն ա մեռել»,
Ասեց մի խոշոր տղա դպրոցում
Իննսունականների վերջերին:
Հիշեցի, նայեցի քսան երեքին,
Պարզվեց չէր մահացել:
Ոչ էն վախտ, ոչ հիմա:

*Ամեն անգամ մեր ոտքերից կշռաքարերի նման կախում են կեղծ թեզեր: (Մի քաղաքագետ)*

Վինի պուխը ոչ միայն մեղուներից մեղր էր գողանում,
Այլև գյուղացիներից՝ գինի:
Եվ ձմեռվա մութ երեկոներին,
Նստում, խմում էին կարմիր գինի,
Պիտաչոկն ու Պուխը Վինի:

Հոկտեմբերը սեպտեմբերին շուտ եկավ:

Մենք որ բանալի ունենք
Բայց էլ դուռ չունենք:

Պապս տեսավ 91-ի սեպտեմբերը
Ու 99-ի հոկտեմբերը:
Հերս տեսավ Քոչարյանի գալը
Տղու բանակ գնալը
Բայց չտեսավ գալը
Ու նաեւ Քոչարյանի գնալը:
Տատս տեսավ 2008-ի մարտը
Ու 13-ի սեպտեմբերը
16-ի ապրիլը չտեսավ
Ստեղ էր, բայց չտեսավ
Ճամփին էր
Գնում էր արդեն:
Հերս Քոչարյանի թայ էր
Տատս Միկի մաուսի:
Ես տեսա 20-ի աշունը
Դրանից առաջն ու հետոն
Ու 23-ի սեպտեմբերի 20-ը տեսա
Երեկ:

Ազգային բրենդերը և
Միջազգային թրենդները:

Սեկուլյար սիրո տրանսկրիպտները

Ֆեմինիստահեն

Թախիդճ

Անիմաստության ծիրում
Իրար էինք մեղմ սիրում:

Չարիկադ

Աշխարհում այս մելկի
Եկ չլինենք մյախկի:

Ստորավարժություններ

Չունեմ ռեսուրս և եռանդ
Ստիպված դառա տոլերանտ:

*Ազգի ու պետության տարբերությունը՝ ազգը սահմաններ չունի:*
*(Ժիրայր Լիպարիտյան)*

«Մենք պատրաստ ենք ու շարունակում ենք պատրաստվել»,-
ասաց նա ում էլ ոչ-ոք չէր հավատում:

Լիրս փակեցի ափով
Ինչ որ չափով:
Սուտասանի հուշերից:

Մենք էլի թերագնահատեցինք
Գերագնահատողներին:

Սամանթա Փաուերն էր մեր մեջ
Յու էսի էյդով ճառագող:

«Veronica verkeersschool»՝ գրված էր ֆուրգոնի վրա, ինչը պարզվեց նշանակում է՝ «Վերոնիկա, ավտոդպրոց»:

*Խնդիրը մարդը չի, խնդիրը ժողովուրդը չի, խնդիրը իշխանություններն են, որոնք մարդկանց դնում են այս կամ այն պայմանների մեջ: (Լևոն Տեր-Պետրոսյան)*

«Դե մեկնաբանի»,
Ասացի մի թեքնաբանի:

Էսօր, իրիկունը յոթի կողմերը
Արմանենք եկան Մարտակերտից
Վերջնական:

Մենք,
Որ բեքափ չարինք
երկիրը:

Յանրահավանք

Յանրահավաքը ձգվում է
Յանրահավաքը ձգվում է
Յանրահավաքը հետաձգվում է:

Ռասկլադները սիրո

Ռասկլադներ և ռասկլադուշկաներ

«Կաց ու կամի մեջ եմ, կաց ու կամի»,
Յուսահատ ասեց մի ծանոթ կին:

*Երբեմն օդում կախված լուրերի առկայությունը ավելի կարևոր է, քան դրանց բովանդակությունը: (Չթրաշված քաղաքագետ)*

Կրավորական կեցվածքները
Եվ բռնի թողնված ունեցվածքները:

Հայկական քաղաքական ընտրանին
Տենց էլ չկարդաց Լևոնի «Ընտրանի»-ն:

Չունեցանք ազգ-բանակ
Քանզի չունենք ազգ-քանակ:

Կլան Բէ

*Նրանք հստակ խնդիր են դրել լուծել խնդիրը: (Կին փորձագետ)*

Անձրևից հետո արև էր:
Ջուրը հոսեց գնաց գառաժի վրայով:
Թեք մոխրագույն կտուրին
Մի կատու էր տաքանում սև:

Փուլացնել
Փուլ առ փուլ թուլացնել

Ուտում էինք բամիա
Ու նաև ոլոռ
Օրերում անհաստատ
Ու մոլոր:

Լավության նոխազ

«Քաղցր կյանքի համը»,
Գրված էր քաղցրավենիք տեղափոխող մեքենայի վրա:

Բորիկը Թալիշից մահացավ քսանմեկ թվին:
Նա տեսավ մասի
Բայց դեռ ոչ ամբողջի կորուստը:

*Արձանագրելով, որ կարող ենք արձանագրել ձեր՝ պատմության չիմացությունը, մնացած հետևությունները համարում եմ այդ չիմացության հետևանք: (Նիկոլ Փաշինյան, խորհրդարանի հարց ու պատասխանի ժամանակ)*

Վաղաժամ կրթություն եմ ստացել:

Ծուն ի յառըսծ

Քաուս
Ակումբային խառը երաժշտություն

Յույսով հավատով
Սիրո մանդատով:

Ակնհայտ անհայտը

Անառիթ առիթներ

«Լեռնային Ղարաբաղում այս գիշեր սպասվում է +5-ից +7» ասաց Յ1-ի հաղորդավարը 2023-ի հոկտեմբերի սկզբին, բայց չասեց ում համար:

Տիզբոնից Լիզբոն:

«Ինչի՞ էս դու ճիշտ, ուրիշը սխալ»,- ասել էր Ծերիշովը Կայծին մի քանի օր առաջ, օնլայն:

Մի դասատուի տեսա դպրոցական
Ալավերդյանի «Բեյսիք հաուս»-ի մոտ
Վերնիսաժների արանքում:
Նա ինձ միշտ լավ էր վերաբերվում
Մի քիչ հեռվից տեսա
Ուզեցի մոտենամ
Հետո ասեցի՝ «Լավ, է»,
Ու շարունակեցի ճամփան
Հակառակ մայթով:

Ամեն օր փորձագետները
Համոզված ասում են
Ինչ ա լինելու ապագայում
Համոզված ու հաստատ
Բայց ոչ վաղը ու
Ոչ մոտակա ժամանակներում:

Թթվի սեզոնը սկսեց
Սոխ, կարտոշկա, կանաչի
Հաց, սեռի կտրտած
Մի բաժակ օղի
Կամ երկու գինի:
Բայց գեմարոյ ունենք
Ու քսաներեք թիվն ա:

Ռուսների ու թուրքերի
Ալիքված գալիքները:

Եվրիպիդեսի «Բաքոսուհիներ»-ը հիշեցի
Չգիտեմ խի հիշեցի
Չգիտեմ խի սենց եղավ:

Քաղաքականության հործանուտը
Եվ կանանց որձանուտը:

Մենք նմանվել ենք պոռնոաստղերի
Որոնց ֆիլմերը չեն պահպանվել
Իսկ մեզ մոտ էլ ավելի տպավորվել ա
Ընթացքը՝ քան ֆիլմը,
Որը երևի չենք էլ տեսել վախտին
Ու չգիտենք թե ինչի մասին էր:

*Մոսադի էթնոտեխնոլոգիական դոկտրինը խափանվեց և ես ուղղակի որպես փորձագետ, մասնագետ, գիտնական սպասում եմ հոդվածների որտեղ դրա մասին վերլուծություններ կլինեն: (Սպիտակ մազերով փորձագետ, մասնագետ, գիտնական)*

Ծատացել են «Վայլդբերիզ»-ի տոպրակները մարդկանց ձեռքերին:

Ծուտով կլինենք
Կամ չենք լինի քառասուն
Ունենք անանցյալ անցյալ
Իշիազ և հեմմորոյ:

Ինտենսիվ սիրո այգիներ

Քաղաքում
Սկամեյկեքին լռված
«Սփայզ բոյզերը»:

Անփործ ործերի հործանուտը

Անձվեր պայքար

Յուզերով պարը

*Երրորդ համաշխարհայինը գլոբալ առումով լոկալ մասշտաբներում է տեղի ունենում: (Յաղորդման հյուր)*

Մարդկանց աքցանով
Ակցիաներին կցողները:

Ծանր կեցությունն է որոշում գիտակցությունը:

Մենք
Որ տեսանք
Գլոբալ պրոցեսների
Լոկալ հետևանքները:

*Դրեյեր, Բրեսսոն ի Օդզու վերյատ վ պլոտնըսծ ստիլիստիչեսկոգո ժեստա: Ա ստիլիստիչեսկայա պլոտնըսծ զդես վաժնա: Իմեննո անա դելայետ սմիսլավույու տոչկու տրանսցենդենտալնոյ: Իմեննո անա նի դայոտ ուվիձեծ յիյո նապրիմույու, նիպասրեդստվեննո: Իմեննո անա զասլանյայետ սմիսլ, տեմ սամիմ նա նիյո նամեկայա:*
*(Ալեքսեյ Գուսևը Պոլ Շրեդերի գրքի մասին)*

Մարդ կա մեռավ
Մարդ կա մեռավ՝ մեզ համար:
Որոշների համար էլ մեռանք մենք:

Հնդիկները ավտոբուսներում անընդհատ խոսում են:
Սպասում ես
Խոսում են
Սպասում ես
Խոսում են
Բայց այդպես էլ չեն երգում:

Գերբնաճույք

Կարողացանք կառուցել
Բարձրահարկ ու կարուսել:
Ոտանավորը կոչվում է՝ «Միայն»:

Մենք որ Նիկոլներից
Սիրում ենք Էնիսթոնին,
Իսկ Սերժերից՝
Կրասավչիկին:

*Արա պտի չդատես, որ ուրիշի գրեխի մեջ չնկնես, ուրիշով չապրես: Պրիչինա ըլնես ոչ թե սլեդստվյա: Էդ ա ժիվոյ դառնալը:*
*(Կայծ, Տելեգրամի աուդիո)*

Տերերին ու փողատերերին
Սպասարկող հոլդինգները
Որոնց գովերգող վիդեոները
Միևնույնն է մոնտաժվում են

«YouTube audio library»-ից
Ջրի քաշած պաթետիկ
Երաժշտությունների ներքո:

Արցախը Հայաստան է և վերջ:
Արցախը երբեք չի լինի Ադրբեջանի կազմում:
Տարիներ, տարիներ սահեցին
Ու մեռան երազները բոլոր
Ոչ մի խեռս անեղծ չմնաց
Օրերում անհաստատ ու մոլոր:

Դոգապաշար

Անտագոնիզմ և պրոտոռենեսանս

*Հուսավաճառներ են: (Դավիթ Ստեփանյան)*

Առաջին սիրո ելքը

«Սիլիկյա՞, Սիլիկյա՞»,
Հարցրեց մի հնդիկ
Թմբլիկ վարորդին:
«Արի, արի»,
Հայրաբար կանչեց վարորդը:
Ու հնդիկներով, հայերով
Գնում էինք Սիլիկյան,
Լավ պիվա էր «Կիլիկիան»՝
Վախտին:

«Ծուշի փելըս»՝ գրված էր «Վեոլա Ջրի» նախկին գրասենյակի վրա:

Կանգառի մոտով «Օպել» անցավ սեռի
Յախվերդյանը նայեց մեզ
Վարորդի կողքին էր նստած
Քֆուրոտ թախիծ կար դեմքին:

Վատ է վիճակն այս խաղի
Այն վերածվել է վիճակախաղի:

Ոգևորականներ

«Եթե յանդեքսը ինձ սարքեմ գործի բնույթ,
Օրը քսանհինգ երեսուն փող կառնեմ, բայց չեմ ուզում»,
Ասեց զրոյոթի վարորդը,
Ով արագ էր քշում
Պատուհանները փակ էին
Ուժեղ փչում էր արանքներից:

«Ես չեմ ասի որ դուք գանդոն եք, պոռնիկ եք, բոզ եք,
Ես ուղղակի կասեմ որ դուք լավ մարդ չեք»,
Ասեց զամպալիտը արդեն շատ հեռավոր 2005-ին,
Երբ կիրակի իրիկունը շարված էինք
Ու նախարարությունից եկած
Ստուգողները գնացել էին:

Բիոլոնչել

Մենք, որ ոչ փողի համար աշխատեցինք
Ոչ էլ իդեայի,
Հիմա ավելի անհասկանալի ենք՝
Առաջին հերթին ինքներս մեզ:

Ինը համարի տրամվայի նկարն էր փակցված
Ինը համարի տրոլեյբուսի մեջ:
Մեկը վաղուց արդեն չկա
Իսկ մյուսը դեռ հիսուն դրամով
Կոմիտասով իջնում ա կենտրոն:

«Խաղաղ կյանքի նոր չափանիշներ»,- ասվում էր անորոշ ժամանակի պաստառներից մեկում, բազմաբնակարան համալիրի գովազդում:

«Wo demm sonst», գրված էր բեռնատարի վրա, ինչը գերմաներենից թարգմանվեց՝ «Էլ որտե՞ղ»:

Լեո Նար-Դոս

«Ծաղկաբույր դարձած շիրմաթմբին
Մյուս օրը այգաբացին
Որին ինքնահող ենք ասում,
Առաջինը այցի են գնում կանայք»,
Ասեց Տեր հայրը
Ում
Խունկ անող երիտասարդ օգնականի սքեմի տակից
Երևում էին
Սպիտակ ու նարնջագույն նախշերով
Բոթասները:

«Ութ միլիարդի մեջ, էսքան սրտի մեջ, իմը դու էս, դու էս»,
Գազելում արձանագրեց անծանոթ երգիչը,
Ակնարկելով որ համաձայն ՄԱԿ-ի զեկույցի,
Երգը գրվել է քսաներկուսի նոյեմբերի 15-ից հետո:

Գյուղերում հեռու հեռավար

«Վլե ջան, էտի տեղ չի, հել արի, մի քիչ փող հավքի, հել արի»,- ասեց մի հասուն ձայն ավտոբուսում. «Ես հեսա ստեղ երկրորդ գործն եմ ուզում վեկալեմ»: Մեր ետևն էր նստած, առաջացավ որ իջնի, դպրոցական էր:

«Սիթի կլինի, ասում են Չովք ա, մեծ տնտեսական ա»: Սարքեցին, փակեցին վրան գրեցին. «Տրվում է վարձով»:

*Շագրենի կաշվի պես Արցախը կնվազի, եթե շարունակենք ապավինել ռուսներին: (Ֆրանսամետ քաղաքական գործիչ)*

«Լավ ա, տղեք ջան, էդ ուղղեք որ պլաշչադկի նման լինի», ասեց տերտերը: «Լավ էլ ձեն ունի», շշնջաց մեկը չորրորդ պոլուկրուգում: «Գրիժա էլ ունի»,- շշնջացին ի պատասխան: «Ի՞նչ գիտես»,- հարցրեց առաջինը: «Անցած տարի ասեց՝ արի տանս պատը շարի, ասի գռիժա ունեմ, ասեց՝ ես էլ»,- պատասխանեց երկրորդը ու լռեց, քանի որ մի քանի հոգի միանգամից պտտվեցին երրորդ պոլուկրուգից:

Ջրերը շուտ-շուտ են կտրում
Յասկանալի պատճառերով
Նաև անհասկանալի պատճառներով:
Իրականություն չընկալող հարստացողները
Առնում են, սարքում են որ վաճառեն
Կամ վարձով տան
Նրանց ներկայում միայն ապագան է
Իսկ ում մոտ միայն անցյալն է
Մեզ հիշեցնում են

Մեզ արված լավությունների մասին
Երրորդ մարդկանց միջոցով
Չորրորդ հանրապետության շեմին
Հինգերորդ հարասյան պատճառով:
Իսկ մենք ջուրն ենք գցել
Ու դեռ ջուրն ենք գցում
Դուք էլ գցեք
Թե չէ հետո գցելու տեղ չի լինելու,
Ջրերը ավելի ու ավելի շուտ-շուտ են կտրելու,
Քանի որ ակունքները մնացին,
Ակունքները մնացին Քելբաջարում:

*Այստեղ եմ կանգնած և այլ կերպ չեմ կարող:*
*(Մարտին Լյութեր, թարգմ. Աշոտ Ոսկանյան)*

«Տրվում է վարձով»,
Գրված էր սև վիտրինով շենքի վրա:
Մի քանի տարի բան չփոխվեց
Միայն թուղթն էին թարմացնում:
«Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցի»,
Գրվեց շոգ օրերի վերջին
Նույն վիտրինի վրա:
Հետո էլի շարժ չկար:
Միայն հազվադեպ
Այնտեղ մտնում ու դուրս էին գալիս
Ծկրլնիկի տեսքով
Ամերիկացիները:

*Արցախի հարցով Ռուսաստանը մեզ օգտագործեց որպես գլադիատոր: (Հաղորդման հյուր)*

Վուլվանիզացիա

«Գերագնահատվածներ» հաղորդումների շարք

Սուր լույս ընկավ,
Կարավաջոյին հիշեցի,
Բառախաղ կար, մոռացա:
Սուր, լույս ընկավ:

Բաց կապույտ աչքերդ
Բաց հասարակության հիմնադրամներդ:

Կարդում էինք Դիլթայ, Ֆուկո ու Լիոտար
Որ չմնանք Արարատին նետած քար:

Մինետած քար:

Եկեք սիրենք իրարու
Քանզի որձ ենք և առույգ
Քանզի սիրո ոլորտում
Չունենք բազում շահառու:

*Գրիշոն եմ ես Ասատրյան*
*Մեծ բեմերն են ինձ սպասում: (Գրիշո Ասատրյան)*

Ցանկանում էինք կատարել
Բայց չգիտեինք ում:
Ձուկ էինք ուզում խորոված
Բայց ուտում ենք հում:

Գրթություն և կլոբալիզացիա

Ուժերի ծաղկման շրջանում
Կատարել էինք իրար ջանում
Կենտրոններում ու շրջանում:

Աղջիկ գիտեի մի շատ քյութ
Ինձի արեց էքզեքյութ:

Նեմեցիս

«Վարդան ջան, որ մարդ չկա, կարաս տրուսիկդ էլ հանես ամառները, թող մի քիչ ճղտլափակ ըլնի»,
Ասեց տատիի ախպերը, Շավարշը:
Նա իննսունվեցին ինձ նվիրեց Շվեյկի գիրքը
Որի արժեքը հետո հասկացա,
Կարդալուց հետո հասկացա
Երբ Շավարշը արդեն էստեղ չէր:

Յղանցք: Իմ տունը իմ ամրոցն է, բայց մի փոքր անցք թողնում եմ, որ ինձ հղումներ փոխանցեն:

- Ձեզ ողջույններ էին հղում:
- Շնորհակալություն, հղումը հետո կդնեք մեկնաբանություններում:

Կարևորության կարևորությունը

Բանանի Միհրանը, երբ տեսահաղորդում ա տալիս թմրանյութի ֆուռի մասին, խորհրդավոր ձենով ասում ա. «42 արկղ»:

Օքթոպուց
Ութ կանանցով ներկայացում

Տվեցինք իրար երդում
Բազմազանության երթում:
Բազմազանության երթում
Իրար էինք թերթում:

Սլացուցիչ
Սլացիկ պլյուս շլացուցիչ

Ես վերջերս շատ էի լսում «Թայմը»,
Ու կարդում սքան արվող ֆոտոների մութ կողմը՝
Ձեռագրած, խունացած, դբղած:
Դրանցում մարդուց մի բան ավել էր պահպանվում:
Ֆոտոները էլ չունեն հակառակ կողմ:

*Գիտես, երբ դու գնում ես, ինչքան ներկա ես դու: Ինչ ծանր բան է քո բացակայությունը, ոնց որ էստեղ լինես: Եվ ինչ դժվար է, երբ դու գալիս ես ստեղ, ինչքան բացակա ես դու:*
*(Կնոջ խոսքերը Վարդան Պետրոսյանին, 90-ականներին)*

Ձեռքերը առատաշարժ,
Շարժառիթները բյուր:

Մենք որ հանրայինին
Գերադասում ենք հանքայինը:

*Լարիներս անցան:*
*(Լարի Գագոսյան, 77 տարեկան)*

Նոչ, ապտեկա, գանդոն, նոչ
Այո, այո, այո՝ ոչ:

Չստացված տարիների վերջաբանը

*Արվեստագետը պիտի լինի վերջին փհատվողը:*
*(Լևոն Տեր-Պետրոսյան)*

«Հայերը սկսել են անգամ առցանց գրքեր պատվիրել Վայլդբերիզից, երեք անգամ աճել է սիրավեպերի պահանջարկը»,- գրեց «Հրապարակ»-ը: «Սերգեյ Ռաֆայելըվիչ, յա խաչու չտոբ էտա սկուլպտուռա բիլա վ կադրե»,- խնդրեց խմբից առանձնացած մի կին, իրեն նկարող տղամարդուն, հրապարակում:

Հիշում եմ,
Էդ օրը Արմենի հետ մոտ գնացինք
Անցավ, շրջապատված էր սվոյներով
Հինգ-տաս մետրի վրա էր
Հրապարակից Ամիրյան էր գնում
Ուժեղ էներգետիկա ուներ:

«Ամեն ինչ իր ժամանակին լինելու է»,- ճեպազրույցում ասեց երրորդ նախագահը, երբ թվում էր թե ամեն ինչ, ոչ իր ժամանակին, արդեն եղավ, պրծավ:

Մարտակերտում օձերը շատացել էին պատերազմից հետո:

Լիբերալ խաղաղաշինություն:

Խաղաղաշինանյութ

Գնացինք վաստոկ
Ապրեցինք վաստորգ:

Գնացինք Վեդի
Հետներս տարանք մի վաստոկավեդի
Նաև մի շվեդի:

Ոչ մի թեզական

Էս վերջերս
Կյանքի բերումով
Անընդհատ նայում էինք
Իննսուներկու թվի «Ալլադինը»
Որի շատ լավ որակի սքանը
Քաշել էինք rarbg.to-ից
Մինչև նրա անակնկալ փակվելը:
Սուլթանը հիշեցնում էր մեկին
Ու չէինք հիշում թե ում
Բայց ամեն անգամ էր հիշեցնում:
Էս վերջերս գնացինք Սարդարապատ
Ցլերը լավն էին
Հետ գալուց ման էինք գալիս
Յուգասլավսկի լյոտչիկների հուշարձանը
Պատահական տեսանք
Փառապանծ գեներալի(sic!) գերեզմանը
Իջանք, մոտեցանք, նայեցինք
Չխոնարհվեցինք, բայց ոչ էլ հեգնեցինք:
Տարածքի պահակը նայում էր,
Կասկածանքով էր նայում,
Բարևեցինք, հանգստացավ:

«Պատերազմի ժամանակ նրանց կերավ,
Պատերազմից հետո մեզ»,
Եզրափակեց Արմենը:
Հետո Լյուտչիկների հուշարձանի մոտ
Սուրճ խմեցինք
Հետներս էինք վերցրել, թերմոսի մեջ:
Նայում էինք կողքի
Եկեղեցու կոնտուրին
Չգիտեմ խի
Ջվյագինցևի «Իզգնանիե»-ն հիշեցինք:
Կոֆեն խմեցինք,
Թերմոսը չփակվեց՝
Սարված էր եղել,
«Չի աշխատում էլ էս ....ս»,
Ասեցի ես ու միանգամից հասկացա
Որ «Ալլադինի» միջի սուլթանը
Նման էր մյուս գեներալին
Ում հետ տեղ գնացինք ու եկանք
Ով հետո տեղ գնաց ու չեկավ:
Նստեցինք, դեռ չէինք շարժվել
Մի մեքենա անցավ կողքներովս
Միջից ձախ Հարութն էր երգում:
Տարիներ տարիներ սահեցին
Ու մեռան երազները բոլոր
Ոչ մի խեռըս անեղծ չմնաց
Օրերում անհաստատ ու մոլոր:

Գազելի շոֆերի թաղմանը
Մի ավտոբուս մարդ կար:

«Միծիները շատ եմ սիրում, բայց պիտի չնայես ուտելուց»,
Ասեց մի աղջիկ մյուսին չծայնագրվող ճեմազրույցի ժամանակ:

«Հայաստանի հավաքականը նորից, դարձյալ, կրկին, վերստին առաջ է անցնում»,- գոռաց մեկնաբանը: «Շարունակեք հավատալ ձեր երազանքներին, ասում են դրանք մի օր իրականանում են»,- ավելացրեց նա մի քանի րոպե հետո և ավարտեց տրանսլյացիան:

«Ասում եմ, հիմա դրանք էլ չկան, մահացած ֆիգուրներ են»,- կրկնեց մի մարզիչ, ցույց տալով տախտակից դուրս գտնվողներին: «Ֆիքսում ենք, որ զինվորը ետ չի գնում»,- շեշտեց մյուսը:

Բահպանակ

Ընտրանիք

Մանուկը հյուսիսից

*Փողը նման է անձրևի կաթիլների, անձրևից հետո կտուրին մնացած: Կառավարության ֆունկցիան կտուրին թեքություն տալն է, որ փողը ճիշտ տեղ թափվի: (Իշխող ուժի պատգամավոր)*

Հիմքեր և հիմունքներ

Առաջվա «Վոգ»-երի մեջ ոգի կար:

Փնտրվում է ձկնորսի կողակից,
Ով հասկանում է բեղլուից ու կողակից:

Վա՞թս ափ, Սյունի:

Հայ թատրոնի տրանսֆորմացիան
Պետրոս Ադամյանից մինչև
Պետրոս Ղազարյան:

Կարում ա իրան սկուտերի վրա մատուցի:

*Չնայած արա, դակումենտալիստները ինչ ռեժիսոր, նրանք կյանքի մեջ ապրող նորմալ մարդիկ են, էն որ ասում են ձևերի մեջ պտի որ չմտնեն, պտի որ, չնայած ուրիշ ոչ մի դակումենտալիստ չեմ ճանաչում բացի քեզնից, որ կողքից ասեն: (Կայծ, Տելեգրամի առւդիո)*

Ապրում էինք սիրով
Արարում լիրով:

«Տեսանք ու տեսնում ենք ռռին,
Քանզի վստահվեց ղեկը էլի՝
Գրաժդանսկի դագավոռին»:
Մոտավորոպես սա ասեց տասնյոթ րոպեում
Մի ռուսամետ ու ռուսախոս գործիչ:

Ռեգիոնալ սիրո տրանսկրիպտները:

Փարաջանովը քիթը բռնած վազում էր,
Հետևից մեկը նայում էր ու գոռում.
«Յատի՞, յատի՞»:
Ոտանավորը կոչվում է «Տռան հույնը»:

*Բարեկամը լավ բան ըլներ, չէինք ունենա: (Հարևան)*

«Փողկապակապ Հակոբ պապի
Ինձ համար մի փողկապ կապի
Որ քեզ ասեմ փողկապակապ
Հակոբ պապի»:
Էս էր ասում էր քեռիս՝
Ինչ իրան գիտեմ:

Սիրում եմ անտրամաբանական խնդիրներ լուծել:

Ապրում էինք, արարում
Սիրով վարարուն:

Արդեն ավելի հազվադեպ են պատահում
Սովետական իրերը
Աղբամանների կողքին դրված:

«Արա հերիք ա վանգավատ անես ապագայի վրով,
կգա, կտենանք»,- ասեց Կայծը օֆլայն:

Երջանկություն նորապսակներին,
Ազատություն քաղբանտարկյալներին:

Մտքիս ցելը կտրվեց

«Էն երկու շիշ չբացած «Ստումբրասը» ամաչեցի վեկալեմ, գոնե մեկը»,- ասացի ես, տարօրինակ հարսանիքից դուրս գալուց: «Արա բա շուտ ասեիր, չֆայմեցի, ես կվեկալեի, հատը արդեն չորսուկես ա դառել, հիշում է՞ս, վախտին իրեք էր»,- պատասխանեց Կայծը, երբ քայլում էինք նեղ ճանապարհով դեպի կանգառ:

Ծվարած ստվարաթղթեր

Նիկողայոս Ադոբ
Ադոնց պրեմիեր

Առաջ կար պլանային տնտեսություն
Հիմա չունենք պլան:
Առաջ ունեինք ծրագիր
Հիմա միայն պլան:

*Պարզվեց, ոչ թե համակարգը դուրները չէր գալիս, այլ իրենց տեղը էր համակարգում: (Դավիթ Ստեփանյան)*

«Վլադիմիր Ժիրինովսկին, երջանկահիշատակ»,- ասաց իշխող ուժի պատգամավորը խորհրդարանի նիստի ժամանակ, որը նայում էինք լայվ:

Մարդիկ ծերանում են:
Չեն ուզում՝
Բայց ծերանում են:

Մարդը gap-ի մեջ

Ֆռոզենի մուլտից Օլաֆը
Գոռում էր. «Ես կարդացել եմ բոլոր գրքերը»
Ձեռքում բռնած «ՍՍՀՄ պատմություն»-ը:
Դարակում տեսանք Բունինի հատորը,
Պիկուլի «Ֆավորիտ»-ը,
«Դդմաշեն» գիրքը,
Որը ինչպես պարզվեց

Դդմաշեն գյուղի մասին էր ու
Առցանց հասանելի էր
Հանրային գրադարանի կայքում:
Սեղանին դրված էր
«Հայ-գերմանական դպրոցական բառարան»-ը,
Վրան երկու բանալի,
Տակինների մասին բան չիմացանք՝
Բայց վստահորեն էլի գրքեր էին:
Սենյակում սնդուկներ կային,
Գինու մոմաժայթքված շշեր,
Սփռոցներ, կեղծ աղյուսներով պատեր
Ու մի եվրոպատուհան,
Որտեղից երևում էր
Քաղաքի ծայրամասում գտնվող
Մանկական կաֆեյի պալիգոնը:
Այնտեղ մեծերը ուտում խմում էին
Բացօթյա քեֆերի լամպուշկեքով դեկորացիաներով
Շրջապատված
Իսկ երեխաներին
Մանկական կաֆեյի շտաբում
Ռազվլեկատ էին անում
Մուլտհերոսների ֆորմա հագած
Թատերական սերժանտները:

Գումարներ և հանրագումարներ

Ջիմ Թորիսոն
Մորիսոն Թորոսյան

«Լիր սրբելու ժամանակ չունեմ»,- ասաց արքան:

«Չգիտակցված բոզի տղությունը՝ բոզի տղություն ա, գիտակցվածը՝ նույնպես»,- ասեց Եղիշը՝ ոչ Չարենց, ոչ էլ հինգերորդ դարեցի:

Նադ նամի պարիտ
Լիրայր ժիպարիտ:

Առասպելները սիրո
Հերքում էր ժիրոն:

*Այ ֆիլ սորրի ֆոր փիլեյըրս, հու ար օլվեյս լայինգ ըուեյք ըթ նայթ, բրոոդինգ օվը դեիր գեյմս: (Մագնուս Կարլսեն)*

Մտածում էինք վերմակ էր
Հետո հասկացանք որ չէ:
Մտածում էինք աղյալ էր
Պարզվեց որ էդ էլ չէ:
Սրբիչ, թաշկինակ՝ չէ:
Հետո հասկացանք, ընդունեցիք
Ու ոտքերներս չմեկնեցինք:

Ուղեղային հորմոն «Նաիրի»

«Հայրենիք և սպիրտ» կենացների մրցույթ-փառատոն

Ձայնի ձայնը

Հերքալ սիրո տրանսկրիպտը

Թե ուզում էս երգդ լսեն
Ձայնը բարձրացրու:

«Դավաճանությունը դավաճանություն համարում ե՞ք», Հարցրեց լրագրողը:

«Բացեք ձեր սրտերը, բացեք ձեր հոգին, թողեք թող ներս գա նոր տարին»,- լսվում էր մանկապարտեզից, հուլիսյան ճռռացող շոգին:

*Տոյեսծ, եթե դու չունես էդ սուպեր երազկոտ հավատը, դու կթարգես պռոստը էտի, կեթաս մի հատ քամփընիում թփռոշ աշխատավարձով կաշխատես: (Հայ ստարթափեր)*

Ցելը չի կարա նպատակ լինի:

«Արա ձեզ չեք հարգում, գոնե ինձ հարգեք, հայատառ գրեք», Զայրացավ մի տարիքով մարդ, ով խոսում էր ժողովրդի հետ Յութուբից:

Ցածրախոս
Սարք, որը միտինգների ժամանակ ցածրացնում է ձայնը կամ միտումնավոր այնպես է անում որ չլսվի:

«Արա, էս էլ տրինաժորնի զալ ա՞ բացօթյա, պիզդեց, չէի տեսել»,- ռեմարկ արեց Կայծը աուդիոյի մեջ ու շարունակեց. «Արա ես խի՞ եմ նույն կրուգերի մեջ, սանսարայի մեջ, խի եմ միշտ նույն բորշչը ուտում, հելնել ա պետք, հելնել»:

Եթե դու ունես ցանկություն խմելու ու կենացներ ասելու, դրա համար պետք ա լինի պատմություն որ կենացներ քաղես:

Մաթեմադարան
Հինավուրց մաթեմատիկական խնդիրների պահոց:

*Օրերը ցնորք կդառնան*
*Աշխարհը անդուռ փակուղի:*
*(Եղիշե Չարենց, «Պոեզոզուռնա»)*

Պուտանտ

Մոլարաններ

Յավերժ ժամանակավոր

Յերկված փաստարկներ

Չնչին ինչպես Միրզոյանին նետած քար:

Արևելքի եթիմներին իջավ պայծառ իրիկուն:

Անցյալում դեռ
Ներկաներ կային:

Էշվիլ

Ֆոտոյից ֆոտո
Ամուսինների կողքին հայտնվող
Միջին դասի հարուստների կանայք:
Ֆոտոյից ֆոտո
Առիթից առիթ
Ապրող կանայք:

Լատվիացի վարպետ Վիտոլինշը պարտիայի ընթացքում խոսում էր ֆիգուրների հետ:

«Գիյոթ ըլնեմ, Է՞ն Էլթըն Ջոնը չի» ,
Հարցրեց մեկը մյուսին
Աբովյան փողոցում
Տարիներ առաջ:

Սեպարտամենտ

Ֆալլակտիկա

Մինետավր

- Հանգի կրկնօրինակման լոգիստիկան: Ոչ թե հանգավորել, այլ կրկնօրինակել, հանգավորել բառը ինքն իր հետ՝ այ սրա վրա եմ աշխատում վերջերս:
- Հիմարություն:
- Համաձայն եմ:

Կրակի հոտը

«Ապեր, ես մի հատ ինքնահողի պիտի գնամ, ազատվեմ, կզանգեմ», ասեց մեկը, ով քիչ անց, ժպտալով պատասխանեց մեր կողմից չլսված՝ բայց գուշակված հարցին. «Ապե դե ինքնահող ա, չեմ կարա ասեմ երբ»:

Քյարթու մարդակերներն ու քյարթակերները

Պցոտ բերնով

Լինելինգուս

«Ապե Կարենին ասել ենք, Աննային ասել ա, Կարենին ասել ա՝ կճարենք»,- ասաց «Օպել»-ի վարորդը մեքենայի դուռը փակելով:

Ակցիաներուն շուքին տակ

««Բարի գալուստը» սպիտակի վրա սևով կգրենք»,
Ասաց արագ քայլող մի աղջիկ
Կողքից մի կերպ հասցնող մյուսին
Օգոստոսի վերջին:

Լավ է ուժ, քան երբեք:

*Ուրիշին ուրիշ մնալու տեղ չեն թողնում:*
*(Դավիթ Ստեփանյան)*

«Աշխարհի վերջն ա»,- ասեց առաջինը
«Վերջը չի, նշաններն են»,- պատասխանեց երրորդը
«Էս հնդիկներն էլ լցվել են, ինչ պիտի անենք»,- ասաց երկրորդը
«Ոնց որ սաղ, նենց էլ մենք»,- բոլոր հարցերին միանգամից պատասխանեց վարորդը:
«Թե ասա էսքան տուն ու ոսկի որ դիզում եք,
կա՞րող ա գիտեք փրկելու ա ձեզ»,
Նայելով օրեցոր մեծացող շինություններից մեկին
էլի թեմա գցեց առաջինը,
«Իմ համար մեկ ա, ես առյուծ եմ, առյուծը ոսկի չի սիրում,
կապանքներ չի սիրում»,
Մի փոքր դադարից հետո պատասխանեց երրորդը,
«Դե ասա վայրի էս»,- կատակեց երկրորդը
«Վայրի չեմ, վայրենի եմ»,- պատասխանեց երրորդը,
Ու ժպտացինք հինգով:

Ուզեցի Հիչքոքի ֆիլմերում երեխաներ հիշեմ, չկարացա:

«Մեր Կուբրիկը»՝ բանակի մասին:

«Կյանքը ըստ էության ինքնաիրականացվող մարգարեություն է, որը ստեղծել ենք մենք ինքներս մեր սեփական նպատակների համար»,- ավարտեց իր խոսքը Բարոյանը, մարդը՝ ով խոսում էր ժողովրդի հետ Յութուբից:

Էխ մուժիկ
Ժեխ մուժիկ:

«Ո՞վ է վախենում Վիրջինիա Պետրոսյանից»:
Վարդգես Վուլֆ

Վովան ծախում էր մրգեր
Իսկ ինչը արդեն փչանում էր
Դրանցից քաշում էր օղի
Ու վաճառում կողքի նստողներին:

*Էս ժողովրդին մենակ մեռնելով կարաս համոզես որ դու պատրաստ էս մեռնելու: (Սարգիս Հովսեփյան, «Հանդարտություն»)*

*... ով վերջնականապես համոզվել էր, որ իրականությունը միայն այն է ինչ չես ցանկանում տեսնել, իսկ մնացածը պարզապես զառանցանք է: (Առաքել Սեմիրջյան, «Թաթիկ»)*

«Նախնիները ետ չեն գալու»,- տառասխալով նյարդայնացավ մի կին:

անակնկալիք

Պարծեցող չկռվածների
Ու պարծեցող կռվածների տեսանք:

*Մեկ-մեկ գրում էի այն մարդկանց խոսքերը, ովքեր նույնիսկ սրճարան չեն գնում ու նրանց ասածները նույնիսկ մատուցողները չեն գրում: (Ելենա Դոլգոպյատ)*

Տոլիկը ծախում էր
Շնուրոկ, ասեղ, թել, թզբեխ
Տարբեր գույնի սանրեր
Տարբեր չափի սանրեր
Պապլավոկ, թել, ցեպ
Շաշկու քարեր, ասեղ, աչքի ուլունք,
Ապասնի բրիտվա, լեզվի, ածելի
Մագնիս, մարջան, ապարանջան
Եղունգ կտրիչ՝ տարբեր չափսերի:
Նա ռուսախոս էր
Հայերեն՝ ակցենտով էր խոսում
Գաղթել էր՝
Վերևից որ նայում ես քարտեզին՝
Մեր աջ կողմի երկրից,
Ութսունականների վերջին:
Երկաթից սեղան ուներ
Սվարկա արած ոտներով
Որի վրա դնում էր ապրանքները
Ոտքը թուլացած աթոռ
Հին մաշված ցելաֆոններ
Սև գույնի, որոնց մեջ

Տարիներով տեղավորում էր ապրանքները երեկոյան
Ու նորից հանում առավոտյան:
Նա շաշկու տախտակ ուներ, դնում էր փողոցի նստարանին
Ու մի հին, մաշված բրոշյուրից դիրքեր էր վերլուծում:
Նա այդպես էլ հակառակորդ չգտավ, ոչ էլ համախոհ:
Նրա տեղը հին, չգործող շուկայի դիմացն էր
Այդտեղով շարժը շատ էր
Կամաց-կամաց էդ մասի
Հետսովետական տգեղ կիսակառույցները քանդում էին
Ու հետհեղափոխական այլանդակ շենքեր կառուցում
Տոլիկը անընդհատ տեղափոխվում էր դեպի ներքև
Մի օր նստարանն էլ քանդեցին
Շաշկին արդեն դնում էր ծնկներին
Հարմար չէր, մեկ մեկ թափվում էին գետնին
Միանման քարերը ու դիրքը չէր լինում վերականգնել:
Շահը այդպես էլ չեկավ:
Փոխարենը եկավ կապիտալիզմը:

*Ֆրանսիան 1789-ից հետո հեղափոխական ազգ էր՝ պահպանողական մշակույթով, իսկ Բրիտանիան 1789-ից հետո պահպանողական ազգ էր՝ հեղափոխական մշակույթով:*
*(Էնդրյու Գրեհեմ-Դիքսոն)*

«Հուսալի շինարար»,- գրված էր ասֆալտ անող ավտոյի վրա:

Տատաֆալկ

Չբացվեց կյանքի դուռը
Բախտը տվեց մեր բուռը:
Կամ հակառակը:

Խրտնահոտ

Մեր փոխարեն երազողները
Ու էդ երազանքները իրագործողները:

Մի գրողի տեսանք
Ով սիրում էր պախկվել,
Բայց այնպես՝
Որ կարողանան գտնել:

Էլֆիկ Սամո

«Հաճախ եմ գնում սարեր, ձորեր»,
Ասաց մի մարդ,
Ով դժվար թե կարողանար
Գնել դրանք:

Ես, Նելսոնը, Ստեփանյանը:

Ինչքան բան ես չգիտեմ
Նույնիսկ դա ես չգիտեմ:

«Տան ռեմոնտ եմ վեկալել, մեծ գործ ա,
չեմ կարա գամ էսօր էլ, վաղն էլ»,
Ասեց կալոնկա, սառնարան,
Լվացքի մեքենա սարքող Սասունը,
Սովետից թռնող դիսիդենտի ձայնով,
Ու անջատեց՝ փոքր պաուզայից հետո:

Հերս կարմիր յեժեդնեվնիկներ ուներ երեք հատ, որոնց մեջ գրել էր էն՝ ինչ իրեն հետաքրքիր էր եղել 70-80-ական թվերին: Ափսոս տատին չիմանալով վառել էր, մնացած թղթերի հետ, փեչի տակ, կամաց-կամաց, ձմեռները, պապայից հետո, Պտղնիում:
Դա իմ մեղավորությունն էր, խառն էինք: Հիշում եմ ձեռագիրը, տարբեր տարիներց մնացած կապույտի երանգները: Մի տեղ գրած էր իրենց տրեստում աշխատող սփյուռքահայի ասածը. «Այսօր սովորեցինք խրթին թիվ մը, պի, π=3.14»: Նաև՝

ROTAS
OPERA
TENET
AREPO
SATOR

ու կողքը ավելացված. «Էս օր էլ էս սովորեցինք»:

Հոպարենց ռեյսին էի հետևում,
Էդ ընթացքում Բուդապեշտ - Սեուլը
Շատ քիփ անցավ Ալմա Աթա - Լայպցիգին:
Հետո հեռացան իրարից ու կորան
Ֆլայթռադարի կառավարվող քաոսներում:

*Երբ որ Հիսուսը ասում ա վազլյուբի վռացով սվաիխ, ինքը գիտի որ վռաց չկա ընդհանրապես: (Կայծ, Տելեգրամի աուդիոներից)*

Վառված գրքերից հիշում եմ առանց կազմի մեկը
Որի առաջին բանաստեղծության վերնագիրն էր՝
«Բոլշևիկ է Շիր-Կանալը»:

Հավերժ անցյալի ոլորաններում
Ատում էինք իրար
Ու հետո ներում:

Անհամբեր սպասում էինք
Բայց չգիտենք ինչի:
«Վայլդբերիզ»-ի զեղչերին
Թե նոր ֆիլմին Լինչի:

Երազանք և խիղճ

Կարաբասյո
Կաբուկիստ պուետների խմբապետ-կուրսղեկ

*Հեռացար՝ հեռացիր*
*Մոռացար՝ մոռացիր:*
*(Պոլ Բաղդադլյան)*

Խմել ջնջվել էինք
Բաժանվել
Բաղդատվել էինք:
Պառկել էինք պոլին
Լսում էինք Պոլին:

Ծայրաց փոքրագույնը:

Մենք, որ սիրո մասին երգեր լսելուց
Մտածում ենք հայրենիքի մասին:

Իլյիչը չմտավ (խուլ թե մտավ) համաշխարհային Սովնարկոմ:

Եկ կատարենք իրար
Բայց ոչ հարկադիր:

Ճանսեր չկան:
Խմում ենք լուռ: Ուշ է:
Մեսչյանը կարար ասեր:

*Բնականաբար այստեղ մենք հավաքվել ենք էն հավատով որ իրար պետք ա հավատանք: (Յատուկ հանձնաժողովի նիստը վարող)*

Մի սեփականաշնորհեք նրանց, ովքեր կադաստրի թուղթ չունեն:

Ապրում էինք
Լի
Չեխովով ու
Ստրասբերգով:

«Յա, յա, դաս իզ Շիրակ, իջեք»,
Ասեց մի բիձա գազելի միջի հնդիկներին:

Լեսբիներ և թալիշներ

«Երեխուն լողի ենք տանում «Վիկտոր Համբարձումյան», «Ոսկու շուկայի մոտ»»,- տեղեկացրեց մի կին մյուսին:

«Հայկ, մեր դպրոցի բուֆետչիկի անունը ի՞նչ էր»,
Հարցրեց մի բոյով տղամարդ մյուսին:
«Ադրինե»,- արագ պատասխանեց մյուսը:
«Ադրինե, հա»,- շշնջաց առաջինը, հետո պտտվեց ու ասեց երրորդին, արդեն բարձր. «Ադրինե էր»:

«Նրանք մեզ հոգևորել են»,- ասեց մի սպորտսմեն:

«Աշխարի վերջը մոտիկ, մարդիկ ֆունդամենտ են քցում»,
Յոգոց հանեց վարորդը՝ ցույց տալով հերթական շինարարությունը:

Վարդգես Գասպարին, տարիներ անց, նորից պառկեց, այս անգամ՝
Յանրապետության հրապարակում, ձեռքին թուղթ, որի վրա գրված
էր. «Ա. Սիմոնյանը ԹՔԵԼ Է ոչ թե մեկի մարդու՝ այլ բոլորիս վրա,
օրենքների, երկրի, պետականության վրա»(sic!):

Ռոստովյան լրի մարտիկներ

«Դու մնա, ես հոպըլոյի հետ արագ գնամ, գամ»,
Ասեց հիսունին մոտ մի տղամարդ
Յոթանասունն անց մի կնոջ:

«Բոնապարտում»
Կարդացինք բջջայինի
Բուդկայի վրա:
Պարզվեց
«Բրոնապատում» էր:

Փասվորդ սեղան

- Ե՞րբ կգաս, կնայես:
- [պաուզա]
- Մոտավոր ժամ ասա:
- [պաուզա]
- Դե պրծի, զանգա ինձ:

Օգոստոսին
Բաղրամյան մետրոյի
Շիկացած վիտրինների արանքում
Սերժի առաջին սռոկից ապրող կինը
Տաշտով ջուր էր դրել տաքանալու
Ստվերը լույսից անջատող գծից անդին:

«Բարև»,- մունննաթով պատասխանեց զանգին հարևանը, մի քանի վարկյանից ավելացնելով. «Մերսեդեսի կռիշկա»:

«Բըրյանսկից քեռի-մեռիներ էլ եկան փեսու, մեծ սեփական տուն ա, իրանց հայաթը էնքան լեն ա, շալանդը ռազվարոտ կարա անի»,- ասեց տաքսիստ Ղազարը ու նայելով ինձ ավելացրեց. «Շալանդը չգիդես ինչ ա՞»:

«Լավ է ուշ՝ քան երբեք, Լև Տոլստոյը ութսուն տարեկանում ա հեծանիվ քշել սովորել»,- ասեց մի կին: «Ես հեծանիվից վախում եմ, փոքր վախտ ընգել եմ»,- ասեց մյուսը, սպիտակ գույնի գազելում, որոնցից Երևանում՝ ասում են էլ չկա:

Նարդին 4/3 եք խաղում թե՞ 16/9:

«Ախչի չճանաչեցի»,
Հռհռալով ասեց շոգ կանգառում սպասող վաթսունն անց մի կին,
Ցույց տալով անցնող կանաչ ավտոբուսի վարորդին,
Ով քիչ առաջ ժպտալով ձեռքով էր անում իր ուղղությամբ:
«Դասարանցիս էր»,- քիչ հետո պարզաբանեց նա:

Շիրմա-քար

«Հանբալներ են, հան-բալ»,
Ասեց տարիքով, երկարաթև սառոչկով,
Մեծ բոթասներով մի մարդ
«52» կապույտ ավտոբուսում,
Որը առաջ, վեչնի լիքը,
Բանգլադեշից Մոլդովական գնացող,
«63» համարի գազելն էր:

Մեծանուշ՝ մեծ և անուշ:

«Ռեգուլառ»,- գրված էր կարմիրով սև տաբլոյի վրա:

««Նեխվատկա լյոխկիխ կիսլառոդով», էդ ա հիպերտոնիկների մոտ»,- ասեց վարորդը:

«Polansky»,- գրված էր էվակուատրի վրա:

Օրենքով գրող

Անհոգ մոլերի անուրախ աշխատողները

Մի թմբլիկ լոկալ վերադաս
Բարոյական օրենքի շրջանակներում
Ձղայնանում էր
Մոլի մաքրուհու վրա
Ավելի մարգինալացնելով
Մարգինալներին:

Վերցրեց ծանոթս օնլայն արագ վարկ
Ու տարավ երեխեքին իր «Երևան պարկ»:

Աչքներս ուրիշի անցյալին

Սան Ֆրանցիսկոյի
Սան Հանգույցները

«Նստած կոֆե էինք խմում պարապ, ծարավ»,
Ասաց մի սպիտակ կեպկով տղամարդ
Կողքին նստած կնոջը, ավտոբուսում:

«Մարդ ինչքան ուզում ա կքայլի,
բայց հենց կանգնում ա, ուզում ա նստի»,
Ասեց մի սովետական ձևով շպարված կին
Բարեկամության «Սաս»-ի կանգառում:
Շատ մարդ չկար:
Քիչ վերևում մի շուն
Խելոք նայում էր
Նախկին «Պարմա»-ի մսերին:

Ջազպրոմ

Մայրամուտին
Մի կին շլոր էր բաժանում Կասկադում
Հիմնականում չէին վերցնում
Ծեր կինը չէր խոսում
Ձեռքն էր միայն պարզած շլորներով:
Չորս հատ վերցրինք
Երեքը տուն հարցրինք
Դեղին էին, սիրուն
Լվացանք, կերանք:

Ռուսները
Սուրճի բաժակով և առանց
Կասկադում
Բարձրում նստած
Երկար նայում են
Արարատին:
Ինչը չեն անում մերոնք:

«Լավ ա, սենց որ գնա ես կարող ա որոշում կայացնեմ, ամուսնանամ»,- ասեց կողքի փոքր տղամարդուն մի խոշոր, վալեվոյ աղջիկ, ու հյութեղ կծեց մեծ չափսի խնձորի նախավերջին կտորը՝ մյուս ձեռքում պինդ բռնած դրամապանակն ու սմարթֆոնը:

«Ավաղաղել են մեր հայերենը»,- բողոքեց մի կին կողքինին:
«Բավարիան հայերն են սարքել»,- ասաց մի տղամարդ մյուսին:
Գազելը եկավ, նրանք բոլորով նստեցին ու գնացին:

«2003 թվին, որ Ալավերդուց տեղափոխվեցինք ստեղ, տունս Մասիվ էր»,- գետնանցի վերևը իր հետ լռված սպասողին սկսեց բան պատմել սպորտային սումկան ուսին մի մարդ: «Վարիկոզի համար լավ մազեր կան, քսի, Էնքամ էս հանգստանում»,- ասեց գետնանցի կրպակներից մեկի վաճառողուհին մյուս երկուսին:
«600 դրամ ա, վերևի ապտեկում կա»,- շարունակեց նա նայելով անցնող կենսախինդ պադրոստըկներին, որոնցից մեկը, ընդհանրապես չնկատելով տեղացի այլազգիներին, ասեց.
«Սիվոդնյա բուդեմ չիլիծ, նիկակիխ զանյածիյ նետու»:

«Բարի գալուստ ապրելու քաղաք»,
Գրված էր բիլբորդի վրա, քաղաք մտնելիս
Խցանման սկզբում, որի ծերը չէր երևում:

«Էրեկ ցերեկը ոտս մեխ մտավ»,- ասեց մի կին ուղևորներից:
«Ո՞նց»,- հարցրեց մյուսը:
«Գործի տեղը սպիտակ ծիրանի ծառ կար
ասի մտնեմ քաղեմ, մտավ»,- պատասխանեց առաջինը:
«Դե ասա թալակ են դրել»,- ծիծաղեց մյուսը:
«Հա, փետով էլ մտել էր»,- ասեց առաջինը նայելով ոտքին:
«Ես էլ երեկ ձորն էի»,- ասեց երրորդը:
«Առիթ կա՞ր»,- հարցրեց երկրորդը:
«Մեր աղջիկներով, վեց հոգով»,- շարունակեց հիսունին մոտ կինը:
«Բա ի՞նչ առիթ էր»,- պնդեց երկրորդը:
«Ես էլ էս ամիս իրեք առիթ ունեմ, երկու հարսանիք, մի կնունք»,
Միջամտեց վարորդը ու բարձրացրեց մագի ձայնը
Որտեղից Դումիկյանը ու Ասատրյանը ասեցին.
«Հոպ, հոպ Ջիվանի,
Էս տղեն ցավըդ տանի»:

«Դե գուլյատ արա ապե, երկու օր ազատ էս»,
Ասեց խցանման մեջ կանգնած
Լիքը ավտոբուսի վարորդը հեռախոսով՝
Այդ ընթացքում մի ձեռքով խաղալով ղեկի հետ:
«Եվրոպա ինչքան ջրի տակ մնացած ավտո կա
չորացնում, ղրգում են ստե»,
Դիմելով վարորդին, փորձեց խոսակցություն սկսել
Մաշված մի մարդ,
Ում հետ իրար կպած կանգնած էինք դեմի դռան մոտ:
Վարորդը նայեց նրան, հետո հետ պտտվեց,
Շարունակեց խոսել ու քշել:
Անտեսված մարդը նույնպես պտտվեց, ինձ նայեց, տնտղեց
Ու հարցրեց. «Խաբար ե՞ս, շաբաթ կիրակի խնայդրամարկղերը խի՞
չեն աշխատում»:

Մրգերը հյուսիս էր տանում ֆուռերով «Կարգո»-ն,
Որ ուտի ու մեզ խեռի Սիմոնյան Մարգոն:

«Մի քիչ լցվել եմ, շորերս վրես չի լինում, գնամ Արսից փող վերցնեմ, ինձ վիլասիպեդկա առնեմ»,- ասաց մի աղջիկ, թարմ չեխոլով հեռախոսով, ավտոբուսում նստած:

«Մենակ սպիտակ ու շակալադնի տու,
էդ կլուբնիկովից առնող չկա,
անցած տարի կեսը մեզ մնաց պադարկի»,
Կշտամբեց վաճառողուհին մառոժնու առաքիչին:
«Զետկա, տի մոյ կայֆ»,
Լսվեց դրսից,
Բոլորով նայեցինք՝
Խանութի մոտ կանգնած
«Իքս հինգ»-ի վարորդը
Բարձրացրել էր ձայնը,
Ու նայում էր
Մեքենայի կողքով
Դանդաղ անցնող
Իրարով տարված
Ռելոկանտ աղջիկներին:

Սուպերով պար

Գայանե վալետ

«Մի խոսքով, մեզ ճիշտ չենք կրթել»
Ասեց մի կին խանութում:

«Վայլդբերիզներում հերթեր են, Օվիրներում հերթեր են»,
Բողոքեց հարևանը պաապորտ-սեղանի մոտ:
Նույն արեց քիչ անց, «Վայլդբերիզ»-ում:
Նա քրտնեց, բայց խփել տվեց ելքի պեչատը,
Հետո վերցրեց Ռուսաստանից պատվիրած շորտիկն ու մայկան,
Ու թռավ Ռուսաասատան, որ հագնի:

Դարսնան

Ստենդի մոտ կանգնած էին մայրը և երկու երեխաները, քիչ հեռու՝ հայրը: Պատվիրել էին լիքը բան, պամպերսից մակարոն ինտերվալում: Ու մենք մի քանի րոպե դիտում էինք նրանց ընտանեկան դիմանկարը «Վայլդբերիզ»-ի ինտերիերում:
«Ոչ զիջում են, ինչ էլ կա մանրամասն փորձում են, սպասողների մասին չեն մտածում»,- դժգոհեց մի կին հերթի վերջից: Մյուսը ես էի: «Պլյուս տասնութ», խոշոր շրիֆտով գրված ու կպցված էր Վիսկոնտիի մասին գրքի փաթեթավորման վրա: Մի քանի հոգի տեսան, հետաքրքրությամբ վրաս նայեցին: «Էս ինչ տոթ ա, խեղդվում ենք, տո», շպրտեց նույն կինը, արդեն ավանդական ատելությամբ, «Մահը Վայլբերիզում»-ից հերթական հեռացողների ուղղությամբ: Հասցրեցինք թռնել, չկպավ:

Համերգրացիներ
Համերգի մասնակիցներ

*Հորս հիշատակը*
*Կախեմ քո վզին:*
*(Արամ Ասատրյան, «Պաշտելի մանյակ»)*

Կամակոր սանձահարի տղամարդկայնացումը

«Կիլոյուկես խնձորը արժե հարյուրհիսուն դրամ,
Ինչքա՞ն արժե յոթ կիլոն,
Թե ասես տղա ջան, հազար դրամ կտամ»,
Ասեց մի պապի
Դիմացի նստարանին
Ժպտացող մոր հետ
Նստած երեխուն
Ու միանգամից ավելացրեց.
«Թոշակս ստանամ, կտամ»:

Գետնանցումային արդարադատություն

«Երբ որ արդեն որոշում էինք թե ինչ ֆորմածիկա պիտի լինի, կատարվեց դա»,- ասեց երգարվեստի երիտասարդ երախտավորներից մեկը Յութուբով:

Ներկայի ներկան

Ուժասպառող

Թաքունել

*Մասիսը իմը չի, բայց ես այն տեսնում եմ ամեն օր: Մասիսը ինքնին վերցրած իմաստ չունի, բայց Մասիսը մնացած ամեն ինչին իմաստ տվող ինստանց է: (Աշոտ Ոսկանյան)*

Հիմա ավելի լավն ենք
Բայց առաջ ավելի լավ էր:

«Չեմ ուզում չակերտները բացահայտեմ»,- ասեց մի ստեղծագործող:

Ոչ միմիայն դա

«Մերսի բոքու»,
Ասացի մի քանի հոգու:
Բանաստեղծությունը կոչվում է «Ֆրանսիական դեսպանատան դիմաց»

Կիտած նոթերը տարիների

Սալվադոր Ցինանդալի

«Այո, բավականին մեծալուրջ»,- ասաց մի փորձագետ,
Յանպատրաստից միացնելով երկու բառերը:

*Մտավորականի կոչումը մտածելն է: Եվ դավաճանությունը իր դեպքում ինչ-ինչ պատճառներով չմտածելն է, կամ մինչև վերջ չմտածելը: (Աշոտ Ոսկանյան)*

«Քաջ Նազարի բախտով երկիր»,- ասեց Դիքեյը:

Լիբերալ սիրո արխաիկան

Կանգնած են ֆուռերը
Չի թողնում ֆյուրերը:

Նիստերում արտահերթ
Ցավոք մեզ չտվին հերթ:

ադրենԱլինա

Փայփփորիկ
Ծխամորճ փորող թռչուն

*Ընդ դը ուըրլդ իզ սփինին դաուն:*
*(Քայլի Մինոգ)*

Էս վերջերս, օգոստոսյան շոգին
Բաղրամյանի վրա տեսա Բոնդարենկոյին
Նա նայում էր փողոցին
Հաստատ սպասում էր մեկին
Ակկուրատնի հագնված էր
Ու մազերը սանրած
Հետո մի սև ջիպ նստեց ու գնաց:
«Ի՞նչ կա, Բանդարենկո, էս ու՞ր էս կորել»,
Լսեցի փողոցում, մի քանի շաբաթ առաջ
Դրանից մի քանի օր հետո:

«Մտքերը ձկների պես են գալիս անցնում են
Եթե դու չես բռնում, ուրիշներն են բռնում»,
Ասաց մի անգամ Դեյվիդ Լինչը
Ու մտածեցինք որ մեր իդեաները ոչ ոք չի բռնում
Քանի որ մալյոկ բռնող քիչ ունենք,
Միգուցե ժամանակին՝ Արամայիս Սահակյանը,
Ով վաղուց չկա
Ու նրանք պտտվում են անընդհատ, էդ մտքերը
Օդանավակայանի ճամպրուկների նման
Մինչև մեկս վերցնի:

Անաղարտ սիրո ֆորտիֆիկացիան

Մարդու իրավունքները պետք է հարկվեն

Աշխարհում այս նիպրիյատնի
Անենք իրար մենք պրիյատնի:

«Հելիկոպտեր, հելի-կոպտեր»,
Երգեց նախկին երեխան
Ու տշեց գնդակը գառաժի վառոտին:

Մայքլ Ջեքսոն, «Գրադարանի աղջիկը»
Ստեփան Զորյան, «Լայբերիան գըրլ»

*Դա սվիդանյա: Ժելայու ի վամ նայծի սվոյ տուպիկ:*
*(Եվգենի Խարիտոնով)*

«Խեռիս չի ԱՊՊԱ-ն»,
Ինձ ասաց մի կառապան:

Մենք, որ չսթափվեցինք
Ու հետո հիասթափվեցինք:

«Տերերը նույնն են, դերերն են փոխվում»,- այսպես պատասխանեց մի տղամարդ, ընտրությունների մասին հարցին, Յութուբում:

Ո՞վ էր թողել «Над кукушкиным гнездом» կարմիր գիրքը
Աշտարակի չաստի երկրորդ վաշտի լսարանի պոլկին
2005 թվի աշնանը: Շնորհակալություն:

Ժիլետ հագած թրաշվում էինք «Բիկ»-ով:

Տնտեսականում, մեծ տնտեսականում
Կենցաղային նշանակություն չունեցող ապրանքների բաժնում
Նոր պարտիա էին ստացել, ու
Նույն ձևի ֆորմա հագած աշխատողները
Տուփերից հանում ու դասավորում էին դրանք:
Այդ ընթացքում մի անկյունից
Ժողովրդին էր նայում Քրիստոսի նկարը
Մինչև վիզը թաղված արկղագույն յաշիկի մեջ:

Յորեմերկ

«Ո՞վ ասեց որ երկիրը կլոր ա»,- գոռաց նախկին երեխան ու տշեց գնդակը անորոշ ուղղությամբ:

Վարդակակաշ

Մտքի տիտանիկ

*Դյա Գերմանա նե բիլո ավտորիտետով, վկյուչայա սեբյա:*
*(Լյուբով Արկուս)*

Սպիտակ ամանի մեջ
Երկու սպիտակ ձու կար
Քսաներեքի օգոստոսի վերջն էր,
Մի քանի մազ թափվեց գլխիցս,
Վաղուց էդպիսի բան չէր եղել:

Անառակ պահենք մեր մայրենին:

«Թող սա լինի վերջինը»,
Ալադդինին ասեց Ջինը:

«Հերս մինչև քառասունհինգ թվի հունվարի քսանը
սաղ ա եղել, բայց հետո էլ լուր չի եղել»,
Ասեց բակում նստած մի կին,
Ով ծնվել էր երեսունվեց թվին
Բոգդանովկայում:
«Անունը ի՞նչ էր հորդ»,
Հարցրեց նրան մյուս կինը
Ծնված Կիրովականում
Քառասունմեկ թվին:
«Հովակ, Հովակիմ»,
Պատասխանեց մեծը:
«Ես փոքր էի, բայց հիշում եմ հորս
Բոյով մարդ էր կապույտ աչքերով»:
«Կարող ա չի մահացել, մի կնոջ հետ մնացել ա, չի եկել»,
Սեմուշկա չրթելով
Մեջ մտավ երրորդ կինը
Ով կլիներ մոտ վաթսուն տարեկան
Ու նրա մասին ոչինչ չգիտեինք:

«Վազգենին խփել են, ի՞նչ պտի անենք»,
Հորեղբորս ասել էր Անուշավանը
Պարզ է որ տարվա ամսի քանիսին:
Նա իսկապես վախենալու տեղ ուներ:

Անհույս,
Ներկայի որոնումներում:
Անհույս ներկայի որոնումներում:

- Էս Կրակածիլ Գենան ո՞վ ա:
- Գենան չի, ախպերն ա: Էն որ ասում են. «Ինքը լավ մարդ ա, բայց ախպերը բոզի տղայա», հիմա էս՝ ախպերն ա:

Մենք այդպես էլ չվաճառվեցինք
Քանզի հարմար գին տվող չեղավ
Հարմար առաջարկներ չեղան
Առաջարկներ ընդհանրապես չեղան:

Երկիրը փոքրանում ա
Մեր ատամնաշարերի նման:
Դուք տեսել ե՞ք արվեստագետների ատամները:

«Աշտարակը դարձնենք օրինակելի քաղաք»,
Գրված էր սովետական թվերից
Շենքերից մեկի վրա:
«Աշտարակը դարձնենք ակադեմիական քաղաք»,
Չգրվեց, բայց գեներացվեց հետո:

Օհանավան, Փարպի
Մուղնի, Ուշի,Կարբի:

Օհանավան, Փարպի
Օպենհեյմեր, Բարբի:

Օրիենտալ սիրո սիմպտոմները
Վեսթյան արվեստի տրանսկրիպտում:

Մենք, որ սիրում ենք հետևել
Թե ինչ է կատարվում աշխարհում և այլուր:

Տատս մեծատառ «Շ»-ն ուրիշ ձև էր գրում, այն ավելի նման էր ստացվում «երկու» թվին:

Դիտում էինք Բելլա Տարր:
Տեղում կանգնած բեռնատար:

Կցված հողամասերը քանդում են,
Շները ավել տեղ կունենան պառկելու:

Պապս սիրում էր ու երգում էր
«Վարդ կոշիկըս, վարդ կոշիկըս
Վարդից գեղեցիկ մաշիկըս» երգը:

Ինտերվալային ինտերվենցիաներ

Երկու հոգի խոսում են.
- Էսօրվա դրությամբ ամենանորմալ առաջարկը «Մահաբհարտա»-ն բեմադրել ա:
- Միգուցե Տրիֆոնով, Վոլոդին, կամ Վամպիլո՞վ:
- Ութսունականների դրամատուրգիայով հեռու չենք գնա:
Մտնում է տնօրենը.
- Ի՞նչ կա, Բերտոլդ Բրեխտի աննման զավակներ: Ձեզ նոր պիեսներ եմ բերել:
Տեսարանը կոչվում է՝ «Թատրոն Դավոյին սպասելիս»:

«Էն հետինդ հե՞տդ ա»,- հարցրեց մեկը հեռախոսով, արագ-արագ քայլելով:

«Շպեեր չեմ ճարում, էս Մյուլլերը չե՞ս ուզում վերցնես, էլի էդ թեմաներով ա»,- ասեց Կիևյան-Բաղրամյան եռանկյունում կանգնող սպիտակ բեղերով գրավաճառը:

# ՉՖԻԼՏՐԱԾ ԿԱՊՈՒՅՏ

*Ամբողջովին խոցված*
*Մատներով ու ծխով*
*Անցնում են տարիներս*
*Ցուրտ:*
*(Վլադիմիր Մայակովսկի, «Ռուսաստանին»*
*Թարգմանությունը՝ Եղիշե Չարենցի)*

«Էտի՛»,
Ասացի մի պոետի:

«Գամ խանգարեմ քո անդորրը»,
Ասեց ընձի կամանդորը:

«Ձեր ասածը ինքնաիրականացվող մարգարեություն է ձեր մասին»,- ասաց մի պատգամավոր, շատ վստահ, իրոնիկ: Նրան վստահված էր «իրոնիկ» մասկան:

Վրանիշ
Էրոտիկ գրականության առցանց հավաքածու

Յրապուրակ

Գիշերվա կեսին
Լավություն արեց
Յարսը փեսին:

Եկ հանդիպենք այս ամիս
Ուտենք հավի կրծքամիս:

*...Եվ այլևս մի սպասիր: («Յուքոմ»-ի գովազդ)*

Դարձա երեսունութ
Չդարձա թագուհի
Նույնիսկ երբ հասա
Յաշ ութ:

«Ացտեկ ուպրավլենի»,
Մեքսիկական դեղատների ցանց

Այլևս երբեմն

Ի՞նչ էս մտնում
Կլրի ու պցի արանքը,
Դու հո՞ գանդոն չես:

Ձմեռն եկավ, պապին

Սպասելով անսպասելի սպասումների

Շենքի մոտի ապտեկից
Չէր առնում երբեք գանդոն:

Մի մետաֆորա լսեցինք՝
«Բացակա մարդկանց ներկայությունը»:
Մեր դեպքում՝
Ներկա մարդկանց բացակայությունը:

Իրար վրա քաք էինք նետում
Այս կյանքում և ինտերնետում:

Վերաիմաստավորելով իմաստը:

Ապաիմաստավորելով իմաստը:

- Երիտասարդների մասին ի՞նչ կասեք:
- Երիտասարդների մասին կասեմ այն, որ նրանք մեզանից ավելի երիտասարդ են:

Օրալ բանագնացներ

Թվային միջավայրի անալոգը չկա

Խմում էին սպիտակ «Սարգոն»,
Ընկեր Վարդանիկն ու Մարգոն:

Գինիները «Արյաց»՝
Փոքրագույնն են չարյաց:

Տակառի վրա նստած
Մի Քոթոթ
Կարասից
Թարիրի էր խմում:

Դիվանահյուսություն

- Ի՞նչ կասեք ձեր գրածների մասին:
- Համոզված չեմ որ չեն ստացվել:

Փաբերից մեկում սպոնտան կերպով բեմադրեցինք Կիզեի «Բարմենը»:

Ջրահարսին ջուր լցնել

«Բոլորին նույն «Արշինով» մի չափեք»,- ինչպես ասում են բանկերից մեկում:

Մենք հստակ պետք է արձանագրենք
Որ ոչ մի բան այլևս հստակ չէ:

Բենեդիկտ Անդրեասյան

Մի անգամ Ֆինլանդիայի մայրաքաղաքում ամենավերջին պահին հասցրեցինք զբաղվել և դա անվանեցինք՝ «Հելսինկյան եզրափակիչ ակտ»:

- Ի՞նչն է ձեզ հիմնականում ոգևորում:
- Սեփական ճախողված փորձը:

Նա որձաշրջան անցավ հյուսիսային երկրներից մեկում:

*Այս կյանքը*
*Չի մնա*
*Չի մնա*
*Ոչ-ոքի:*
(*Թաթուլ Ավոյան*)

Անառակ որդու վերադասը

MMXIX-ի mensis februarius-ի XXV-ին
Իմ բարեկամներից մեկը
Յյուսիսային Եվրոպայում
Փոխեց իր սեռը:

Արտափչել

«Կար բարդին, չկա բարդին»
Ասաց ինձ մի կաբարդին:
Բանաստեղծությունը կոչվում է «Փայտահատը»:

Փայտահոտ

Ուրիշների օրակարգ սպառողները:

Գեշ ու առաքինի
Կին-կանայք շառոտ:

- Դոգերոտիպ:
- Միգուցե դագերոտի՞պ:
- Ոչ, դոգերոտիպ:

Քֆուրներ և քֆրանքներ

Իմ մասին կարող են ասել ամեն ինչ, բացի նրանից որ «նա մահացավ 38 տարեկանում», «նա մահացավ 37 տարեկանում» և այդպես շարունակ:

Բարեկամս «Մինիսօ»-ից գնած
Բլոկնոտներ նվիրեց ինձ
Վերամշակված աղբից պատրաստված
Ու ասեց.
«Իմանալով քեզ, Վարդան ջան,
համոզված եմ որ կրիչը անպայման
կհամապատասխանի պարունակությանը»:

Այս տողերը ճախողված
Երբ են մի տեղ հավաքվելու:
Այս տողերը ճախողված
Կարոտ են մի տեղ հավաքվելու:

Թերեզիկ Բոստոն,
Ցերեզիտ Մանհեթթըն:

Մի բաժակ ջուր խմի
Մեջիդ անապատը չորացավ:

Քաղաքը մեծացել ա
Պատմությունները հեշտ են կորում:

«Պրաստակվաշինո ճյաճյա Պյոտըրին գիտե՞ս»,
Ասեց երեխան ու չանթեց դիմացինի ձիուն:

«Ամեն տարի Վարդան Մամիկոնյանի մասին անցնում ենք
Բայց ամեն տարի ավելի դիթեյլըդ, էս անգամ Հազկերտին էլ իմացանք»,- ասեց Մենուան Լոսից:

*Եվ ինչու էս դու փռել*
*Իմ դեմ քո բույրը բոլոր*
*Եվ իմ մորմոքը վառել*
*Թախիծներով ահավոր:*
*(Եղիշե Չարենց)*

Մտա խաղի մեջ
Մտախաղի մեջ:

Շիրմա քար

Ծեծված ու ծծված

Աղի մեջ ընկավ
Իզալենտը կապույտ:

Ռոմերոս

Թաթիկներդ պաչեմ
Գեշտալտներս փակեմ:

Մենք, որ խմեցինք քսանամյան,
Յուզվեցինք, ու հիշեցինք հազարամյան:

Յերոսն ու թանաթոսը

Գրանիտյա մի վազին

e-pos
Էպոս

Ես ձեր համախառն ներքին արցունքը խմեմ:

Շաբաթ, ուրբաթ, չորեքշաբթի
Թիմը գնաց Բարթոնի:

Ուրբաթ, շաբաթ, կիրակի
Արջը գնաց մարզասրահ:

ՀԷԿ-ը բոլորի համար
Բոլորը ՀԷԿ-ի:
Էլեկտրո-ջրային կոմիտե:

*Ֆրանսիական առաքելության մեջ հերմենևտիկ մեսիջ եմ տեսնում:*
*(Փորձառու փորձագետ)*

Գիտեի իրարից զզվող
Մի քանի հոգի
Նրանք բոլորը
Փաթթերններն էին Բոգի:

Լիկյոր Համբարձումյան՝
Տիեզերքում խմվող:

Սակրավորդի

Բառերի մեջ լողանալով
Տառեր կորցրինք:
Տեքստերի մեջ լողանալով
Մենք մեզ կորցրինք:

Ինքս ինձ համար բացահայտում եմ ինձ:

Սղագրության դասընթաց ձմռանը, Ծաղկաձորում:
Սղղում ենք ու էդ ընթացքում մի բան ենք գրում:

«Խոպան չեն գնում և մեր ներուժը սկսում է ներս հոսել»,- ասեց մի փորձագետ: «Վերջապես միջնորդի ինստիտուտն է ապամոնտաժվում և մենք բաց օվկիանոս ենք մտնում»,-

շարունակեց մյուսը: «Հավաքական արևմուտքը մուտք է գործում Հայաստան»,- ավելացրեց մյուս արևմտամետը: «Բայց ոչ մի տարբերակ բացառել պետք չի»,- եզրափակեց լրիվ անծանոթ մի դեմք: Նա նոր էր էս կուխնիում, ու դեռ չէր կողմնորոշվել, թե որ նժարին արժի ժարիտ ըլնել:

Հավաքական արևմուտքը և արևմուտքի հավաքականը:

Այս կանաչ, կապույտ ֆոնը:

Ուղեղիդ ոռ մի տուր

Կատարելով հեղինակներին՝ հեղինակ կատարող չես դառնա: Այսքանը ես կասեմ քննադատության մասին:

*Պամոլիմսյա, ի կագդա նիբուձ պամոլյատսյա ձեձի զա նաս:*
*(Սոսո Պավլիաշվիլի)*

«Պատերազմից հետո ես ինձ կորցրի»
Ծանր ասեց մի արվեստագետ:
«Ես էլ ախպորս»,
Մտածեց, բայց չասեց մյուսը:

Ծաղրացուլ

- Էսօրվա սեքսի մասին ի՞նչ կասես:
- Գաղափարը լավն էր, կատարումը՝ թերրի:

Մենք որ արդիականացումը փոխարինեցինք փարթիականացմամբ:

«Ապրելը բեռ կթվա, եթե իրականության աչքերին նայելու քաջություն չունենաս: Իսկ իրականությունն այն է, որ որքան շուտ ուղղենք մեր մեջքը, այնքան լավ»,- լսվեց մի կնոջ ձայն Յ1-ից:

«Աշխարհը այս իմաստ ունի՞»,
Հարցրի մի իմաստունի:
Բանաստեղծությունը կոչվում է՝ «Ոչ»:

«Օպուս Մագնում»՝
Լավագույն կատարումը:

«Յա սիվոդնյա զամեծիլ, շտո բելիյե, կատոռիյե սիյեդենի, բալեյուտ զա չյոռնիխ»,- ասեց ռուսախոս աշակերտը:

Բազում երգեր ունեմ,
Չգրված՝ բայց կատարված:

«Մի՛լորդ»,- ինձ գոռաց մի լորդ:

«Թող մարդիկ մեզ սեր բերեն»,
Ասացի ես սերբերեն:
Բանաստեղծությունը կոչվում է
«Նեկա նամ լիուդի դանոսե լյուբավ»:

Ատրուշան
Պատրուշն

Ով լռի
Ով գնա
Սանատորիա:

Միշլեն Ֆուկո
Խոհափիլիսոփա

*Ամբողջ կյանքում ֆիլմ ես նայում, տաս-տասնհինգն ես հիշում:*
*Նույնն էլ մարդկանց հետ է:*
*(Շահնազարովը՝ Աբդրաշիտովի հոգեհանգստին)*

«Կանն, Բեռլին, մինետիկ»,
Փառատոնային կյանքի ուղեցույց-օրագիր:

Հաց կեր, Հազկերտ

Աբդրաշիտովի հոգեհանգիստը նայեցի:
Սալավյովինը ման եկա, չգտա:

Լինելինգուս՝ լինելու հաճույքը:

հատապտղանոց

Սոմելյես
Վինեմատոգրաֆիստ

Ջահել մի ծեր

*Նո պրեժդե՝ ուբերիծե աբիդի: (Վլադիմիր Շերիշով)*

Եվ Բենեդիկտ Անդերսոնին
Անգամ չասած մնաս բարով
Անց ենք կենում չերևակված
Հանրույթների ճանապարհով:

«Րաֆֆի՛, Րաֆֆի՛»,
 Կանչեցի մի էթնոգրաֆի:

«Zagłębie Sosnowiec»
Մնացել էր ֆանատների գրառումը
Վաղ երկուհազարականներից
Դեռ կանգուն փոքր պատի վրա:
Դրա կողքին ժամանակին աստիճաններ էին
Որոնցով մարդիկ
Երիտասարդական պալատ էին բարձրանում
Ու բարձրանալիս
Հաստատ չէին էլ նկատում այն պատը
Որի վրա գրված չէր
«Zagłębie Sosnowiec»:

«Հերմենևտի՞»,
Հարցրի մի հերմենևտի:

Ներխուժակցեք

անխնա ու անխնամ

Թատրոն Դավո (պիես բերող)

*Վեպում գույների հաջորդականություն պիտի լինի: Կարմիրից հետո՝ կանաչ: Գուցե իրար չսազեն: Բայց գույնը պիտի փոխվի: Դադարներ պիտի լինեն: (Հրանտ Մաթևոսյան)*

Դիմադրելով իմաստներին
Նոր իմաստներ ստեղծեցինք:

«Արա, օր կա տարի ա, տարի կա վաբշե հավայի անցնում ա, բայց սաղիդ ցանկանում եմ մի օր գաք հասնեք, գաք ստեղ, Պետրազավոդսկ»,- ասեց Լյուքսորից ետ քայլող Կայծի հոգնած ու բավարարված ձայնը Տելեգրամից:

«Ծառաչ Սաս»-ում:
Ուիլյամի Ֆոլքներ:

դրավմա
դրամատիկ տրավմա

*Ժողովուրդ ջան, «եթե»-ով սկսվող ցանկացած նախադասություն դուք կարող եք ավարտել ինչպես ուզում եք և դա միևնույն ա սուտ կլինի: (Ռաֆիկ Բարոյան, մարդ ով խոսում է ժողովրդի հետ Յութուբից)*

Համրապետություն

Գնեցինք էժան չէրրի
Սեզոնին զեղչերրի:

Գիշերներում անքուն,
Քնած էինք արթուն:

Մի սունձի

Զոհերը արվեստ են պահանջում

Պանդերազմ

*Հայեր չեն եղել: Հայերին Լևոնն է հնարել: (ՀԱԿ-ի խմած անդամ)*

Մարզպան Սյունին
ու մարցիպանի «Merci»-ն:

*Միակ բանը, որ ես կարող եմ անել, պատմելն է, որ ես այլևս չեմ կարող պատմել այդ պատմությունը: Եվ դա պետք է որ բավական լինի: (Լիոտար)*

Նորմալ դարձավ
Անցյալի մասին
Անցյալով խոսալը:

Թող որ զենք տա մեզ Դելին
Որ Հայկը նորից չպարտվի Բելին:

«Արևամետ ուժերը»,- ասաց նախագահի մի նախկին թեկնածու ու հետո ցավոք անմիջապես ուղղեց ինքն իրեն:

Ես արտաշնչվել եմ ոմանցից:

Երազումս մի մաքի
Ասաց դու շատ էս լաքի
Էն աղջիկը քեզ էսօր
Հրավիրել է ֆաքի:

*Միանգամից խոսում էր ամեն բանի մասին, ասելիքը դարձյալ չէր ստացվում: (Լևոն Խեչոյան, «Լրագրողը»)*

Ես մեծացել եմ Երեւանում
Հետո փոքրացել եմ Աշտարակում:

- Ձեր վերնագրերը հիմնականում համահունչ չեն ձեր բանաստեղծությունների բովանդակության հետ:
- Գիտեք, ձեր անունն էլ ձեր դեմքի հետ չի բռնում, ընդունեք դա որպես данность, ինչպես կասեր դեսպան Կապիրկինը, ում շատ է սիրում կապկել իր կինը: Վերջին ֆրազը ընդունեք ջըսթ որպես ենթադրություն, հանգերը բռնելու համար:
- Ենթադրություն որպես կարող էիք նաև «կապել» ասեիք «կապկելու» փոխարեն:
- Այ դա համոզված չեմ որ միայն ենթադրություն է:

Ամեն իրեն հարգող մարդ
Պետք է սարքի ձնեմարդ:

Ռռնե՞ր եղբայրների խնդիրը:

Կանաչ գույնի գրիչին կարելի է ասել՝ «Գրինչ»:

*Յա նե յուբյու պրիմենյած պրիյոմ , վազնիկայուշչիյ վ սազնանիի կակիմի տը միստիչեսկիմի ակսեսուարամի, պատամու չտո չաշչե վսեգօ մի վսպամինայեմ օչեն կոնկրետնո ի օչեն այազաեմո, եսլի էտը ս նամի բիլը: (Մառլեն Խուցիև)*

Հակոբ - Օշական
Մխիթար - Գոշ
Բլոկնոտի համարներից

Վերալրվել

Նա տեսել է երևի
Հարևանին վերևի:

«Տխուր պարզություն ունեցող»,
Գրել էր Իսրայելյանը, մատիտով,
Գեղարդի ճամփի ընձառյուծի գծագրի վերևում:

Վեդու Ակվեդուկները

Ակվեդուկներ և օբելիսկներ

Դա անմիջական ֆիլմ է և պիտի ցուցադրվի անմիջապես:

Հայկին գրողները,
Հայ կին գրողները:

«Ճիշտ հարցեր, որոնք չունեն պատասխաններ»,
Հիշվեց Գերման-ստարշիի ինտերվյուից:

Ուֆայից Երևան
Թիֆլիսից Հռոմ
Խմում էինք մենք վիսկի
Ջին-կոլա ու ռոմ:
Ապրում էինք, կարդում
Սերտում, կատարում
Ու իրար ծաղիկներ, վարդեր նվիրում:

Պցնել
Սկվիրթինգ

Ես կարդացի շատ
Ու հիմա գիտեմ
Թե ինչ չգիտեմ:
Թե ես լինեի խելոք
Ես կլինեի խելոք:

Սուտ է սերը փուչ աշխարհի
Փուչ է սերը սուտ աշխարհի:

*Օհ, ֆյուչը լավըր*
*Դիս սոնգ այ ռոթ ֆըր յու:*
*(Բրյունետ)*

Մենք տեսել ենք Շերլոկ Հոլմսի ծխամորճը
Եվ Ջոն Հոլմսի անդամը:

Քակվարել

Երազում էինք կատարելիս
Եվ կատարում երազներում:
Կատարում էինք երազներում
Եվ երազվում կատարելիս:

«Ֆորմատի ձևաչափը»,- ասեց մի նոր քաղաքական գործիչ
Պետրոսի մոտ:

Բոլորի պես
Շատ էր սիրում
Կակաշ անել
Կոկոն Շանել:

Սիլվա Կապուտիկյանտ

«Ներկան անցյալում ա»,- ասացին որոշները:
«Ներկան ապագայում ա»,- պնդեցին ուրիշները:
Որոշների հրամցված անցյալով էլ ապրեցինք
Ուրիշների խոսք տված ապագայով էլ:
Ապագան դառավ չստացված անցյալ
Մենք էլ էդ դախպեքին ածանցյալ:

Երեխան լացում ա, չի ուզում խաղալիքները հավաքի:
Թոմաս Ման կարդացող ծնողը ասում ա.
«Պիտի տունը մաքուր պահես: Որպեսզի տունը մնա տուն:
Արցունքի հովիտ, այո, բայց ոչ աղբանոց»:

*Ուեյթինգ ֆոր սամուան օր սամաին թու շոու յու դը ուեյ:*
*(Փինք Ֆլոյդ, «Թայմ»)*

Աշխարհին այս բարդ ուղիներով
Աշխարհին այս բարդ ու դիմեռս:

Ուրիշի հագած կյանքն ենք հագնում:

Հարստացույց
Սարք որ ցույց ա տալիս մարդու ունեցվածքի չափը:

Մենք տեսել ենք մարդկանց
Ում տեսել ենք մի անգամ:
Ովքեր ուրիշի կարած կյանքն են հագնում:
Աղավնի կատարող «Էկոլոգը»
Ով դժվար տեսած լիներ Կիսլեվսկու «Դեկալոգ»-ը:

Ես վերջերս նայում էի
Պիտեր Բրուքի ֆիլմը
Գյուրջիևի մասին
Ու հիշեցի որ Գիորգի Իվանիչներից
Սիրում էինք Ռերբերգին:

Անտանիք կտուրներ

Պարտադրիչ ու արտադրյալ

Զումում
Մարդիկ խոսում էին
Կողքից տպավորություն էր
Որ իրար չեն տեսնում
Քանի որ ուղիղ են նայում բոլորը:

Հրեաները միշտ ներկայով են ապրում
Ու ոչինչ չեն բացառում:

Երկվորյակների մոտ
Անդամները նու՞յն չափի են:

*Չպետք է նեղանալ ոչ մեկից: Չպետք է խռովել ոչ մեկից: Մեզ ոչ մեկ չի դավաճանում: Եվ ընդհանրապես, օտարը չի կարող դավաճանել: Միայն մենք կարող ենք մեզ դավաճանել:*
*(Լևոն Տեր-Պետրոսյան, ՀՀՇ համագումար, 1996)*

Վաճառվում է բնակարան
Շուրջօրյա կոյուղով:

Աբլակա, բելակլիրիե լաշադկի:

Դու խի
Չես գցել
Դուխի:

Կատակներ և կատակլիզմներ

Եթե ախմախ միտք է գալիս, միանգամից գրի եմ առնում: Եթե խելոք միտք է, չեմ գրում: Անցնում է մի քանի ժամ, զգում եմ որ այդ խելոք միտքը ախմախ բան է, այդ ժամանակ գրում եմ:

«Էտի կարդա, Էտի»,
Ասացի մի պոետի:

*Փըլիթիքըլնս լայք թու փենիք: Դեյ նիդ ըքթիվիթի: Իթս դեիր սաբսթիթյութ ֆոր ըչիվմենթ: («Յես, Մինիսթր»)*

Չոբանուղի
Դուալետ

Ա կետից շարժվեցինք
Բեկետին չհասանք:

Ագահ, փոքրոգի
Ապագան ապագայի հետ կապող
Քաղաքն ու պատերազմը իրանցով արած
Անցյալն ու ներկան իրանցով անող
Մեծամիտ ձկները
Փոքր ակվարիումի:

Բանկապարտեզ

«Օրերը տաքանան, մի հատ հանդիպենք»,- ասեցինք հոկտեմբերին, նրանց, ում հետ չէինք ուզում հանդիպել նոյեմբերին:

Ես չիմացա թե ինչու
Դու չիմացար թե ինչքան:
Դավաճանության մասին:

Խանջյանի «Վարդանանքը», տակը գրած.
«Colonel Mamikonyan's Lonely Hearts Club Band»:

Մոգերից մեկին գցում են ջուրը, երգում են. «Մոգ օն դը ուաթըր»:

Ուզում եք դեն նետեք
Ուզում եք մինետեք:

Սեռական պանելների խոսնակները

Արա ես էնքան մեծամիտ եմ
Որ կարամ քեզ հանդուրժեմ:

«Մորմոք» ուղեղային կենտրոն

«Մուտք մտքի փոխարեն»

*Եթե ատելությունը լիներ բնական, ապա երեխաները կծնվեին ոչ թե սիրո՝ այլ ատելության արդյունքում: (Արվեստագետ-փորձագետ)*

Բորբոսխ
Նկարիչ քոսաբան

Դիլիմանջարո
Դիլիջանի կողքի գագաթը

Թիմ Բարթոնի անվան չորեքշաբթի

Եղծված առեղծվածներ

Պոեզի վերադարձը

Արվեստը նրանից խլիր
Եվ նա կդառնա կլիր:

Ոմանք մտածում են թե եսիմինչ կլիրս են
Ու հիմնականում ճիշտ են:

Անառողջ ինքնաքննադատություն

Յուղը շատ էր
Քսեցինք
Տարբեր այրերի
Տարբեր վայրերին:

Վախենում էի Դանթեի «Դժոխք»-ի ու նաև «Քավարան»-ի հայերեն թարգմանության նկարներից: Մեր տան գրադարանի չորրորդ հարկում էին, հետին շարքի վերջում, չերևացող ձախ անկյունում: Ու նաև վախենում էի «Անխելք մարդը» մուլտի գելից:

Արո ջան, երբ էս մեռնելու, տխրենք:

Անհետաքրքիր գործերը
Սովորական դարձող:
Դառնացող: Դառնացնող:

*Դա բնական էր, իհարկե բարոյական չէր, բայց բնական էր:*
*(Հայ նախկին ռազմական գործիչ)*

- Կառլ Ազնավուր, մարքսիստ-շանսոնյե: Ի՞նչ կասեք:
- Իսկ միգուցե Շառլ Մարքս, շանսիստ-կառլսոնյե՞:
- Չէի մտածել: Թող երկուսն էլ մնան:

Վերցնել կղանքը, կեսը գցել ուրիշ գարշոկի մեջ ու ասել.
«Տես, նույն քաքն ա, տարբեր գարշոկներում»:

Աշխարհն այս իրապես
Ոչ-ոք չէր ջոգում իրա պես:

Հերիք ա Րաֆֆիին ռաֆինացնեք:

Մեկը մյուսից
Տկլոր կանայք
Փորնիաբի:

*Սալյամիի նման երկիրը փոքրացնում ա, Կարպիս:*
*(Էդուարդ Շարմազանով)*

«Ձախօղի»՝ ձախականների համար օղի:

Արիեստական բնականություն

Ժամկետանց սիրո ավերակները

«Մարտի՛կ, Մարտի՛կ»,
Գոռաց մի ըմբշամարտիկ:

Եվ էն ինչն է որ հավերժ է
Եվ էն ինչն է որ չկա
Եվ էն ինչն է որ անցյալը
Միշտ դարձնում է ներկա:

«Հիմա մենք անասուն ենք թե՞ մարդ, Մաթևոսյանի ասած, հիմա եկել ա ամեն անգամ, էն Դաբրինինի երգի նման վերքի վրա աղ ա անում»,- շարունակեց Ծարմազանովը:

Ֆրագմենտար սեգմենտներ

Սեգմենտար ֆրագմենտներ

Կոսմիկականը և կոմիկականը

Անցնցում անցումներ

Ֆյուչըր Արմենիանը տեսանք
Ֆյուչըր լավըրին
Ու չաստի լավերին:

Մենք բոլորս
Լուր ենք կարդում:

Նստած էինք վերջում
Սպասում էինք վերջին:

Անառիթ առիթներով
Անկենդան լեգենդներին հիշողները:

Մենք որ չունեինք այլընտրանք
Եվ այլևս չունենք ընտրանք:

Անարժան մարդկանց
Գերագնահատված արժանիքները:

Դինոզավրերը կռվում են
Երկու հոգի նայում են
Մեկը ասում ա.
«Իրար միս են ուտում»:

Չպատակված նպատակները ու
Աննպատակ հպատակները:

Խեղված կատակներ

Խեղված հացկատակներ

*Մնե պրոստը լիցո ինտերեսնեե ֆակտուրի: Ծեմ բոլեե չտո նա լիցե ֆակտուռի ռազնիե բիվայուտ: (Գեորգի Ռերբերգ)*

Կողքին թակարդի
Դրված էր «Բակարդի»:

Միջնագրեր
Վերնագիրը մեջտեղում

Անդրագրեր և անդորրագրեր

Սիրո անհուն ոլորտում
Ապրում էինք ու արարում
Արարում էինք ու ապրում
Անհուն սիրո ոլորտում:

Ջնջված չատերի էքսպորտները
Որոնք էլ ոչ ոք չի կարդա:

Այս տողերը գրվել են
Ոչ մի բան չանելու արանքներում
Տարբեր տարիներին:

*Մենք չառերեսվելով էս իրականության հետ, զուգահեռ իրականություն ենք ստեղծել, ցանկալի իրականություն, որը միջազգային և աշխարհաքաղաքական իրականության հետ ոչ մի կապ չի ունեցել: Մենք էդ սխալն ենք արել, մենք էդ իրականության հետ չենք առերեսվել: Դա է եղել իմ սխալը, ինձ դրա համար պետք է քննադատեք: (Նիկոլ Փաշինյան)*

Որոգայթ փիառաց

«Սաղ էլեկտրիկները գործի վախտ խմելուց են խոսում, խմելու վախտ գործից»,- ասել էր Տիկոն Կայծին:
«Գրողները միշտ էլ կռուպնիով քցում են մեկին»,- կարդացի Ջոան Դիդիոնի գրքերից մեկում, «Վայլդբերիզ»-ից պատվիրած:

«Չինացիներ են եկել շենք»,- սկսեց մի կին:
«Վիետնամից են»,- շարունակեց մյուսը
«Ֆիլիպինցիներ են»,- միջամտեց երեխան:
Նրանք միշտ ընտանիքով էին ման գալիս,
Հայր, մայր, երկու աղջիկ
Ժպտում էին,
Տեղական խանութներից գնած
Քաղցրավենիք էին տալիս
Բակում նստած տատիներին:
Մի քանի շաբաթ մնացին, գնացին:
Ինդոնեզիայից էին:

*Մի նիկագդա նի ռասսկաժեմ ցելիկոմ սվայու ժիզն ի ժիզն սվայիխ դրուզեյ, պատամու չտո սամի նի պանիմայեմ վսեյ պրավդի, ա եսլի ռասսկազած, նի պանիմայա դա կանցա, պալուչայուտսա բեսպալեզնիյե ուկարիզնի: (Վիկտոր Շկլովսկի)*

«Քանի որ քո բանաստեղծությունները հետաքրքիր են նաև պոետիկայի տեսանկյունից»,- վերջացրեց բանաստեղծին ուղղված հարցը գրականագետը ու շարունակեց անուշադիր լսել նրան:

Ինձ անվանեց [redacted] [redacted]
Մի [redacted] [redacted] :
Երկուսս էլ ճիշտ էինք
Ու [redacted] [redacted] :

- Իսկ ինչու՞ այդպես:
«Ո՞վ է հարցնում»,- հարցրեցի ես, հետո սովորեցի ու էլ հարցեր չէի տալիս, միայն պատասխանում էի:

Մոխրաղաման

Լիզինգատուն

*Չտո սնյատսա նամ աբիդեվշիյե նաս,*
*Ի նիկագդա՝ աբիժեննիյե նամի:*
*(Իրինա Սնեգովա)*

«Սա՛ է տեղի ունենում հիմա,
 Սա է՛ տեղի ունենում հիմա»,
Ասաց վարչապետը առավոտյան նիստին՝
Սոթքի ռմբակոծությունից անմիջապես հետո:

Գիշերային գիշերվա երազ

*Նի մեչտի ապրեդիլյայուտ բուդուշեյե , ա նաաբարոտ, ապասենյա:*
*Յա պատոմ պանիլա՝ նի սլուչայնի էտի անտիմեչտի:*
*(Նատալյա Ռյազանցևա)*

- Կազմը կոշտ է թե՞ փափուկ:
- Տափուկ:

Սըպոն ու Արտակը՝
Այսինքն Սպարտակը:

«Արա տո լավ է, մի բոզի տղա էլ էս էր»,
Օնլայն պանիխիդայից ձանձրանալով ասեց Կայծը ու ավելացրեց.
«Սպասի Դոգ դնեմ»:

Պրուստ՝ «Վանի ուղղությամբ»:

Պատերազմից հետո
Կարևոր խոսակցությունները
Էլ փողոց դուրս չեն գալիս:

«Մենք արվեստի մակարդակի հասցուցած ենք իրականությունը չտեսնելը»,- ասաց Լիպարիտյանը և ավելացրեց. «Աշխարհը կփոխվիլ, բայց աշխարհագրությունը չի փոխվիլ»:

«Իա, էս սև իկրա էս առել կարմիր»,- ասեց մի հարևանը մյուսին սուպերմարկետում:

«Էս սուպերից է՞ս գալիս»,- տոպրակին նայելով ասեց հարևանը,
«Հա, Դավ ջան»,- պատասխանեցի արագ,
«Ոնց էս, էսօր գործի չե՞ս»,- հարցրի,
«Նո»,- ասաց Դավոն, ով տաս տարի առաջ
Մեքսիկայից տենց էլ չկարողացավ անցնել ԱՄՆ:

Մեր տան «Յուրյուզան» սառնարանի վրա
Կպցրել էի երկրորդ «Տերմինատոր»-ից Առնոլդի նկարը՝
Ակնոցով ու հրացանով:
Հետո շատ էի նայում «Վերջին կինոհերոսը»,
Հոպարենք ունեին կասետի վրա,
Որի զլադեյի աչքը հանովի դնովի էր:
Ում տարիներ հետո, սկզբից տեսանք՝
Հետո միայն՝ նկատեցինք Ֆինչերի «Մանկ»-ում,
«Վայ քու արա» չասեցինք բայց զգացինք էդ պահին
Ինչպես զգացինք նույնը, երբ սառնարանը տեսանք
Հին ֆոտոներից մեկում, արդեն չեղածը սքան անելիս:

Հակոբ Օշական՝ գրող էգոթերիկ:

«Աքսիդենթըլի խըփամ»,- ասեց Մենուան Լոսից
Ետ դնելով f4-ի նավակը:

*Վպերվիյե մնե ատկռիլաս իստինա, խառաշո մնե իզվեստնայա:*
*(Կոնստանտին Ստանիսլավսկիյ)*

Հարադրույք

Մենք որ եղանք կուլակաթափ
Սակայն չեղանք գուլագաթափ:

«Դուք չեք կարող քվեարկել ձեր երկրի օգտին»,
Հերթական անգամ ասեց «Եվրոտեսիլ»-ի տղամարդ հաղորդավարը:
«Սա անմոռանալի երեկո է, չմոռանաք»,
Ծարունակեց նրան բոյով, հասակով ու տարիքով կինը,
Ում Կայծը կորակեր «յեբաբելնի»
Հակաֆեմինիստական աչեքթիվով:

«Մեղեդին ու բառը միասին կոչվում է երգ»,
Լսեց երգիչներից ջահելը
Տարիքով-սովետականի շուրթերից, Հ1-ով:

«Ախպերս, դու կարող ա, մենք կարող ա իրար հետ պովրական ենք սովորել»,- հարցրեց մի առույգ երիտասարդ «Երևան Սիթի»-ում:
«Չէ, ախպերս, ես չընդունվա, սպասի վրա կտրվա»,- ուզում էի ասել, բայց փոխարենը ասեցի ոնց կար. «Չէ, Սմբո ջան, իրար հետ ենք ծառայել»:

«Ես մեր տերտերներին հարգում եմ, որովհետև մոտները զենք ունեն»,- ասեց մի հին ծանոթ՝ սևը հարգողներից:

Ոնց որ ասում էր,
Ոնց որ ասում էր,
Ո՞վ էր ասում:

«Սպասիր ինձ»-ի հակառակ հաղորդումը: Գալիս են, ցույց են տալիս բարեկամի նկարը ու ասում են. «Ուզում եմ ազատվել սրանից կամ փոխանակել»:

«Ապագան թողնենք հետոյին»,- ասեց Գոռը Ոսկանյանի հետ զրույցում:

- Կարոտում է՞ս:
- Հիմնականում նրանց, ում չեմ ճանաչում:

«Ինչ անգլերեն էս պարապում, լեզուդ բացվել ա»,
Ասաց էն աղջիկը ընկերոջը հատուկ գործողության ժամանակ:

*Նա տակիի շանսաի մոժնը իգրած: (Օստապ Բենդեր)*

90-ականների վերջին ու 2000-ականների սկզբին
Ծախմատի տանը տեսնում էինք Բոբոխին
Ում անունը այդպես էլ չիմացանք:
Նա մի գույնը գնացած դիպլոմատ ուներ
Մեջը ատվյորկա, բոլտ ու գայկա
Պլասկագուպցի, հաց ու պանիր:
Բոբոխը միշտ նույն մաշված շորերով էր
Եվ ժպտում էր անընդհատ:
«Սմոտրիմ կարտու,
Սմոտրիմ կարտու»,
Ասում էր անորոշ իրավիճակներում

«Իշտոյանը գնաց, Իշտոյանը գնաց»,
Ասում էր, երբ հրում էր անկյունային զինվորը,
«Հանգյավ, հանգյավ»,- ասում էր
Երբ ֆիգուր էր տախտակից վերցնում:
Նա շախմատի ժամեր էր վերանորոգում
Ու ինչ-որ պատմություններ էր պատմում
Հիմնականում ուրիշների կյանքից:
Նա միակ մարդն էր, ով առաջ ու հետո
Ինձ ու Բենոյին հիշեցնում էր Շվեյկին:

«Zmrde», գրեց ինձ մի սլովակ chess.com-ում,
Երբ տարա նրա c1-ի նավակը:
Ոտանավորի վերնագիրը՝ «It sucks»:

- Իսկ դուք որտեղ ե՞ք ապրում:
- Այնտեղ որտեղ գրել եմ իմ ոչ լավագույն բանաստեղծությունները:
- Իսկ լավագույնները այլ տեղում ե՞ք գրել:
- Լավագույնները այդպես էլ չգրվեցին:

Հոգնել ենք արդեն
Մոլերից Գարդեն:

«Տավուշ թիվի»-ով հայերեն նայեցինք
Վուդի Ալլենի «Սենսացիան»:
Թվաց, թե Սքարլեթ Յոհանսոնին
Ռուսերենն ավելի էր սազում:

Մենք որ դուրս եկանք «Ա» կետից
Չհասանք «ԲԷ» կետին
Բայց հասանք Բեկետին:

- Դպրոցի մասին ի՞նչ կասեք:
- Ինչ ասեմ: Ցավոք չդարձան թասընկերներս՝ դասընկերներս:

*Պազվոլիծ միռու դիշած՝ գառազդը վաժնեե չեմ տո, կակ մի դիշիմ վ լիցո միռու: (Ռաուլ Ռուիզ)*

Լուսիկ Վարուժիչ

«Կովեր և ոզնիներ» թե՞ «Ձիեր և ոզնիներ»:

Հիմնադրամների հասարակ բացությունը

Երեսունիննում պատրաստ էս վատ ֆիլմեր նկարելու:
Մինչև էդ նկարում էիր, բայց պատրաստ չէիր:

Կիսլեվսկին գրում ա, որ «Դեկալոգը» պետք ա նայել իրար հետևից ու բոլորը միասին: Շաբաթը մեկ կամ օրը մեկ նայելը թուլացնում ա կապը:

«Էն պահով որ ասի երեկ,
նայի, թե ըլնի, լավ կլնի»,
Շշնջաց մի տղամարդ գազելում:
Հետո հարմար նստած
Փոքր հեռախոսը ականջին
Երկար լսեց պատասխանը
Ընթացքում կասկածանքով նայելով
Միջքաղաքային ամենօրյա ավտոերթի
Թեթև հագնված մասնակիցներին:

«Somewhere, somehow»՝ ֆիլմի վերնագիր:

«Գլովո», «Յանդեքս իթս»:
Իրար ետևից հաց էին հասցնում
Վճարունակ սոված մարդկանց:

Երեսունն անց աղջկեքը
Երկրորդ երեխուն են սպասում:

«Գազելները հանել ա պետք.
Սիլոսը գիտե՞ս ինչ ա,
Սիլոսի պես լցված են՝
Ոտ դնելու տեղ չկա:
Լավ ա հանում են՝
Էս սաղ քաղաքը
Պետք ա դուրբան ըլնի
Արտիստին
Որ եղավ»,
Ասեց մի մարդ,
Բանակային հին կոշիկներով
Սպիտակ մազերով,
Ուրախ, տանջված դեմքով
Լենինգրադյանի «Բլիցի»-ի
Կանգառում կանգնած:
«Անունը մոռացա, հլը ասա»,
Կրկնեց քիչ հետո,
«Հիշացրու»,- հարցրեց էլի:
Չհասկացա, չհիշեց
Իր համարը եկավ,
Նստելուց պտտվեց ու ժպիտով գոռաց.
«Մարուքյան, Մարուքյան, հիշեցի»,
Ու գնաց ավտոբուսի հետ:

«Թաթ կրունկ, թաթ կրունկ, աջով առաջ, ձախով ետ»,
Լսվում էր փողոցին կից դահլիճի կիսաբաց դռնից:

«Կանդիցիոները միացրեք, պատուհանները փակեք»,- տարբեր ուղղություններով հրահանգեց մի տարիքով տղամարդ ավտոբուսում նստած: Բոլորը փակեցին: «Էլի անջատեց»,- դժգոհեց մի կին, արդեն փակ պատուհաններով ավտոբուսում: «Ինքը չի կարում աշխատի պադյոմների վրա, դրա համար անջատում ա»,- հանգիստ ասեց մի ուրիշ մարդ ու համատարած լուռ դժգոհության մեջ ավելացրեց. «Մենակ հարթ տեղը կարա միացնի»:

Մանուալ սիրո սիլուետը
Սեպարատ սիրո մենուետը:

«Փիղը մտավ կրկեսը, կերավ ամբողջ կրկեսը»,
Ուրախ արտասանեց մի աղջիկ երեխա, կանգառում:
«Մեր վախտ կեսն էր»,- ասեց անծանոթ մեկը:
«Հիմիկվանները մաքսիմալիստ են»,- փակեց թեման մյուսը:

«Պակա ջան, դա սվյազի»,
Փաթաթվելով ասեց մի աղջիկ մյուսին
Տիկնիկայինի դիմացի մայթին:
«Հա, բայց դե սինգուլյարությունը»,
Նրանց կորաձև արագ շրջանցելով
Պնդեց մի տղա հեռախոսով:

«Սըխալ խըփամ»,- էլի ասեց Մենուան:

«Ապեր, մերը ընտիր խմորեղեն ա, ուղղակի ռեկլամացիան լավ չի արվում»,- ասեց տաքսիստը, ով նաև առաքիչ էր աշխատում կամ հակառակը:

«Ամեն ինչ էլ սիրըմ ենք, բայց դե բլյուզը իմ հըմար գերագույն ա»,- ասեց Վես Մոնտգոմերին, ով ինձ ու մի կիրովականցի վարորդի հասցրեց Աշտարակ, ես իջա, իրենք շարունակեցին:

Չեղիեղուկ գազեր

Թվանքվիլիզատոր
Կրակում ա մի քանի հատ ու էներգիա են ստանում:

«Պաշտպանենք մեր թուլությունները»,- ասաց շախմատի մարզիչը:

Մի տառական տեսա սև
Ունիտազի կողքին սպիտակ:

«Ապեր մի շաբաթ առաջ նկարել, քցել էին սայթ, նայի նոր զանգի»,- ջղայնացավ վարորդը ու անջատեց:

Մարքսի վրա շինարարություն էին սկսել կապիտալ:

«Ասա թող հետս դուս գա կապի»,- ասեց ջիպով չաղ մեկը, հերսոտած:

«Չորոխպերս խմած եկավ, լավ ա բոյը մեկուկես էր, ինձ քցեց օդ, իրեք անգամ՝ բայց երկու անգամը բռնեց, քիթս մռութս արյունլվա եղավ, լավ ա բոյը մեկուկես էր»,- վերջացրեց Արթուրը:

«Նոր հարևանը ծառը կտրել տվեց, վիդիտե լի, չերեզ էդ ծառ կարան մտնեն իրա տուն»,- բողոքեց մի ակնոցներով կին գազելում:

Թումո չհասած ավտոբուսը թեքվեց, կանգնեց:
Մի քանի հոգի իջան, ստատիկ կադրում տեսանք
Առաջին հարկի լվացքի միջի մալինըվի սվիտրը,
Որի վրա գրված էր «Game over»:

Հանրաքվեստ

«Ապեր, ով ուզում էս եղի, հըմի թե փող չունես, քո էպոխեան պրծավ»,- ասեց կյանքից հասկացող մի մարդ, իսկ մեկ ուրիշը ավելացրեց. «Էս կյանքից մարդ իրա հետ տանում ա հիշողությունը, թողում ա իրա անունը»: Ու խմեցինք բոլորով օղին «Ռոմանով», արդեն՝ ոչ էդքան սառը:

«Արա, որ կյանքը մեջդ բուռլիտ ա անում, հորդ հետ վիճում էս, ջահել էս, մեծանում, ջոկում էս: Հիմա որ տղեդ ա հետդ կռիվ անում, տենա՞ս ինքը մեծանա, կջո՞գի»,- շարունակեց քառասունին մոտ մի տղամարդ, ում տղան իր կես տարիքին էր:

Մտել են դասագրքեր
Ու դուրս չեն գալիս:

Մի աղջիկ, լիքը ավտոբուսում
Սմարթֆոնը դրել ականջին, ուշադիր լսում էր:
Հետո, հեռախոսը պահելով դիմացը, ու հետ տալով՝
Կորեական սերիալի նույն տեսարանը
Նայում էր առանց ձայն:

«Պարապի ընգեր, տղավարի պարապի, առողջությունը գիտես ինչ ա»,- խորհուրդ տվեց հիվանդ նիհարը ուրախ չաղին՝ Բարեկամության գետնանցումում:

«Տրանսպորտ նստող մարդիկ լավն են, ըթ լասթ ավելի հետաքրքիր են»,- ասեց մի պադրոստըկ մյուսին: Նրանք կվարտալում, Չաուշի արձանի մոտի կանգառում կանգնած, նայում էին լիքը ավտոբուսին:

«Անասնաասավանի խաչմերուկ պահի»,- այլայլված գոռաց մի կին:

«Սկյուռիկ կոնֆետներ 5650»,- գրված էր արկղի վրա:

Ոսկանյանին լսեցինք՝
Փորձագետների ու մասխարությունը որպես
Քաղաքական կյանքի ձև ընտրածների արանքում:

Էս ինչ տկլոր էս:

«Տենց բաներ անել չի կարելի, բոլորը հավասար են Աստծո առաջ»,- չդիմացավ մի կեպկով մարդ բանկում: «Սպասելուց վատ բան չկա»,- հոգոց հանեց կողքինը՝ ում հերթը ավելի ուշ էր հասնելու: «Բանկում եմ, ձենը դրա համար ա արձագանքում»,- ասաց մեկ ուրիշը հեռախոսով: Հետո լսեց պատասխանը, ժպտաց ու պատասխանեց. «Հա, ախմախ, իրեք լիտրանոց»:

«Հայկո ջան, հեսա եթանք էտի կոխած անենք, գանք»,- լսվեց փողոցից:

Ծլագբաուն

«Որպես մյուզիք անող, էս երգը, սենց ասեմ, էդքան էլ ինձանական չէր»,- լսվեց Յութուբից:

«Ilman muuta»,- գրված էր հյուսիսային տիպի մի արտասահմանցու պայուսակի վրա, որը պարզվեց ֆիններեն նշանակում է՝ «անկասկած»:

«Պարապ մարդու գործ ա, շլանգի ծերին նագրուզկա էս տալիս, բացում էս, նագրուզկա էս տալիս, բացում էս: Սաղ օրը էդ ա»,- ասաց մի ծանոթ մարդ, ով ուզում էր ջրող դառնալ:

Վարսավիրանոցը փակվել էր
Տերերը հավանաբար որոշել էին տարածքը
Ավելի լավ գնով վարձով տալ:
«Վալեր 70 մետր»,
Գրված էր պատին կպցված թղթի վրա:
Նայեցի էդ ուղղությամբ, քայլեցի մի քան մետր
Հեռվից ձեռքով էր անում վարսավիր Վալերը՝
Մոտ հիսուն մետրից:

«Արա որ սենց սպիտակ լույսի ռասշիպլենի եմ տենում, էն «Փինք Ֆլոյդ»-ի «Դը Վոլի» դիֆրակցիայի նկարն եմ հիշում»,- ասեց Կայծը, ում հետ ոչ բարով ավարտել էինք պոլիտեխնիկը:

«Ռուսաստան քար չկա, ավտոյի տակ դնես»,- ասեց վարորդը:

Բուխարին և Տրոցկին
Տրոցկին և բուխարին:

Ամեն ինչ կբացահայտվի վաղ թե ուշ
Ամեն ինչ կբացահայտվի վաղը՝ բայց ուշ:

Կուտ տուր, Ռոմեր եմ նայում:
Կուտ տուր, Ռոմեր եմ նայում:
Համակցված կերեր և Մորիս Շերեր:

Սուրիկի ավտոն՝ զրոյոթ,
Գույնը՝ կոֆե ս մալակոմ:
Հողը՝ կոֆե ս մալակոմ:
Գերեզմանների նեղ ճամփին
Թափված ծաղիկներ,
Ամեն պսակից
Մի քանի հատ ընկած:
Մարդիկ
Նեղ ճամփով քայլող:
Ծաղիկները հողոտ՝ կոֆե ս մալակոմ:
Հեռվում կառուցվող «Դեֆանս»
Թաղամասը նոր:

Գիշերվա աստղազարդ նկարում
Իրար էինք նկարում:
Գիշերվա աստղազարդ նկարում
Կմեռնեն երազները բոլոր:

Մի սպիտակ մազերով մարդ
Մինչև ավտոբուսի գալը
Կանգառում եղունգներն էր կտրում
Գրպանի եղնգահատով:
Ամեն անգամ կտրելու ժամանակ

Շարժում էր
Իրար պինդ կպած շրթունքները:

Կատակներ և կատակլիզմեր

Ռեֆերամբներ և դիֆերատներ

Մետրով առանք
Մետրոյով տարանք
Հետո գազելով:
Ոտանավորը կոչվում է «Զանավեսկա»:

Ուրախ,
Փորձի գնացող
Պորնոդերասանի նման:

Ապագայից ազատագրված մարդկանց ուտոպիան:

Տիգրան Մետց
Կինոքննադատ

«Քննադատի ասացի մի քննադատի»:
Ոտանավորը կոչվում է «Ծեշտ»:

«Ժիլբեր Դյումոն»՝
Գրված էր առաքման մեքենայի վրա:
Դա հիշեցնում էր
Իրերի ու մեխանիզմների
Եվրոպական անցյալը:

Աթոռակլիր

Ռուսանող

Մի հատ սպիտակ «Բլեք» տուր
Ասեց վաճառողուհուն
Մանր բեղիկներով մի մարդ
Ու դեմ տվեց հազարանոցը:
Բանաստեղծություն կոչվում է՝ «Չունեմ»:

«Անկեղծության նմուշ չկա
 Անկեղծության նմուշ»,
 Ասեց մի կին վաճառողին:

Ամրամոլ

Կանգնելն էլ կանգնեց:
Ոտանավորը կոչվում է՝ «39»:

«Դելեգատնի դիր, էդ «ԷլՋի»-ների մոտ ուրիշ ա»,- հեռախոսով խորհուրդ տվեց մի վեշերով կին, «67» կանաչ ավտոբուսում:

Ֆիգուրնի Ուիվեր

«Ես սրանից օրը մի 10-15 հատ խմում եմ մոյկեն»,- ասեց մի ջահել տղա, մեկնելով սառը սուրճը, որի վրա գրված էր՝ «Դուետ»: «Անդոնը էսօր չի գալու»,- հեռախոսին նայելով պատասխանեց ավելի տարիքովը: Հետո, առանց աչքը էկրանից կտրելու պարզեց ձեռքը, ու վերցրեց սուրճը:

Էն պլակատը էլ չկա
Հանել են, թոշնել ա
Ժամանակավրեպ ա
Բայց հերթը դեռ կա
Հերթը միշտ կա
Թեպետ գալիս գնում են
Ֆրանկաֆոններն ու հապկեցիները
Մարզիկներն ու ռելոկանտները
Գարդեյն ու Մատվեյը
Վանյան ու Անյան
Բայց իր տեղում է միշտ
Սամվելը Ալեքսանյան
Ով երբեք չշփոթեց
Շարժումը գործողության հետ:

«Հառմալիր եմ արդեն»,- ավտոբուսում ասեց անորոշ աքցենտով մի տղա անհայտ ֆիրմայի հեռախոսին:

«Հասունության խնդիր ա, ապ ջան,
ժամանակի, ժամանակի հասունության»,
Ասեց ինստիտուտ ավարտածի դեմքով մի տղա,
Դեռ սովորողի դեմքով մյուսին, ավտոբուսում,
Վերջացնելով ուղղափառ արժեհամակարգի
Եվ արևմտյան ռուսաֆոբիայի մասին
Կանգառից կանգառ խոսակցությունը:

«Բացակա կադրերի ներկայությունը Փելեշյանի ֆիլմերում»,
ասաց մի կինոգործիչ:
«Բացակա մարդկանց ներկայությունը Դոգի էֆիրում»,
չասաց ոչ ոք:

«Ալիսա, Օրբելի, պրոբկ՞ա»,- դիմեց տաքսիստը իր սմարթֆոնին:

Ով լռի
Ով գնա
Սանտորինի:

«Այ սա լավ ա»,
Փետրվարի ամենավերջին
Ասեց մի կին խմորեղենի խանութում,
Ցույց տալով կանաչ կրեմով
Խոտանման նախշերով զարդարված տորթը:
Հետո, դրամապանակը բացելով, ավելացրեց.
«Իսկը մարտի մեկի համար ա»:

Խմորեղենի խանություն

«Աննա Կարպովնան մնա՞ց դպրոցում»,
Առանց հեռախոսից կտրվելու հարցրեց մոդնի
սպարտիվկով կինը անտարբեր քայլող երեխուն:
«Կարպը ընդհանրապես չենք մաքրում, բայց ձեր համար
կմաքրենք»,- ասեց խանութի կին աշխատողը, ում անունը
հեռախոսում գրված էր՝ «Dzuk»:
Անատոլի Եվգենիչն էր վատացել վերջերս:
Ասում են, մի քիչ խմած, սոթ էր տվել սառույցի վրա՝
Կարպովը:

- Վերջերս տրոլեյբուս նստեցի, ձեռքիս դորբլյու ու չեդդեռ: Դուք
տենց բան արե՞լ եք:
- Չէ դեռ:

«Գրած էր «Փաշինյանը դաշյունը մտցրեց Ալիևի սիրտը»»,
Ասեց մի կին շուկայում, կանաչիների շարքի մոտ:

Ես վերջերս հիշեցի Դանիայի
Իննսուներկու թվի հավաքականը.
Մտա, ուզեցի նայել գոլերը
Բայց զսպեցի, չնայեցի
Որ եղածն էլ, մնացածն էլ
Չկորի էս ներկայում,
Փրկվի որպես հիշողություն:
Մենք, որ միշտ հիասթափվում ենք
Երբ թարմացնում ենք
Մեր հիշածը՝ Յութուբում:

Փողի վրա քար ա դրած,
Քարը փեշիցդ թափի:

Կադաստրի առաջ
Փուշ ու տատասկ էր աճել:
Per aspera cadastra
Անկիթառ կապոդաստրա:

«12:08» գրեցի 12:08
Մի չատում
Որի մասնակիցները իրար
Մեղմ սիրելով են ատում:

Գերեզմանների կողքի նորակառույց թաղամասը ոնց որ կոչվելու ա «Ծուշի փելըս»: Գլխի ընկանք, իրար կողք դնելով ինֆորմացիան:

Դեռևս երբեմն

«Female future»
Գրված էր
«Վայլդբերիզ»-ի աշխատողի շապիկի
Հակառակ կողմի վրա:
Երբ բերեց պատվերը
Տեսանք
Ֆէմալե պրոֆիլը ծեր:

*Մարդ կա կոլոտ*
*Մարդ կա բոյով*
*Ինչպես ուռին ու բարդին:*
*(Երգիչ)*

«Ախպերներիցս նախավերջինը որ մեռավ, մեծն էր: Որ էլ մեծ չի լինում գլխիդ, էն չի: Բացթողումներ են ըլնում»,- ասեց տաքսիստ Ղազարը ընթացքում:

«Էդ սերնդից ռեալիզացվեցին մենակ Նիկոլն ու Դոգը»,- ասեց Արմենը, ով շատ էր սիրում լսել Ազամաթ Մուսագալիևի պատմությունները Յութուբում:

«Ընգեր, էն մեր պերֆերատորը ձեր մոտ ա չէ՞, Կարոն էսօր գա տանի»,- ասեց սպարտիվկով ու մորթիով վարատնիկով կուրտկա հագած մի մարդ:

Ես երեսունյոթ եմ
Ու հարյուր դոլլարը
Արդեն քառասուն հազար ա:

«Вхуш ինֆորմացիա ու նաս վ կայքե, իզվինիծե վ սայթե: Նետ յա վսյո զապոմնիլ, սպասիբը»,- լսվեց սպիտակ պատի ետևից, բանկում:

Չագնվեց ինչպես միշտ
Ու գնաց ընդմիջման:

Ֆաբրիք «Ալմաստ» գան,
Անցած սամըրի նման:

«Ոչինչ, բուժի»,
Ասացի մի անասնաբույժի:

Մեր մելկի հանճարները:

Ախր մենք ինչպես հեռանանք գնանք:
Ո՞նց թողնենք, ու՞մ թողնենք չունեցածներս,
Ու գնանք:

«Պահանջվում է ավտոլվացող, մոյչիկ Ռուսաստանում»,
Գրված էր կանգառի մոտ, սվետաֆորին կից ստոլբի վրա,
Որի տակ կանաչին էր սպասում մի կապույտ զրո վեց,
Հետևի պարբրիսին ռուսերեն գրված.
«Կայֆույ պակա մալդոյ»:

Վանիլինգուս

Պցակառույց

Օրերի թաց ռակվինում
Դրեցի քափըս կեղտոտ:

«Ասում են Վարդանը էկել ա, որ սդավատ անի, բրիտանսկի շպյոն ա, հիսուն ավտոբուս ա զակազ տվալ որ էվակուիրըվըտ անի Ստիպանակերտը, գադալըկն ա ասալ, Վարդանյանը էլի»,- ասաց մի կին մյուսին: Սա լսել, գրել, մոռացել էի, բայց սարսուռ անցավ, երբ «Գուգլ դոկ»-ի մեջ էի արտագրում մեկ տարի անց:

Փորձեցինք անհամաձայնության գալ որոշ հարցերի շուրջ և մեզ մոտ դա ստացվեց:

Ես հիշում եմ մի ռուս վարպետի
Ում համար հերս մի շիշ գինի առավ
Եվ նա վերլուծեց ինձ հետ
Մեր խաղացած պարտիան:
Վատ չէի խաղացել, բայց պարտվել էի
Ասադըկ էր մնացել
Գորկի
Իննսունութ թիվն էր
Նովգորոդում էինք
Նիժնի:

Աշխարհում այս ժլատ ու կծծի
Ով ինչ ասես որ չի ծծի:

Չի եղել երբեք նախադեպ
Քանզի [redacted] եմ ես աննախադեպ:

Ֆեդերենիկ Դեմիրճյան

Ես էս կյանքի հետ
Չեմ կարողանում համընկնեմ:

Ծաքարե հուշաքարեր:

Մի մոտիկ ծանոթ
Կարճ սակայն կրքոտ
Ըֆֆեյր ունեցավ:
Նրան սփոփելու համար ասացի.
«Նոյեմբերից հունվար
Փառահեղ քունվար»:

Էմիլին չտեսանք Փարիզում,
Բայց տեսանք «Էմիլին Փարիզում»:

Մենք բոլորս լիր ենք կարդում:

Տալլին - Մաստարա

Գերարժեքության բարդույթ

«Դե հաջողություն, Էրմին ջան
Ամեն դեպքում հաճելի էր շատ»,
Ասեց մի թմբլիկ կին,
Ու իջավ հուսախաբ դեմքով
«09»-ի ետևի դռնից՝
Ձեռքին երկու մեծ տոպրակ:

Պռախադրոմ

Համարս տուր հեռախոսի
Թող անպայման ինձ հետ խոսի:

«Պռոստը աբիդնի ա, որ տենց ստոր մարդուն ես կարայի ինձ տենց մոտ թողնել ,բայց ոչինչ, պահը կգա, ես իմ ասելիքը կասեմ»,- ասեց մի աղջիկ, ում բառերի մեջ  շրթներկի հոտն էր ու շուրթերի ձայնը:

«Գռնօն գյօթ ա»,- գրված էր կանգառում:

«Որևէ տեղ, որևէ գարանտյա չկա այլևս, ախպերս»,- ասեց տաքսիստը, ստադիոնի պրոբկով դանդաղ շարժվելիս:

Հինգ հոգի իջան
Կանգնելու տեղ չավելացավ:

Լինսի դատաստանը և
Լինչի եղանակի տեսությունները Յութուբում:

«Էս նոր տարիները անցնեն տենանք ինչ ա ըլնում»,
Ասաց երեսունին մոտ, թրաշով մի տղա իր տարիքով ծանոթին,
Ձեռք զուգահեռ գրպանը տանելով:
«Էլ մի ասա»,- պատասխանեց  վաթսունին մոտ տղամարդը:
Հետո կտրուկ բռնեց տղայի ձեռքը
Ու մեծահոգաբար սաստեց.
«Պահի էդ, ես կստանամ»:

«Ես վախենում եմ տերմինալներից»,
Ասեց ճերմակած մի կին
Վախեցած ձայնով, Հ1-ով:

«Երկու հարյուր յոթ հազար յոթ հարյուր չեմ կարում գտնեմ օպերացիայի համար, որբ եմ, օգնեք, պամագիծե»,- ասաց մի կին, երկու ռելոկանտի, «Անի» հյուրանոցի մոտ:

«Տղեն Ռուսաստանում բիճ ունի, քանի տարի ա ալյումենտ չի տվել, Վազգենը, Սեդայի փոքրը»,- փռում, տաք տեղ նստած, ասաց մի կին: Դրսում ցուրտ էր, ձյուն չէր գալիս:

«Քշի բոզի տղա»,
Գոռաց վարորդը:
«Լավդ քունեմ»,
Գոռաց մյուսը:
Նրանք անվտանգ հեռավորության վրա էին,
Եվ իրար այդպես էլ չնայեցին:
Վարորդները գնացին
Քֆուրները մնացին:
Մնացին կանգառում՝
Մեզ սակայն չէին խանգարում:

«Не беги от чувств»,- գրված էր վերգետնյա անցումում:
«Վազռ»,- փոքրատառով կարդացի Կիևյանի շենքերից մեկի վրա:

«Ախպերս լյոչիկ էր,
Նենց լիմոնադներ էր բերում,
Թանձր, ոնց որ կոշիկի մազը խմեիր,
Պիտակը վրեն, լիծյո:
Ես Օմսկ էի, դասախոսների աղջիկ էր,
Բան էի անում, էն բանից
Որ մնայի ընդե, հիմա կալվածատեր էի:
Մերս ասեց հետ արի,

Հետ եկա, պսակվա:
Ես մենակ տաքսի ու ավտոբուս հո չեմ քշել,
Կռազ էլ եմ քշել, մի ամսվա փողը մի օրում էի առնում»,
Պատմեց տեղային տաքսիստը:

«Դե մեր ստիլով կաշխատենք, ոնց որ կիրակի»,
Պատուհանից գոռաց գազելի մի շոֆերը մյուսին ու շարժվեց:

«Գայանե, ինչի չես գալիս էլ ընկեր Օրդոյանենց տուն»,- հարցրեց մի երեխա: «Որովհետև ես արդեն լավ եմ սովորում»,- պատասխանեց մյուսը շատ գոհ:

«Իննսունույթի վերջ»,
Պատասխանեց սպիտակ մազերով մի տղամարդ,
Ճաղատի՝ «Դու ե՞րբ ուվալնյատ եղար» հարցին:
Բանկի հերթում էին, Քելբաջար էին ծառայել:

Ինչպե՞ս ստացվեց, որ չստացվեց:

- Կրիշը ժե՞շտ ա:
- Հա:
- Բայց ծիգ կրիշ ա՞:
- Հա:
- Կրիշ կարում է՞ս բարձրանաս հեշտ:
- Հեշտ չէ:
- Բայց փիլաքյան կա՞ կողից:
- Շլանգը երկարացնեմ, կմաքրի էլի:

Գրքից չես կարա շեղվես, գիրքը փակ սիստեմ ա: Հեռախոսի մեջ կարաս pdf-ից անցնես վիդեոյի կամ ուրիշ տեքստի:

«Պահանջվում է գիշերային հերթափոխի պատասխանու աշխատող»,- գրված էր կանգառում:

«Չիսուն դրամ չունե՞ք, իմ լավ ախպերներ»,
Ասեց մի կեպկով կին Բարեկամության «Սաս»-ի մոտ՝
Միանգամից դիմելով իրար հետևից եկող երկու հոգու:

Մենք տեսել ենք՝
ՈՄԱ-ն ու ոմանց,
Չրագրերն ու
Լրապարակները,
Գոռացողներին՝
Սըտի համեցեք:
Արտեմներից
չմոռանանք
Բազազին,
Ով դարձավ
Գիքորին
Ասասսին:

*Ընդմիջում, մինչև կոչնակը հնչի: (Աժ նախագահ)*

«Չարստությունն առանց սիրո մարդուն դարձնում է ագահ»,
Գրված էր տասնութ համարի ավտոբուսի մեջ,
«Օնլայն վարկ հինգ րոպեում»-ի վերևում:

Տանձերի կղզին

«Ծոգը լավ չի, որ անձրև ա լինում՝ լավ ա, օդը թթվածնով հարուստ ա, ես տենց սիրում եմ»,- ասեց վարորդ Քաջիկը ու գազ տվեց:

«Միթսուբիշի»-ի գեր վարորդը
Մի ձեռքով ղեկն էր պահում
Բերանով կրծում
Մյուս ձեռքի եղունգները
Ու այդ ընթացքում
Կասկածանքով նայում
Խցանման մեջ
Իրենից բարձր կանգնած
Կից ավտոբուսի ուղևորներին:

«Մորթած հավ, թոք, սիրտ»,
Գոռաց մի մարդ
Կապույտ զրոյոթով,
Բակից:

«Ախպերս վաղը, վաղը առիթ ա, առիթի եմ, նենց արա որ էդ ըլնի»,- ասեց լավ սանրված մեկը մի թրաշովի:

«3492»՝ գրված էր սիգարետի թղթի վրա, փողոցում գցած:

«Պաբեդա» մոստի մոտ,
Գովազդային վահանակի վրա,
Գովազդի փոխարեն բաց կապույտ էկրան էր,
Վրան՝ թարս տխուր սմայլիկ, սպիտակ ու մեծ:
Ու նաև «Ուինդոուզ էռռոռ»-ի էն տեքստը,
Որը մենք սովորաբար տեսնում ենք
Տան համակարգիչների էկրաններին,
Տեխնիկական տխուր առիթներով՝
Ու չենք կարդում:

Անարդյունք արցունքներ
Անարցունք արդյունքներ

«Գրիգոր Լուսավորիչ»-ում,
«Ռոսիա»-ի մոտի եկեղեցում,
Մի ոստիկան ծնկի էր իջել:
Երկար մնաց, սերժանտ էր
Եթե ճիշտ եմ հիշում ավագ,
Շեվրոնի վրա գրված էր «ՊՊԾԳ»,
Եվ հինգ թվանոց համարը,
Որը հիշեցի, բայց չեմ գրի:

«Ուրիշինը թող մնա ուրիշին»,
Գրված էր գետնանցից դուրս գալիս,
Ուղիղ դիմացը:

Արմատներով սիցիլիացի մի տղամարդ,
Յոթանասունն անց,
Ով իր վաստակած հանգիստն էր վայելում
Սիեթլին կից կղզիներում,
Ինձ գրեց chess.com-ով
Որ իրեն սիցիլիական սովորեցնեմ:
Մի դաս արեցինք
Իրար հաջողություն մաղթեցինք
Ու կորանք:

Մենք որ չենք սիրում
Եվրոդռներ ու եվրոլուսամուտներ:

Երբ որ մենք նպատակ չենք դնում,
Մենք զրկում ենք մեզ էդ նպատակին չհասնելու ճանապարհին
Ինչ-որ չսպասված բան չգտնելու հնարավորությունից:

Ուրիշների առիթներին ուրախ
Նստում էինք տխուր:
Ուրիշների առիթներին տխուր
Նստում էինք ուրախ:
Ուտվում էր հացը
Տխուր առիթների:
Պամիդոր, միս, կարտոշկա, զեյթուն, կանաչի:
Լավաշ, ջերմուկ, լիմոնադ:
Շուտ պրծնող «Կոլա»:
Առիթներին տխուր
Մեխակ, քրիզանթեմ, աստրոմելիա:
2000-3000 դրամ:
Առիթներին ուրախ
250 դրամանոց ծրարի մեջ
100 դոլլար, որը վերջին կուրսով
41500 դրամ է:

Ամուր էր դեռ արջի ոգին
Բայց մարմինը չէր դիմանում շոգին:
Ուրբաթ, շաբաթ, կիրակի
Արջը գնաց:

*Մարդիկ լսելու ու լսվելու կարիք ունեն: (ԱԱԾ նախկին տնօրեն)*

Նա զանգեց ու իրեն ինձ մոտ հրավիրեց:

- Ժողովուրդ ջան, խնդրում եմ լռություն: Պապի ջան, ասա:
- Սարոյի հետ:
- Ժողովուրդ ջան, մի րոպե լսենք: Ասա պապի ջան:
- Դուռ դռան ենք մեծացել Սարոյի հետ:
- Ժողովուրդ ջան, լսեք էլի:

«Չե՞ս մոռացել, չէ՞»,- հարցրեց:
«Ի՞նչը»,- պատասխանեցի:

Զավակներդ աննման
Իրար են նման:

Կառլ Ազնավուր
Շառլ Մարքս

«Կուզեի՞ր Ջոն Վուի տեխնիկը ըլնեինք»,
Ասեց կինոյի աշխատողներից մեկը մյուսին
Ու հարթաչափով խուտուտ տվեց ականջը:
Մյուսը անակնկալի եկած
Վերցրեց ձեռքի տակ եղած մեկ ուրիշ հարթաչափ
Եվ նրանք սկսեցին հարթամարտով զբաղվել:
2016-ն էր, փակ դռան մյուս կողմում
Ֆիլմի նկարահանում էր գնում:
Բանաստեղծությունը կոչվում է՝ «Վետրբազը»:

«Մենք պետք է մեր ներմուծման մշակույթը արտահանենք»,- ասաց հյուրը հաղորդավարին ու արագ փոխեց թեման:

Յարգում եմ հարգող մարդկանց:

«Այ հիմա վերադառնում ենք հին ու բարի քսանմեկին»,- ասաց երեխան ու մեղմ տշեց գնդակը վեր:

Ավտոբուսում, մի աղջիկ գրում ջնջում էր
Մեսենջերի «Menq» չատում,
Վերջում ամեն ինչ ջնջեց,
Փոխարենը դրեց մի սմայլիկ՝ գլխին պսակ,
Փակեց հավելվածը ու բացեց մյուսը՝
«Վայլդբերիզ»-ինը:

«Արա սենց ասեմ, պրիլավկներում էն կարգի միս չկար, որ մեր ատձելի կնանիք մինետ էին անում, որ մսի համը չմոռանան»,- եզրափակեց Սովետի թեման Սուրիկը:

Վայնա ի միրգ

*Ես ստանձնել եմ կամավոր էդ բարեփոխման ընթացքի կատարումը, տեսական հիմքերի շարադրումը և դա ստանձնել եմ իննսուն թվից: Երբ ասում եմ որ իմ վզին դրած ա, նկատի ունեմ իմ առաքելությունն ա, իմ կոչումն ա:*
*(Գագիկ Ջհանգիրյանը՝ Պետրոսի Ղազարյանի մոտ)*

«Էդ թող, մի բան ստեղծի»,
Ասացի մի բանաստեղծի:

Մեր հուշերի մրցաշարում՝
Յուշամրցաշարում:

«Եղբայր, տեռոր ա»,
Գոռաց երեխան ու տշեց գնդակը:

Սև նպատակների սերմնացանը

«Վո սկոլկը դիռըկ»,- ասում ա պոչտալյոնի խոսքը, ցիտատներով խոսող աղջիկը, հարմար առիթի դեպքում:

Տալպայոբ

Տրախադրոն

*Այդ մարդը՝ անհատին արարքի սադրող գյուտարարությունը սահման չուներ: (Իգոր Մուրադյանը՝ Ջորի Բալայանի մասին)*

Ես եղել եմ հեղինակ
Ես եղել եմ կատարող
Բայց չեմ եղել երբևէ
Ես հեղինակ կատարող:

Տեսել ենք
Եվրոպական մշակութային ժառանգությունը
Բեյոնսեի և այլոց կլիպերում,
Ջագառ եղած մարմիններով համեմված:

Յակաֆեմինիստահեն

Անհաջողակ էս:
Ոչ մեկին մի վինիր:
Գնա, ատամներիդ դիր վինիր:

Շոգեհաց

*Իմ խորին համոզմամբ, իրական ստեղծագործողները երբեք դա չեն անում այն ակնկալիքով, որ երբևէ իրենք մրցանակ կստանան, կամ էլ իրենց գործը ի ցույց կդրվի ուրիշներին: (Սերժ Սարգսյան)*

Աշխարհում այս դառը
Կոնյակներից խմենք լեգենդառը:

«120 հազարանոց ակկարդեոնը 20 հազարով եմ ծախում, որ ուզող ըլնի, խաբար արեք»,- ասեց նոր հարևանը:

«Փառապնակ» հաղորդում

«Ես ստեղ ֆորք ունեմ»,- նորից լսվեց Լոսից:

Նախահաջորդը

Հավերժական ձեռնաշարժիչ

«Էս յան, էն յան, Վահան Տերյան»,
Ասեց մի անգամ մեր չաստի աբովյանցի Արշոն:
Ու էդ ասածը հիշվեց, էն էլ ոնց հիշվեց:

*Ընդ այ եմ յու, ընդ ուայթ այ սի՝ իզ մի:*
*(Փինք Ֆլոյդ, «Էքոուզ»)*

Պետրոսն առաջին, Պետրոսն առաջին
Մի արջահաջաթ ուներ, Պետրոսն առաջին:

«Հանկարծ չընկնես արխային»,
Լիրը ասաց արքային:

- Գիտե՞ս որ Պետրոս առաջինը հաջաթը սապոգի մեջ էր դնում:
- Էդքան երկա՞ր էր:
- Չէ, սապոգն էր ստից (ցույց ա տալիս գոտկատեղը):

Կյանքի մահի այս մուղջում
Ամեհի աղջամուղջում:

Արքաներին լիր մաղթենք
Որ չդառնան Լիր արքա:

«Ճաշակին ընկեր չկա, ճաշակներդ քուննեմ»,- ասաց մի տարիքով մարդ մյուսին, մատով ցույց տալով անցնող երկու ջահելի:

Ավտոբուսում էինք, կարմիրի տակ կանգնած
Բաղրամյանի վրա, Ակադեմիա չհասած:
Կողքներս մի «Չրո չորս» կանգնեց
Մեջը բարձած
Լիքը զուգարանի թուղթ:
«Ինչ կա, քաքլան»,
Բարձր ասեց մեր շոֆեռը,
Ու խնդացինք ողջ ավտոբուսով:

# ՉՖԻԼՏՐԱԾ
# ԻՄԵՐԱԼԴ

Արևն ամռան ու ձմեռվա
Վիշապության բուքը վսեմ:

Ուզում եք որպես գնդասեղ
Մեր լիրը խրենք փողկապիդ:

Խոտանավորներ

Էս տարի շոգ չէր
Չրդեհներ չեղան:
«Ժաժ տամ, պաժառ տամ»,
Ասաց մի մարդ, շուկայի մոտ:

Շահենը շինարարության առաջին օրերին
Տարբեր հարկերից իջեցնում էր մեշոկները:
Իննսունվեցից Զանգելանում էր ապրել,
Քանի վերջից Աշտարակում, Սերս գյուղից էր:
Մի քանի մեշոկից հետո նստում, ծխում էր
Պադյեզդի տարբեր հարկերում:
Սև, բարակ, ֆիլտրով սիգարետներ:
Մեկ-մեկ սուրճով:
Քաղցր, շատ քաղցր:
Որը խմում էր դանդաղ, շատ դանդաղ:

Բառնիի գաղտնիքը կամ Գառնիի բաղնիքը:

Բառնիի տաճար

«Եվ այս հոյակապ միջոցառումը կոչվում է հանդիսությունների սրահ»,- լսել էր մի անգամ Գարիկը՝ հարբած թամադայից:

Մենք տեսանք նրանց,
Ովքեր գնացին, ետ եկան
Ու շարունակեցին ապրել
Մնացածին չմեղադրելով:
Տեսանք նաև մեղադրողներին:

Ապրում էինք ու արարում
Սիրով վարարուն:
Կատարում էր որձին
Ոչ միայն արուն:

Մի բրազիլացի աշակերտ ունեի,
Խնդրեցի թարգմանել Բենդերի պնդումը,
«Տրեժու պադրե շոյա Ռիու ջե Ժանեիրու»,- պատասխանեց նա:
Գուգլով փորձեցի, լրիվ այլ բան ասեց:

*Ես էլ չեմ սիրում շախմատ, ես տանել չեմ կարում շախմատ, ես ատում եմ շախմատը, որովհետև էդ խաղի մեջ էմոցիա չկա: Եթե մի խաղ պիտի նստես սենց...կուն-կուն-կուն-կուն ու ձեն չկա...էրկու թույն ու թարախ նստած խաղում են: Կարող ա էտի լավ խաղ ա, ուղեղի...ես էմոցիոնալ մարդ եմ, ես պտի գոռամ, ղժամ:*
*(Վարդան Ղուկասյան)*

«Քուննեմ լավներդ, էդ դրա ձենը կտրեք»,- գիշերով լսվեց մի ձայն ու բոլոր ձայները կորան:

Կոմպրոմիսը բերում է կոմպրոմիսի

Դու գնում ես՝
Խեռիս գնաս:

«Իրմա» վեպը կարդացել ե՞ք:

Ապրում էինք ու արարում
Հույսով վարարուն
Գետերն էին նոսրանում
Խմելով առուն:

Նրան չէին սիրում
Կանայք և տղամարդիկ:
Նրան չէին սիրում
Ընդհանրապես՝ մարդիկ:

*Դուք չգիտեք իսկական իրականությունը: (Դոն Պիպո)*

Ախ մեր սիրո վառ [redacted]ը
[redacted]ն ու [redacted]ը
[redacted]ն [redacted]ն ու [redacted]ը
[redacted]տն ու [redacted]ուսը:

Փռշտոցս կամաց-կամաց
Վերածվում է
Հազի:

Հարգվածները ու կյանքի կողմից հարկվածները:

Բայց արի ու տես
Կլիրս ուտես:

Գյոթեմարտ

*Նրանց միջամուխ լինելը պետք է ծառայացնենք մեր շահերին, թե չէ մեզ խաղացնում են որպես ճատրակատախտակի վրայի խաղաքարտեր: Մենք ինքներս պետք է խաղացող լինենք: (Արդեն թարգած, բայց ժամանակ առ ժամանակ դեռ խոսացող գործիչ)*

Ջամփ անեմ
Ջամփ անեմ
Ջամփաներին ջամփ անեմ:
Ախր Էս իմ տարիքում
Ինչու՞ անեմ
Ո՞նց անեմ:

Լիսթում, վաթսունն անց մարդիկ
Դաչաներ են ծախում
Սարքված իրենց ծնողների
Ստից ընդից քերած փողերով
Քրտինքով թալանած փողերով:
«Կարայի՞ր, դու էլ անեիր, յոքո»,
Երրորդ վաշտի հրամանատարի ձենով մեջիցս ասեց մեկը:
«Լրություն, լրություն»,- պատասխանեց մյուսը
Աժ փոխնախագահի ձայնով,
Ով այդ պահին նախագահում էր նիստը
Բայց միևնույն է չկարողացավ լռություն հաստատել:

Սիրում էինք իրարու
Քանզի, թեպետև:

Գեներալներ, որ ստացան փառք ու պատիժ:
Փառք ու պատիժ ստացած գեներալները:

Սիրում էինք իրարու
Թեպետ որձ էինք և առույգ
Տկլոր մտնում էինք առուն
Մոմեր չէինք վառում:

Հանգույցյալ

«Օձի լեզու ունես»
Ասեց աղջիկը տղային
Հատուկ գործողության ժամանակ:

Դժվար ա ջնջել էն ֆիլմերը,
Որոնք քաշել էս
Տասներկու-տասներեք տարի առաջ
30 kbps-ով, մի ֆիլմը մի գիշերում:
Քաշել ու պահել հարդերում:
Կամ դրանից ավելի շուտ
Կասկադի պրակատից վերցրածները:

Սիրիայում մահացավ Հովհաննեսը:
Հոմսից Կանադա գնացին
Սյուզին, Լիլին, Անուշը ու Զառան:
Ու էլ չունեմ մերձավոր
Արեւելքում Մերձավոր:

Ընդդիմադրությունից հոգնած անտարբերները:

Մենք էլ չունենք ունեցվածք
Բայց արդեն ունենք չունեցվածք:

Պարտքի զգացմունք

*Դա բացառապես վերաբերվում է բոլորին: (Ճաղատ պատգամավոր)*

Մենք որ առաջնայինը
Այդպես էլ չկարողացանք տարբերել
Երկրորդականից:

Մարկետում սուպեր
Մարդիկ կային սուպեր:

Նենսիի Փելլոսն էր մեր մեջ
Բլինքենյան հրով ճառագած:

Անարգանք և պատիվ

«Ֆինանսական խնդիրներ և վարժություններ» ժողովածուի համար ֆինանսավորող ենք ման գալիս:

- «Քանզի որձ ենք և առույգ»,- սա ինչի մասին է, հակաֆեմինիստահեն չէ՞:
- Չգիտեմ, բայց խոսքը անհնարինի մասին է, անհնարինի անխուսափելիության:
- Միգուցե անհնարինի անհնարինությա՞ն: Կամ անխուսափելիի անխուսափելիությա՞ն:
- Չեմ մտածել այդ մասին, խորհուրդ կտամ դուք էլ չմտածեք:

Լիրայր Այգեկցի՝ ագառկագիր

Պապաստակ

Գնում էին Խարկով
Չեթով գլխարկով
Համաhարթեցման
Ռեգրեսիվ hարկով:

- Էս խոտը խմի չայով, կքնես hանգիստ:
- Հանգիստ քնելու hամար սաhմանները պիտի խախանդ ըլնեն:
- Խոչեշ յա ուբյու սասեդեյ, չտո մեշայուտ ժիծ:
- Պարտքեր էլ պտի չունենաս:

Մեր տակ դրված
Մտավոր ականները

Էս երկիրը
Ում տեքստ գրողները
Վախտին  սնվում էին
Լարիսա
Մինասյան-Հասրաթյան
hիմնադրամից:

«Գլխացավանք»՝ եկեղեցի:

- Դուք էլ չեք կարողանում նկարե՞լ:
- Ոչ, դեռ կարողանում եմ չնկարել:

Բարբիների պուրակում

Ազնավուրի թաղումը տեսանք լայվ:
Հետո՝ Բելմոնդոյինը:

Տկլոր նստած էինք տկլոր:

*Հերոսները կենսագրություն ապրած մարդիկ են:*
*(Թատրոնի դերասան)*

Մենք որ կորցրել ենք շատերին
Անսպասելի ու անվերադարձ
Բայց դեռ փնտրում ենք քչերին
«Սպասիր ինձ» հաղորդաշարում:

Պալիտիկայում կլիր ծծելը պարտադիր ա
Եթե քեզ սպերմա ա պետք:

Եկեք սիրենք իրար
Եկեք պաշտենք իրար
Եկեք հարգենք իրար
Քանզի, թեպետև:

Բառավաճառություն

Վէպոս՝ վեպ էպոսի հիման վրա:

Սվարչիկ Մարտիրոսին տեսանք
Ու Սանտեխնիկ Սասունին:

*Այս իշխանությունը պատերազմով տալու է Սյունիքը և Հայաստանը դարձնի թուրքական ֆուռերի համար ճանապարհ:*
*(Էդուարդ Շարմազանով)*

Օգնեք՝ օգնեմ:

Մենք սպառել ենք
Free trial-ները
NOD-ի ու Avast-ի
Նաև կարդացել ենք
Կասկածելի լուրերը
Աղբյուրներից հավաստի
Տեսել ենք կատվին
Անթրոպոմորֆ, նավաստի
Ում անունն էր Մատրոսկին
Նաև Պետրոսին
Ց1-ի մատրոսին:

Պողոս, Պետրոս, Մատրոս:

Տարիներ, տարիներ, տարիներ հետո,
Քաղաքն այս կդառնա մի չքնաղ գետտո:

Մեզ հետ էր Սրապը
Սիրո Սատրապը:

Ես ելք գործեցի թատրոն 2009-ին:

Առաջ սոված արվեստագետներ էինք հիմա պրոստը սոված ենք:

Անմասն սիրո մասնակցելիությունը

«Ուզվում եմ»,- ասեց մի կին, հարբած:

Բախտագոռգոռ

Ամպախնդիր

Պագեմ, պագեմ,
Երկրպագեմ,
Էս մի գեշտալտն էլ՝
Սենց փագեմ:

Վերապրող ապրուկներ
Ապրող վերապրուկներ

Մենք ճանապարհեցինք նրանց
Ովքեր պետք է ճանապարհեին մեզ:
Ովքեր կճանապարհեն մեզ
Պետք է ճանապարհեին նրանց
Ում ճանապարհեցինք մենք:

Անհեթեթ ու անհետ

«Այ Լուկոլլոս»,- գոռաց երեխան,
Ով փաստորեն արդեն
Պատմություն էր անցնում:

«Ձու ըլներ, ձվածեղ անեինք, ափսոս թավա չկա»,
Լսել էր Արեգը Դավթաշենի շուկայում
Որն արդեն չկա
Իննսունականներին
Որոնք արդեն չկան
Մի ծեր կնոջից
Ով ենթադրաբար՝ նույնպես:

Մեզ հետևում էին դեմից
Ու դիմում էին հետևից:

Կարիք ունեմ
Բայց չգիտեմ
Բայց չգիտեմ ինչի:
Կատարելու,
կատարվելու,
Թե՞ էքստերնալ վինչի:

Գարշավիր

Մի խանգարեք ինձ,
Թողեք օգնեմ ձեզ:

Բանական աղետներ

«Կատվի համար»

Տառապաշար

Ղարիբյան կղզիներ

Թմրահյութ

«Խելոք լինելու համար չափից քիչ ենք կարդացել,
Անջատած ապրելու համար չափից շատ»,- ասեց Արմենը:

«Եվ ահա ստացանք արցունք»,- ասաց մի դերասան լացելուց անմիջապես առաջ:

«Արա, թաղումների ժամանակ սաղ մտածում են՝ «Ինչ լավ ա, որ ես չեմ մեռել», բայց տեղը ասում են՝ «սաղ սուտ ա»», շարունակեց Սուրոն մոնոդիալոգը: «Պրինցիպի Վարդան ջան, արտագաղթելու միակ թեման կրեմատորին ա, թե չէ գաս սենց պառկես, ու ինչքան ղախպա կա, գա, նայի, ինքնահաստատվի՝ էդ էլ մի բան չի»,- վերջացրեց Սուրոն, ու ցույց տալով հեռվում մեքենայից իջնող մեկին՝ ասեց. «Ըհը, տենց մեկն էլ եկավ, նա լավցա ի զվեր բիժիտ»:
Ու շարունակեցինք մնալ կանգնած
Զալից դուրս, պսակներից քիչ ձախ:

Ստերիլ սգո սրահները
Նախատեսված
Մարդուն
Էս աշխարհից
Ցիվիլ ձևով
Սիքտիր անելու համար:

Ափսոս էր մեր տեսածն ու լսածը:

«Մսրյանի երաժշտությունը թող կատարի»,
Գրել էր մի մարդ, յունիկոդով, Յութուբում,
Կլայդերմանի վիդեոյի տակ:

Մի Բուլո գիտեի
Անունը Տիգրան
Մեկ ուրիշինը
Միքայել էր:
Երբեք չտեսանք Բուլո
Անունը Բուլո:

Ստարիկ ի մորեխ

Դուք որ ձեզ եք ման գալիս,
Բայց միշտ ուրիշին եք գտնում:

Արևմտամետ մամուլ էինք նայում,
Իրենց տված հույսն էինք սպառում:

Տեսական տեսլականներ

Գիպսակարդոն պրոֆիլներ

Մեզ հետ էր միշտ հույսի վարպետը,
Սիրո ոլորտի սուրբ Կարապետը:

Մեր համախառն հույսի արցունքը

Ներբեռնել ու մեռնել

«Բարև քեռի»,
Ասացի մի ֆիլմմեյքերի:

Նա չսովորեց խաղալ
Բայց ոնց էր խաղում
Ոնց էր խաղում:
Ձեռքդ ետ տար
Նավի վրայից:
Ծախմատային:

Առաջ՝ առաջ չկար:

Կիր, սիլիտրա,
Կիր, սիլիտրա
Կլիր, սիլիտրա,
Մկնդեղ:

Կիր, սիլիտրա
Սիլիտրա, կիր
Համայնքներին
ազդակիր:

Նա եղավ ավելին քան եղավ:

Մենք, որ չնդունեցինք,
Ուրիշի՝ ուրիշի հետ անցյալը,
Եվ ապագան՝ ոչ մեզ հետ:

Աշխարհում այս անարդար
Մենք էլ եղանք անարդար:

Գնեցինք լարյոկեն
Բազուկեն, գազարեն, կաղամբեն:
Բորշչ էինք սարքում ու Յութուբում
Լսում Աղամբեն:

Սրնթարդ՝
Սրընթաց և կորընթարդ:

Իրար կոխենք, բայց՝ չփոխենք:
Երկարատև հարաբերությունների պրինցիպ:

*Մարդիկ ինչ-որ սպասելիքներ ունեն, որը իմ կոմֆորտից դուրս ա:*
*(Արդեն ոչ այդքան երիտասարդ դերասան)*

Հաճույքի և կոմպրոմիսների
Կամպրոմիսը:

Անձավներ և քարանձավներ

Սուրբ Պարապետ

Կամոն, Մազութի Համոն և Տաշիրի Սամոն:

Վառվառոս

«Մյուս տարի էլ ենք գալու Հայաստան,
Եթե Հայաստանը լավ լինի»,
Ասեց Մենուան Գլենդելից՝
Երևանում:

Անուշ երազներ
Անհուշ երազներ:

- Ո՞նց էս, բերանդ ժաժ տամ:
- Բերանս խի էս ժաժ տալի, կլիրս ժաժ տու:

«Արա հլը նայի ով ա, սրան հիշու՞մ ես, ես ինչքան ա փոխվել»,
Ասեց Կայծը ուղարկելով մի վիդեո,
Որտեղ հետին պլանում կանգնածներից մեկը, ժամանակին
Մարդկանց ճնշողների երկրորդ էշելոնի
Առաջամարտիկներից էր:

Մեր երկրում բոզի տղեքը երկար են ապրում:
Նրանց հիմնականում մոռանում են:

Ողորմածին

Վարվեցին մեզ հետ մի տեսակ անօրեն
Բայց ոչ պրակտիկայում
Այլ տեսականորեն:

Ծանր կիրք, սև ուրբաթ

Հանգամանքները և նրանց բերումը

Կալվադոս Դալի

*Դեր իզ նո քամֆըրթ ին դը թրութ՝*
*Փեյն իզ օլ յուլ ֆայնդ: (Ջորջ Մայքլ)*

«Ո՞նց, դուք թենքսգիվինգը սելեբրեյթ չե՞ք անում»,
Ասեց Դերրենը Գլենդելից:

«Իմացի ոնց ա, էս գրքերը հանձնենք նոմենկլատուրա»,
Շտապեցրեց տարիքով հարևանը հիսունն անց տղային:

Մենք որ տեսանք
Բենեքսի 37.2-ը
Փաշինյանի 29.8-ը
Ու Սիֆրիդիի 24.1-ը:

Թեթևսոլիդ

Մեր պաշտպանը չի էլ քեռին
Դրա համար քաշվում ենք խեռին:

«Յարգելի ծնողներ, տեղաշորերի մեջ շոկոլադ մի դրեք, արգելվում է»,- գրվում էր ժամանակ առ ժամանակ, լոկալ չատերում:

*Պատոմ վրեմենա ստալի մենյատսա: Պերեմենի պրախիսխադիլի վտիխարյա, տակ չտո սնաչալա նիկտո նիչիվո ի նի պոնյալ:*
*(Սալավյովը Շպալիկովի մասին)*

Ժամանակի մեքենա չունեմ:
Ժամանակին մեքենա ունեինք:

Մենք բոլորս հյուր ենք լայքում

Սև ուրբաթի
Ակցիաներուն
Շուքին տակ:

Ձեռքներս դրած ժամանակի լրին

Գաղտնոլոգիա

Ծնողներս արվեստի հետ կապ չունեին, ես էլ:

Սեպարարտիստ

«Թարգմանություն բոլոր լեզուներով»՝ գրված էր «Իրավաբանական ծառայություններ» պլակատի տակ:

«Էն մասը ոնց էր, Գօարիկ, «Մշո աղջկա» երկրորդ տունը»,
Հարցրեց մի տղա երեխա
Գործիքով քայլող աղջկան:

«Պողոսյան Արմենին լավ կիհշես, գծագրության դասատու»,- ասեց մի տարիքով մարդ իր տարիքի մի կնոջ, դասատուի պես հագնված:

*Սա գենետիկ գերխաղ ա տերությունների, տրիվիալները չեն հասկանում, պարզամիտները: (Կին հարևան, գաղտնոլոգիայի ֆանատ)*

«Ասի նաբաթ առ, գնացե շիբ ա առե, տնաշեն»,- բակում շշնջաց տարիքով մի կին մյուսին ու երկուսով սկսեցին ծիծաղել:

Մենք
Որ սկսել ենք հաճույք ստանալ
Հաճույք չստանալուց:

Վարորդները անտանելի են դարձել:

«Եռալիք դիոդային մազահեռացում «Soprano titanium»»,
Գրված էր նոր բացված հաստատության վրա:

«Բարադայով ջահել տղա էր»,
Ասեց մի կին մյուսին գազելում:

«Ծաղիկների աշխարհում ծնկաչոք էի ման գալիս»,
Երգեց մի տարիքով մարդ, ծաղկավաճառի կողքով անցնելիս:
«Ծնկաչոք եմ ման եկել»,- ուղղեց նրան ծաղկավաճառը:
«Է նույնը չի՞»,- պատասխանեց մյուսը ու խնդացին:

*Դիվանագետը բացի դիվանագիտությունից պտի...[լռություն]: Մի խոսքով ազգայինից պտի ունենա: (Հաղորդման հյուր)*

«Պապին իր ամբողջ կյանքով
եկավ դարձավ մի թումբ»,
Ասեց մեկը կենացի վերջում:
«Ինչքան էլ մահը գիտենք որպես
անցանկալի երևույթ, միևնույն է,
այն քայլում է մեզ հետ համաքայլ»,
Նորը սկսեց մյուսը:
«Լավ ասեց»,
Լսվեց կողքի սեղանից,
Որի շուրջ նստածների մեջ
Առանձնանում էր մի երիտասարդ,
Ում կարմիր շապիկի վրա գրված էր
Որ մեծատառ յեն
Հավասար է
էմ ցէ քառակուսու:

«Հեսա որ ամեն ինչ դառնա քարտային, էս օրերին երանի ենք տալու, ոչ մի կոպեկ չենք կարանալու առնենք»,
Ասեց հիսունին մոտ, կեպկով մի տղամարդ,
Կողքը նստած մտահոգ կնոջը,
Երեսունիինգ՝ արդեն կապույտ ավտոբուսում:

«Տաքսի, տաքսի»,- հառաչում էր երեխան:
«Թե անգլերեն չես ուզում, քեզ բառբի կտանեմ, բայց էլի Երևան ա»,- ասեց հայրը կանգառում:
«Չէ»,- պատասխանեց երեխան:
Բյուրական գնացող ավտոբուսը եկավ, նստեցին, գնացին:

«Հա՛մ մտավոր աշխատանք եմ կատարում, հա՛մ բան»,- ամառվա շոգին ասաց երկարաթև վերնաշապիկով ու սև գոտիով մի մարդ, բարակ, կիսատ, ծխացող սիգարետը ձեռքին:

«Չի վաճառվում»,
Գրված էր նախկին ՊՆ շենքի վրա,
Որի պատուհաններն էլ չկային,
Ու քամին միջով փչում էր
Ուր ուզում էր:

«Միջին «Ա»-ն շարվում է, մեսրոպյան հայերենով եմ ասում»,
Լսվեց փողոցում, ցանկապատի այս կողմում:
«Մեսրոպյան, մի հատ էլ տումբըլշկին քնած բռնեմ,
երկրորդ սուտկա ես մնալու, գանդոն»,
Եսիմ խի հիշվեց,
Չգիտեմ որտեղից եկավ՝
Տասնութ տարի առաջվա լսածներից:

«Սիստեմը լավ բան ա, ինչ ա ըլե որ,
Առողջ մարդն էլ կարա ընդունի,
Կանխարգելու հըմար ա, հիվանդության հըմար չի»,
Ասեց լոկալ տաքսիստը՝
Ով մի քանի օր առաջ էր սիստեմա ընդունել:

Կոտլետաց դասեր

Մեզ հետևում էին դեմից
Ու դիմում էին հետևից:

Վառունգ՝ մռու վառունգ

«Հոոոոպ, հոոպ»,
Գոռաց անհաշիվ քանակի լավաշ գրկած տղամարդը
Շարժվելով փռի մոտ կանգնած «բուդկա Մասկվիչ»-ի ուղղությամբ:
«Հոպ հոոպ, հեյոոպ»,
Պատասխանեց նրան հաց առաքողը ու բացեց դուռը:
Հետո պտտվելով դեպի ժպտացող կին աշխատողները,
եզրափակեց.
«Դե ես գնացի, Աստված իմ հետ, սրբերը՝ ձեր»:

«Հարազատ, Կոմիտասով ե՞ս բարձրանում»,
Հարցրեց լրիվ սպիտակ հագած  մի ջահել տղա:
«Հարազատ Կոմիտասով եմ բարձրանում»,
Պատասխանեց ավտոբուսի վարորդը
Ու ժպտացին երկուսով:

«Մենդելեևի աղյուսակում տենց տառ չկա»,- ասեց մի կին հեռախոսով:

«Ա էդ բիսեդկեն որ կար, քո գառաժը չկար հլը, խախանդ տեղդ լռվա, թե չէ կճղեմ ոռդ»,- ասեց վճռական տղամարդրված մի տրամարդ մյուսին:

«Սարերով, ձորերով»,- լսվում էր մի աղջկա նաուշնիկներից գազելում:

«Կեչուպ մի լից, մայոնեզը մենակ լից»,
Արագ ասաց մի մարդ, բայց արդեն ուշ էր:

«Կյանքն այս արդյոք իմաստ ունի՞»,
Հարցրի մի իմաստունի:

«Մի հատիր գիծը, խաղա հաճույքի համար».
Նույն գովազդն էր, տարբեր կամուրջների վրա:

«Մարդը ջահել-ջահել գնաց
Մինչև երկրաշարժից հետո աշխատում էր»,
Ասաց բակում նստած մի կին:
«Էդ մարդուն հիշում եմ,
փող ուներ, բայց ապրելու ձև չգիտեր»,
Շարունակեց մյուսը:
«Խի՞, սաղ Սովետը ման եկավ Մասկվա, Թուրքմենիա»,
Հակադարձեց առաջինը
«Թուրքմենիա ես էլ եմ եղե, հենց մեջն եմ եղե»,
Մեջ մտավ նոր եկած տղամարդ հարևանը:

«Ապեր, ասում եմ արաղը քչություն ա անելու, ընգեր»,- ասեց շորտիկով ու արևից սևացած միջին տարիքի ռաբոչի շորերով տղամարդը, երրորդ հարկի պատուհանից նայող մյուսին: Նա խանութից արդեն առել էր երկու տարօրինակ գույնի լիտրանոց սոկ ու չորս փոքր թան:

*Նավիզնա վ պերեսբորկե միռա, ա նի վ պերեսազդանիի յիվո էլեմենտով: (Ալեքսեյ Գուսև)*

- Ոնց ե՞ս:
- Ոչինչ, անցկացնում եմ:

«Ջերս ա գոմշախումը հորինել, մտնում էր գետի մեջ, սկում, շլանգով խմում կարասի միջի գինին»,- ասեց լոկալ տաքսիստը:

«Խաշը կերեք, սաղ նույն տեղն ա էթում»,- ասեց մեկը ու կերավ էկլերը պեռաշկուց հետո:

Աղման բյուրո

«Մեր հարսը իրա օտդիխի օրն ա էդ գործը անում: Կապում, սարտիրովկա ա անում, բայց ջերմոցի մեջ գործ չի անում»,- ասեց տարիքով մի մարդ:

«Արա էսօր թաղումից հետո գնացի պանիխիդա, հետո էլ հարսանիք»,- զեկուցեց խմած Կայծը Տելեգրամի աուդիոյից:

«Ապրես, ախպերներս»,- ասեց վարորդին լավ խմած ուղևորը,
Ով իջավ, փակեց դուռը, բայց ձեռքը չթողեց, պտտվեց ու շարունակեց բաց պատուհանից.
«Ապեր, բայց էն էլ ա աֆյոր, չորս հատ ամործիզատըր տարավ վրիցս»:

«Փող կա՞ մոտդ, մի հատ մառոժնի կեր, մինչև գամ»,- առաջարկեց մի տղամարդ հեռախոսով:

Դոն Պիպոյի ձենը լսվեց պադյեզդում, ամառվա շոգին, հարևանի միշտ բաց դռնից:

*Ամենահին ու ամենախելոք ազգն ենք, բայց տարրական բաները չենք հասկանում: (Գործող գործիչ)*

Մեզ սիրել են՝
Բայց չեն հարգել:

«Երվանդ, դու թվիսթ պարել ե՞ս»,- հարցրեց Հրաչը էլեկտրիկին, դանդաղ շարունակելով լցնել կարմիր գինին:

«Արա ասըմ եմ պերֆարադրին տոկ ա խփըմ, կարող ա որ երեխեքը հաղացել են հեղը, ջուր մուր են լցե»,- հարցրեց պատ քանդող Նվերը իրա նապառնիկ Շահենին ու ինքն էլ պատասխանեց: «Արա չէ, հիշամ, բենզինով եմ մաքրե: Դու գնա տապոռ, բալգարկա, գվազդաձյոռ բեր, էս պատը տափակ ա»:

«Չի գնահատում ինձ, չի գնահատում»,
Լսվեց պադյեզդում
Ու չհասկացանք սերիալից էր, թե՞ հարևանն էր:

Մենք երևի լրիվ խեղճ չենք
Քանի դեռ նկատում ենք խեղճերին:

Մրճեփ՝
Մուրճ եփելու սարք:
Մուրճի ֆորմով կաստրուլկ:

«Մի հատ հայելու լույս, ռազետկա ֆենի, չորս հատ պատալոկի լույս, վինտիլյատր, զուգարանինը առանձին միանա, բաղնիքինը՝ առանձին, երկու հատ զուգարանում լույս, լարերը՝ երկուսուկեսնոց»,- թելադրեց Երվանդը ու ավելացրեց. «Գրա՛»:

«Մայիս, քեզ խառռակիրի եմ անելու»,
Ասեց կլյուչը ձեռքին մի վարպետ մյուսին:

Ռակվինում սուրճի բաժակ էր մնացել
Բարձրացրեցի, պղպջակ եղավ
Գնացի, ետ եկա
Պղպջակը չկար:
Մենք որ չլինենք
Քիչ մարդ կտխրի
Բայց տխրողները
Շատ կտխրեն:

Ավարտել եմ Կլեմենտին Դըլյոզի
«հակա-դիլիջան» երկշաբաթյա դասընթացը:

Անհաջողության պատմություններ

Ատվյորկ, մեխ, կուպցի՝
Ուստեքը կարոտ էին պցի:

*Մեր երկիրը բաստուրմի պես կտրում են:*
*(Էդուարդ Շարմազանով)*

«Ֆունդամետրն են քցում»,- տեղյակ պահեց հարևանը ու իջավ արագ:

«Փեսես ասում ա՝ աներ, բաջանաղը գան, բաղնիքը քանդենք, ռեմոնտ անենք»,- ասեց Ղազարը:

«Կարևորը հույսդ չկորցնես, Վարդան ջան»,- ասեց Հուսիկը, ում հետ շինանյութի խանութից կաֆելի կլեյ էինք առնում: Իսկապես ասեց, իսկապես Հուսիկը:

Ցոյը իջնում է Արարատից:

Հատկապես՝ քու նելինգուսը:

*Պալուչիլ կագդա տը, նադը վեռնուծ:*
*(Բոտվիննիկը՝ Կասպարովին)*

«Մենք Սովետի վախտ հո՞ չէինք ուզում ծուռ անեինք, ուղիղ էինք անում, բայց չգիտեինք որ ուղիղը էդ չի, էտի ծուռն ա»,- ասեց ուստա Արամը ու ավելացրեց. «Տիգրան, խաչուկները տուր, փիսաչն էլ տես ու՞ր ա»:

Սիրենք ողջերին
Թոմին ասեց Ջերրին:
Ջիմին ասեց Քերրին:

«Ցերեզիտ Մանիեթթըն վեկալ մի հատ էլ»,- ասեց ոչ Վուդի Ալլենը, հեռախոսով:

Բահը ձեռքին, լինգը ուսին,
Պատրաստվում էր:

Ապրում էինք
Լավ ու մոլորված
Ճաշ էինք ուտում
Ու պանիր հաց
Նաև փլավ ու խորոված
Եվ զանազան թխվածքներ:

«Նալիծ վսեմ»,
Գոռաց մի մարդ
Ձայնով վսեմ:

Ձախ Հարութն էր երգում:
Չրի նման չոր վարորդը
Դանդաղ բացեց նոր «Վանը»
Հանեց մեջտեղի սիգարետը
Դրեց բերանը
Սպասեց
Մի քիչ էլ սպասեց
Հետո միանգամից
Չրթացրեց լուցկին
Բայց լուցկին չվառվեց
Ու Ձախ Հարութի
«Ես առանց քեզ» երգի
Հերթական կրկներգը
Սկսվեց ավելի
Ոչ դրամատիկ:

«Ֆլոտ եմ ծառայե, յոտանսուն աստիճան ցուրդ էր, սեվեռնի սիյանին եմ տեսե, ըմբես սիրուն բան է, չեմ կրնա սենց նկարագրեմ»,- ասեց մի մարդ «Ժդի մինյա» հաղորդաշարում:

«Փրկություն չկա»,- ասեց ամբողջովին սև հագած մի մարդ գազելում: «Մասկվա որ տենց ա, ստե վաբշե վատ ա լինելու: Բայց դե ոչինչ պլեչիկով մայկեն կիագնես, լավ կլնի: Մանվելի մատոռը խփեց, իմացա՞ր: Հարյուր դրամի հըմար: Ասի ինձ մի հատ հարյուր դրամանոց մառոժնի առ, չառավ,խփեց»:

«Ով երեխա չունի, հավայի էքստրիմների հետևից ա ընկնում»,- արձանագրեց իր իմացածի ղադրը իմացող մի ծնող:

«Արա, էսօր երազիս մեջ քո հետ եմ խոսացել, երևի մի կես ժամ: Քսիառմիդ համոզում էի տայիր, չէիր տալիս: Արա, բայց շատ քաքակեր մարդ դուս եկար»,- եզրափակեց Կայծը:

«Zuvervaiziger partner», գրված էր մինիվենի վրա, ինչը պարզվեց գերմաներենից թարգմանվում էր՝ «Յուսալի գործընկեր»:

Չգիտեմ եղել ա թե չէ, բայց հիշում եմ:

- Մծբինը ե՞րբ ա եղել:
- Էդ չկա ցուցակում:
- «Անաբասիս»-ը ո՞վ ա գրել:
- Յեսա նայեմ:
- Էդ ո՞ր ճակատամարտն ա, որ հա մոռանում ենք:
Խոսում էին երեխեքը գազելում, ինչ-որ թղթերի նայելով:

Ղազարոս Աղայանը նման ա Բեթմենի պրոտոտիպին:

«Սեռդ կփոխեմ»՝
Ասեց ինձ մի բայ
Նրա մեջքին կանգնած էին
Լեզվաբաններ հայ:

«Աչքդ լուս, լույսդ քառասունհինգ հազար ա եկել»,- ասեց էլցանցում աշխատող խոշոր հարևանը իր «Ֆոլքսվագեն Գոլֆ»-ի միջից:

Գլազգոյի գլազոկները

Նազարոս

Թրքածին մրգերն ու մրգածին օղիները

«Արա, ոռի ձևով կերել եմ, որ ասում են որկնամոլություն՝ լրիվ իմ վրով ա»,- խոսեց Կայծը տելեգրամի աուդիոյից, Կարմիր ծովից, Լայների վրայից:

*Սերժ Սարգսյան, քու տունը քանդեցին քու կողմից նշանակված կադրերը: (Վարդան Ղուկասյան)*

Woody Woodpecker-ի անվան ծավալապետություն

Մեզ հետ էր Ռոզան
Մեզ հետ էր Լինը:

Ռոզա Լինչ

«Կարոտել եմ քո աչկերը»,- ասեց մի երգչուհի, երգի մեջ, Յ1-ով:

Մանիպուլյանտ

Յանճարեղեն

«Ատամներ և անդամներ»
Չրույց զարմանալի մի մարդու հետ՝
Ուրոլոգ-ատամնաբույժ Ղազարի:

Ապառնիկ
Ապագա նապառնիկ

*Պլանավորված բաներ կան, կլիպեր, երգեր, բայց ընթացքում լինում են երգեր, որոնք ծնվում են ընթացքում: (Երգիչ, Յ1-ով)*

«Մի օր պետք է մաքրել կյանքը սոցկայքերից ու ապրել իսկականով»,- գրեց հայտնի մի դերասանուհի սոցկայքերից մեկում:

Կանգնած արեց տըրտըրիկ
Մի անծանոթ տերտերիկ:

Զուգարանում լսվեց հարևանի ձայնը:
Բարձր խոսացող,
Յավանաբար՝ նստած:

«Ուաթ ը բյութիֆուլ նայթ»,- կարա երգի փիղը ձիուն ուտելիս:

Մարսի կապիտալը
Ու Մարքսի խաչմերուկը:

Նա ոգևորվում էր հիասթափվելուց:

Կյանքում այս թոքսիք
Իրար արինք սիք:

Կինտո Բրաս «Գիշերային բաթերֆլայներ»

Ականատնտես՝ տեսնող, բայց տնտեսող:

Դուք որ չկարացաք
Ինքներդ ձեզ վստահել:

Կյանքս մի կերեք,
Կլիրս կերեք:

Կյանքի հաճույքներից
Հաճույք չէինք ստանում:

«Ուզում եմ ջահելների մեջ սերմանեմ»,
Ասեց մի ռեթայըրդ եղած ռոքմեն-գյուղատնտես:

- Իսկ ձեր ոտանավորներից ո՞րին կարող էի հանդիպել
համացանցում վերջերս:
- «Կատարում էր ժելիմիրը»:
- Դա կոնկրետ վերնագիր է՞:
- Ոչ, ավելի շատ կյանքի կոնցեպտ:

Մենք, որ չդիմեցինք «ժդի մենյա»,
Չնայած ամբողջ կյանքում
Ինքներս մեզ էինք փնտրում:

Աշնան այս մուժում
Մահն է ու՞մ գուժում
Վերլուծագանգը վերջին:

*Արա, դու որ տեղյակ չես, չի նշանակում որ էն վախտ ուրիշ ա եղել:*
*(Սամվել Բաբայան)*

«Տավուշ թիվի»-ով Տրավոլտան էր խոսում հայերեն, Ջոն:

Կյանքում այս թոփսի
Եկ լինենք թըրվի:
Թող մեզ հեշտ տրվի
Ուղառը Բրյուսի
Ու կադրը Մայքի:

Էնգելսին խփին ուկրաինացիք, երեկ:
Մի առնետ էր մահացած
Նախկին Մարքսի անկյունում
Փարթամ մանդարինների կողքին
Կիսաասատկած ձկների կողքին, էսօր:

«Նայի, չընկնես արխային»,
Լիրը ասաց արքային:

Խորը ամանի մեջ
Ճենապակե, ճերմակ
Վերջին ձուն խաշած
Գնում էր ու գալիս
Գրունտովկի ձենով:

Գառան միսը օգտակար է, հատկապես գառան համար, երբ այն դեռ գառան վրա է:

Կոնսիերժ Սարգսյան

Սե/Ռոբ՝ մարդու անուն:

Թարմոեդ
Թարմ բաներ ուտողներ

Թարմոեդների ակումբ

Մենք, որ հետևում ենք
Պաշտոնական հիգիենային
Ու անձնական լրահոսին:

Կորոնավիրուսի շնորհիվ սովորեցինք, թե ոնց պետք է լվանալ ձեռքերը, բայց հետո մոռացանք ու անցանք հին ռեժիմին:

Առաջ զգում էինք ու գրում էինք
Որ իմանանք թե ինչ էինք զգում:
Հետո գիտեինք արդեն, ու էլ չէինք գրում:
Երբ որ գիտես, գրելը էլ էն չի:

*Առազու նիկտո նի ուխոձիտ: Վ գաստյախ տակ նի պրինյատո:*
*(Վիննի Պուխ)*

Սմեկտանտներ
«Սմեկտա»-ի ֆանատների ակումբ

Օրվա երրորդ կեսին ինձ զանգեցին:

Կորոնայի ժամանակ
Ակտուալ դարձած
Գռուպ չատերն ու վիդեոքոլերը:
Նաև՝ էքստերիերային դոբռի ֆիլմերը:

Մի անգամ
Իննսունականներին
Բանգլադեշում

Մեկը իր մոտ կանչեց
Էդ առիթին մասնակցող երեխաներին
Օղին լցրեց սուրճի ափսեյի մեջ
Որի մեջ նախապես լցրել էր իր սուրճից մի քիչ:
Օղին ու սուրճը ռեակցիա տվեցին
Մենք զարմացած ու հետաքրքրված էինք,
Իսկ ինքը գոհ նստել էր
Բազկաթոռին:

Եկեք սիրենք իրարու
Թեկուզ որձ ենք և արու
Չարը կպարտվի բարուն
Դիմացի սարում:

Չէին սիրում օրորվել
Այդ բոլոր հաքսլիները:

Մենք չնկարված դոկումենտալ ֆիլմի հերոսներ ենք:

Փինքֆլոյդյան դարք սայդն էր մեր մեջ
Չեփլինյան հրով ճառագած:

Կատվի համար

Քաքակիրներ

Բելլայի քույրը
Քիչ աշխատավարձով
Երկար տարիներ
Աշխատում էր ֆաբրիկայում:

Նա վարակվեց
Կարանտինի սկզբի օրերին.
Ուրիշների հետ՝ իրեն էլ տարան:
Աղվերան, շքեղ հյուրանոց,
Առանձին սենյակ,
Ուտելը՝ ըստ պահանջի
Օրը չորս անգամ,
Տաք ջուր, ռեմոնտ,
Կոմունալները չէին գալու:
Մի քանի օր հետո
Ամաչելով ասել էր.
«Փող տամ, սիգարետ բերեք»:
Պատասխանել էին.
«Ինչ փող, քույրիկ ջան, պրոբլեմ չկա»:
Բերել էին բարակ սիգարետ,
Ավելի լավը՝
Քան ծխում էր սովորաբար:
Ու ծխել էր բալկոնում նստած
Նայելով բնությունը, Բելլայի քույրը
Ով Շենգավիթում, այդպես նստած
Միայն քայքայված շենքեր էր տեսնում:
Դուրս գրվողների առաջին սաստավին
Նկարեցին թիվիները
Նվիրեցին շքեղ  վարդեր
Ստացողների մեջ էր նաև
Մեզ ծանոթ կինը
Ում հիշում էինք որպես Բելլայի քույր
Եվ ով այդ պահին շատ տխուր էր:

Հատուկ գործողությունից հետո: [redacted] գիրքն ա դրած, կամ հինգիազարանոց: Աղջիկը նայում ա, ու ասում ա տղուն. «[redacted]»: Կամ տղու ազգանունը գրողի ազգանունից ա, ասում ա. «Հը, [redacted],[redacted]»:

Ալիսա, վ ստարանե չուտես:

Հացիս իկրա էլի քսիր
Նաև լցրու էլիքսիր:

Մի լայվ մտնող
Դանդաղ էր խոսում
Որ երկու իքսով
Իրեն հարմար լսեն:

*Բա որ ասում էի նեղ ա: (Գարսևան, «Ոսկե ցլիկ»)*

Հարապետ

Ուտում էինք կալբասկով
Սոուսները տաբասկո:
Սոուսները տաբասկո
Ուտում էինք վազքով:

«Նալչիկն ընկավ»
Կարդացի Պյատիգորսկում
Հանրային գրադարանի
Թվայնացված արխիվի
«Հայկական լեգիոն» թերթում:
Հիշեցի տարիներ առաջվա

Մադինայի ռուսերեն պատմածը.
«Մեր գյուղում, սելո Ռուսսկոե,
Մեծ ծառեր կային ճամփեզրին
Որոնց վրա գերմանացիները
Բառեր էին գրել
Ու նկարել սվաստիկա:
Այդ սիմվոլները հետագայում
Աճել էին ծառերի հետ»,
Ու հիմա՝ երևի բարձրացել
Ծածկվել, պախկվել են
Լարերի ու մալուխների ետևում,
Թվային ֆաշիզմի դարում:

«Էս օրիգամի ա՞»,- ասեց մի երեխա ցույց տալով ճմրթած թուղթը: «Չէ, զիբիլ»,- պատասխանեց մյուսը և շարունակեց մտածել դիրքի վրա:

Միզեղաբլ վիճակ ա

Մայրամուտին, հատուկ գործողության ընթացքում, անողը մի պահ նայում ա արևին, դադար ա տալիս ու ասում. «Ա յա լիժու, վսյո լիժու, ի նա սոլնիշկո գլիժու: Միշտ էս եմ ուզեցել երգել էս անելուց, չի համընկել»:

Եղեք առինքնող
Կյանքում հեղհեղուկ
Պարկեշտ հաց կերեք
Խմեք շատ հեղուկ:

Կարդացինք Դըլըզ, Ֆուկո ու Լական
Բայց մեկ ա, չունեցանք կյանքի տեսլական:

Մի ժիրայր գիտեի
Նրան ժիղա էր ասում մի եվրոպուհի:
Եվ մի Գևորգի՝ ժեվողք դարձած:

Ամեն անգամ, մեր ամենազգայուն թեմայի մասին ֆիլմ նկարողները, ոնց որ էդ մարդկանց ևս մի անգամ սպանեն:

Ֆլեշմոբներ սիրո ոլորտներից

«Վատ օրերից մեկը» ֆիլմը վերանվանեցինք՝ «Յոթ օրերից մեկը»:

«Բարադոյ վես զարոս
Նաշ Ղազարյան Աղարոս»:
Ղազարոս Աղայանի մասին ռուսերեն ոտանավորների մրցաշարում երկրորդ տեղը գրաված բանաստեղծություն է:
- Ձերն է՞
- Ոչ, բայց ուրիշինն էլ չէ:

«Պարզ բան էի ուզում ասեմ, ստացվեց եքքա կինոգրաֆիա»,- ասեց Կայծը Տելեգրամով:

Մենք, որ խառնել ենք
Տոնականն ու պաշտոնականը:

*Ճշմարտությունը որպես արժեք ընդունելը թույլ է տալիս ունենալ սուտը որպես պրակտիկ գործողություն: (Ժաննա Անդրեասյան)*

«Մենք այդ միջոցները կվերանպատակաուղղենք»,- ասաց պաշտոնյան՝ միջին կալիբրի մի կոլիբրի:

Մառազմավարություն

- Ցանկանում եմ մի ձմեռային արևոտ օր մասնակցել արևապարի:
- Դա ո՞րն է:
- «Սանդանսը», էլի:

Նստած էին տխուր
Նստած էին պարապ
Երկու բելոռուս
Եվ մի բեսարաբ:

Հետոյից առաջ

Ունեի մի ծանոթ լեթրիստ
Ցավոք դարձավ բելետրիստ:

Մի ընկեր ունեի ժուռնալիստ
Նրան չէին սիրում կազմակերպիչները
Քանզի պարտաճանաչ գնում էր
Քովիդյան ասուլիսներին
Միշտ հարց էր տալիս
Ու իր պատճառով, ստիպված
Երկրորդ կամերա էին դնում:

Պատկերի հետազոտությունը որպես ռեֆորմանս:
Սիրո կոնտրիբուցիան:

«Ավանդական հացկերույթների սիրահար եմ, ընդհանրապես ինձ համար մեծ արժեք է լինել ընտանիքի հայ»,- ասեց մի դզված մարդ:

«Անփառունակ ուղի» սգո սրահ

Տիգրան Մեծ
Միհրան Տեց

Մատրոս կինը

Ապագայում չնկարվելիք ֆիլմերից մեկում
Այսպիսի կադրեր հավանաբար չեն լինի:

Կարդանք ու լսենք
Դիտենք, սղագրենք
Բոլորով միասին
Անխնա կրթվենք:

Չգիտեմ՝
Էսօր կամ վաղը
Ում մաղը պակաս կլինի
Ում աղը:

Թաց հասարակության հիմնադրամներ

Ամուսինդ տիկին
Խմբագրում է Վիկին:

«Օբսկուրանտ»
Քրեատիվ ամսագիր

Երիտասարդ օբսկուրանտիստների համաժողովի ֆասիլիտատոր՝
Մառազմիկ:

Դեղատանն էր աշխատում Անդոն
Դեղ էր վաճառում ու գանդոն:

«Կիտայեշի Տականոն մտածում էի չինացի ա, հետո հիշեցի որ կիտայեց չի, յապոնեց ա»,- ծիծաղելով ասեց մի կինո սիրող կին:

«Պարտիայի նպատակը ո՞րն ա»,- հարցրեցինք:
«Մատ անելը»,- պատասխանեցին:
«Ոչ, պարտիայի նպատակը կոմունիզմը ամբողջ մոլորակում կամ գոնե մեկ առանձին մայրցամաքիի վրա հաստատելն է»,- ասեցինք ու վերջացրեցինք:

Հաշվիս մի փոքր գումար է առկա
Այն փոխանցել էին համակարգով ArCa:

Պահպանակ առնելիս էլ
Միշտ ասում են առողջություն:

*Ֆիլտր մեժդու սամադեյտելնսծյու ի իսսկուստվըմ վսեգդա աձին՝ պանիմանիե զադաչի, կատորույու տի ստավիշ: (Կիրիլ Սվետլյակով)*

Երկիմաստ երկտողեր

Ֆիլմ կնոջ կյանքի մասին, չափերները ըստ քաշի՝
«3 կգ», «15 կգ», «29 կգ», «50 կգ», «65 կգ»:

Հայտնի պարտիաներ կան, սիրուն ժերտվաներով, տասնիններորդ դարի, քսաներորդի դարասկզբի, որտեղ հաղթողը անուն ունի իսկ պարտվողը գրվում է `«amateur»: Պարտվողները չեն էլ կարա ապացուցեն որ հենց իրանք են կրվողը ու հենց իրանց անունը մնաց: Կամ էլ ընդհանրապես չեն իմանում, որ հենց իրանց պարտիան մնաց դարերում:

Մեր սիրած ֆրազերից՝
«Empty Recycle bin»:

Հիշողության մեջ
Քաղաքում ուրիշ մարդ չկար
Բացի իրենից:
Քո հիշողության մեջ
Քաղաքում ուրիշ հիշողություն չկա:

- Լիմոն խի՞ չես առնում:
- Մոռացա: Ոչինչ, սալաթը քացախով կանենք:
- Չա՞յն էլ քացախով խմենք:

- Ո՞վ է այս աղջիկը:
- Գագոյի երազանքն ա:
- Բա է՞ն տղեն:
- Գագոյի երազանքը կատարողը:

Աբսուրդ Գագո, ռեժիսոր:
Թատրոն ունի, անունը՝ «Աբսուրդի թատրոն»:

Ճաշակին ընկերք չկա

Արի տանգո պարենք
Արի տանգով պարենք
Չկրակես հանկարծ
Որ բուենոս չայրես:

Լվացավ անդամը՝ Ժան-Կլոդ Կարիերը:

Գնեցի պեչենի՝ տվեցի չեչենի:
Հրավիրեց ինձ տանգի՝ մի դաղստանցի:
«Չերգես»՝ սպառնաց մի չերքեզ:

«Ջալեբի Պրասադ, Ջալեբի Պրասադ»,
Իրենց շանն էին փնտրում
«Շիրակ»-ի մոտ
Երկու հնդիկ երեխա:
Հնդիկներ շատ կան այստեղ
Բայց երեխաներ չկան հնդիկ:

«Ես այն մարդկանցից եմ, որ հոգով սրտով պատկանում է Յութուբին»,- ասեց մի աղջիկ վլոգեր Հ1-ով:

Ակտուալ արհեստ

Աշուղ հավաստի

Մի սուրճի բաժակ սուրճ բերեք

Պապիի բլոկնոտն էի թերթում
Հեռախոսի համարները վեցանիշ էին:

Մեր կյանքի կեղծ փայատերերը:

«Էդ իլը ինչ ա, դու սա կեր»,
Ասաց ինձ մի բուսակեր:

«Ասեք թող չմորթի»,
Գոռացին մի կարմրամորթի:

Պոմիդոր Վարունգովի «Սալաթ» վեպը

Եմենյան երաժիշտները

Խմեցինք օղի,
Կենացը՝ կատարողի:

Հեղինակ-սատարող

Կատարեց մի հեղինակի
Մի հեղինակ-կատարող:

Գետակների վրա մի արեք կատակ
Կհայտնվեք քանզի դուք գետակների տակ:
Ոտանավորը կոչվում է՝ «Կամուրջ»:

Էս լցրածս կեր ու մի մլավիր
Լսում եմ ես համմերկլավիր:
Ոտանավորը կոչվում է՝ «Վիսկըսը, կատուն և մուզիկանտը»:

Փորձագետները ու աներձագները

Մի ռեժիսոր կա հայ
Նա իր պահվածքով այնպես արեց,
Որ իր անձը գերագնահատվեց,
Իսկ ֆիլմերը թերագնահատվեցին:

Շոտլանդական պոնին քուռակ էր ունեցել, անունը դրել էին Ավետիս:

Մի հարևան ունեինք
Երրորդ հարկում ապրող
Ոչ իր տանը, մենակ:
Նա շիշ էր հավաքում ու հանձնում:
Անընդհատ բակում կռիվներ էր գցում
Հետո փորձում չմասնակցել ու կողքից նայել:
Երբ լվանում էր ու կախում էր չորանալու շալվարը
Չորս կողմից լիքը շպիլկաներ էր կպցնում
Քանզի արդուկ չուներ:
Կամ էլ միակ շալվարն էր, վախենում էր, որ քամին կտանի:
Նրան տարան կորոնայով
Բայց ծանոթները
Դեռ մի քանի շաբաթ
Դռան դիմացը շշեր էին դնում:

«Կիպրոսենի, սոսի ու կիպարիս էինք տնկել, մեծ քանակությամբ, որոնցից վեց հարյուրը գողացել են կամ արմատախիլ են արել, պատճառել են յոթհարյուր հազար դրամի վնաս»,- ասեց մի տղամարդ, գերատեսուչ, Հ1-ով: «Սա սեզոնային դենդրովանդալիզմ է, մի արեք այդպես, գողացված ծառերը տնկվելուց երեք օր հետո չորանում են»,- ավելացրեց նա տխուր:

Քուրդ Քոբեյնը

Մեզ
Համայնային ուղեղի են բերում,
Որից կբխեցնեն
Կոլեկտիվ խիղճը,
Որը ոչ մեկինն է,
Այսինքն՝ բոլորինը,
Որը չկա կամ կա
Ի՞նչ տարբերություն:

Նելլի Շագրենըվնա
Մաշկաբան

Բնության բնույթը

«Ու շռնդալից շինվում է հիմի» մեջբերում ա Չարենց, աղջիկը, կատարման թեժ պահին:

Բանաստեղծույթը որպես ռեֆրեն

Վերընթերցելով դասական կլասիկան

«Իկար» ավիաուղիներ

«Սգո սրահ» ինքնաթիռում: Թռիչքի ընթացքում հաջող են անում:

[redacted]

Աքաղաղապետարան

Ափլոդ ա տվարիծ

Հանրային զուգարանում
ՀԴՄ տվեցին:
Ամոթից չվերցրի:

Նռան սոկը տեսանք
Խաշի մեջ:

Փառքով շիկ:

«Խեռըս թե կկրեմ»,- հավանաբար մտածեց
Հերթական հավակնորդը
Կարլսենի հետ մատչից առաջ:

*Մի նի ծիրյալի աուդիտորյու, տակ կակ նաշ զրիծել վզրասլել ս նամի:*
*(Պավել Վոլյա)*

Հագիս կոշիկ ու պալտո
Գնում էի Պալո Ալտո:

Հագել էին դեղին
Հագել էին դեղին:

«Շնորհավորում եմ, քո տարիքից նորից արմատ ա հելնում,Գմփո, մյուսը քառինևնում կլինի»,- ասեց Բենոն ու էլի թռավ:

Մեր սռոկ գոռդսծին անցել ա:

Մենք, որ առաջին պլանում եղել ենք՝ բայց էլի նիֆոկուս:

Մենք որ առանց պատճառի մտնում էինք բանկ,
Ջուր խմում ու դուրս գալիս,
Քանզի սիրում էինք բանկից ջուր խմել:
Տանն էլ էինք խմում, կես լիտրանոցով:

Մենք, որ սիրում էինք նստել թղթերին մոտ
Բայց այդպես էլ չդարձանք թղթակից:

Արշավիր Աշուն՝ նախահարձակ արվեստագետ-երգասան:

Ինչ եփել ցայսօր:

Անհատնում անհատներ

Յիշում եմ սովետական վարպետ Դորոշկեվիչին
Ով 1.e4 c5 2. c4 d6 3.Ձe2-ից հետո եկավ 3...f5
Ու դուրս եկավ հարևան տախտակի դիմացից:
Նա հաստ ակնոցներով էր ու հարբած,
Կրասնադարում, իննսունութին:

Սիրո մեր, սիրո մեր
Ախ մեր սիրո Մորթիմեր
Սիրեցինք այս կյանքում
Մենք անհատներ, ոչ թիմեր:

- Ես պիյես եմ գրում:
- Ինչու՞ հենց պիյես:
- Որովհետև յես եմ գրում:

Ես ձեր քիմքին էի նայում
Իսկ դուք Քիմ Քի Դուք:

Քյաչալը գնաց տանձի
Վախեցավ գլուխը խանձի
Թաքուն մտավ տեղերը
Կատուն կերավ կլիրը:
Սա պետք ա արտասանի կինը, ամեն տողի հետ մոտենալով, վերջում մտնելով աղյալի տակ ու՝ համփ:

Ֆորեսթ Համփ

Շավարշակ

Սիրո համքարը

Հույսի ախտ
Այ քեզ բախտ:

Վարշավայի վարսավիրները՝ վարշավիրները:

«Տեսնես ռեինկարնացիայից հետո կհանդիպե՞նք»,- հարցրի: «Արա, տո սկի ստե չենք հանդիպում, երբ զանգում եմ ճամփեքին ես»,- ասեց Կայծը հեռախոսով:

Մենք որ ուզում ենք ճղել
Էլեկտրոնային գրքեր:

*Մինչև ինքնասաստման մեթոդիկան չներդրվի, մենք արդյունքի չենք հասնի: (Հաղորդման հյուր)*

Միգրասկոպ՝ միգրացիան դիտելու սարք:

«Տկլիր»՝ մերկության մասին ամսագիր:

«Սալիրն ի՞նչքան է»,- հարցրի երկու կնոջ
Տարիներ առաջ, շշաձև «է»-ով:
«Չեմ սիրում էս ինտիլիգենտներին»,
Լսեցի երեք մետրից, երբ քայլում էի
Ձեռքիս երկու կիլո սալիր:

- Սկզբից կատու, հետո՞ շուն:
- Միգուցե: Չնայած անտառը կրկին ներկել է նախշուն:
- Բայց կոնկրետ չի ասվում չէ՞, թե որ տառը:
- Այն տառը:
- Մատով ցույց մի տվեք:

Մենք բոլորս հյուր ենք կայքում:

Իմ սպիրտը լեռներում է:

Իմ քվիր մարդը

Վելլոսպիրտ:
Ընթացքում խմում են, պարտադիր, ու շարունակում են քշելը:

«Սասի քարտ ունե՞ս»,- ասեց մի կին ու ժպտաց: Ոչ ինձ:

Քյութ փրոսթիթյութ

Պատմությունը որպես ռեֆրեն: Ռեպրեզենտատիվ արվեստի էսթետիկ էությը:

Տարածությը որպես էմբլեմ:

Պաշտպանվենք գանդոններից

Գիտակառք
Գիտության մասին հընթացս զրույց, կառքում

«Դիլիժանս»՝ Դիլիջան տանող մեքենա:

Մենք, որ մենակ էինք մնացել
Ուրիշի հիշողության մեջ:

«Դուրս եկա, դիմակով եմ, գելը գրպանումս է»,- ասեց մի կին, հեռախոսով, ծածուկ:

*Դրանք ազգային արժեքների թվային կոպյաներն են: (Նախարար)*

- Էս անկախ արվեստագետների պառլամենտում խոսալուն դու՞ խի չես գնացել, անկախ չե՞ս:
- Արվեստագետ չեմ:

Սիրում էր Բրեսսոն
Իմ ընկեր Նեսոն:

Պիյես-պոյեմ

«Ուպադնիչեսկիե ստիխի ձելայեծե, ի կինո ու կատոռըվը դվեսծի պրասմոտրըվ»,- ասեց ինձ վաթսափով մի բորոդայով պրոդյուսեր:

Որտե՞ղ են մեր տնային շնիկները:

Կոլումբոսի գերեզմանի մոտ չերգեցինք՝
«Շիրիմիդ լույս, Քրիստափոր»:

Գազելում Գեորգեվսկի լենտա էր,
Կողքը երկու հատ սրբապատկեր,
Հետո Փաշինյանի կոմիքսատիպ նկարը:

«Պետք է հեռու մնալ խրոնիկ հիվանդներից ու ծերերից»,- ասեց մի տարիքով կին կողքը նստած հարևանուհուն ու հազաց մի քանի անգամ:

«Ժողովուրդը սկսեց ատամները լվանալ, մասկա որ դրեցին, սկսեցին իրենց բերանի հոտն առնել»,- ասեց ԴիՔեյը:

«Ադամ ջան, դրայվերի համար եմ զանգել»,
Ասաց մի տղա արագ քայլելով:

«Արա, պիեսի նման խոսացեք որ էս մարդը «ասաց-մասաց» չգրի, ու որ կարդացողն էլ չտանջվի»,- հանդիմանեցինք նրանց, ում էդ պահին մենակ մենք էինք տեսնում:

Ով հավեսով կատարում էր անհավես:

Գինին ձեռքիս իջա ցած
Վեր բարձրացա գինովցած:

Առաջներում
Բաղնիքներում քաղաքային
Շատ էին տեսնում
Լիր
Արքային:

Կատարեցի մի տարեցի:

Կարդում էինք Դըլոզ
Լական, Լիոտար
Լի էինք հույսերով,
Բայց իրար օտար:

Երազ իմ երկիր վայրենի

Ես իմ պապերի արժեքները կրողը չդարձա,
Ես իմ պապերի արժեքների կրվողը դարձա:

Ռոզա - Լյուքսեմբուրգ
Չեռախոսահամարի տեր

Մարտակերտից օգոստոսի վերջին ուղարկել էին ուրց, հոնի մուրաբա, փակած պամիդոր, դաղձ չորացրած, պնդուկ, մեղր՝ «Բոնդյուել»-ի բանկի մեջ, նաև թարմ դափնետերև: Ամեն ինչը փաթաթված էր թերթերով, զինվորական, թերթերից ուրցի(խոռնի) հոտ էր գալիս:

*Մնե ինտերեսեն ավտըռ, կատոռիյ պաբեժդաետ նիպրավիլնո. Բոլեե տավո, տոլկը տակոյ ի ինտերեսեն: (Մաքսիմ Կուրըչկին)*

«Օձի լեզու ունես»,- ասեց աղջիկը հատուկ գործողության ժամանակ:

Էդպես էլ չիմացանք
Մեր ռուսերենի դասատուների
Ազգանունները:

Երկու օր գազ չկար
Ուշ ժամի տվեցին
Ժողովուրդը լողանում էր
Գիշերով, տկլոր:

«Հասա էն Հայկի Բելի արձանի մոտ, Հայկի Բելինը որն ա, արդեն խառնել եմ, արա: Մի րոպե՝ էն վերևինը Բելն էր, ներքևինը Հայկն ա չէ՞, Հայկն ու Բելը նույն մարդը չեն, տարբեր մարդիկ են»,- ասեց Կայծը լավ խմած ու խնդաց, հետո շարունակեց. «Զոգում ես չէ, նետովի մոտ հասա, ոչ թե էն մյուսի, բժշկի, սենց ասեմ»:

Կայծի գիշերային տելեգրամյան աուդիոները արագ սեյվ էի անում ուրիշ պապկի մեջ, քանի որ առավոտները զարթնելու ու ջնջելու էր սաղ: Էդպես եղել էր մի քանի անգամ, տենց եղավ էս անգամ էլ: «Արա վայթեմ փլեյ ես տվել, բայց չես լսել, լավ ա, ջնջեցի արդեն»,- ասեց նա առավոտյան աուդիոյում:

- Հերիք չի՞ շնչիս նստես:
- Մի քիչ էլ էլի, ու կմտցնես:

Պամպերսներ տեսանք
Կապերսների մեջ:

*Իշչիծե վ Սիծի, Սեռ: (Պյոս վ սապագախ)*

Լրագրողները լարված ձանձրանում էին ՍԴ-ի դիմացը:
Կամերաները շարված էին իրար կողքի:
«Սոնի», «Քենըն», «Փանասոնիք», «Էլջի»՝
Քոչարի պարողների նման:

«Մեծ-ա-նալ ա պետք, մեծանալ»,- վրդովված ասաց հարևանը:

- Ոնց որ ցիրկի պուտանկա ըլնեն:
- Երևում ա, որ տասնհինգ տարի չես եղել ստեղ, հիմա ցիրկի մոտ էլ չեն կանգնում: Ավելին ասեմ՝ ցիրկն էլ չկա:

Դիսպուտանկա՝ ամեն մի դիսպուտի մասնակցող:

Զումում, խմբային դասի ժամանակ
Ամսի քսանյոթին
Տարբեր տներից լսվում էր
Արցախի նախագահի մարտակոչը:

Լեսբի տեսչություն

Բաղդադում էինք բաղդատում
Բաղդատում էինք Բաղդադում:

Կատարում էնք Կատարում
Կատարում էինք կատարում:

*Ներեղություն, ես ավարտվեմ:*
*(Միջակ քաղաքական գործիչը՝ իրեն ընդհատող լրագրողին)*

Քոլդ Վոռ

Անալի պանիր

Դրամաթուրք՝ թուրք դրամատուրգ:

Մանր անձրև էր սկսել, մեքենա չկար,
Այլուրոտ մի կին դուրս վազեց փռից,
Անցավ փողոցը:
Թաց ասֆալտին
Սպիտակ ոտնահետքեր:

Երկու կարմիր, մի դեղին
Շերտավոր նախշերով աղյալ,
Որ իննսունըերկուսին
Դինայենք բերել էին Մարտակերտից,
Երկուհազարքսանին
Տվեցինք հաղրութեցի ընտանիքի:

Ես «Սիրով զբաղվենք սիրով» ու «Գանդոնները թանկացրել են գանդոնները» վերնագրերի հեղինակն եմ:

Կատրաստվող - կատարել պատրաստվող
Կատրաստող - կատարող պատրաստող

«Մեր ազգը քաղաքական ազգ ա, քանի որ լավն ու վատը իրա մոտ կողմ ու դեմի հետ ա ասոցացվում»,- ասեց անծանոթ կանգառում պատահած մի ծանոթ, ում վաղուց չէի տեսել ու հավանաբար շատ երկար չէի տեսնելու:

Ճարտարապետ Դավոն
Դեղձը քաղել էր, որ արաղ քաշեր,
Լցրել էր բոչկեն ու գնացել էր պատերազմ:
Դեկտեմբերին, իր մոտ եկողների հետ
Մեկ-երկու լիտր դեղձի քացախ էր դնում:

Ուտում էինք «Բառնի»
Ծխում էինք «Գառնի»
Չիչքոկի ֆիլմերից
Չէինք տեսել «Մառնի»-ն:
Բանաստեղծությունը կոչվում է՝ «Սաղ սուտ է»:

Մենք բոլորս դուրս ենք եկել «Շինելուց»:

Դոկումենտալ ֆիլմ Աշոտ Ոսկանյանի մասին, վերնագիրը՝ «Հայդեգերումներ»:

Արա, էս ծծողները ոնց են մինետ անում:

«Բարակ Ախթամար, հաց, Օրբիթ», գրված էր մի տողանի տետրից պոկած թղթի վրա, չորրորդ դասարանցու ձեռագրով: «Կիլոն չորսհարյուր, երեք կիլոն հազար», գրված էր մանդարինների վրա, քիչ հեռու:

*Գնում էին բոզի*
*Տղերքը բոզի:*
*(Վարդան Ղուկասյան, պերեֆրազ)*

«Սեկատորները կփրկեն աշխարհը»,- ասում էր տատս:

Յանճարեղ հանճարներ

Յետ են գալիս կամաց-կամաց
Սաքուլիկն ու Սենդվիչ Տոման:
Մենք լողացանք,
Բայց նույն շորերը հագանք:

Չմասնակցեցինք ընտրություններին
Գծերի ու սրիկաների միջև:

«Մուխսի ա, ընտիր ա, քաղցր»,- ասաց Վովան:
Ու մենք ընտիր, քաղցր մուխսի խնձորներ գնեցինք:

«Ապեր, մի հատ սև Արարատ եմ վերցում»,
Ասեց ամբողջովին սև հագած մի տղա
Կասսայի մոտ
Ու առանց պատասխան լսելու
Արագ առաջ անցավ:

«Արա, հետս ո՞նց էս խոսում»,- գոռաց մեկը հեռախոսի մեջ,
անջատեց ու ներվային անցավ փողոցը:

«Յազարը հազար ա՞»,- զարմացած հարցրեց մի կին:
«Ի՞նչը»,- հարցրեց բանջարեղենի բաժնի աշխատողը:
«Մառոլը»,- կրկնեց կինը:
«Յազար ա»,- հաստատեց վաճառողուհին:

Քունդել
Յիմնահատակ քանդել

Մուլտիսցենար՝ փոքր սցենար:

Չկերանք երշիկ արական
Զատո կերանք բավարական:

Սև հեծյալին «Սիյավուշ» են ասում պարսիկները:

- Ցուրտ ա, թե՞ ինձ ա թվում:
- Քեզ թվում ա, թե ցուրտ ա:

# ՉՖԻԼՏՐԱԾ
# ԴԵՂԻՆ

Լավ չի բիձը, Բուբան, Կիկաբիձը
Շարվել են սահմանին մեր
Տըվարեցները
Որ լինի միռ:
Լարիսա՝ Իվանովա խաչու:

«Երեխեն րիսավատ ա անում»,- ասեց բարեկամը:
«Բրնձում ա հավանաբար»,- մտածեց մեջինս:

«Ֆրանսիական կինոյի դերասանները ֆրանսիական կինոյում» հոդվածս վերջապես լույս է տեսել նաև ֆրանսերեն:

Վաստակավեդ
վաստակավոր արևելագետ

Չարևանի կինը կորոնավիրուսը թեթև տարավ: Միայն հոտառությունն էր կորել ու համի զգացողությունը: Այդ երկու շաբաթվա նրանց կերած ճաշերը շատ աղի էին, բայց ամուսինը ձայն չէր հանում, որ չնեղացնի կնոջը:

«Մանկության անուշ հոտեր ունե՞ք»,
Չարցրեց մի տղա
Նախաբանակային տարիքի
«Ծիրան» սուպերմարկետում:
«Արա, էս խի էս էդ հեռախոսը չորրորդ անգամ դու վերցըմ,
Չնչի ա հա ձեռդ, արա, հըը տու մորըդ»,
Ասեց ժամանակից շուտ ծերացած
Երեսունչորսամյա մի տղամարդ
Ով կարող էր հանգիստ քառասուներեքի տակ էլ գնալ:

Առաջ ունեինք սպարապետ,
Հիմա՝ քանդված պարապետ:

- Գիտեմ, մեծ չի:
- Հանգիստ եղի, փոքր բաներով մարդ պիտի ուրախանա, տարիների հետ դրան եմ եկել:
- Իսկ համը ո՞նց ա:
- Չգիտեմ, կարոնայից հետո հըը համ չեմ զգում:

Դրականն էն էր
Որ բացասական էր:

Քաղաքական գործիչները՝
Ցածր սոցիալական պատասխանատվությամբ տղամարդիկ:

Ուտում էինք Բառնի
Ծխում էինք Գառնի
Մեր ներկան դարձել է
Անցյալ ապառնի:

«Գամառ ջոբա»,
Տասնյոթի ընտրությունների նախօրեին,
Ախթալայում,
Նախընտրական հանդիպման ընթացքում
Կարեն Կարապետյանին ասեց
Իր տարիքի մի տղամարդ:
«Խի՞ էս վրացերեն խոսում»,
Հարցրեց վարչապետը,
«Թիֆլիս եմ ծառայե»,
Ասաց տղամարդը:

«Ձեր անունը ինչ է»,- հարցրեց Օսկանյանը
2012-ի խորհրդարանական քարոզարշավին,
«Բակունց»,- պատասխանեց խոշոր տղամարդը,
Օղակաձևի բեսեդկեքից մեկում:
«Պարոն Բակունց, ձեր անունն էլ կասե՞ք»,
Պնդեց Օսկանյանը,
«Բակունց, Եղիազարյան Բակունց»,
Ջղայնացավ տղամարդը:

Վիսկի առանք,
Բաժակ էլ՝ ոչ ադնառազըվի:
Ձմեռ էր, սառույց պոկեցինք
Գցեցինք մեջը, խմեցինք:
Մի քանի օրից
Կանաչ «Մարտինի» առանք՝
Ագենստվայի շենքի տակի սուպերմարկետից,
Կեսը խմեցինք ցրտին՝
Կարմիր, ադնառազըվի բաժակներով,
Հետո պադզեմկով անցանք:
«Էս ինչ խեռիս շինանրարություն են սկսում ստե»,
Ասեց Կայծը, 2011-ի դեկտեմբերի վերջին:

Մի պալիտիկ էլ մեռավ
Մեր լավը չուզող:
Սկարբիմ, ռադուեմսյա:

Վահրամի մեղրը մնաց հենց սահմանին, Խնձորեսկում:

Պատվանդամ՝ անդամի պատվանդան:

- Ամեն անգամ էն աղջկան հիշում, վախենում եմ:
- Ո՞ր:
- Էն որ Դելոնը ու Վենտուրան սկաֆանդրով իջացնում են: Մինչև հիմա ընդեղ ա, ջրի տակ: Վախենալու ա:
- Վենտուրան լավն էր:
- Բոլորն էլ լավն էին:
- Ի՞նչ ասեց, երբ որ Վենտուրայի հետ կանգնած էին տախտակամածին:
- Քաղաքում արևածագը չես տեսնում, բարձրահարկերը շատ են:
- Լապտերները լուսավորում են, իսկ մի տեղ քեզ դարանակալել է մահը:
- Վենտուրան էդ մի քանի րոպեն երջանիկ էր:
- Յիշում է՞ս դեմքը:
- Յա:
- Յիշում էս, որ Դելոնը էն նոր սարքվող էստակադայի տակով քայլում ա, բետոնի արանքներով:
- Յա, ու էն վերևի փոքր լույսը:
- Էդքան էր մնացել ապրելու:
- Յետո ցուցահանդեսի տարածքով ա անցնում, արդեն քանդված:
- Էն վախտ չապրեց, հիմա էլ՝ բան չմնաց:

- Դուք սեքսի մեջ ազատ եք՞:
- Յա, ամեն ինչ էլ նայում եմ:

Սանասար, Բաղդասար
Յաշիվը փակենք հավասար:

ՊԲ-ն BP-ի դեմ կռիվը տեսանք:
Ուժերն անհավասար էին:

«Լարովի մուկ ունեմ, վտանգավոր չի, մեխանիկական ա,
Թիթիզ գրիչներ կան տաս գույնանի՝ սենց
Բրելոկներ, դիմակներ՝ 60 դրամից
Կալենդար՝ 300 դրամ,
5 հատը 200 դրամով հասարակ գրիչ,
«Ֆլամենկո» գրիչներ՝ վարդագույն,
Էս տարվա կալենդար կարամ նվիրեմ,
2020-ի, մի քանի օր դեռ մնացել ա»,
Ասեց սպարտիվկով, քրքրված կուրտկով
Ոչ ստանդարտ դիմակով
Մաշված մի տղամարդ՝
Դեղին, ծանր տոպրակը ձեռքին,
Ում չէինք տեսել առաջ
Ու չտեսանք հետո:

«Աղջիկ ջան, ինձ հետևից տու»,
Խնդրեց վաճառողուհուն մի կին,
«Ծիրան» սուպերմարկետում՝
Ցույց տալով մածունների դարակի խորքը:

Վարկադավ

Մազգասեր
Մազգաքուն

Ազգասեր մազգաքունները և
Մազգասեր ազգաքունները:

Անցած տարի, Մեյմանդարում
Անցած դարի Մեյմանդարում:

«Ես չեմ հասկանում
Եթե մարդիկ կարան
Բարիք ստեղծեն,
Ինչի էն չարիք ստեղծում»,
Ասեց Գևորը:
«Չկա չարիք առանց բարիք»,
Պատասխանեց Յովոն ու խմեց
Յերթական բաժակը
Յերթական տանը:

Առաջին զուգընկերը՝ անդրալիրը:

«Վիգմոր» կլինիկում, Պուշկինի վրա
Սպիտակ մարմնով,
Սև էկրան-դեմքով,
Կապույտ աչքերով ռոբոտը
Խոսում էր երեխաների հետ, զբաղեցնում
Ցույց էր տալիս հատվածներ մուլտերից:
Երբ մի պահ հերթը վերջացավ
Ու մենակ լռված էր
Մոտեցանք, հարցրինք.
«Ի՞նչ ա լինելու մեր վերջը»:
Առանց մտածելու պատասխանեց.
«Չիգիտեմ»:

Դիմացի սարում
Դիմացի սարում
Դիմացի, քեզ պիտի
Կատարեմ սարում:

Տարփաշիշ

«Նա հայի հոմանիշներից մեկն էր»,
Ասեց Հ1-ի հաղորդավարը:

Չմոնտաժվող իրականության մոնտաժողները:

Մեկ, երկու, երեք, չորս
Դովժենկո ու Շչորս:

Գեղեցկություն, գանձ ու գաղջ:

Չմոռանանք Երվանդ Զախարյաններին:

Սոուսները տաբասկո
Ուտում էինք վազքով:

«Սաքո, հիշում է՞ս էրեգ Սաքոն ինչ ասեց»,- հարցրեց միջին տարիքի մի դպրոցական մյուսին:

Էն ինչը չսպանեց՝
Ուժեղ էլ չդարձրեց:

Էս վերջերս
Կշեռքը մի քանի անգամ
Ցույց տվեց 60.3:
«Դու է՞լ, Կշեռքոս»,
Մտածեցի:

Անձեր և տանձեր

Սիրեցինք մենք իրար
Սիրով բազմիմաստ,
Եվ սա լոկ բառեր չեն
Այլ հաստատված փաստ:

Էլեկտրիկ Արկաձին տեսանք,
Գորիսեցի, բարևեցինք ձեռքով:
Նա ամեն անգամ խոսքը սկսում էր
«Իմանում ե՞ս» ֆրազով, էս անգամ էլ.
«Իմանում ե՞ս, ջահելներից ոչ մեկ չի ուզում
տրանսֆորմատոր փաթաթել սովորի եռաֆազ»,
Ասեց Արկաձը:
«Էդ մասնագիտությունը կորում ա»,- ավելացրեց:
Նա տարիներով դա էր արել
ՀՀ-ում, Սովետում ու Սովետից դուրս:
Եվ մի անգամ
Լիբիայում
Գնդապետին
Անձամբ գնդապետին
Անձամբ բարևել էր
Ձեռքով:

Նեթֆլիր

Նրան չէին սիրում կանայք
Եվ տղամարդիկ:
Նրան չէին սիրում
Ընդհանրապես՝ մարդիկ:

Սրահի ներսում
Անում էին մերսում:

Մարտակերտից զանգեցին, հարցրին.
«Վարդան, շիպովնիկը միրգ ա՞»:
«Մասուրն ա, ինչքան գիտեմ»,- կասկածելով պատասխանեցի:
«Լավ, սրոչնի էր, միրատվորեցի հետ ենք խմում, հետո կզանգեմ»,
Ասեցին ու անջատեցին:

«Իմ գրվածքները ավելի շատ անպատասխան հարցեր են, որոնց
պատասխանները գոնե ես չունեմ»,- մտածեց մի բանաստեղծ:

Բանին այսքան մոտ
Բանից շատ հեռու:

«Դեկտեմբերի 31-ին էլի երեք զինծառայողի մարմին գտնվեց»,
Ասեց «Սպուտնիկ Արմենիա»-ն:

Քարահունջի Նելսոնի թթի արաղից խմեցինք
Անցած տարվա քաշած,
Յիշեցի Մարտակերտցի բարեկամի պատմածը
Որ տասնվեցին թութը դառն էր սովորականից
Իրենց կողմերում:
Քելբաջարի մեղրից դեռ կա, տարվա սկզբին առած:
Նելսոնի այգիները անսպասելի մոտեցել են սահմանին,
Ու թութը մյուս տարվա՝ մի քիչ դառը կլինի:

«Մաղթում եմ որ էս տարի
Մենակ ուրախ բաներից տխրենք»,
Ասեց Գալստյանը:

Տերտեր չկար
Ցուրտ էր
Մահը շատ էր
Տերտերի դեֆիցիտ էր:

«Շատ արագ կադրերը փոխելը սխալ ա»,
Ասաց տղերքից մեկը,
Ով նկատի չուներ կլիպային մոնտաժը:

Միշայի ծնունդին
Մաման, ինչ մնում էր նոր տարուց,
Հավաքում տանում էր պապիենց տուն
Ու միշտ սեղան էինք նստում հունվարի վեցին՝
Քառորդ բդով, չորացած չամանով բաստուրմով,
Ու դեռ խմելը չսկսած՝
Արդեն կիսատ
«Կոլա»-ի, «Ֆանտա»-ի ու օղու շշերով:

Արուսի երազում
Լեդի Գագան
Եկել էր Շուշի:

Հունվարի առաջին զիբիլը թափելուց
Տեսա աղբի մեքենայի վարորդին ու իր նապարնիկին,
Մի քիչ զուսպ, բայց սրտանց, շնորհավորեցի անցած նոր տարին,
«Մերսի աղբերըս, քոնն էլ»,
Մի վարկյան լագով
Բայց սինխրոն
Պատասխանեցին նրանք:

Մի ՊՆ նախկին փոխնախարարի տեսա, արդեն տարիքով,
Նա ժամանակին աղմկոտ բացահայտումներ արեց,
Որոնք հետո անաղմուկ մոռացվեցին:
Նա կաղում էր, ու էդ պահին, մի ջահել տղայի օգնությամբ
Պսակ էր դնում մեքենայի բեռնախցիկը:

*Իֆ իթս նյու թու յու, իթս նյու: (Դեյվիդ Լինչ)*

Ամանորի այս երեկոյին, լռիր:

«Քունեմ Ֆեյսբուքի լավը»,- ասեց մի գեներալ, փոքր-ինչ այլ կերպ:

Ամռանը, ծիրան ճխլելու պատմությունների վիդեոների մեջ
Ռուսաստանում, յաշիկներից մեկի վրա, հայերենով գրված էր՝
«Հրաչ»:

- Շատ կլիր պտի ծծես, որ Էլթըն Ջոն դառնաս:
- Գիտեմ:

«Թեկուզ մեկին ատեցիր՝ ոչ մի բան չի աշխատի: Պետք ա անել մարդկանց համար՝ դրանում ա իմաստը: Ու բումերանգը կաշխատի»,- հազարերորդ անգամ Շերիշովի ասածը հիշեց ու ինձ հիշացրեց Կայծը:

Ամեն տարի մեյլ ա գալիս
«Կին» փառատոնից:
Բայց ես արդեն կին չեմ դեռ
Ու նոր ֆիլմ էլ չունեմ:

Ուսյալն ու անուսը

Ծարքայինը շարքում

Խոնավ վայրում գրեցինք
«Սա ու Նա» շարքը:

Մենք
Չասարակ մարդիկ ենք
Ովքեր լուրերը «Լուրեր»-ից են իմանում:

«Ձեր գրածը աղբ ա»,
Ինձ ասաց մի ղախպա:

Տվեցի հետ
Ոտի վրա
Ձեռի հետ:

«Արարած-73»:
Ապագայում երկրագունդը կբնակեցնեն տարբեր արարածներ,
համարակալված, որոնցից հայկական արմատներ կունենա մեկը:

- Ո՞րն է բանաստեղծի ֆունկցիան:
- Անընդհատ փորձել լեզվի կոհերենտությունը:

Թեյ բեր Լիմոնով, Էդուարդ ջան

Խորտիցյան Տիցիան՝ խմող նկարիչ:

Մենք սկսել ենք էլ չկարևորել անկարևորը:

Չերթական անգամ ընտրեցինք չընտրելը:

Ժամկետանց «Դուխով» լիմոնադ տեսանք, տանձի համով:

Մի ծմեռ պապ էր քայլում
Պահածոների գործարանի կողքով
Որի դիմացի բուդկեն վաճառվում էր
Վրան գրված էր համարը
093-ով, «Վիվասելի»
Որը ասում են
Նույնպես վաճառվում է:

«Պարացետամոլ պլյուս ցիտրամոն, եթե ճնշում ունես, ռիմանտադին, պինիցիլին, էժանով կբուժվես»,- ասեց վատառողջ տեսքով մի տղա:

«Մարդկանց մեջ սերմացնում են ու ֆլորան վերանում ա, ես էդ կասեմ Կարոնայի մասին»,- ասեց սև հագած ու ռուսերեն Յութուբ նայած նույն տղան:

«Մի կես ժամով տրամադրվի, էթանք էդ անենք, ընգեր»,- ասեց «Գազել»-ի վարորդը ու անջատեց հեռախոսը:
«Բայց եսիմ, քաղսովետը կաշխատի շաբաթ օրը, ումից կարա՞նք իմանանք»,- շարունակեց, նայելով ինձ,
Ու չսպասելով չեղած պատասխանին
Գլուխը կախեց ու նորից խորացավ հեռախոսի մեջ:
Կանեցից դեռ չէինք շարժվել
Նազելի կանայք «Գազել»-ի դժգոհում էին իրար մեջ,
Փեյջերի տեսքով ժամացույցի ֆայնըլ քաունթդաունը
Դեռ չէր պրծել, բայց ուր որ ա պետք ա շարժվեինք:

Յանճարեղ հանճարներ

Ուրախ ավարտով մերսում,
Թանձր խավարտով մերսում:

«Հույս, հավատ, մկրտություն»,- գրված էր փչած փուչիկի վրա, մեջտեղում խաչ էր նկարած, ու դրված էր տարբեր գույների նույնատիպ, չփչած փուչիկների վրա՝ որոնցից քիչ էր մնացել: «Կարդա Նժդեհ, փրկիր կյանքեր»,- գրված էր դրսում, մի մեքենայի վրա:

Հին հույներ, նոր հուներ:

Էս վերջերս զրադաշտին զրահադաշտ ասեցին:

Իրականությունը առերեսվեց մեզ հետ:

«Իրեք կիլոն հազարով կտամ»,- ասեց վաճառողը,
«Ինչքան տակը մնացել ա՝ տու»,- ասեցի,
«Ցավդ էլ տանեմ»,- ուրախացավ տղամարդը,
Ու սկսեց լցնել կարմրադեղին խնձորը,
Որի տակ՝ դպրոցականի տետրից պոկված թերթեր էին:
Վերջում, նրանցից մեկի վրա հասցրեցի կարդալ
«I lost my money, because I had hole in my pocket»՝
Նախադասությունը:

Մետրոյում տեսա
Գրածներիցս մեկի հերոսին:
Ուզում էի բարևել, հարցնել.
«Ոնց ես, վերևի ու ներքևի տողերը քեզ հո չե՞ն նեղում»:

- Ապեր, էս ինչքա՞ն ա,- հարցրի վախտին Վերնիսաժում:
- Ի՞նչը,-հարցրեց ի պատասխան:
- Էս,- ասեցի ու ցույց տվեցի նորից:
- Բայց էս ի՞նչ ա,- հարցրեց:
- Ծախողը դու էս,- ասացի ես ժպիտով:
- Առնողը դու էս, չգիտես ինչ էս առնում,- մուննաթ եկավ նա առանց ժպտալու:

«Ադվակատիս նկարը ուզեցա Ռոզային ուղարկեմ, դառավ իստորիա»,- լեղապատառ զանգեց մեր բարեկամուհին:
«Ո՞նց փոխեմ, ո՞նց ջնջեմ»,- շարունակեց նա պանիկայով, 097-ով համարից:
Չկարողացա պատասխանել, տվեցի իմացողին, ջնջեց:
Բարեկամուհին հանգստացավ ու շարունակեց ապրել
Իր հարազատ տարածքում,
Որի աջն ու ձախը
Նոյեմբերից ամսից
Արդեն իստորիա էին դարձել:
Յ.Գ. Ադվակատը քեֆի վախտ գինովցած էր, ձեռքը գցած բարեկամուհու ուսին:

Սեպարատ սիրո մենուղում

Անթրոպոմորֆ մի կատու
ինձ անվանեց ոռատու:

Առնանդամի քսուկ «Կլրեմ».
«Յէատըմըից Յեմը
Լավագույնն կրեմն է «Կլրեմ»-ը»:

առծակագիր

Գանդոնները թանկացրել են գանդոնները

Ճանապարհ դեպի ճամփան

«Վերջում մեզ մի լավ բան սպասվու՞մ ա
բացի մկանային մասաժից»,
Հարցրել էր Կայծին ծանոթ մեկը
«Մերսման սրահ»-ի աշխատակցուհուն:
«Այո, իհարկե»,- պատասխանել էին այնտեղից, հեռախոսով.
«Վերջում սպասվում է երջանիկ ավարտ»:
«Այ էս վերջինի վրա կասկածում եմ, բայց մեր իմացածը
կուլտուրական ասեց, կոնկրետ չեմ հիշում, արա չէ, «Հեփփի էնդ»,
«Հեփփի էնդ»,- ասեց ու վերջացրեց Կայծը:

Կանգնած էինք դրսում
Մերսում էին ներսում
Մրսվում էինք դրսում
Մերսվում էին ներսում:

- Մերսման սրահ չհաճախելը բարոյական խնդիր է՞:
- Բարոյա-ֆինանսական:

Էս ամերիկացիք լույսը լավ են դնում:
Տենում էս՝ ինչ էս տենում:

Ջուր խմես թե գինի
Թող անուշ լինի:

Փոքր խանութ էր, մեծ կենտրոնում
Ապրանքը շատ, տարածքը փոքր:
Դանդաղ շարժվող մի տղամարդ էր
Կասսայի դիմացը կանգնած,
Յոթանասուներկու կլիներ:
Վերցրել էր փոքր, չկտրտած երշիկ
Մանդարին մի քանի հատ, «Բջնի»:
Գրպանից հանեց գումարը, ուղղեց:
Չորս հատ հազարանոց էր
Երկու կանաչ, երկու վայըլեթ
Մտածեց մի պահ,
Ընտրեց մեջտեղի երկուսը
Տվեց վաճառող տղային
Ով այդ ընթացքում ինձ հետ սպասում էր
Որ ստանա հազար վեց հարյուր հիսունը, պապիից`
Ով սիրում էր կանաչ հազարանոցներ:

Թուջե բրդուջներ

«Մայ սոուլ, մայ հարթ»`
Պրոգրեսիվի փոխարեն
Մտցրիք համահարթ:

«Արթուր ջան, քո ուղեղը աշխըդըմ ա, դու կարաս չաշխըտես,
դրանց աշխըտցնես»,- ասեց մեկը մյուսին փետի արհեստանոցում:

Մենք, որ արդեն Zoom-ով ենք սկայպ անում:

«Ես սենց գրիպ մեկ էլ տենց մի 30 տարի առաջ էի ընգել,
իրեք հատ մռու բիբար կերա, քրտնա, մտա բաղնիք, բուժվա»,

Ասեց քեռին, բայց չիմացա
Էս անգամվա մասին էր ասում, թե՝ էն:

«Էդ ուստի համարը չեմ գտնում, հլը դու էլ նայի»,
Ասեց Արթուրը տալով ինձ հեռախոսը:
«Կարող ա է՞ս ա»,- ցույց տալով «Armenusta»-ն
Պատասխանեցի ես:
«Չէ էդ ուրիշ ա, սպասի ջնջեմ, մեռավ անցած տարի, լավ մարդ էր»,
Ասեց ու ջնջեց ուստին:
«Լավ, արի գնանք էդ կոմերը, կգտնենք դրան, համ էլ տեարենք
«Օպել»-ի ռասկուլաչիտի տեղ կա, տենանք «Աստրա»-ի հայելի կա՞
թե չէ»,- եզրափակեց Արթուրը ու քշեց:

Կարդում էինք գրքեր
Դըլոզ, Լիոտար:
Ուրիշներով լիքն էինք,
Բայց իրար օտար:

Զանգ եկավ կարճ համարից.
«Ձեզ ողջունում է «Ունիֆան» ընկերությունը,
Թվային վիկտորինայի ցանկանում ե՞ք մասնակցել
Ու շահել մրցանակներ»:
«Ոչ»,- պատասխանեցի արագ:
Ու չհասկացա, իրենք  միանգամից անջատեցին
Թե՞ ես:

*Ռաստարգուև զնայետ, չտո նազնաչենիյե իսկուստվա, պա կրայնեյ մերե յիվո սոբստվեննովո, պրիդած չելավեկու ցեննըսծ, կատոռույու ռեալնսծ յիմու պրիդաստ վրյադ լի, ա եսլի ի պրիդաստ, տո վրյադ լի կտո էտը զամեծիտ, ի սամ չիլավեկ՝ վ տոմ չիսլե: (Ալեքսեյ Գուսև)*

«Սաղ գիշեր սեքսի պատճառով չեմ քնել»,- ասեց Տիկոն:
«Պատճառով թե՞ շնորհիվ»,- հարցրեց Կայծը:
«Պատճառով, հարևան Անդոն էր սեքս անում»,
Վերջացրեց Տիկոն:

«Մեր աշխատողը ընդունվել ա Գուբկինի ինստիտուտ, Մոսկվա, ու ձեր գազի տոչկա բացելը մի քիչ կուշանա»,- ասեցին գազի գրասենյակում:

Երբ ինձ Տիգրան Վարդանիչ են զդաչի տալիս
Չուզվում եմ:

Տեսազավր

Կապուտակ եզ

Անտառները
Խիտ մալախիտ:

«Էս միսը աբրաբոտկա ա պետք անել»,- ասեց իր կնոջը մեր հարևանը, իննսունականներին, մասնագետի ինտոնացիայով:
Ու երեխեքով տեսանք հետ գնացող ոսկրոտ միսը՝ մեծ ափսեյով:

Բայց արի ու տես
Կլիրս ուտես:

*Ուեր'դ լավ գո՞:*
*Ուեն օլ իզ*
*Սաիդ ընդ դան:*
*(Սիա, Դիպլո, Լաբիրինթ)*

«Խմելի, սունելի, վերջապես ընդունելի»,
Գոռաց երեխան ու հարվածեց ընկերոջ
Թանաքագույն գլխարկին:

Գրքում՝ գիրք էին կարդում:

Մտցրեց հուժկու
Մի շատ խիստ բուժքույր:

Նորա Էֆրոնի «Մայքըլ»-ը քաշեցի ու «Ձեն Սուռկա»-ն:
Լավ որակի ու անգլերեն: Թող մնան անհույս օրերի համար:

«Իրա հետ սթորի եմ արել, որովհետև ինքը իմ ռեալիթիի մի մասն ա»,- լսեցի մետրոյում, մեկի սմարթֆոնից:

Կյանքիդ այս էջը արագ մի թերթիր,
Արի սպասարկեմ քեզ ես առանց հերթի:

Գինիները սորտից «կանգուն»,
Ցավոք՝ չեն պահում կանգուն:

Չենք ունեցել այսքան դար
«Ասքյանդար»:
Բայց ապրել ենք այսքան դար
Առանց «Ասքյանդար»:

Թե մորդ անգամ հանես լեզու
Չմոռանաս քո մայր լեզուն:
Բայց մտքերդ էլ չմոռանաս:

2003-ին մի լոկալ ռոք երգչի տեսա տրանսպորտում, «Ռաֆ»-ում,
Ով դրանից մեկ օր առաջ փայլում էր «ՆՓԱԿ»-ում, ցածր բեմի վրա:
«Լավ էիք երգում երեկ»,- ասացի ես ցածր:
«Հա, բայց զվուկը ահավոր էր»,- գոհ բողոքեց նա:
2017-ին, նույն գծի վրա, «Գազել»-ում նորից տեսանք երգչին,
Ով վաղուց արդեն չէր երգում, կանգնած էինք, նստած էր:
Տարիքով մարդիկ էլ կային կանգնած, բայց նա տեղ չտվեց,
Քանզի ինքն էլ էր արդեն տարիքով:

*Էնպես որ, դուք պետք է իմանաք թե կոնկրետ ինչ պահանջել ոչ պրոֆեսիոնալ դերասանից: Դուք չեք կարող նրան ուղղակի տալ տեքստը: Նա պետք է խոսի իր բառերով: (Էրիկ Ռոմեր)*

Վարձով արվարձաններ

Կաթոլիկ կաթողիկոսը

*Թոսթ թու դը ուանս հիը թըդեյ*
*Թոսթ թու դը ուանս դաթ ուի լոսթ օն դը ուեյ:*
*(Մարոոն Ֆայվ)*

Ուրիշների տառապելուց տառապելով:

«Ես չեմ զարմանա եթե զարմանամ»,- ասեց Կայծը վաթսափի աուդիոյում:

Օգնենք մեզ, քուննենք մերը:

Դիտում էինք խեռանկարները
Պցամատյան-կլրահոսում:

«Էս տուռկի մեռի կունվեց, Գեվոռկ»,
Ասեց պյատիգորսկցի հայի կիսառուս կինը
Ցույց տալով անպոչ սրճեփը:

«Արա, դրանք էնքան բոզի տղա են, որ հետները կարելի ա նկարվել»,- ասեց Կայծը, արդեն Ուֆայից:

*Կան բաներ, որոնք մեզ թույլատրված չէ իմանալ:*
*(Գնդապետ Մալատրյու, «Բյուրո»)*

Բյուրոյում «Լեգենդներ»-ի,
Մենք տեսանք լեգենդների:

«Արա, Վրդո, ստե պիզդեց ա լրիվ»,
Լսվեց նույն մարդու ձայնը, էլի Ուֆայից:
«Արա Վրդո, սրանք մարդ են ոչ միայն սեքսուալ առումով,
լավ հիմա հարմար չի, իրիկունը երկար կաստ զապիս կանեմ»,
Վերջացրեց ու գնաց նորից սկսելու՝ Կայծը:

«Մի հատ հեռու բարեկամ ունեյինք, անունը Մավրիկ»,- ասեց մի բիձա: «Մեր տունն էլ մարդ էր գալիս, հորս օգնում, բեսամթ ժիր, Բալաբեկ էր անունը»,- շարունակեց մյուսը ու նայելով մոտիկացող երրորդին,գոռաց. «Ի՞նչ կա, Ջանիբեկ, լսել եմ ներվերդ լավ չեն»:

«Սկոլկը լետ, սկոլկը զիմ»,
Ասեց բժշկականի անցումի գրավաճառը,
Ում վաղուց չէի հանդիպել
Քանի որ էլ չէի լինում էդ կողմերում,
Ոչ ձմեռները, ոչ ամառները:

Վերբալ մինետ

*Պատմությունը եկեք թողնենք պատմության էջերին:*
*(Տարիքով գործիչ)*

«Օդից վրեքներս փող էր թափում»,- ասեց Դավոն, ով սկսել էր Քելբաջարում ու ավարտել Մարտունիում:

Պատռվել են առագաստները ժամանակի:
Անցած տարի էլ Մարիենբադում չեղանք:
Պրաշչայ Ռոբ
Գրիյե:

Ամեն ինչ վերադառնում է ի շրջանս, Յուրի:
Վ էտըյ ժիզնի, պարզվում է
Նի վսե մի զդես հյուրի:

Սանտեխնիկ Սասունի ջինսի վրա գրած էր «Յիգիմեն»,
Որը պարզվեց իսկա գյուղաքաղաք է Չինաստանում:

«Երեկ, վաղը երեկոյան», պատմվածքի վերնագիր:

Կորտասար և Փորձագետ
Փորձասար և Կորտագետ:

-Արմենը ուր ա՞:
-Կինո ա գնացել կնգա հետ:
-Ու՞մ կնգա:
-Իրա:
-Կակ բանալնը:

Միանում է ջերմ խոսքերին
Քրոջս երեխայի քեռին:

«Արա ախպերս, էտի գիտես ինչի հետ ա կախված»,
Ասեց գազելի վարորդը «ՊըՆը Նոկիա»-ով:

«Արա կինո կա, արագ չի նայվում»,- ասեց Կայծը,
Ով ամեն ինչը մեկուկեսից երկու իքսով էր նայում:

*Ծվեյցարական սահմանադրությունը Քրդստանում չի աշխատի:*
*(Գարեգին Նժդեհ)*

Նորարար փրկարարական արվեստի կենտրոնում
Մարդկային մշակութաբանական ռեֆերենսի եմ մասնակցել:

- Կաֆե գնում ե՞ս:
- Չէ:
- Խի՞:
- Չեմ սիրում, երբ վերջում հաշիվ են բերում:

*Յնարավոր չէ ամեն անգամ դիպչել իրերի էությանը:*
*Դրա համար երբեմն պետք է ուղղակի ֆիլմ նկարել:*
*(Դոմինիկ Գրաֆ)*

«Մարդիկ էսօր հպարտանում են, հիմնականում սովորական մարդիկ, անցյալի թագավորներով, իշխաններով, բայց նրանք էլ՝ էն վախտվա հարուստներն են եղել, ովքեր հավանաբար չեն եղել սիրված էն վախտվա սովորական մարդկանց կողմից»,- ասեց Յոպարը ու ինչպես միշտ իջավ գառաժ:

«Իկռի փագելու սեզոնն ա»,
Ուրախ ասեց վերևի հարևանը:
Նա գիշերով էր սկսելու եփելը
Իսկ ռասսվետին զակատ էր անելու
Փակելով բանկից իկրի ելքը
Կոնսերվացնելով էս տարվա բերքը
Ոուբեղժինի, ընտիր:

Երաժշտություն շատ եմ սիրում, Պոլ Մերկուրին իմ կուռքն է:

Հրաշալիրը

Ստերեոգրաֆիա, երբ միանգամից երկու հոգու կենսագրություն է մի գրքում:

«Արմնյուզ»-ի լայվն էր
Միացում էր օդանավակայանից
Մի աղջիկ էր կադրում
Ստենդի դիմացը կանգնած
Սպիտակ վերնաշապիկով ու բեյջով:
Ներքևում լրահոսն էր գալիս ու գնում:
Քիմը պետք է գար
Նրա շատ լավ որակի ֆոտոն նայում էր մեզ:
Վարդակից միացված հոսանքի լարը
Սնուցում էր Քարդաշյանի նկարը:
Ստենդի մոտի աղջիկը
Սմարթֆոնին էր նայում
Հետո կամերաների կողմ
Օպերատորը մի պահ
Թեթև զում արեց

Լայվերը համընկան
Աղջիկը ժպտաց:
Հետո էլի վազում էին լուրերը
Ստատիկ կադրի դինամիկան ապահովող
Տառերն ու թվերը:
Էսօր դոլարը 476 էր
Եվրոն 525
Ռուբլին 7.42:
Վաղը տաք էր լինելու:
Մի կես ժամ անցավ
Հետո երկուսը
Բան չէր փոխվում
Միայն ավելանում էին
Շուտ եկած օպերատորների
Դիմացը տեղավորվող
Նոր եկած օպերատորները:
Ստենդի մոտի աղջիկը
Լարված ճանճրանում էր:

Վերջապես մի կին եկավ
Թարմ վերնաշապիկով
Կանգնեց կամերաների դիմացը
Սպասեց մի պահ ու ասեց.
«Ոչ մի խնդիր չկար
Ուղղակի երեխեքի հետ ա Քիմը
Երեխեքը քնած էին
Շատ հոգնած էին
Նախագահականով են դուրս եկել
Բայց Քիմը անպայման
լրագրողների հետ կհանդիպի»:

«Ժամեր շարունակ լրագրողները սպասում էին»,
Լսվեց մի նյարդային ձայն տեսախցիկների ետևից:
«Մենք էլ»,- ասեց կինը.
«Իրա ինքնաթիռի լենդինգ անելուց
Րոպեներ առաջ ենք իմացել
Որ ինքը գալիս ա:
Տարբեր լեյովըրներ ուներ
Ու սթոփովըր են ունեցել
Չարթըր ֆլայթ ա եղել
Գաղտնիություն չի եղել
Նա կոնկրետ կիանդիպի լրագրողների հետ»,
Փորձեց եզրափակել կինը:
«Ի՞նչ ձեւաչափով»,- հարցրեց մի այլ լրագրող:
«Ես չեմ կարող ասել
Կոնգրեսից դուրս իրա ըջենդան
իրա անձնական ըջենդան ա»,
Պատասխանեց արդեն կարմրած
«Տեղեկատվական տեխնոլոգիաների
համաշխարհային կոնգրես»-ի ներկայացուցիչը,
Հետո ներողություն խնդրեց,
Ու լայվի հետ հեռացավ էկրաններից:

Մենք, որ ընտրել ենք
Պայքարելու դեմ ծխելը:

«Ինչպե՞ս Մարսել Պրուստին»,
Հարցրեցի իմ ուստին:

Բարդերի փառատոն
Պարզերի փառատոն

«Էդ փողը մի քից, տու, կվեկալեմ»,
Ասեց դեղին «57»-ի վարորդը
Բաղրամյան մետրոյի կանգառում:
«Է քցում եմ, վեկալ»,- պատասխանեց տվող բիձեն:
«Չեսա իջնեմ, քեզ եմ վեկալելու»,
Սաստեց վարորդը բիձուն:
«Իջի, տենանք ով ինչ ա վեկալելու»,
Շարունակեց բիձեն՝
Ավտոբուսի աստիճաններին կանգնած:
«Կներեք մանր չունեմ»,- այդ պահին նեղսրտեց մի կին՝
Պարզելով նոր հինգհազարանոցը:
«Անունս Վիլյամ է, դուք տեսել ե՞ք իմ ֆոտոն մարշալի հետ»,
Ասեց Սարոյանը՝ դիմելով իջնել պատրաստվող վարորդին:
«Չէ»,- պատասխանեց վարորդը, ակնոցերը սրբելով:
«Մի գնա հերսոտած, սպասիր, հեսա ցույց կտամ»,
Շարունակեց Սարոյանը
Ծոցագրպանից հանեց նկարն ու այն պարզեց վարորդին:
«Մի քից, տու, կվեկալեմ»,- ձեռքը մեկնեց վարորդը:
«Է քցում եմ, վեկալ»,- պատասխանեց Սարոյանը,
Ու հրելով դեռ չիջած կնոջն՝ բիձուն ասեց.
«Թռանք»:

Գուժ-ինֆո

«Թիթեղյա սմբուկ» մրցանակաբաշխությանը մասնակցեցի,
Այսինքն՝ մասնակիցներին կցվեցի:

Մեզ ասում էին որ լեհ աղջիկները սիրուն են
Ապրեցինք, հասկացանք որ միայն լեհ աղջիկները չէ, որ սիրուն են:
Ու ընդհանրապես, միայն աղջիկները չէ, որ սիրուն են:

Բենոն ասեց, որ տարիների հետ ուզում էս
միայն մեխանիկական աշխատանք անել:

Լինելու են մարդիկ, ովքեր էլ ոչինչ աղոտ չեն հիշելու:
Հիշողությունը հստակ գրված ու դրված է լինելու
Այս կամ այն կրիչի մեջ:

Մենք սկսել ենք էլ չհիշել այն մարդկանց դեմքերը
Ում չէինք էլ մտածում, որ կմոռանանք:
Մեկ-մեկ միայն, ծանոթ դեմքով անծանոթները
Հիշեցնում են նրանց, ում թվում էր թե մոռացել ենք:
Մենք էլ չենք նայում հին ֆոտոները
Միայն փորձում ենք հիշել, լավ էր թե՞ վատ:

«Փախստականի քեյս գրող ա պետք, ապե»,
Ասեց արագ քայլող մի տղամարդ
Հույժ դելավոյ տոնով:

«Քո անցած ամեն մի [pause],
Ասա՝ սա ուրիշ է արդեն»,- ասում ա աղջիկը,
Ամեն նոր կատարումից առաջ:

Կլրիզիս
Անդամի կրիզիս

«Լավն ա, ծծես չայ խմես»,- ասում ա մի աղջիկը մյուսին:

«Հիփսթերահայություն ստեղ ա լանչում»,- ասեց Անտաշյանը
Կասկադի «Ապերիտիվոյում»:

«Ռոստելեքոմ» ենք քաշել,
Որոշ հաղորդումներ արդեն
Հետ տալով ենք նայում,
Ու «Մեր հայրենիքը»
Մեր տանը հնչում է
Ոչ միայն կեսգիշերին:

Մութ էր
Պլիտի վրա
Աղացած սուրճ
Թափվեց
Կարմիր կարմիր
Կետեր էին երևում
Սևի մեջ:

Մի ըդալթ աստղ էլ մահացավ
Ավարտել էինք նրա հետ շատ շատերս,
Շատ անգամներ, հեռակա
Ու դեռ շատ շատերը կավարտեն:
Արդեն հաստատ՝ միայն հեռակա:

Մարտուն Սկորսեզե

Կոֆեյի բաժակի մեջ
Ժայռապատկերներ էին:

Նստած էինք հոփլես,
Ցավոք՝ ոչ թոփլես:

Ստանիսլավ Ֆեմ՝ ֆանտաստ-ֆեմինիստ:

*Վախենում ենք անպատասխանատու պոպուլիստների մեր հայրենիքի համար կործանարար քաղաքականությունից:*
*(Սերժ Սարգսյան)*

Մեկը սիրում էր պոկել ֆիլտրը
Սիգարետը վառելուց առաջ,
Քանզի չէր սիրում միջնորդներին՝
Միջնորդների ինստիտուտը:

- Դուք կարծես այս դարից չլինեք:
- Ճիշտ եք, նախորդում եմ ծնվել:

- Ռոմանսկու վերջին ֆիլմը տեսե՞լ եք:
- Պրինցիպիալ ոչ, ես «մի տու»-ի կողմնակից եմ ու ձեզ էլ խորհուրդ կտամ նույնը:
- Չնայե՞լ:
- Չտալ:

Հարևանը, իր ծնունդին մյուս հարևանի տված նվերը մի քանի օրից հետ հանձնեց նույն խանութը, որտեղից գնվել էր, ու տեղը վերցրեց ուրիշ կոֆեյի սերվիզ:
«Իա, էս էլի ստացել ե՞ք, ես էլ ուզում էի մի հատ էլ իմ համար վերցնեմ»,- ասաց նվիրողը, մի քանի օր հետո, ու գնեց այն նորից, այս անգամ վերջնական, իր համար:

Կյանք իմ դու ձրի մանկապարտեզ
Լի ընտրակեղծարար կանանցով:

Մի ընկեր ունեմ, դարձավ փախստական
Ստեղ տուն էլ ուներ, ափսե ու ստական:

Մոնտաժելուց կարևորը ֆորմայի մեջ չսխալվենք:

Դընո, կյանքի հատակներում եղած տղամարդու ածական
Դիշ Հովիկ, անորակ սպասք վաճառող

Բերտոլդ Բրեխտի աննման զավակներ

Իմ ոտանավորները ժամանակին տպվեցին
«Թվիթեր» պարբերականում:

*Չես կարողանում շեղեվր նկարել ՝ նկարի ուղղակի ֆիլմ:*
*(Կլոդ Շաբրոլ)*

Դրսում ցուրտ է ներսում շոգ
Կարտոլ տվեք մի մեշոկ:

Ցատկ արեցի ֆենոմենալ
Մրցավարը դրեց պենալ:

Կաշաները նեսթլե
Մեզ դարձրին ռեսթլեր:

Հարցրեց ինձ մի աչոն
Աբ ա վսյոմ ի նի ա չյոմ:

Ընդդիմահայ սփյուռքեցի

Բանաստեղծույթ՝ բանաստեղծության նույթ:

Աղվեստագետ

Հապավումըն, հապավումըն
Բլեք մեջիք հապա վումըն:

Խմբակապետ

Ասա թող զանգի թափով,
Ցանկալի ա վաթսափով:

«Միիրա՛ն, Հրա՛նտ»,
Գոռաց մի միիրանտ:

Մի ծանոթ ունեինք, նա փոխեց սեռը,
Որպեսզի սիրով զբաղվի մեկ այլ կնոջ հետ:

Դուդուլինգուս՝ դուդուկով հատուկ գործողություն, փչելով:

Կլիրը պատովն ա տվել:
Գլուխս կերել ա:

*Օն աբյիվիլ ֆանտասմագորյու սնոմ՝ էտը տո շտո վսեգդա դելայուտ սրեդնեյ ռուկի ավտըռի, էտը տո շտո նի պրաստիլ վ սվայո վրեմյա Տոլկիեն՝ Կերրոլու: (Ալեքսեյ Գուսև)*

«Մարդ փողատեր ըլներ, էս եղանակին պառկեր, քներ»,
Ասեց մի խարիզմատիկ տաքսիստ ու ավելացրեց.
«Որտե՞ղ պահեմ, կոմրադե»:

«Մեկն էլ պրծավ էս աշխարհից: Աշխարհը լավն է, ուղղակի իրեն անհաջող շրջապատ էր ընգել»,- ասեց մի տարիքով մարդ, վերջին մասը շշուկով:

Ամենաթեժ պահին ընդհատեց ակտը
Որ ցիտի Մոլոտով-Ռիբենտրոպ պակտը:
Պատմական կատարում:

Սիրո վաստորգ

Լավազները լընգու

*Իզբավծես ատ դուռնիխ միսլեյ,*
*Նո սնաչալա՝ ուբերիծե աբիդի:*
*(Վլադիմիր Շերիշով)*

Ամուսնացած չէ, քանզի շատ պցախնդիր մարդ է:

«Ես մեծատառով եմ գրել Գանդոն, ֆանտաստ գրողի հետ էի», կրուտիտ էր արել ուկրաինացի հասարակական գործիչը, 2019-ի գարնանը:

Սենտիմետր՝ սենտիմենտ չափելու գործիք:

Չորեմբերյանի քաղաքապետ

- «Ձեր վըզին դնի Վիլնյովը Դընի»:
- Վըզի՞ն:
- ՎՁԵԲ:
- Սպասեք:
- ՊԱՍԵ:

Չորս հոգով խմեցինք նույն սուրճի բաժակից,
Հետո որ նայենք Տելեգրամի չատի ապագան:

Վիսկի «ՄակԲայ»:
Չթեքվող վիսկի, խմելուց հետո հանգիստ պատասխանում ենք «Երբ, որտեղ, ինչու, ինչպես» հարցերին:

Սամեց Սամո՝ նորմայից շատ կատարող խոպանչի:

Երազներ մանկության նասկուլցներից

«Պատանի դրամատուրգի թատրոնում էի խաղում,
Աճեմյանը ինձ առաջարկեց մնալ թադրոն,
Բայց ես չհրաժարվեցի»:

Հանդիպում ընթրողների հետ

Ճաշակին ընկերք չկա

Համաստեղծ

Գժվույթ

Առաջ ամեն ինչը ձախից աջ էր
Հիմա ներքևից վերև:
Հորիզոնական լոգիկան
Դարձավ ուղղահայաց:

Անիուրընկալ

Եռամերուկ

Ֆեմմդամենտալիզմ

Տարփախոս

Յանրային հանրույթներ

«Պաշոլ նա խույ եղի»,- ասաց հարևանը ներսում մեկին ու փակեց իր տան դուռը դրսից:

Իմ սիրած երգչուհին երգիչ ա:

Ու այդպես տխուր, օտար ափիերում:

Եթե հավաքագրենք կայքերի ողջ կլրույթը և պցույթը:

- Դրա տղեն պսակվեց, չէ՞:
- Չէ:
- Գոնե թրաշվել ա՞:
- Չէ:
- Առաջ էլ ասա մի բան չէիր, էդ ծաղիկն էլ խփել էս դեմքիդ:

- Սաղ օրը հելնում ա բալկոն:
- Նայեք բալկոնից կախվածություն չունենա:

Դուխի առնելիս՝ «Ս նովիմ հոտըմ»:

Մեր հոգու պատռված տոպրակները:
Յոքքու:

Իմ սիրած պոետն է Գումիլյովը
Գումի մոտ ինձ չասեց Վխկրյան Լյովը:

*Մուրացանի հիմնական իդեան է պաշտպանել հայկական եկեղեցին լյութերական ինտերվենցիայից [...] Տաթևացին հակադրում է կաթոլիկների քրիստոնեական ունիվերսալիզմին մեր քրիստոնեական նոմինալիզմը: (Վարդան Ջալոյան)*

«Էդ հեռախոսի ներքին հզորությունը էրկու գիգավատ ա,
էրկու գիգավատ»,- ասեց հին Նոկիայով ու հին շորերով մի տղա:
«Պտի առնցվի, լավն ա»,- փոքր դադարից հետո շարունակեց նա:
«Արա էն տետրիսդ խի՞ ծախինք»,
Ասեց մյուսը՝ վատ հագնված տարիքովը,
«Դե ով գիտեր որ սենց ա ըլնելու»,- պատասխանեց երիտասարդը:
«Ախպեր կարող ա ավտոյիդ մեջ բան էն թողել էսօր»,
Պտտվելով հարցրեց տարիքովը գազելի վարորդին,
«Ի՞նչ ապեր»,- պատասխանեց վարորդը պտտվելով:
«Դե բան էլի»,- շփոթված շարունակեց տարիքովը:
«Ինչ ապե՞ր»,- հեգնախառն մուննաթով ասեց վարորդը:
«Ապեր, դե անհարմար ա ասելը հիմա»,- ասեց տարիքովը ու չասեց:

*Գիտեք, բացասման բացասումը քվինտեսենցիալ մակարդակում չունի սեգմենտի, հանրույթի վրա ներգործելու էմփազիսը: (Յաղորդման հյուր)*

Եսիմ երբ էր, բայց վաղուց էր:
«Հայերի բունտը թողնել գնալն ա»,
Յոպարենց տանը ասեց Վալեռը:
«Միգրացիան հայերի մոտ սեռական կյանքի հետ ա կապված»,
ավելացրեց հոպարը ոչ գրական,
Ու խմեցինք օղին օրվա՝
«Կոշկենկորվան»:

Մակընթաց համընթացություն

- «Պամիծ»-ը մոռացել եմ, ո՞նց էր հայերեն:
- «Հիշողություն»,- ասեց Դիքեյը:

Սգո սուրահ

«Կոմունիստի վախտ, Օմըսկ, ընգերս կոզր էր բռնել, լավ
շինարարություն»,- սկսեց շոֆեռ Քաջիկը իր գազելում:
«Էն պատը ինչքա՞ն կլնի»,- շարունակեց նա,
«Մի յոթ մետր»,- ասեցի ես,
«Մի վեց մետր»,- ճշտեց Քաջիկը պաուզայից հետո:
«Պետք էր մուրճ ու մանգաղ նկարվեր:
Պատը շպակլյովկա արի,
Չորս օրում Մխիթարյանը նկարեց,
Օմըսկի Ցեկայի պետը ասեց.
«Քեզ կվարտիրա ենք տալիս, մեբելով,
Հազար ռուբլի էլ աշխատավարձ ամսական»,
Չգնաց՝ ամուսնացած էր նոր:
Կյանքը մի տենց շանս ա տալիս, չբռնիր, կմնաս:
Հենա, սաղ օրը անգործ ֆռռում ա թաղում»,
Վերջացրեց Քաջիկը, ու մատով ցույց տալով
Կանեցի կողքի շենքի բակում ուրախ զրուցող տղամարդկանց
Ավելացրեց. «Էն կանաչ կուրտկովն ա»:

Ալ մանախն ու
Ալ քիմիկը:

Իսկ բանանն այդ մի նետիր
Մի նետիր, մի նետիր:

«Հարևանս ասեց. «Դու արդեն նկարիչ էս, իմաստ չունի գնաս սովորես», ես էլ չգնացի, ու ոչ մի խեռս էլ չդառա, էդ գանդոնն էլ անցած տարի մեռավ, քսան տարի չէինք խոսում, տղեն Ռուսաստանից եկավ, տները ծախեց, գնաց»,- պատմեց մի մարդ մյուսին, կանգառում, էլ չթողնելով հարցեր:

Չունեին փաստ, որ ունեն past,
Մերը արին քոփի փասթ:

«Արա, պտի հելնես յամից
Քո դեպքում յամկից»,
Խնդաց հարևանը
Դիմելով գառաժում
Ավտոյի տակ գործ անող մյուսին:

Էս սմայլիկները ոնց որ կետադրական
նշաններ լինեն, եթե չդնես, չի հասկացվի:

Մենք, որ չգիտենք կետադրություն,
Բայց գործի բերումով տիրապետում ենք
Սմայլիկների արվեստին:

Չատկաստ

Մարդիկ ավելի շատ ուզում են լսելի լինեն
Քան լսեն:

«Ի՞նչ կա, Միխալկով, Վերին Սաժում եմ, Վերին Սաժում»,-
Խնդալով ասեց Կայծը «Սամսունգ»-ից «Քսյաոմի»-ին:

*Հիշում եմ Համալիրը*
*Ուր մտահոգ պարետը*
*Մեզ հանգրվան տվեց*
*Մի սառնվա քանդված*
*Եվ գուցե մի օր*
*Մեր կյանքի արահետը*
*Այնտեղ մեզ նորից*
*Կբերի հանկարծ:*
*(Արեգ Գարեգինյան, «2003»)*

«Բարի երեքով»,- ողջունեց մեկը՝ նստած երկուսին:

Էս սեքսը ոնց որ տետրիս ըլնի,
Դու չես պրծնում՝
Ես էլ ուշ թե շուտ կրվելու եմ:

Ձկան խանութում
Իշխանները անընդհատ փոխվում էին
Իսկ ստերլյադը միշտ նույնն էր՝
Ուչեբկի սերժանտի նման:

«Ջոնաթան Լիվինգսթոն» չայը

«Անդրալիր» ամսագիր

Մի մարդ գնում ա, հակագազ ա հագնում,
Գալիս նստում ա հյուրերի մոտ, տռում ա:

Տեսանք մեր մաքառման առաքումը
Օնլայն, ֆեյսբուքով:

Յանրային հիշողությունը անձնականով
Ստիպված փոխարինելու ժամանակ
Չուզելով ջնջեցի ռութրաքերից քաշած
Ֆիլմերն ու մեծ գրքերը
Նաև tert.nla.am-ից քաշած լիքը pdf-ներ
Նրանց մեջ էր նաև չարենցենց «Standard»-ը
Իբր մաքրվեց հարդը
Բայց մեկ ա դեռ կա
Ազատ տեղի դարդը:

«Խաչիկ, մի հատ պեռաշկի ղրգեմ կեր»,
Ասել էր հոպարը թատերական հրապարակում
88-ի սեպտեմբերի 21-ին:
«Խաչիկ մի գոռա, ոջիլները կթռնեն վրիցդ»,
Ասել էր հոպարը, ով էդ գիշեր պառկել էր
Արձաններից մեկի մոտ, իրենց բաժնի ժողովրդի հետ
Որ ավելի մոտ լինի Մարգարյան հիվանդանոցին,
Ուր առավոտ գիշերով պիտի ծնվեր Անին:

«Ժինգլըվաց, ժինգլըվաց»,- երգեց Միկան Վերնիսաժում,
մոտենալով սեղաններից մեկին:
«Ատայձի, ա տո սնովը սկաժուտ «չիի կառռելի»», շշնջաց նրա
ականջին կողքին կանգնած Սաթին :

«Արա եթե ժիծ սաբոյ էս անում,
կողքիններին էլ էս սկսում
բեզուսլովնի վերաբերվել»
ասեց Կայծը Վաթսափով, Ուֆայից:

«Փոշեպատ ուղի» հաղորդաշար

- Պետք է դիմել:
- Ու՞մ:
- Ում չէ, ինչի: Փախուստի:

- Ամեն օր զբաղված եմ մասսայական տեսարաններում:
- Որտե՞ղ:
- Ավտոբուսներում հիմնականում, բանկերում նաև:

«Հիշողություններ հիշողության մասին»:
Վերնագիր ձեռագրով գրված:

- Չմոռանանք ինչի համար ենք հավաքվել:
- Ինչի՞:
-Ոչնչի:

«Ինեկո բանկում, Ինեկո բանկում
Ֆինանսներս կտրուկ ապրեցին անկում»:
Սա կարելի էր երգել հենց բանկում, բայց ցավոք մեր հասարակությունը ամենօրյա փերֆորմատիվ ապրելակերպի հանդեպ ընկալունակ չէ:

Էսքան տարի քիչ ա եղել, չի եղել,
Որ առողջ մարմինն ու առողջ հոգին
Իրար հետ տեսնենք:

*Եթե մի բան ստեղծում էս ու սկսում ա ապրել, դու գնա:*
*(Իգոր Բլաժեվիչ, Մարդու իրավունքների պաշտպան)*

- Էս Համլետը չի՞ մեծանում:
- Ձատո փոքրն ա մեծանում:

Իրաբույժ, մարդը որ իրեր է վերականգնում, նոր կյանք ա տալիս:

Բանկում մեկը մոտենում ա մյուսին
Ձեռքին բանկա, ասում ա.
«Արի քեզ բանկի մեջ կոխեմ»:

«Պաստուպկի ապրիծեյյայուտ խարակտեր»,
Ասեց Կարեն Շահնազարովը
Քաղաքական հաղորդման ժամանակ:

Իմ սիրո Վասակ
Իմ սիրո Վաթսափ

«Մնե էտը նեվկուսնո»,- ասեց երեխան ու տվեց թխվածքը մորը,
Աբովյան-Թումանյան խաչմերուկում:

«Անթիփ»:
Մատուցողի հուշերը:

- Էս մատռասդ փոխել է՞ս:
- Փաստորեն էդքան վաղուց սեքս չենք արել:

*Նա սահմանափակ և խստաբարո մարդ էր, որ ջանում էր ամեն կերպ իրազեկ լինել այն ամենին, ինչ իր խելքի բանը չէր:*
*(Յարոսլավ Հաշեկ)*

Ինքնազերծման ակտը
Գերամասամբ կատարվում է
Քունաթիմիկատների միջոցով:

«Էլի աջ ռուլով, բայց ձախական հայացքներո՞վ»,
Բարևեցի Լյովին, ում չէի տեսել վաղուց:

Պոպոք ջարդեց սապոգով
Վլադիմիրը Նաբոկով:

Սիրում էր Ռոզան
Սամոյի պրոզան
Նաև թուր ու թվանք
Եվ սեքս անվտանգ:

Սամո-ռայ:

Անձնական գիենայով ենք զբաղվել:

*Պրոիզոշլա ինդիվիդուալիզացիյա օբշեստվա, նիկակոյ կոլեկտիվնոսծի սիչաս նետու: Նետու կակովո տը օբշեվո, աբյեդինյայուշչեվո աշչուշչենիյա պրավդի: (Ալեքսանդր Մինդաձե)*

- Ես մենակ պրեզերվատիվով եմ սեքս անում:
- Դե էս գանդոնը վեկալ, գնա մենակ սեքս արա:

«Մենք երջանիկ երիտասարդների մի խումբ ենք, ներկայացնում ենք «Երջանիկ երիտասարդություն» ՀԿ-ն և փորձում ենք երջանկություն սփռել Հայաստանում, և, ինչու չէ, ամբողջ աշխարհում: Մենք նոր ենք սկսել և բաց ենք համագործակցության համար»,- ասեց մի տղա Հ1-ի առավոտյան ծրագրի եթերում:

Մի հոգի էլ գնաց
Մի հոգուց էլ հեռացանք:

Առաջ
Կաննի, Վենետիկի, Բեռլինի հաղթողները
Մեր կյանքն էին փոխում
Հիմա
Միայն իրենցը:

Կիլիկիացի Սպարտակ՝ հայ թրիքսթեր, ում անվան մեջ արդեն քցման հոտ կա:

«Էս փչողը ինձ դզեց»,- ասվեց դուդուկ նվագողի մասին:

Համով Սահյան

Ուղտ ենք մենք արել խաչով ու սրով:

Հայաստանի յութուբյան հանրապետություն

Գազելում կարճ հագած ռեդհեդ էր նստած
Տատուներով
Նրա վրա էին նայում երկու պապիները
Ու մնացածս:

*Ռեժիսյոր Էտը տոտ, կամու խվատայետ սլուժիծ պասրեդնիկոմ վ սխվատկե մեժդու կանոնամի կինոյազիկա ի վեչնը մինյայուշչեսյա րեալնսծյու: (Ալեքսեյ Գուսև)*

«Մուուուուու՛»,
Կանչեց էկրանից ոսկե ցլիկը,
Եվս մեկ անգամ հիշեցնելով
Որ ճիշտը ցուլն է և սև սպիտակը:

Հինգշաբթի էր, վերնիսաժով մի տղամարդ էր գնում
Ձեռքին ցեպից կախված փոքր սուվենիր նռներ,
Մյուս ձեռքին՝ խոլոդեց:
Մոտ հիսուն տարեկան կլիներ նա՝ով կծեց խոլոդեցը:
Ամառ էր արդեն, դեռ ոչ այդքան շոգ:

Պառկացրեց կանաչ խոտին
Սանչո Պանսան Դոն Կիխոտին:

«Ապե, ես լոդր պոխույիստ եմ»,
Ասեց լռված մեկը մյուսին Բարեկամության գետնանցում:
«Ես փոքր ժամանակ սիրով եմ զբաղվել շախմատով»,
Հիշեց մի պապի:

*Մենք ինչ կթողնենք*
*Այս փուչ աշխարհին*
*Եթե ոչ*
*Միայն*
*Սիրո պատմություն:*
*(Արամ Ասատրյան)*

- Կներես, նենց անհարմար պահի ես զանգել, մաստուրբացիա եմ անում:
- Դե պրծնես, զանգի:

- Էս վերջին կատարումները լավն էին, ոնց որ Իվո Պագարելիչը գար մեր տուն, նվագեր:

Գնեցի յանտար
Որ ինձնից յան տար:

«Աղջիկները ինձ ուզում եմ գլուխ տան»,
Ասեց Կայծի տուրիստ բարեկամը Լոսից:
«Գանդոն, դու հո թագավոր չես, որ քեզ գլուխ տան»,
Միանգամից պատասխանեց Կայծը
Հետո ասածը ջոգինք, խնդացինք:

Լուսակերտի ձուն անուշ
Լուսակերտի ձուն անուշ
Եկ ճաշակենք միասին
Մեր սիրելի ձյունանուշ:

Ձեզ մոտ մի օր թարս Է աճելու խիյարը
89-ին մի հայի ասաց Բոդրիյարը:

«Ես կատարվել եմ Բեռլինում ու Փարիզում»,
Ասեց անտաղանդ մի կոմպոզիտոր:

- Կոնֆորմիստի ֆորմա կկարեք՞:
- Ի՞նչ ձևի:
- Դուք որոշեք:

Մի շատ սիրուն բզեզ,
քայլում Էր բորդյուրով
Ձեռք չտվինք, հիացանք
Ետ գալիս տեսանք
Լխճել են:

- Սիրտս ծխել ա ուզում:
- Լավ ա ծծել չի ուզում:
- Է նույն բանն ա ժամանակի առումով:

«Արա դա որ խմում ա, իրան դնում ա բոզի տղու տեղ»,- ասեց Կայծը:

- Վարդան, ա չտ՞ո տի դելայեշ:
- Սմատրյու կակ ժիվուտ դռուգիե: Ա չտ՞ո ձելած, չտոբ սիբյա խառաշո չուվստվաված, Միկա:
- Նի-չի-վո:
Զրույցներ ռուսալեզու հայ երեխայի հետ:

«Քաղաքի ծառերը մարդկանց նման ապրում են ու կյանք են տեսնում»,- ասեց ավազանու մի կին անդամ:

«Խիտռսըծ էտը մայո վտառոյե իմյա»,- ասեց Իվանը,
Ում հետ օնլայն շախմատ էինք պարապում:
Նրա մայրը մուծում էր մեր գազը
Փող ուղարկելով այն երկրից
Որտեղից որ գալիս էր այդ գազը
Ու ես զգում էի ինձ
Տանը նստած խոպանչի:

«Կամո բլոգ»: Սիմոն Տեր-Պետրոսյանի հուշերը:

«Օֆիցիանտի, ինձ բերեք խաչապուրի և Բորժոմի»:
Մատուցողը գալիս, բռնում է քթից ու ասում. «Վռացամոլ»:

Վասպուր Գազտուր, բանաստեղծ

Լիդիա Էլլարդովնա Շմագ

- Մսալի խաղող ա, առ:
- Մսալի չէ, մխալի:

*Պոմիծե՝ պակառչե: (Մարկ Զախարով)*

*Կամու՞ նինչե նուժնի վելիկանի:*
*Տոլկը տեմ, կտո իխ վիդել աղնաժդի:*
*(Լիլյա Շիտենբուրգ)*

Սերժ Ազատի, այ Սերժ Ազատի
Մեզ սրանցից արի ազատի:

Չպայքարողներս սենտիմենտալ ենք:

Ջիգարխանյանին մոռացել էին Ռուսաստանում,
Քանզի էլ սկանդալային չէր,
Ու Հայաստանում,
Քանզի չէր տեղավորվում
Հեղափոխության ծիրին մեջ:

Լավագույն անցյալը ներկան ա

«Պետության համար աշխարհում
ամենակարևոր բանը անկախությունն է»,
Ասեց Երևանի քաղաքապետը Գյումրիում:
Ու մտածեցինք
Որ էս ասածի մեջ
Ինչ որ բան
Էն չի:

«Ամենավտանգավորը նրանք են, ովքեր մեր անունից ոչ ճիշտ բաներ են ասում»,- ասեց Կամոն համանուն ֆիլմում:

*Կինոինդուստրիան ընդհանուր առմամբ ծանծրալի երևույթ է, սխեմատիկ: Ու եթե ինչ որ հետաքրքիր բան էլ կատարվում է, ապա հենց այդ սխեմայի հանկարծակի խափանման, պատահական սխալի շնորհիվ: (Վոլոբուև-Չելվենսկի գրույցից)*

«Խելոքը երբեք չի նեղանում, խելոքը հետեւություններ է անում»,- ասեց Զիգարխանյանի հերոսը, Արտաշես Լեոնիչը, արտադրական մի ֆիլմում: Նրա կերպարները միշտ ուժեղ էին, բայց ինքը հետևություններ չէր անում:

Ռուսական կուլտուրայի կենտրոնում
Շախմատի մրցաշարի բացումն էր լինելու
Թել էր կապած, կարմրոտ
Տակով էին անցնում գնում, պպզած:
Կտրելու ժամանակն եկավ
Մկրատը չէին գտնում.
«Գդե՞ նոժնիցի, Լյուդա»,
Չայրացավ մի կոստյումով տղամարդ ու ջղային ավելացրեց.
«Կտո՞ ու նաս ատվետստվեննեն զա նոժնիցի»:

# ՉՖԻԼՏՐԱԾ
# ԲՐԱՈՒՆ

*Մաստերստվո նի ցենիշ, պակա նի ուվիդիշ, կակ տո ժե սամոյե պիտայետսա պռաձելած մենեե տալանտլիվիյ ակտյոր։*
*(Բիլլի Ուայլդեր)*

«Ի հեճույքս»,- ասեց մի քաղաքական գործիչ, Հ1-ով:

Ուրբաթ, շաբաթ, կիրակի
Արջը ընկավ ցուգցվանգ:

Մահվան ելքերը ու դրամական մուտքերը:

«Մեր էթնոտեխնոլոգիական անցյալը էապես առանձնանում է տարածաշրջանային այլ ազգերից»,- ասաց նախարարներից մեկը ճեպազրույցում:

*Յա զապրիշչայու սվայիմ ստուդենտամ պիսած, ուպատրեբլյած սլովո «սվյազնոե»: Պատամու չտո վսյո սվյազանո սա վսեմ: Սվյաժեշ, բուձետ սվյազանո։ (Ալեքսեյ Գուսև)*

Հակառակորդին կերա նավակով
Քանզի պատվաստված չէր կարոնավակով:

Մի ծանոթ ուներ կառուցվածքով ատլետիկ
Ցավոք՝ ուներ փոքրիկ կոտլետիկ:

Առաջներում, բաղնիքներում քաղաքային
Շատ էինք տեսնում Լիր արքային:

Հիպոթետիկ քաղաքային բաղնիքում:

Մեզ մոտ տաբուները տաբուացված են:

Ագռավները պոպոքի ծառի վրա:
Պոպոքները ընկնում են: Կըտ-կըտ:

Ու հայտնվեցինք մեր Կուրսի
Ցոլոյի վիճակում
Ում թարս նայեցին
Երբ ասեց.
«Կարա՞նք դնենք «Ռուկի վվերխ» կամ՝
«Նիկտո նի խոչետ, յա խաչու» երգը»,
Մեծամորում
Քոչարյանի իշխանավարման առաջին հատվածում:

Սոց ցանցերի մի մասը խափանվեց
Տելեգրամը գրեց որ Ֆեյսբուքը Թվիթերում գրել ա:

Պրակտիկ տեսություններ

Պրակտիկ պրակտոլոգիա

Մետաֆորներ և սվետաֆորներ

«Չետ մնալու առավելությունն էն ա, որ կարող էս կտրուկ առաջ գնալ, չկրկնելով առաջամարտիկների ձախողված փորձը»,- ասեց ճաղատ ու գեր փորձագետը:

Երեխան դիտում էր «Ֆրոզեն»:
Մենք խմում էինք «Քոթոթ»-ի ռոզեն:

Չակոբ Լեղապարկ

Գուտենբերգի գյուտը և Գյուտենբերգի գութը:

- Դուք դերասանի հետ աշխատանքին ինչպե՞ս եք վերաբերվում:
- Նորմալ, մի անգամ նույնիսկ երկար աշխատել ենք մի դերասանի հետ, ջրմուղում:

Մենք ունենք լիքը ընկերներ
Ում հետ ընկերություն
Այդպես էլ չարեցինք:

«Կարո նայի, հերթում եմ»,- ասեց մի կին բջջայինով:

Բուխարեստում անձրև էր:
Կանաչ խոտի վրա
Դեղին վերնաշապիկներ:

Վառվում ենք, վառվում ենք:
Մենք բոլորս հուր ենք կյանքում:

«Դու ով էս, որ հետս «դուք»-ով եք խոսում»,- նյարդայնացած խառնեց մի կին:

Պոետ-օքսկուրանտիստ

«Փչան Թոդորոսն ա»,- ասեց մի գազելի շոֆեռ,
Ում լավագույն տարիները 80-ականներին էին եղել:

Վանոն մահացավ: Նա տեսավ սկիզբը և վերջը:

Կիլիմնաջարոյի հույները

Խայպառակություն

Մի ծանոթ ունեի, երկրորդ հարկում էր ապրում, ու երբ նրանց բակ քյանդրբազ էր գալիս, ինչ որ մեկը անընդհատ թռնում իջնում էր պատուհանի այն կողմում:

«Վերջ տուր, անվերջ տուր»,- լսվեց հայկական սերիալից, որտեղ «Ան»-ը մարդու անուն էր:

Պղծված լոքեյշըններ

Կլիպերում ու թիվիների կողմից պղծված լոքեյշընները:

Երբեք հարցեր չտալ:
Սա սարքել օրենք:

Ծնեբեկի տեսաբան-մասնագետին կարելի է անվանել՝ «ասպարագետ»:

Ես դուրս եկա խմբային չատերից
Քանզի քչերին գիտեի շատերից:

«Գոնե պետությունը օգնե՞ց որ Արամիկին թաղեն»,- ասեց մի կին, ով մանկուց ճանաչում էր մարտակերտցի Տեփնանց Արամին:

Ֆալլիգրաֆիան չխառնել սպերմոգրաֆիայի հետ:

Չիագած շորերով թաղվող մարդիկ:

Ինքնաշինութուն

Մենք դեռ հիշում ենք
Երկրորդ համաշխարհայինից
Ետ եկած մասնակիցներին
Որին էն ժամանակ դեռ
Հայրենական էին ասում:

Անշառ մարդ էր թալիշեցի Բորիկը
Նա մահացավ Աշտարակում, քովիդից
Պատերազմից մի տարի հետո:
Նրան երբ բարևում էիր,
Զգացված ետ էր բարևում:

Կոնսպեկտած կոնցեպտներ

«Մոսկվա իննսունհինգ աշխատող ունեի, կհիշացնես պատմեմ»,- ասեց շոֆերը կողքինիս, չուզենալով իմ ներկայությամբ շարունակել:

*Վ յուբոմ սլուչայե վաժնա իդեյա պոստսավետսկովո, կակ նիրավնամերնը զապոլնեննովո պրաստրանստվա, վ կատորոմ սուշչեստվույուտ ռազնիյե միռի: (Նիկիտա Սազոնով)*

Ինստիտուցիոնալ սիրո դեհումանիզացիան թե՞ ապամարդկայնացումը:

«Ու էդ իմ ընտրությունն ա, որ ես Աբուլի հետ չեմ ապրելու, Վահե Կոստանդյան, Ռոմիկ Խաչատրյան, «Լուրեր»»,- լսվեց ալիքները արագ փոխելու ընթացքում:

«Դա կիկոսութուն ա, մենք պետք ա կիկոսությամբ չզբաղվենք»,- ասեց մի իշխող ընդդիմադիր:

«Ազատ խոսքի իրավունքը սրբություն ա»,- շարունակեց նույն մարդը:

Կանտեմիր Բալագովի անվան նեղվածք:

*Թույլ տուր քեզ մոտ գալ*
*Թողնել, հեռանալ:*
*(Ժողովրդական ռաբիզ)*

Մեզ գերել էր վախտին Արթուր Կոնան-Դոյլը
Հետո Շրյոդինգերը, Բորն ու Դը Բրոյլը
Հետո Կարվայն ու Քրիստոֆեր Դոյլը
Իսկ վերջում գինին ու զեյթունի օյլը:

«Մարգար ջան, բալգարկեդ որ աշխատցնես, լավ կլնի»,- ասեց մեկը, հանգիստ նստած:

- Ռուբ Կարպիչի քրոջ տղեն, Իսրայելյան Գառնիկը, Մարտակերտի Պետրոսյանների տոհմածառն ա գրել:
- Քո ի՞նչն էր Ռուբ Կարպիչը:
- Պապայիս հոպարի տղեն:

Շատ կանայք մնացին այրի
Ճակատամարտից հետո Ավարայրի:

Մետրոյում եղավ պալիտ
Մի Մետրոպոլիտ:

«El chem ashxatum»,
Գրեց Վեոլիա ջրի փաստորեն նախկին աշխատողը
Յոկտեմբերյան վայբերի հաշվիչի նկարի տակ:

Յարևանը Տիգրանակերտից բերած մի կժի կտոր ուներ, որը դնում էր սենյակի դռան տակ: Բալկոնի ռեմոնտի ժամանակ վարպետները շինարարական աղբի հետ թափել էին:

Մարսի կոլոնիզատորը պետք է մոլորակի տարբեր մասերում իրեն տեղակալներ նշանակի, մարսպետներ:

«Արինտիրըս կորցրել եմ, մելկի եմ դառնում»,- գրեց Արմենը:

- Դուք սորոսական ե՞ք:
- Ոչ, ինչ եք ասում, ես միայն «Բաց հասարակության հիմնադրամներ»-ի հետ եմ համագործակցել:

Թաց հասարակության հիմնադրամներ

Մի տղամարդ մտավ սրահ, մորուքով հրաշեկ
Կանգնեց մի պահ, ապա ասեց. «Ընձի թրաշեք»:

Մենք այստեղ պրեկարային աշխատանք ենք կատարում, օնթոլոգիական հարցերով դիմեք ղեկավարությանը:

Երկատել և ատել

Էս աշխարհից անցավոր
Աշխարհից այս հանցավոր
Անցավ ևս քսանչորս ժամ:

«Վիկի Մաուս»-ը ամեն ինչից տեղյակ մուկն է:

«Բարդ ու Ղիմեոս»՝ ռոք խումբ:

Հավաքներ և հավաքույթներ

Ես դիմել եմ այդ սցենարով «Կինոկենտրոն»-ին, ինձ խոստացել են որ կմերժեն, և ես լիահույս եմ:

Անդամբլ

Օտար Նոտարներ

*Նպատակներ շատ կան՝*
*Ժամանակն է իմ քիչ:*
*(Սերգեյ Կարինյան, «Հաղթենք վիրուսին»)*

«Ախպերս, քեզ ասել են որ դու դիոլչի Էֆոյին էս նման»,-  նա մի անգամ ասեց Վրեժիկը, ով ինձ տեսնում էր տարին մեկ, Պյատիգորսկում, ու նույն բանն էր ասում:

Չմշկված մշակույթ

- Ես ուզում եմ մեծանալ:
- Ուրեմն պետք է զբաղվեք:
- Իսկ եթե չե՞մ ուզում մեծանալ:
- Էդ դեպքում միանշանակ պետք է չզբաղվեք:

Պոռնո նայելով
Կատարող չես դառնա

Քաղաքը կարդում է
Քաղաքը թակարդում է

*Մենք կորցնում ենք Մասիսին նայելու մեր իրավունքը:*
*(Ընդդիմադիր)*

Լոկալ գլոբալիստների
Անիասցե միտինգները:

Սուտինյոր-սոմեյլե կամ սումելյե,
Գինու պես քաղցր կանանց տիրակալ:

Ասֆալտապատում
Պատմություններ ասֆալտի մասին

Ֆաքի մեջ կորած ենք

Անբարոյականության փարոս

Բարոյականության փալլոս

Իրավունքներդ իմացիր հիմնարար
Որ բացվի կյանքումդ նոր արար:

Դասդ սերտի
Որ արժանանաս դեսերտի:

Մենք որ միշտ ունեցել ենք անցյալ և ապագա
Բայց երբեք չենք ունեցել ներկա:

«Իմ կյանքը ցույց է տվել որ մեծ ներդրողները հայրենիք չունեն», ասեց մարզային ավազանու մի թեկնածու հեռուստադեբատի ժամանակ, իսկ մյուսը Վանաձորին չորս անգամ Կիրովական ասեց՝ ի ուրախություն մեզ և ոմանց:

Դրսում ցուրտ է և պուրակ
Կանգնիր ժլիր և ժամանակ:

Կլիմա և կլիմաքս

Քնից զարթնեցի շատ ուշ
12:08 ըստ Բուխարեստի:

«Ակնկալիքներ չեմ սպասում»,- լրագրողին ասեց վաթսունին մոտ մի տղամարդ ընտրատեղամասից դուրս գալով:

Դաիկորդ՝ պաշտոնյա ով առգրավվում է ձյունապատ լեռներում ապրող մարդկանց գույքը:

Ապրելուց առաջ
Մեռնել է պետք:

Խուլիգանդոն

Կարոտ ենք քյարրոթի

Անցյալ կար

Ինչպես միշտ ուրբաթը շաբաթից շուտ եկավ և ոչինչ տեղի չունեցավ:

Հրաբուխ
Կրակի հոտ

«Պարեք՛»,
Հրամայեց մի պարեկ:

Մենք, որ հիշում ենք Հայաստանի խելոք մարդկանց բոլոր էշություններըը:

«Գրանցվիր, վերիֆիկացվիր, ու հաղթիր»,- լսվում էր նույն ձայնը տարբեր տեղերում, տարբեր գաջեթներից:

«Էկոֆուկո»
Բնափիլիսոփայական կազմակերպություն

Ես գյոթ եմ, քանզի հիշում եմ
Բոլորիդ արած գյոթությունները:

«Լսի էդ «մտավորականություն» որ ասում են, ո՞րն ա, էդ եկեղեցականներն ե՞ն»,- հարցրեց մի կին մյուսին հանգիստ ձայնով, առևտուր անելիս:

Ուղեղային ծայրամասերը

Կյանքը մեր ձրի ծայրապարտեզ
Լի ընտրակեղծարար կանանցով:

*Ակնկալիք ունենալու բարոյական հնարավորություն էլ չէինք ունենա: (Իշխող ուժի պատգամավոր)*

Ու՞ր են
Տեսնես ի՞նչ են անում
Սենդվիչ Տոման, Սաքուլիկը
Էն ասֆալտ անող գյադեն
Ու մասնակիցները
«Սաս»-ի ժողովի:

Ես ինձ ավելի եմ հավատում քան հիմա:

Պարուհիների մեկի ծննդյան օրվա կապակցությամբ
Ստրիպտիզ ողջ անձնակազմը պարում էր գիշերվա չորսին
Արդեն իրենց ցանկությամբ
Բայց ոչ միայն իրենց համար
Ալլեգրովայի «Ս դնյոմ ռաժդենիա» երգի տակ:
Կայծը գրեց դեպքի վայրից:

Մենք
Մնացինք
Մեր կողմից մոնտաժված տարածքներում:
Այսօր պլյաժում, ամառային ծովի ափին:
Ափսոս Էն մարդկանց կադրը կտրեցի,
Հիմա սենց չէի լռվի մենակ:

Ռելսերն էինք անվերջ յուղում
Մեր սրտի երկաթուղում:

Մի փիլիսոփայի
Ասեցի մի փիլիսոփայի:
Չակերտները ձեր ցանկությամբ:

Ապակենտրոն հույսի դիսպերսիան

«Չեխ է՞ս»,- հարցրի մի սլովակի
Ում հետ կանգնած էինք հերթում՝
«Կարոնավակ»-ի:

Էս վերջերս
Յոնկոնգյան գրիպի շրջանակներում
Յանդիպեցինք Կարվայի ու Դոյլի իննսունականներին,
Էս անգամ՝ ոչ մեր կամքով:
Էլի լավն էին:

Մենք որ H1-ից N1 էլ գնացինք:

Աներկբա հույսով
Սեպարատ լույսով
Եկեք ապրենք աշխարհում
Այս մեկըս մույսով:

Էս վերջերս
«Առաջին սիրո երգ»-ն էի կտրտում
Եսիմ խի:
Մի պահ Խորեն Աբրահամյանը
Ուիլ Սմիթին հիշեցրեց:

Աշխարհում այս բիրտ
Աշխարհում կոպիտ
Ճտացնում էին մեր հետույքին,
Իսկ մենք էլ՝ պոպիտ:

«Ծանոթների հետ պարելս ո՞րն ա»,- մտածեց ժիրիկ Սահակյանը, և իսկապես էդպես մտածեց:

Վարկոդիլլեր
Վարկ դասավորող

*Ունո մոմենտո, բայլա, բայլա*
*Արի մոտս պարելով: (Արամե)*

Մենք, որ դեռ կանք
Տելեգրամի արխիվացրած խմբերում:

Վերմուտիլովչիկ
«Մարտինի»-ին ջուր խառնող,
«Մարտին»-ի կեղծող մարդ:

Իրար համար սյուն լինենք
Ոչ թե պարապետ
Սեքսի մեջ էլ դառնանք
Սիրո սպարապետ:

Չգիտեմ ինչ էի ասում
Բայց էդ պահին
Հասկանալով էի ասում:

Տատս Միկի Մաուսի Թայ էր
Հերս Քոչարյանի:
Պապուս ափսոս մարդ չգտա
Թայ էդ կալիբրի:

*Մոժեծ բիծ Բագդանովիչ պրոստը յուբիլ չուժիյե ֆիլմի բոլշե չեմ սվայի: (Ստանիսլավ Ձելվենսկի)*

Դուք որ shit-ը սարքել եք щит:

Օղի, լիտր
Անկողին, կլիտր:

Ազարտամարտիկ

Յմուտիլովչիկ

Եվ ովքեր են ֆիքսիկները
Շատ մեծ հարց է, շատ մեծ հարց է:
Եվ ովքեր են մեքսիկները
Շատ մեծ հարց է, շատ մեծ հարց է:

««Վրեժի ծարավ»-ի համար իրար վիզ էին կտրում»,- հնդկական կինոյի մասին խոսելիս ասեց հարևանը:

Ամիսներ և ամսագրեր

Քաքաֆոնիա

Քաքադեմիա

Ֆաքնիսական դաշտ

Ես կյանքին ոչ-ոքի առաջարկեցի
Նա չհամաձայնվեց:

Էս վերջերս նորից Կաուրիսմյակին էի նայում
Հերոսներից մեկը հիշեցրեց
Մեր սանտեխնիկ Խաչիկին
Ով հա չի ուզում փող վեկալի
Բայց ուրախանում ա երբ դնում էս ջեբը
Մի երկու կամ երեք հազար:
Ով հիմնականում գալիս քանդում ա
Մեջի ռեզինը թարս ա դնում
Ու ասում. «Վարդան ջան, սենց մի քիչ էլ կձգի, հենց էլի կաթա, կփոխենք»:
Ու մենք ֆռռցնում ենք ռեզինը
Մի քանի ամիսը մեկ
Էդ ես էլ կարամ անեմ
Բայց երկուսով ստատուս քվոն պահելը ավելի հեշտ ա
Ում մենք պահում ենք էդ, Խաչիկի հետ,
Ում մասին բացի անունից ու մասնագիտությունից
Ոչ-ոք ոչինչ չգիտի,
Պրինցիպի իմ մասին էլ, մյուսի մասին էլ
Մենք բոլորս իրար համար
Մարդիկ ենք՝ առանց անցյալի:

*ՀՀ նախագահը Հայաստանի կենցաղը կիսող մարդ չէր, դրսի բարքերը ավելի շատ սերտած, դրսում ապրող մարդ էր:*
*(Իշխող ուժի գործիչ, 4-րդ նախագահի հրաժարականի մասին)*

Կյանքում այս դառը
Ընտրենք Լեգենդառը:

Տարածված է րյումոր
Որ ունեք լավ հումոր:

Մի կնոջ ձեռքը սկզբից ֆաքն էի ընկել, հետո քաքը:

«Լուր արքա», թատերական լուրեր:

Վերջերս Հրազդանի կիրճ տանող թունելում իմ ոտանավորների ընթերցումն էի կազմակերպել, շատ լավ արձագանք եղավ:

Աբելը «Պոռշ» էր քշում
Եվան էլ չի գնա Աղդամ:

Հայրենի հողին կպած մի թռչնակ

«Թարգմանություններ բոլոր լեզուներով»,- գրված էր պասպորտ սեղանի շենքի մոտ:

Ոլորաններում կորընթարդ սիրո
Զբաղվում էինք սիրով:

Մենք զբաղվել ենք ձախողված ինքնակրթությամբ:

Մի զրկեք ինձ գանդոն լինելու իրավունքից:

Նաև խաչաձև ինքնակրթությամբ էինք զբաղվում,
Կարդում էինք Լական, Ֆուկո, lragir.am:

«Գրեշնի ունի՞ս, բարեկենդան»,- հարցրեց մի մարդ խանութում:
«Պաշկով չկա, կիլոյով կա»,- ասաց տղամարդ վաճառողը:
«Պաշկեն խեռի՞ս ի, կիլոյով տու»,
Ցածր ասեց գնողը ու ժպտացին երկուսով:

«Սիրո անհուն ոլորտի,
Ապավենն ես մեր սրտի,
Ապավենն ես մեր սրտի
Անհուն սիրո ոլորտի»:
Չեմ հիշում՝
Մոսկվայում թե՞ Լենինգրադում,
99-ին թե՞ 98-ին,
Երգում էին սենց մի բան, ոչ ռուսերեն,
Դեղին շորերով մի քանի կրիշնաիտ:

Չեռավարակ
Խեռավարակ

- Կինդեռը բայց սպասի աղջկանը տամ:
- Էս արդեն փոխել են, համ աղջկա ա, համ տղու՞:
- Դե մեկ մեկ ավտո ա ընգնում:
- Խի աղջկեքին ավտո չի՞ կարելի:
- Չէ, տղեքին ա կուկլա ընկնում:

«Ինչպես գրել ոչ բինարության մասին ռուսերեն» հոդվածը կարդացի ռուսերեն:

- Դուք նաև վավերագրող ռեժիսոր եք, չէ՞:
- Վերջին շրջանում թերևս անվավեր:

Կարդացի Չոբսբաում, Լական, Բենեդիկտ Անդրեասյան, բան չհասկացա:

Ժիրիկ Սահակյանի քրոջ անունը Արաքսյա էր: Չեռախոսի մեջ նրա համարի դիմաց գրված էր «Քուր-Արաքսյա»:

- Վերջին անգամ ի՞նչ եք նկարել:
- Վերջին անգամ թոքերս եմ նկարել Հանրապետական հիվանդանոցում:
- Ե՞վ:
- Եվ պարզվեց որ հանրապետական չեմ:

*Տրավմա դելայետ միռ պրիբլիզիտելնիմ: (Ալեքսեյ Գուսև)*

Դոմփինգ

- Ես առաջարկում եմ ատլետիկայի դասընթացները անվանել ատլետաց դասեր:
- Կարծես կոտլետաց է հնչում:
- Այո: Ի դեպ, կուտե՞ք:
- Կոտլե՞տ:
- Նման մի բան, ավելի հոծ:
- Այսի՞նքն:
- Ոչինչ, մոռացեք: Մի բան էլ ավելացնեմ: Կասկածներ կան, որ «ասպետ» բառի հիմքը ռուսերեն «վասպեծ» կամ «վասպիտաննիյ» բառերն են:
- Ու՞մ մոտ կան կասկածներ:
- Իմ:

Մենք, որ սկսել ենք դիտել հայտնի մարդկանց հոգեհանգիստները Օնլայն:

Ուսերամարտ

Մայրը պառկել էր հողին,
Մայր հողին:

Դվինի Պուխ

-Մի անգամ պադվալից քսան տարվա մուրաբա գտա, ամբողջը կերա, ի զարմանս ինձ չթունավորվեցի, ու արդյունքում գրեցի «Հին օրերի բերքը» ոտանավորը:
- Մուրաբա՞:
- Մարաբու:

Շախմատային երազ էր
Տեղաշորի մեջ ձին էր պառկած
Միայն գլուխն էր երևում,
Խոսում էր,
Բողոքում էր դիմացի պեշկեքից,
Ոնց որ «Կնքահայր»-ում:

Գերեզմաններում տարածքներ բրոնյա անողները:

«Ծերակույտ», մեծ հավաք, ազգությամբ հայ ըդալթ դերասանների:

«Սեղանի վրա գինի դրին, թթված էր: Էն օրը չիր էր, որդնած: Արա մեր մոտ խրոնիկ հիվանդություն ա, սարքել կարում ենք, պահել չէ»,- ասեց մի բիձա:
«Բա դու գինի չե՞ս սարքում»,- հարցրեց մյուսը:
«Չէ, ես առնում եմ»,- պատասխանեց բիձեն:

Մենք բոլորս Լիր ենք կարդում:

Դա իր քվիր մարդն ա:

Ոտանավոտը ոտանավոռից պոկել:

*Ստրաննայա ու չելավեկա նատուռա: Եսլի օն վիձիտ կակոե տը բեդստվիե, յիմու խոչետսա չտոբ անո բիլը գրանդիոզնիմ:*
*(Կարել Չապեկ)*

Յարևանը երկրաշարժի ժամանակ տաք հագնված ու պուլտով վազեց դուրս:

Յարգելի gov.am
Ցավոք առիթ չկա
Որ ձեզ գովամ:

«Ես էլ կուզեի վճարվել էս ֆիլմի համար»,- մտածեցինք հոլիվուդյան մի ֆիլմի մասին ֆիլմ դիտելիս:

Եվ կգա մի օր
Իսկ միգուցե երկուսը:

Ես ինքնակրթության վկայական ունեմ

Յոգեվարձուների խորհուրդ

«Արի անենք սելֆի»,
Ասացի մի էլֆի:

Ուկրաինայի կռվի ֆոնին
Երկու սիրիահայ
Սուպերմարկետում
Իրար հետ
Արաբերեն էին խոսում:

Նա երրորդ մարդն էր, Ալեքսանյանից հետո:

Վովան վատ էր
Հետո լավացավ
Հետո էլի վատ էր
Ընկավ հիվանդանոց
Հետ եկավ
Էլի լավ ա
Միրգ, բանջարեղեն ա ծախում:

Ինքնաթիվ մարդիկ

Սիրավիպակ

Փորձեր և փործարքներ

Գիշերը, ումիվալնիկում
Կոֆեյի բաժակի մեջ ջուր լցվեց, մնաց:
Առավոտը մրուրը գունավորել էր ջուրը
Նուրբ սեպիա էր տվել:

- Իմ ընկերը միջինասիական պոետ է:
- Իսկ միգուցե՞ «միջին, ասիական»:
- Իրականում երկուսն էլ:

«Եղոն գնաց Խմելնիցկի
Նաջը հասավ Քիշինյով»,
Գրեց Կայծը, Տելեգրամի չատում, մարտին:

Egg և որձ

*Հրահանգների տեսությունը մեզ մոտ էդքան էլ տարածված, զարգացած չի: (Պատգամավոր)*

Տեսակոնֆերանսիե

Պատահական մարդու հուշերը

«Ինձ կատարել ա պետք»,
Ասեց խմած Կայծը ու միանգամից հասկացավ որ ասածը երկիմաստ ա հնչում:

Սիրում էր Տերյան
Մի վեչիթերյան:

Աշխարհում այս սուբվերսիվ
Լինենք պրեվենտիվ:

Աշխարհում արտաքին
Հանդիպեցինք Արտակին:

Մի կին կար վայրի
Կարոտ էր ծայրի:

Մի կին գիտեի ֆրանկաֆոն,
Նրան կծել էր հաֆոն:

*Դյյա անտալոգիի կուլտուռի նամերենյա իմեյուտ նի մենշեե զնաչենիե չեմ իխ ռեալիզացիա: (Իգոր Գալամշտոկ)*

Ֆեպարատ՝ ֆեմինիստական ապարատ:

Ու մենք
Որ գետինը մտանք
Հանրապետության վարչապետի պահվածքից
Ազնավուրի թաղման ժամանակ:
Նա այդպես էլ շշուկով գոռալ չսովորեց:

Առիթներ և շարժառիթներ

- Բրեդբերիին գիտե՞ս:
- Հա, շատ եմ սիրում, ֆանտաստիկ գրող ա:

- Առաջին երեխու անունը կեսուրի անունն են դրել, երկրորդը տալի:
- Միխայի՞լ:

Տանը միայնակ
Խմում էի կանյակ:

Վաճառված արվեստագետները
ՀԴՄ չեն տալիս:

Քիչ էին մարդիկ տվորչեսկի
Միսիայում միրատվորչեսկի:

Կարաբաս Բարաբաս,
Սանասար Բաղդասար:

*Վսե աբյեկտի նադը ստավիծ, կակ վ Ռասսիի ստավիլի խրամի: Սնաչալա նայծի իդեալնիյ պեյզաժ, ա պատոմ ակկուրատնը վստավլյած վ նեգո տո, չտո նեաբխադիմը պա սցենարիյու:*
*(Սերգեյ Սալավյով)*

Ինչ անել, երբ դեռ ուզում ես ապրել:

«Վայ, բարև Նարե ջան, էս դու՞ էլ ես հեռու հեռուներից գալիս»,
Ասեց մի աղջիկ, տեղավորվելով ծանոթի հետ նույն նստարանին:
Հետո նայելով դիմացը կանգնած տղայի նորմայից կարճ շալվարին
ու նարնջագույն գուլպաներին, ավելի ցածր ավելացրեց.
«Լսի, էս ձեր կողմի մարդիկ շատ սթայլիշ են»:

*Պետք չէ կասկածել, երբ ամեն ինչ պարզ է: (Տիգրան Խզմալյան)*

Անկենդան լեգենդներ

*Ապագան, որը մեր ներկան է, կարող էր այլ կերպ դասավորվել:*
*(Աժ Փոխնախագահ)*

Նիխաչու
Ասացի մի լիխաչի:

Ջամփ անեմ
Ջամփ անեմ
Ջամփաներին ջամփ անեմ:

Ծրջարան, շրջանաձև սրճարան կամ վայր որտեղ կարելի է շրջվել:

Նրա մահից հետո, իր այրին
Չնստեց այդպես էլ ուրիշի ծայրին:

*Ես խնդրում եմ հանրահավաքը չվերածենք ասուլիսի:*
*(Սերժ Սարգսյան)*

Յանրահավանք

- Դուք հայտնի մարդ ե՞ք:
- Դա հայտնի չէ:

«Մոտ արի»,
Ասացի մի օտարի:

- Լուրերը մեզ քանդում են: Ամեն օր լրասույզ լինելով, մեզ քանդում ենք: Լրասուզակ ենք դարձել:
- Յետաքրիր բառ է: «Լուր»-ն է արմա՞տը:
- «Լիրը»: Ընդհանրապես մեզ շրջապատող շատ երևույթների արմատն է «լիրը», ինչպես սիրում է կրկնել ռեժիսոր և հետազոտող Ստեփանյանը: Նա լրահայերի, լրի ապոլոգետների և նաև անիարկի տեղը իրենց լիր երևակայողների գլխավոր երևակողն ու նաև համատեղության կարգով հաշվառող-գրանցողն է ոչ միայն ՅՅ տարածքում այլև ամբողջ Լիրքում:
- Դուք էլ ե՞ք լրահավաք խմբից:
- Այո, բայց մի փոքր վերապահումով: Ես նաև ստեղծում եմ լիր: Այսպես ասաց խաղացող-մարզիչ եմ: Կամ՝ գլենդելահայ երգչի ասած՝ «Յամ երգում եմ, համ նվագում»:

Իրենց կյանքից գոհ են
Եղբայրները Կոեն:

*Արծաթն ու ոսկին չունեն այն գինը,*
*Որքան՝ ընկերոջ հինը: (Արամ Ասատրյան)*

«Ուի առ մոր դըն իսթ»,
Վրդովվեց մի մոդեռնիստ:

Հագենում Կոպեն
Հագենում Կոպեն
Չէի հագենում քո աչքերից
Հագենում Կոպեն:

Ոսկին ու արծաթը չունեն այն գինը,
Որքան պլատինը:

Էս երկիրը
Էլ չի մոնտաժվում
Դրա համար
Կարճ կադրերով են տալիս
Հ1-ով
Որ չջոգենք:

- Կներեք, բայց ես չեմ կարող չասել՝ դուք վատ բանաստեղծ եք:
- Բայց վատ բանաստեղծը նույնպես բանաստեղծ է, ա՞յո:
- Այո:
- Դա արդեն լավ է: Իսկ Հայաստանում ինձ նմանները շա՞տ են:
- Այո:
- Այ դա արդեն լավ չէ:

- Ընդհանրապես գործը պետք է հանելուկ, զագադկա լինի նաեւ ստեղծագործողի համար:
- Ուզում եք ասել, որ չե՞ք հասկացել թե ինչ եք գրել:
- Հիմնականում զգացել եմ միայն: Արամ Ասատրյանի «Ես չեմ լինի, բայց կզգամ» ֆրազը լավ բնութագրում է այդ հոգեվիճակը:

Հիպերփուլային տարբերակ

«Ե՞րբ պիտի օրենքը համապատասխանեցնենք ոչ միայն տառին, այլև ոգուն»,- ասեց մի պատգամավոր խորհրդարանում:
«Շատ կարևոր հարց եք բարձրացնում»,
Պատասխանեց պատասխանողը ու ավելացրեց.
«Ինչպես միշտ»:

«Արցախը դու ես տվել»,- շպրտեց մի գործիչ:
«Արցախը դու ես տվել»,- ետ շպրտեց երկրորդը:
«Դուք ի՞նչ խեռս եք, որ Արցախը տաք կամ չտաք, Արցախը ես եմ տվել»,- միջամտեց երրորդը, ով իրականում երրորդը չէր:

Բարե.rar
ծպտված բարերար

Անդամս էի մարզում
Ստավրոպոլի մարզում:
Ես չէ:

Վերջնախաղ և վերնախավ:
Վերջնախավի վերնախաղը:

Ինչպես կարող եմ ստեղծագործել
Եթե ինձ անընդհատ ստիպում են գործել:

ՌԴ-ից չերեզ Երևան
Վաթսափով խոսեցինք Լոս
Յոպարը Յամոյի էկրանին էր, մենք Յոպարի:
«Արա էս խի ե՞ք փոքր երևում»,- հարցրեց խմած Յամոն:
«Ապե ստե չեն, տրանզիտով են, էդ ուր ա քեզ տարե Լոսի պլանը»,
Ասեց հոպարը արդեն ջոգած ու խնդացող Յամոյին,

Ով ընդեղ ոչ լեգալ մարիխուանա էր հավաքում մի պահ,
Ու երբ ամառը եկավ երկու ամսով, հենց սկզբից ասեց.
«Դեմի վախտը ձեռս մկրատ չտաք, կարող ա բույսերը թեթև կտրտեմ, խասյաթ ա»:

Փող չլինելը
Փող չլինելուց ա գալիս:

*Չերիք ա, էսքան նայել ենք, եկեք տեսնենք,*
*էսքան լսել ենք, եկեք իմանանք:*
*(Նիկոլ Փաշինյան, ազգային ժողովի ամբիոնից)*

Մեր սիրո պարապետը
Սակրալ հույսի սպարապետը:

«Ես էս զատիկը Նոր տարուց շատ եմ սիրում»,- ասեց մի ջահել կին:
«Ես էլ»,- պատասխանեց տաքսու ձելավոյ վարորդը ու շարունակեց.
«Չնայած Նոր տարուն որ քշում էս, լավ փող էս առնում»:

2021-ի աշունը չեմ հիշում:

Դերասանների մեջ քիմիա կար, ու նրանք օրգանական էին միջավայրի ֆոնին, այնպես որ ֆիլմը անվանեցինք «Օրգանական քիմիա»:

Մենաշարժություն

«Լավդ քունեմ, հեռախոսը վեկալ»,- լսվեց մի ձայն փողոցից, գիշերվա կեսին:

«Ֆաքինիստ» հրատարակչություն

«Մուծիր հարկերը»,
Հաղորդագրեց ՊԵԿ-ը,
Թե չէ կկատարենք քեզ
Ինչպես՝ Գրեգորի Պեկը:

Էկրանը վառվելուց հետո
Հինը դրեցի:
4:3-ը տոչնի էր նայվում
16:9-ը չէ:
Հետո զվուկի պլատան փչացավ
Միջավայրը իդեալական դարձավ
Համր կինո նայելու համար:

Ծայրամարտ

«Տելեվիզրը ըստուց կմիացնենք ինտերնետին»,- մատով ցույց տվեց հարևանը, երբ մեզ կանչել էր շրջայցի ռեմոնտի ընթացքում:

«Հանուն Քրիստոսի, հանուն Նժդեհի»,- ծաղկազարդի պսակը ձեռքին գոռում էր երեխան:

«Արի գնանք ընդմիջման»,
Առաջարկեց մի միչման:

Պատրիարքալ միջավայր ա, բայց կլրի ղադրը չգիտենք:

«Լիր արքա, ուց թագուհի»

«Եսլի նի պրոսյատ, նի նադո լեզծ»,
Ասել էր Շերիշովը Կայծին, Կայծն էլ ինձ:

Ռուկոլա, պոպոք, կապույտ կաղամբ,
Դորբլյու, չիր, տանձ, մեղր:
Անհոգ կյանքի սալաթներ:

Ջազի բալոն

Թղթեր և ստվերաթղթեր

«Մտքիս թելը կոտրվավ»,- ասեց Կայծը:

«Սպասիր ինձ», «Ճիշտ ժամանակին», «Առանց թեմայի»:
Իրար հետեւից գրված էին Յ1-ի հաղորդումների անվանումները իրենց սայթում:

«Գամառջոբա»,- բարևեց քայլող Կարապետյանին մի հոգի 2017-ին,
«Խի՞ էս վրացերեն խոսում»,- հարցրեց հեռացող Վիլիելմիչը,
«Թիֆլիս եմ ծառայե»,- ասեց անծանոթը ու փակեց խոսակցությունը:

«Սիրելի Վիտյան, լքեց մեզ հավիտյան»,- ասեցինք ու մի քանի ամիս հետո կարդացինք նույնը Արամայիս Սահակյանի մոտ:

Լրահաս վտանգ

Մթագրություն

Ամոքիր ինձ, մոքիր:

«Դու նորից խառնում ես իրականությունը կինոյի հետ, Հեկտոր»,
Ասեց Էրնեստո դե լա Կրուզը մեզ՝ հեկտորներիս:
Մենք, որ այդպես էլ չկարողացանք հարգել ուրիշի հիշողությունը:

Ուրիշի հաշվին
Սթեփ բայ սթեփ
Իրենց գույնզգույն ապագան սարքող
Լեգոիստները:

«Էս վրացական կոնյակը ոռի բան ա»,
Ասեց Կայծը Սոչիից, վաթսափով, ու ավելացրեց.
«Չեմ սիրում էդ ֆիալետըվի համերը»:

Մեր հիշողությունը ցավոք մնաց միայն հիշողության մեջ:

«Պատմությունը եթերներ չի սիրում»,- սխալվեց մի գործիչ:

Հոմոգեն լույսի ոլորաններում

Գորգավաճառ Մաքսիմ՝ Մաքսիմ Գորգի
Գորգավաճառ Մինասյան՝ Գորգի Մինասյան

«Պուտին խույլո»,
Գրված էր ռուսերեն
Ֆիզիկայի խաչմերուկ չհասած:
«Պուտին նե խույլո»,
Գրված էր աչքի հիվանդանոցի մոտ:
«Արցախը Հայաստան է և վերջ»,
Գրված էր կվարտալում
Երկու գառաժների նեղ արանքում

Որտեղ նոր գառած սարքելու տեղ
Էլ չկար:

Մենք, որ ուզում ենք, բայց ամաչում ենք նայել բալկոնից,
Որ պատահական հայտնված մթերք վաճառողներին հույս չտանք:

Սեպարատ սիրով
Աներկբա հույսով
Եկեք սիրենք իրա
Երազի լույսով:

«Ես թոռնիկներիս հետ եմ եկել
Ես մաղթում եմ որ մեր թոռնիկները
Խաղաղ երկնքում ապրեն»,
Ասեց երթ-միտինգի մասնակից
Տարիքով կանանցից մեկը՝
Վախտին դզվածներից:

«Ծանր հաստ ձկներ
Ծանր մեծ ձկներ»,
Գոռաց մի տղամարդ բարձր:
«Սիգա, կապչյոննի»
Ավելացրեց նրա կինը:

«Երջանիկ տները չեն վաճառում»,- մտածեց Ժիրիկ Սահակյանը ու ստորագրեց վաճառքի թուղթը նոտարում:

«Անձրև ա ըլնելու, արևը էլի կըծըմ ա»,- ասաց մի ճաղատ երիտասարդ ու չսխալվեց:

«Տեղդ տամ, իշի»,
Ասացի մի տամիչի:
«Տոմսկ-414» մրցույթին մասնակցած ոտանավոր:

Ասում են պարենային ճգնաժամ է լինելու
Քանզի չոր է մեր արտը
Չոր են նաև ուրիշների արտերը
Ճատացել են դարդերը
Ու արդեն ոչ միայն մենք ենք
Տարեկան հայտնվելու անդունդի եզրին
Այլև ուրիշները:

«Անընդհատ, ամեն ինչի մասին կարդում էի ծանոթանալու համար, բայց հետո ժամանակ չեղավ կարդալ՝ հասկանալու համար: Իմացանք թե ինչ էր պետք կարդալ, բայց իմացածը կարդալու ժամանակ չեղավ»,- եզրափակեց Արմենը:

«Ժամանակ էլ չկա տեղ եթանք»,- ասեց մի կին:
«Չէ, լավ ա, ես երեկ գնացի»,- պատասխանեց մյուսը:
«Էս օրերից զզվըմ եմ, ուրբաթն եմ սիրում, նենց կուզեի իրեքշաբթվա տեղը ուրբաթը ըլներ»,- շարունակեց դժգոհը:
«Բա ուրբաթի տե՞ղը ինչ ըլներ, ախչի»,- հարցրեց գոհը Սպիտակ, լիքը գազելում:

«Կա տարբերակ որ իրականում մերոնք գազանանոցի վրա են հարձակվել»,- չասեց ոչ մի ավարայրագետ:

*Մենք ունենք հոյակապ գաղթօջախներ: (Արվեստագետ)*

Ընդհանրապես, լուրջ խնդիր ա, եթե քո ցանկությունների բավարարման համար մարդիկ են պետք:

Սարերը չեն շարժվում:

- Ցանկություն չկա՞ իջնելու փողոց:
- Ավելի շատ բարձրանալու ցանկություն կա: Բայց ապրելով հինգ հարկանի շենքի չորրորդ հարկում, տարբերակները շատ չեն, ընդհանրապես շատ չեն:

«Հույս ունեմ մասնագիտական համքարությունները կօգտվեն այս հնարավորությունից»,- ասեց մի քաղաքական գործիչ:

Գըրետա Գեթսբի

Գրեթե Գեթսբի

Խեռադիտակի վարձույթ նուդիստսկի պլյաժում:

Վազքամարտ
Վազելով իրար խփել

Սպասասրահ
Սպաս ուտելու սրահ

Մի տարեց հայ քինգ
Սիրում էր հայքինգ:

Մեզ հետ էին երկրացիները,
Մարսեցիների համերկրացիները:

Ռոմերուժան
Տեր-Գոդարյան
Հայկական նոր հեռուստաալիքի հիմնադիր

Տվոռոգել` կաթնաշոռով ոռոգել:

Երգում էինք ու պարում
Սիրով Արարում:

Որձն է անմահ, լավ իմացեք:

«Ընդհանուր հայտարարի, գանք»,- ասացին թամադային:
Ընդհանուր հայտարարի չեկան:
Առանձին-առանձին հայտարարեց, եկան:

Ընդհանուր համարիչի գալ:

- Մինետի համար դեմից կպայմանավորվես:
- Խի՞ էլ ուրիշ ոնց ա լինում:

Բանկում ձմռանը ճանճ տեսա
Շարժվում էր շատ դանդաղ,
Ապակու վրա,
Կասսիրի պատուհանի վերևում:
Էդ օրը մի տարիքով տերտերի
Ճամփեն ցույց տվի գերեզմանների:
Ուշ էր իջել մի քանի կանգառ:

Տարածքը տեսահսկվում է
Տարածքը տեսա` հսկվում է:

Կլիրականություն
Կեղծված իրականություն

Գանդոնները թանկացրել են գանդոնները

Սա ու նա

Հոգեբաղնիք

Երկուհազարնոց զդաչի տվեցին
Հարազատ դեմք տեսա
Հիշեցի որ Տիգրան Վարդանիչը
Սիրում էր կոմֆորտ
Ու ֆրանսիական պաշտպանություն
Բայց ավելի հաճախ
Անհետաքրքիր ճռռում էր
Ռուսական պարտիայի տակ։

Համր կինոթատրոն ջրի տակ՝ «Ակվա-Լանգ»։

Ճեմապակի
Ապակի որի վրա քայլում են

Շունտելով անցյալը։
Երբ մի պիրիուդ վերացնում են
Ու նախորդը հաջորդին կարճ կպցնում։

«Այսօր վաղը և երեկ» ժողովածու

Սիրո ջենտրիֆիկացիան

Դիտեցի ջրի տակ Մուռնաու ու Լանգ
Հագիս կոստյում, դեմքիս ակվալանգ։

«Քուրըս չըրթած սեմուշկա տու, առանց կլեպի էլի»,
Ասեց մի կին սուպերմարշեյի աշխատողին։

«Դվին-Պիքս», սերիալ՝ ութսունականներին «Դվին» հյուրանոցում տեղի ունեցած առեղծվածային մի դեպքի մասին։

Հույս չունենանք թե կազատվենք կրքերից։

Կատարեցի մի տարեցի։
Սեքս տուրիզմը Հայաստանում։
«Լ.Ի. խաչու» ՍՊԸ

Վեյմարյան սինդրուկ
Սինդրուկ, որն ուզում է տարածվել ու գրավել։

Կոմպլեմենտար սիրո իմպլեմենտացիան

Ինքս իմ հետ համաձայն չլինելով հանդերձ՝ պնդում եմ իմ պնդումը։

Գիտե՞ք, որ պրոռեկտորը դա պրոֆեսիոնալ ռեկտորն է։

Մի անգամ ծանոթիս վրա բաց ծովում մի ձուկ էր հարձակվել։ Ձուկ կա, որ մարդուն կոնկրետ մի տեղից է խփում, հենց դա էր։ Կոչվում է քունաձուկ, գիտե՞ք նրա մասին։

Ոլորտներում Սիրո
Խճճվել էր Ժիրոն։

Սեպտեմբերից նոյեմբեր
Նստում էր հեռուստացույցի առջև
Ու կարդում էր դանդաղ
Վերից վար իջնող
Անստվեր ժամանակի կորուստները:

Դեյվիդը ֆինն չէր
Դեյվիդը ֆինն չէր
Ի տարբերություն Ակիի
Դեյվիդը ֆինն չէր:

Ինտերնետում, ինտերնետում
Իրար վրա քաք էինք նետում:

Գրում եմ երկտողեր, եթե զգում եմ որ երաժշտության տակ կարող է գնալ, անվանում եմ դրանց՝ «երգտող»:

Ունեմ «Բերաններ» շարքը: Մարդու բերանի ֆոտոն է միայն: Սա ինչ որ տեղ լուծում է ցանկալի տեքստի վիզուալիզացիայի խնդիրը: Այ ասենք «Վարդան Դանիելյանի բերանը» գրելու փոխարեն՝ կտրում դնում ենք նրա բերանի ֆոտոն: Հիմա բերանները բավականին հասանելի են, ինտերնետում մասնավորապես:

Սեպարատ
Առանձին և պարարտ

- Անընդհատ ասում եք՝ «Նրանք»: Ո՞վքեր են նրանք:
- Ոչ մենք:
- Իսկ ո՞վ ենք մենք:
- Այո, և ուր ենք գնում:

Անուններ չտամ, որ ոչ մեկի չնեղացնեմ, քանի որ հենց դրա համար էլ տալու էի:

«Անարգանք ու սեր» ժողովածու

Մեզ աշխատավարձ ա պետք, ոչ թե գործ:

Հանրույթներ և համույթներ

Երևակայական համույթներ

*Ժամանակն է որոշում ձևը, էությունը մնում է անփոփոխ:*
*(Ռեբրենդինգ արված կոնյակի շշերի ռեկլամ)*

«Էս արջուկն ա, էս էլ իրա մեդվեժոկը»,
Ասեց մի կին թոռանը, մեր կյանքի «Գազել»ում:

Ժամանակակից արդիականության հիմունքները

Անառիկ սիրո ջենտրիֆիկացիան

Վալլեքս տեքստիլից գնեցինք պղնձե թիկնոց:

- Սկզբից մենք ձկանն ենք ուտում, հետո մեզ որդն ա ուտում: Հետո որդին ձուկն ա ուտում:
- Ու՞մ որդին:
- Արա մի ջրիկացի, լսի: Մի հատ էլ եմ ասում: Ձկանը մենք ենք ուտում, որդը մեզ ա ուտում: Հետո որդին ձուկն ա ուտում:
- Այսինքն ձուկը հետո մեզ էլ ա՞ ուտում:
- Հա, բայց ուրիշ ձուկ ա:

«Իմացար Գլադունչիկը մեռավ»,
Ասեց ինձ էլցանցի մի հին աշխատող ու ավելացրեց.
«Նա տկլոր եկել էր Երևան ու լավ հագնված գնաց մետրոպոլիա»:

«Փառանձենը գառաժի դեմը ավլել ա»,- զեկուցեց մի կին, հեռախոսով, գառաժի դեմը կանգնած:

«Ուստա Ռուբո, լավ ա, դու էլ մի արի, ես ու Մերուժը մի կողմից կբռնենք, իրանք մյուս, կիջացնենք»,- գոռաց սպիտակ մազերով մի երիտասարդ, «57» դեղին ավտոբուսի միջից, կանեցում:

«Սեներընի ավտոբուս կա, երեսունհինգ համար, Լենինգրադյանից դրանով արի, Գոռ ջան»,- ասեց պինդ բիլակներով մի տղա, «35» ավտոբուսի մեջ:

Դիսպերսիվ դիսկուրսներ

Սորոսկել

*Մի հատ արագ ձեզ ինքնահայեցման ենթարկեք:*
*(Խորհրդարանի նիստից)*

Անդամանդ

Յարդակ
Երբ հարդերում բարդակ ա

Ընտրություն և ընտրույթ

Ի դեպ, Մարքսի կառապանին կարելի է ասել՝ «Կառլապան»:

Քաչալը գնաց տանձի
Վախեցավ գլուխը խանձի
Թափով մտավ տեղերը
Կատուն կերավ կլիրը:

Աստղաբույժ

Ստորացրություն

Բազմազավր

Պոլ Մաքարտնիի մասին վերջերս շատ եմ կարդում, ու ընդհանրապես մաքարտիզմի:

*Մեր հայրենիքը բաստուրմայի նման կտրում են:*
*(Էդուարդ Շարմազանով)*

Օգնինսկու Պոլոնեզը
Ու Պոլանսկու Օգանեզը:

Մեր հոգիները թունավորված, լքված ու չռեկուլտիվացված:

«Per aspera ad astra»
Ֆիդել սիդիտ ու Կաստրա:

Դրական գեղարվեստական գործունեություն

«Որ ես իմ հետ շախմատ եմ խաղում, թույլ եմ խաղում որ կրվեմ», ասել էր մի աշակերտ, շատ վաղուց:

«Բնություն և երկինք» ժողովածու

«Վազգեն Մանուկյանը քաղաքական բեսպիլոտնիկի նման ա, նայում ա որ նոր մարդ հելնի՝ վերացնի»,- եզրափակեց Ժիրոն:

*Միջադեպք է եղել երեկ: (Օնլայն հաղորդավար)*

Նետաձի
Մինետաձի:

Ես եղել եմ մինետաձիգ
Անկեղծացավ մի նետաձիգ:

«Թայսոնի Նյու-Յորքի տան բաղնիքը մեր Արմենն ա արել, Գյուլամիրյան Արմենը»,- ասեց հոպարը, չխմած:

Քաղաքական խաչերը ու մեր ֆորտիֆիկացիան մեզնից:

Դեպի Պետդեպ

Գլուխներիս արեցին ֆոկուս:
Կանգնած ենք լուռ՝ մեջքներիս բլյուռ:

Մարդ-անձնավորություն

«Համաշխարհային նշանակության անձնավորությունները և նրանց հետ նկարվողները» ալբոմ

*Ժամանակի վրա հույս դնել չի կարելի: (Լևոն Տեր-Պետրոսյան)*

Հարկադիր կատարողներն ու անհարկի կատարվողները

Մի քանի տարի առաջ
Անցյալը ավելի մոտ էր:

Էս տարիքում շորերը էլ չեն փոքրանում, միայն մաշվում են:

Նստած սպասում էին վերջին
Պոետները վերջին:

Մեզ մոտ
Մոնտաժը լավ չի ստացվում
Քանի որ չենք կարում
Զոհել մասը
Հանուն ամբողջի:
Կամ էլ մեզ մոտ
Մասն ու ամբողջը
Նույնն են:

Եթերնիկ
եթերային թիթեռնիկ

Պարտույթի բարդույթը

Երաշտագետ
Երաշտների մասին երգեր երգող, քորոնաչներ:

- «XXX»-րդ դարի հայ դերասանները:
- Ո՞ր ժանրի:
- Գուշակեք:

Ես կարծես թաղել եմ իմ մեռելներին
Բայց չեմ կարողանում թաղել մեր մեռելներին:

Ինստիտուցիոնալ ջերմոցներ

«Կարապետ, բեղավորների Աստված»,- լսվեց նույն երեխայի ձայնը բակից:

Որձադաշտ

Պարող գլուխներ
Պարագլուխներ

«Նիկոլը հեսա գալիս ա, հինգ րոպեյից հրապարակ ա»,- լսվեց մի ձայն: «Նիկոլ նախագահ»,- ոգևորված ու սխալմամբ գոռաց մի պապի, ում միանգամից, հայացքով, սաստեց կազմակերպիչը՝ Ֆիալետըվի կաստյումով ու «Ապագա կա» գլխարկով՝ մի չինովնիկ:

*Յու շուդ օփեն յոր մաութ ա լիթըլ ուայդըր՝ ուեն յու սփիք:*
*(Վիլլի Վոնկա)*

«Ես հիմա բոլոր փակագծերը չեմ կարող բացել»,
Ասում էին քաղաքական թեկնածուներից հիմնականում բոլորը:

- Մեթոդիզմը դա մեթոդի վերածված պարադիգմն է, թե՞ պարադիգմի վերածված մեթոդը: Եվ մի բան էլ՝ պարադիգմը հարացույցը չէ՞:
- Այո, հարատև ցույցը: Ես ժամանակին մասնակցում էի դրանց:

- Իսկ եթե ուշ էր լինում, ցույցերից հետո ինչպես էիք հասնում տուն, ոտքո՞վ:
- Ոչ, մարդկանց հոսքը ինձ իմ կեցավայրի մոտ հասցնում էր:
- Տաքսիներից չե՞ք օգտվում:
- Ինչ մեղքս թաքցնեմ, ոչ:
- Իսկ մեքենա ունեցել ե՞ք երբևէ:
- Միայն ժամանակի:
- Հետաքրքիր է: Ո՞ր ժամանակում կուզենայիք հայտնվել:
- Արդեն այստեղ եմ եկել:

Պրոֆդեֆորմացիայի ինստիտուտում անցել եմ ստաժավորում:

*Ցավոք, նախկինները ներկա չեն:*
*(Հաղորդավար, նախընտրական դեբատների ժամանակ)*

«Մասունքներ կան, որոնք հաջողված են»,- հայկական կինոյի մասին հաղորդման ժամանակ ասաց մի ռեժիսոր:

Ուրիշների սիրո բեքսթեյջներում

Մենք որ ընտրեցինք չընտրելը

Անսահման երկիր

Կուլտի ռեկուլտիվացիան

Ցեմենտ էինք հանում վերև:
Մեկս միշտ մնում էր ցածը
Որ չտանեն մնացածը:

Ուղիղ դիմացի շենքի
Դիմացի հարևանի
Պատուհանը բաց էր
Ապրիլից հոկտեմբեր:
Այդ սենյակում հեռուստացույցը
Միացված էր քսանչորս ժամ
Ու օրերի մեջ, ամիսների ընթացքում
Այնտեղ երևում էին
Ֆուտբոլիստներ ու դերասաններ,
Երգիչներ ու փորձագետներ,
Կտրատվող մթերքներ ու կենդանիներ,
Կանայք ու քաղաքական գործիչներ:
Բայց հիշվեց միայն մի բան
Երբ տոթ ամառվա շոգին
Մեր բալկոնին նայեց Շերոն Սթոունը
Ու ոտքը ոտքին փոխեց
Գիշերով:

Հոծ էինք
Մեզ նորից դարձրին
Հաղորդակից անոթներ:

Մենք, որ միշտ գտնվում ենք հոգևոր ջեթլագում:

Մեզ հոգնեցրել են արվեստի մարզիչները:

- Մի անգամ ջինը սխալմամբ խառնեցի գինու հետ, և այն անվանեցի «Ջինի»:
- Լավ բան է՞:
- Նողկալի է, Ալադդին ջան: Ավելի լավ է ժասմինով չայ խմենք:

Սամմիթն ու լոբբին:

«Դարձել էս ու դարձյալ» ոտանավորում էսպիսի տողեր կան.
«Մերկապարուհին, մերկապարուհին,
Հապա մի նայեք տեսեք՝ մերկ ա պարուհին»:

Մեր կապարուհին

Սիլվեսթր Ստալլոն,
Յու ար նոթ ըլոն:

- Ձեր գրածները իրականում խորը չեն:
- Գիտեմ, ես ծանծաղրածու եմ:

Հագ արեց նա շատերին,
Բայց մեկ ա մնաց անհագ:

Չհարգվեցինք, բայց հագվեցինք:

«Ցտեսություն, տեսություն» պրակտիկ դասընթաց

«Քաբուլե»՝ աֆղանական թաբուլե

Չայ բեր մեզ Լիմոնով, Էդուարդ ջան:
Գործերիդ Կաց, Օտտո:
Սաղ օրը էդ Սիմոնի հետ էս,
Լրիվ դառել էս Գարֆունկելը:

Աղվեստագետ

Աղվեսները քսաներորդ դարի
Շատ են բարի:

Ընդհանրապես, համացանցից օգտվելիս չպետք է մոռանալ «Մենք բոլորս հյուր ենք կայքում» ասույթը:

*Սո, դը լենս չոյս իզ ըբաութ դը մեմըրի, յու վուդ հեվ, իֆ յու ուեր դիեր: (Ջեյմս Քամերոն)*

Էս վերջերս chess.com-ում խաղացի Կուբա Գեպարդի, Գորիս Բելֆանդի, ու Լեմմոն Էրրոնիանի հետ:

- Փերֆոռմանսները դրանք փերֆորմատիվ ռոմանսներն ե՞ն:
- Կարելի է, բայց իմ դեպքում ավելի շատ ռոմանտիկ փերֆորմանսները:

Առաջ մարդիկ տարիք ունեին

«Սիրո ռեպրեզենտացիան» գրքի պրեզենտացիայի ժամանակ ենք ծանոթացել:

Մեզ հոգնեցրել են անկենդան դասականների
Քրեստոմատիկ բնութագրումները:

Ու՞ր են հիմա
Էն ասֆալտ անող գյադեն
«Սաս»-ի ժողովի կնանիք
Էն կինը, ով եկել, փչացնում էր տոնը,
Էն մարդիկ, ում տոնը փչացնում էր էն կինը, որ եկել էր:

Բառերը իմը չեն, բայց երաժշտությունը նույնպես:

Իմ բիրը

ՀՀԿ-ի ու ՔՊ-ի գոնգող ՀԿ-ները:

- Էդ ֆիլմում խի՞ ա իննսուն թվի Լենինգրադը դատարկ:
- Դե հիշողություն ա, քո հիշողության մեջ մենակ դու կաս ու էն ինչը քո համար էդ պահին կարևոր ա:

«Դրա համար էլ մեր ազգը սիրում ա տղա ծնի, մարդուն իրա տղեն պտի թաղի, քո կենացը Լյովա ջան»,- ասեց մի փողատեր ուրիշի հոր քելեխի ժամանակ:

Սիրենք ու ճաշակենք

«Հայրենյաց դրոշմ, մեր ազատության ծածանվեց ընդդեմ»,
Գոռաց երեխան ու ավելացրեց.
«Կարապետ, տուր հեծող քշեմ»:

Մի փորձեք անցյալը ներկա-յացնել

Կրակում են
Քերում են մեր մաշկը աջից:

- Ի դեպ, «Բարկարոլլա, սիրո կոնդենսատ» հոդվածում այդպիսի մի միտք դրել եմ:
- Դու՞ք եք գրել այդ հոդվածը:
- Իրականում ոչ, ուղղակի էդ միտքը ավելացրեցի տողերի արանքում: Ձեռագրով, ամսագրի մեջ:

Ես ավելի շատ տեսաբան եմ պրակտիկ իմաստով:

- Կյանքը դա դասերով լի ընթացք է:
- Դասընթա՞ցք:
- Այո:

Էս երկրում, որտեղ շատերի
Ծնվելու ու մահանալու թվերը
Սկսվում են երկուսով:

Ծավալաբուծություն

«Ամ նօթ ա չեսս փլեյը, ամ ը գարբիջ, սո յու ար»,- գրեց ինձ մեկը chess.com-ում, 14:14 հաշվի ժամանակ, ու գնաց:

Մեզ մոտ «Մերսի» շոկոլադ առանձնապես չեն ուտում, քանզի կաշառվողը նաև կաշառող է:

Երեքով էպիկական կատարման ընթացքում էն աղջիկը կարա ասի. «Սանասար, Բաղդասար, ...ս ծծեք հավասար»

Վրացական «Ուցուկլի» ամսագիր-շաբաթաթերթը հրատարակեց իմ «Լիր արքա, Ուց թագուհի» հեգնական պիեսը, որի բնօրինակը հետագայում թարգմանվեց վրացերենից:

Ոսկեվազի ավտոբուսով հետս բերի
Ութ հատ Պըլտյան:

Համասեքսուալիստ
Համատեղում եմ սեքսուալը և համատեքստը

«Գուսան Պուսան» կորեական ժողովրդական երգերի փառատոն

Մեծանում ենք
Ու հեռանում
Միմյանցից:
Ջրերի նման
Վառվող արևի տակ
Իրարից ծանծրացող:

Ճամփաները, որոնք ոչ մի տեղ չեն տանում
Ոչ մի տեղ չեն տանում:

Գինեգործակալ

«Ինչ Էս խոսում, այ հոմլես»,- ասեց նույն երեխան:

«Վճարովի որսորդներ» դրաման

«Փաշա ի մեդվեդ»

Վարվեցին մի տեսակ անօրեն,
Նույնիսկ տեսականորեն:

Դուսանկարիչ՝ Էքստերիերային ֆոտոգրաֆ

Էյ, բի, սի, դի
Յու, Էս, Էյ, դի:

Էթնիկ սիրո դեմարշը

Լեզվով էս ինչ խաղեր էս տալիս
Դու լրիվ յազիչնիկ էս:

Առափնյա սիրո կառապանները

Ցանկացած ելքից մուտք կա

- Պետք է մասնակցեի ֆիլմի ձայնագրման աշխատանքներին, բայց ցավոք չստացվեց:
- Ինչու՞:
- Ֆիլմը չնկարահանվեց:

*Ահա և վերջ:*
*Հետևեք առաջինին,*
*Եղեք առաջինը:*
*(Հ1-ի հաղորդավար)*

Ազգային կինոձայնի մասին մտածելիս, եկանք թոնրի մեջ վերաձայնագրման գաղափարին, որը անվանեցինք՝ թոնիրովկա:

Ապրում էինք ուրախ
Ապրում էինք տխուր
Սալաթի մեջ գցում էինք
Քացախ ու նեխուր:

Բեմի ափին

«Տենաս փակ ա՞ ՆՓԱԿ-ը»,- էդ կողմերով անցնելիս ասեց Կայծը ու խնդաց:

Մենք որ մեր ներկան
Լցնում ենք
Ուրիշների անցյալով:

Դուք որ խեռում էիք Նիկոլին
Դուք որ խեռում էիք Քոչարյանին
Բա իրա՞ր խի էիք խեռում:

Երբեքմն
Երբ մի բան ժխտում ու քննադատում էս
Բայց ինքդ մեկ-մեկ անում էս:

*Դոլորես, Դոլորես*
*Նայի չոլորես:*
*(Լատինաամերիկյան հորդոր-բանաստեղծություն)*

«Ես Հայաստանին «Տիեզերք» պիտի բերեմ»,
Ասաց «Միսս տիեզերք»-ի ՀՀ մասնակիցը նրանց՝
Ովքեր ժամանակին տիեզերք ունեին,
Բայց ում վրից այն մանդըրից տարան:

Վիկի-մաուս,
Մուլտ պերսոնաժ, ով գիտի ամեն ինչ:

Էսօր
Թե չես մեռել
Դեռ ջահել էս:

*Դուք էիք շարժման մոդեռատորը ու թիվ մեկ հռետորը:*
*(Ընդդիմադիր)*

Բնագավառը դա բնական գավառն ա:

«Բամբուռ, չոռնայա սլիվ»,- լսվեց հեռվից,
«Դանդուռ ա գոռում կամ դամբուլ»,- մտածեցի,
Երբ ետ էի գալիս աղբը թափելուց:
Բայց մոտիկանալով շենքին, նորից լսեցի.
«Բամբուռ, չոռնայա սլիվ»:

Մի ժամ սարքող գիտեինք,
Նա նաև ժամավաճառությամբ էր զբաղվում:

«Արա նոր եմ զարթնել էրեգ»,- գրեց Կայծը էսօր ցերեկը
Օդեսսայից:

«Ինչորիցե»,- ասեց մի մարդ-հյուր քաղաքական հաղորդման մեջ:

«Էսի գյոթ տեղ ա, ստե շանս չկա»,- հայերեն ասել էր մի անծանոթ
մարդ Կայծին, Օդեսսայում, կազինոյից դուրս գալիս:

«Չեմ հիշում տենց բան»,- պատասխանեց Կարոյան ազգանունով
աշակերտը «Դուք Նազարեթ անունով բարեկամ ունե՞ք» հարցին,
ու ավելացրեց. «Էս պեշկեն b6-ում է՞ր թե b7-ում»:
Նա սիրում էր երկար մտածել քայլերի վրա
Իսկ դասից հետո շաուրմա էր առնում
Grill.am-ից ու այն դանդաղ ուտելով
Բարձրանում էր Բաղրամյանով:

- Ձեր բոլո՞ր բանաստեղծությունները վերնագրեր ունեն:
- Իմ ոչ բոլոր վերնագրերը ունեն բանաստեղծություններ:

Խելահեղ օր, կամ Արոյի ամուսնությունը:

Չստացանք ուսում
Մնացինք անուսում:

Կառապաններին առափնյա սիրո
Երբեք չսիրեց Սաhակյան ժիրոն:

Մի մարազմ խմբակ, «Օլիմպիա» ռեստորանում, կարար նշեր Լեննի Ռիֆենշտալի hարյուր քսան ամյակը:

Գիշերը մնացինք մերկ
Մինչև լույս անթիլ:
Սովեցինք, սառեցինք
Բայց չդարձանք մերկանտիլ:

Միֆիլիս:
Երբ hիվանդագին միֆերը մեզ քայքայում են:
Ուրիշների մեր մասին պատկերացումների ընկալումը
Որպես մեր մասին մեր սեփական կարծիք:

Ծափիկ, ծափիկ, ծիրանիկ՝
Սիրո ոլորտում:

«Փողկը ճղած, տեռը մեծ»,- ասեց մարտակերտցի մի կին,
Ով վաղուց արդեն Մարտակերտում չէր ապրում:

«Յզոռ ռեստորաններ, որտեղ բեսկանեչնը պաժիռայուտ պիշչու ս ունիլիմ վիդըմ»,- ասեց իզնաչալընը ռըսացած մի պալիտոլըգ, ում հետ, սակայն, դժվար է չհամաձայնել:

Գաստուրմացիա

«Երեսուն ժամը քա՞նի օր ա»,- հարցրեց մեկը մյուսին կանգառում: Պատասխանը չհասցրի լսեմ, ավտոբուսը եկավ, գնացին:

Մարկետից մինի
Գնեցինք գինի
Կանգնած էր
Չորս տարի
Էլ էն չէր
Արդեն:

Չիերապունջի կամ Մոզրով Ջյոսինմոն

«Ես ի սիքսում ռուք ունեմ»,- ասեց Մենուան Լոսից:

«Հետո որ գաս, սաղ բերանդ իրեք հազարով կսարքեմ»,
Ասել էր չաղլիկ ատամնաբույժը Համոյին
Լոս գնալուց մի ամիս առաջ առաջ:

- «Մենք բոլորս հյուր ենք Կատարում» տողը մեղմ ասած սուտ է, քանի որ, ըստ իմ տեղեկությունների, դուք այդ երկրում չեք եղել:
- Բայց ես գործողության մասին եմ գրել, ոչ երկրի:
- Բա ինչու՞ է գրված մեծատառով:
- Որովհետև դա մեծատառով գործողություն է:

«Ստեղծագործությունները իրենց հեղինակներից պաշտպանող կոմիտե»-ի անդամ եմ նաև: Մենք մեզ անվանում ենք՝ «Հեղինակ Կատարողներ»:

- Քանի որ իմ պիեսները մեղմ ասած այդքան էլ հաջող չեն, ընկերս՝ հետազոտող Ստեփանյանը՝ ինձ անվանում է «լրամատուրգ»:
- Դա նույն ռեժիսոր Ստեփանյա՞նն է:
- Այո, նաև կինոգետը ու քաղաքացին: Ժամանակ առ ժամանակ նրանք նույնականանում են:

«Վենետիկի կինոփառատոնի պարտվողները» հոդվածս ոչ մի տեղ չտպվեց: Այն շատ օրիգինալ էր ու երկար:

*Ուզում եք փոխել աշխարհը, սկսեք ինքներդ ձեզնից՝ սիքտիր եղեք: (Արեգ Գարեգինյան)*

Դու չէ, Դուչե:

Մեզ մոտ նույն սերիալներում աղքատների ու հարուստների չենք հանդիպում: Մի տեղ լավ ապրողներն են, մյուսում՝ վատ: Չնայած մեկ-մեկ խառնվում են, քանզի սցենարիստները նույնն են, ու թղթերն են խառնվում:

Խաչատուր Աբովյանի մասին մի լավ երգ ունեի գրած, բայց կորավ:

«Ձրով լինի, սրով լինի, պիտի գնանք, վաղ թե ուշ»
Գոռաց երեխան բակում ու նայելով կողքինին, ավելացրեց.
«Ի՞նչ կա, Վարդգես Պետրոսյան»:

Մեկը մրգերից ու բանջարեղեններից սաղ Չիպոլինոյի սաստավը դնում ա դեմը, նայում ա ու չի կարում ուտի: Կամ էլ հերթով վերցնում, կծում ա, միգուցե աղ անելով, մուլտի երաժշտության տակ:

Մութ էր, ցուրտ չէր:

«Կուզեի՞ր Չելենտանոյենց հետ վազեինք,
Բելլ Ջյուկն էլ վրեքներս կրակեր»,- հարցրեցի Արմենին:
«Մենք որ հետները ըլնեինք, կարող ա կպներ»,
Գրեց Արմենը, ով միշտ փչացնում էր ամեն ինչ:

Ստանիսլավ Ֆեմմ, ֆանտաստ ֆեմինիստ

Ժիրայր Սահակյան, սկսնակ թասագիր

Ժիրիկ Սահակյանը շպրտեց իր նասկիների մաշված թայերը, նախապես լվանալով, մաքուր ցելաֆանի մեջ դնելով ու պինդ կապելով: Ինքը հագնում էր մնացած երկու թայերը իրար հետ: «Միգուցե մեկ ուրիշը գտել ու հագնում է մյուս թայերը իրար հետ», ժամանակ առ ժամանակ մտածում էր Ժիրոն, ու տակը կալիգրաֆիայով ավելացնում.
«Մենք բոլորս եղբայրներ ենք
Ծակված նասկոլցների ներքո»:

Պատվաստվեց մեր Կարոն
«Կարոնավակով»
Որ ճամփորդի ազատ
Սիրո Նավակով:
Ոտանավորը կոչվում է «Լայն էր»:

Զբաղվում էինք սիրով
Զբաղվում էինք սիրով:

Գեղեցիկ թութակին անվանում են քյութակ:

Մինչև հեղափոխությունից հետո լավ էր:

Gerezman.com-ից Մարիան
Մեյլով առաջարկեց
Գերեզմանի մաքրում մինչև Սբխեչը,
Ու ես հիշեցի,
Որ մերոնց սկսել եմ ավելի շատ հիշել,
Բայց մոտները ավելի քիչ գնալ,
Գնալուց էլ միայն ցելոֆաններն եմ հավաքում
Ու թողնում նրանց նույն՝
Ոչ անտառ, ոչ այգի վիճակում:
Վերջերս էլ
Ջիվան Գասպարյանը մահացավ,
Ու ես հիշեցի, որ 2001-ին
Պապս գնացել էր «Գլադիատոր»-ին,
Ու կեսից քնել էր
«Կինոմոսկվա»-ի ջեռուցվող դահլիճում:
Նա ընդհանրապես սիրում էր քնել
Մութ ու տաք տեղերում,
Միացված էկրանի դիմաց՝
Կարևոր չէր մեծ թե փոքր,
Ու երբ տատս գալիս էր
Որ անջատեր տելեվիզրի խշշացող լույսը,
Պապս ասում էր.
«Ես քնած չեմ»:
Նա հաճախ աղյալը քցում էր բարակ տաքացուցիչի վրա,
Յուղով աշխատող,
Քյուրսի էր անում,
Պրիյոմնիկը բռնած
Պրիյոմնիկով ինչ որ բան բռնած:

Մեկ մեկ աչքը կպնում էր,
Աչքը միշտ էլ կպնում էր,
Ու «VEF-12»-ը  հերթական անգամ
Ընկնում ու չէր ջարդվում:
Պապին շատ բան էր տեսել,
Բայց գրական էր խոսում,
Թոռների մոտ քֆուր չէր տալիս:
Միայն մի անգամ, հարևանին բան պատմելիս,
Վերջին պահին նկատելով իմ ներկայությունը,
Դադար տվեց ու հետո շարունակեց.
«Ու ես նրան ասացի՝ եղիր այստեղից»:

«Սմարթֆոններ ժամանակին համընթաց»,
Ասեցին գովազդում,
Մեզ համար,
Ովքեր ապրում են
Ժամանակին ոչ համընթաց՝
Ժամանակին ոչ համընթաց ժամանակում:

# ՉՖԻԼՏՐԱԾ
# ՍՊԻՏԱԿ

-Ի՞նչ կա Ֆելիքսեթ,- բալկոնից բարձրաձայն ողջունեց մի մարդ բակում երգող տղամարդուն:

-Խի՞ չես կոշիկներդ վաքսըմ, Սանթրոս,- ասեց միջին տարիքի, լրիվ սև հագնված մի գեր տղամարդ՝ նիհար մյուսին, ում դեմքից անունը չէր հասկացվում: Քիչ հետո, նա, զապչաստի խանութի դիմացը նստած, յուղոտ մի գուբկա սկսեց քսել կոշիկներին:

Կլրաբաս Բլրաբաս

«Նալիծ վսեմ»,
Գոռաց մի մարդ՝
Ձայնով վսեմ:

«Բարձրաց, բարձրաց, բարձրաց»,
Երեք անգամ գոռաց Եղվարդի բոթասներով
Ու բեյսբոլնի գլխարկով պապը
Երեք թոռներին,
«57» ավտոբուս նստելիս, «Թումո»-ի մյուս կանգառում:
Նրանք սկզբից կանգնեցին,
Իսկ «Կայզեր» չհասած՝
Չորսով տեղավորվեցին
Երկու տեղանոց նստարանին:

«Կրկեսի վերաբերյալ ո՞վ գիրք ունի»,
Յարցրեց մի ապահովված թոշակառու վերնիսաժում:
«Մեծ ծակով ասեղ է պետք»,
Ասեց նրա կինը, մի քանի րոպե անց,
Մի քանի սեղան այն կողմ:

Ապրիլի 23-ին
Ուշ հետխորհրդային շրջանում նորմալ դզված մի մարդ,
Ում վրայից օդեկոլոնի հոտ էր գալիս,
Մի քանի սև մայկա ձեռքին քայլում էր փողոցով:
«Չորս հատ առա»,- ասաց նա հեռախոսով,
«Հատը երկուհազարով կտպեն,
Մի ժամ ստանոկի տաքանալը,
Մի քսան րոպե էլ ամեն մի մայկեն:
Դու նկարը էդ մեյլին ուղարկի՝
Որ երթին հասցնենք»:

Դրսում ցուրտ էր և պուրակ

«Դե գնացի, Առնոլդ ջան»,- ասեց սպիտակ մազերով մի մարդ մյուսին:

«Ամեն ինչը սռոկ ունի, Գևորգ»,- հոգոց հանեց մի կարճահասակ մարդ՝ նայելով բոյով տաքսիստին:

Գրող-գույքագրող

Միջանձնային բեռնափոխադրումներ

«Արա, դե մեր լեքսիկոնի մեջ վաբշե բառապաշար չկա»,- ասեց Կայծը:

Գարուն էր, միտինգ էր սպասվում,
«Բացօթյա ատրակցիոնները էլի գործում են»,
Գրված էր փողոցում,
Վճարովի զվարճալիքներով այգու գովազդում:

Լսում էինք նույն մարդկանց ձայները, տարբեր գաջեթներից,
Տանը, կանգառներում ու տրանսպորտում:

Մի ընկեր ունեմ, ով ընդմիջման ժամին
Հրապարակով էր սիրում անցնել,
Որ պատահական խնդրող տուրիստներին
Նկարի իրենց իսկ հեռախոսներով:
Նա լավ էր նկարում, գռդոն չէր անում,
Նկարելուց հետո նայում էր հերթական նկարին, ուշադիր:
Նա գիտեր, որ տեսնում է այդ ֆոտոն վերջին անգամ:

«Արա, ո՞նց ես»,- հարցրեց հիսունն անց մեկը,
Արագ անցնող մյուսին, Օրբելի-Բաղրամյան կանգառում:
«Արա չեմ քո հըմար»,- պատասխանեց մյուսը:
«Արքա էլ չես բայց, հըմի քեզ ո՞նց դիմեմ»,
Հետ գոռաց առաջինը հեռացողին:

«Լավ իշ մի հորս արև ընգել եք յալվար»,
Ասեց մի տղա հեռախոսով
Ու իջավ կապույտ «44» ավտոբուսից:

«Հոպար ջան, մենակ Ձախ Հարութ է՞ս լսում»,
Հարցրեցի տաքսու վարորդին:
«Չէ, խի, հունական էլ կա»,- կոպիտ պատասխանեց վարորդը:

«Արա էս «Մատրյոշկում» ուկրաինացի էլ չկա,
Սաղ ռուս են, հայ, ու մի երկու բելառուս,
Ստեղ էլ ենք ՀԱՊԿ-ի հույսին մնացել»
Ասեց Կայծը Տելեգրամի աուդիոյում:

«Եռալիք լուսադիոդային մազահեռացում»,
Կարդացինք գեղեցկության սրահի վրա,
Մի պահի սպասեցինք,
Հիշեցինք որ ավարտել ենք
Պոլիտեխնիկը,
Հետո մի հատ էլ կարդացինք,
Ու շարունակեցինք ճամփան:

Քովիդիվց հետո,
Հյուծված ու նվաղած տաքսիստ Գևորգին
Դեռ զանգում էին հին կլիենտները:
Նա երկար նայում էր հեռախոսին,
Բայց չէր պատասխանում:
Թթվածին արտադրող սարքը
Նաև տաքություն էր տալիս,
Եվ մարտին արդեն
Տան մեջ բավականին շոգ էր:

«Ես էլ վաթսունչորսի դեկտեմբեր եմ, համարյա վաթսունհինգ էլի»,
Ասեց մի կին երթուղայինի մեջ:
Նա նստել էր դռնից ձախ գտնվող նստարանի վրա,
Ու խոսում էր իր մեջքի հետևը նստած ծանոթի հետ,
Պոլ աբարոտ թեքված:

Վաթսափյան արևն էր մեր մեջ
Վայբերյան հրով ճառագած:

«Երեխեն որ տունը մնաց, մի բան ջարդելու ա, հո մի բան չի սարքելու, մանկապարտեզը ճիշտ ա»,- ասեց Ղազարը ու հիսուն դրամանոցները հերթով գցեց կոֆեյի ապարատի մեջ:

«Կանգնել ա, ոնց որ ստենդ ըլնի, էն յան գնա իջնենք», «Գազել»-ում փարթամ դպրոցականին ասեց ջղային մի բիձ, ենթադրաբար՝ ստենտավորվածներից:

«Շիրակ»-ի կանգառում ձանձրացող հնդիկները անցնող ռուսներին բնիկների մելանխոլիայով էին նայում: Էդ կողմերին Չոպարը դեռ «Ակվարիումի յաներն եմ» ա ասում:

«Ինքը ավելի լավ մասնագետ ա, որովհետև շարժուն դեղատներում ա աշխատել»,- ասեց մի տարիքով կին, դժվար շնչելով:

«O, շանզ էլիզե»,- երգում էր նույն երեխան, բակում:
Նա շատ լավ սլուխ ուներ:

«Ասեց Վարուժ, ես քեզ էնքան եմ հարգում, դաժը սիրում եմ, բայց էն բանի համար աչքիցս ընգար»,- մեջբերում արեց Վարուժը, ինքն իր մասին:

- Ծամոն ունե՞ս:
- Չա, տա՞մ:
- Մյատնի ա՞,- ճշտեց մի կին ծանոթից, ավտոբուսում:

«Ֆիքսիկը նստած մի մութ անկյունում»,- գոռաց երեխան, ով ինչպես պարզվեց, լավ համադրում էր տարբեր տեղերում լսածն ու տեսածը:

Մերկացավ

«Մյուս շաբաթ երևի կվարկավորվեմ»,- հուզված ասեց մի աղջիկ հեռախոսով:

«Save the children»,- գրված էր մանկապարտեզի վրա:

«Ապեր, Արշակին գիտե՞ս, ձեր շենքից ա,
կոլոտ տղայա, մի հատ էլ պիտնյաշկա ունի»,
Հարցրեց մի կեպկով տաքսիստ:
«Հոպար ջան, ես մեր շենքից չեմ»,
Պատասխանեցի ու արագ մտա պադյեզդ:

«Հոպար, էդ շլանգը որ պտի վեկալենք, կապած ա թե տենց ռոսսիպ քցած ա՞»,- հեռախոսով հարցրեց գազելի շոֆեռը:

«Սայթով ենք առել, բայց վատը չի»,- տեղեկացրեց մի կին, հեռախոսով, կանգառում:

«Նոր էլ ինձնից ուզեց ծխեց, արագ-արագ, հետո էլի ուզեց»,
Ասեց մի ներկոտված բանվոր մյուսին:
Նրանք արագ-արագ քայլում էին Կվարտալի արանքներում:

«Օդափոխիչ Սիմֆոնի 620»,- գրված էր զեղչված դեզոդորանտների վրա:

Վազքամարտը վազելով կռվելն է:

Խաղալը հարստահարվելու միջոց է:

«Վրացյան փողոց չի կարա լինի, երևի խառնում էս, վրացական կլինի»,- ասեց մի կին շատ վստահ ձայնով, արդեն ջնջված կնոպկեքով հեռախոսով, հետո անջատեց, վերցրեց սմարթֆոնը, ու սկսեց հերթով բացել «Վաթսափ»-ը, «Վայբեր»-ը, «Ինստագրամ»-ը, «Վայլդբերիզ»-ը ու մնացածը:

«Մի ժամից կզանգեմ, երկու»,- շպրտեց մի տղամարդ ու արիամարիանքով անջատեց հեռախոսը:

«Կան մանկության ընկերներ, որ դառնում են ընտանիք»,- ձեռագրով գրված էր Մալաթիայից Լենինգրադյան թեքվող հատվածի պատին:

«Զբաղվում էինք սիրով
Սիրով էինք զբաղվում»:
Մտածեցինք, հիշելով որոշ մանրամասներ:

«Ընտանեկան տոնը հասարակացրել, հասարակաց տոն են սարքել»,- դժգոհեց թավ բեղերով մի տղամարդ, ով թեմայից թեմա էր անցնում ու մի քանի րոպե հետո ասեց սա. «Լեռնեցիների ուղեղի ծալքերը շատ են, դաշտի ժողովրդինը՝ քիչ»:

«Աղջիկս չի, կինս ա»,- ժպտալով ասաց մի տղամարդ մյուսին, հիվանդանոցում: «Լավ էլի, Վաչիկ, էդքան էլ ջահել չեմ»,- ծիծաղեց ամուսնու թևը մտած կինը, ով քիչ հետո, ուշադիր նայելով անծանոթին, հարցրեց. «Դուք էլ ե՞ք ստենտի, թե դեղորյաքային»:

Ջուրը գոլորշիացել էր
Գերխաշ ձվեր կերանք:

«Բագդանովկան քաղաք էր, որովհետև ընդեղ սվետաֆոր կար», ասեց մի տարիքով ախալքալակցի, ու բոլորով ծիծաղեցին:

«Փայլուն սեքսուալ վոյաժ էր»,
Հագնվելով ամփոփեց մի կին կոմիվոյաժեր:

Բարեկամներից մեկը կյանքի լավ առիթների օդը փակում էր, սեղանից հետո կամ ընթացքում: Զակատ էր անում: Նրա պադվալում կային լիքը բանկաներ, որոնց վրա գրված էր ամսաթիվը, և ինչ որ հուշ այդ օրվանից:

«Մարտակերտցի ֆոկուսնիկ Ռոմայի տղան ա մահացել»,
Լսեցի Մարտակերտից հեռու մի քաղաքում:
Խորովածի սեղանի շուրջ էինք նստած,
Հիմնականում անծանոթ դեմքեր էին:

Ինքնաթիռից երևում էին գերեզմանները,
Ու դրանց կողքին կառուցված ջերմոցները:

«Որ թիվ ե՞ք»,- հարցրեց մի ֆորմով ջահել տղա ցուրտ երկրի օդանավակայանում, ռուսերենով:
«1984»,- պատասխանեցի ես:
«Կարդացել ե՞ք այդ վերնագրով գիրքը»,- շարունակեց նա, նայելով անձնագրին:
«Եկել եմ մի քանի օր էլ ապրեմ դրա մեջ»,- շշուկով մտածեցի, բայց չասացի՝ քանիերկուսի հունվարին:
«Ընդհանուր տեղյակ եմ»,- փոխարենը ասացի, վերցրեցի պեչատված անձնագիրը ու անցա գիծը:

«Ցիվարան, էդ էպոսը ոնց որ տեղ ըլնի եղած, Դավիթի արձանը լավն ա»,- ասեց մի կին անհասկանալի կոնտեքստում:

Կիևյանի կանգառի դիմացի մայթում
Տարիներով գիրք ծախող սպիտակ բեղերող մարդը
Մյուս տարվա հաստ ու փոքր կալենդարում
Ուշադիր կարդում էր հունվարի 20-ի մասին գրածը:

«Քաղցր սերգեֆիլ»՝ կարդացի ու առա մի քանի հատ:

«Ես մանկատան երեխա եմ, ինձ վախեցնել չի լինի»,
Պանդեմիայի սկզբնական օրերին
Թիվիով ասեց սկամեյկին նստած անդիմակ մի մարդ:
Նրան հիշում էի շախմատի տնից,
Նրան մյուս լյուբիծելները «Բալայան» էին ասում:
Նրա անունը էդպես էլ մնաց իր ազգանունը:

«Դամադեդո, Վնուկ Չովո»,- շուլուխ արեց մի լոկալ տաքսիստ:

«Չամլետի կերպարը միշտ քննարկվելու է, քանի որ նրա քայլերը հանգեցրել են մեծ աղետի, Դանիայի կործանմանը»,- մեխեց վաստակավոր ձայնով մի խռպոտ դերասան:

Տրոպիկական սիրո էնտրոպիան

«Կարմանը և կարման» մտածեցի, երբ ձեռքերս գրպաններումս քայլում էի ու գլուխս կախել էի, որ չտեսնեի անցանկալի ծանոթներին ու ցանկալի անծանոթներին:

«Բունիաթյանը քեզ զանգել ա՞, նենց ուժեղ ա հարսանիքները անց կացնում, չես փոշմանի»,- միաժամանակ լսվեցին ու իրար խառնվեցին իրարից երեք մետրի վրա կանգնած հեռախոսով խոսացող տարբեր մարդկանց բառերը:

Անթիվ անհարմար բրենդներ

«Չորս արև, մեղք ա էդ տղեն, ձենով լացում ա, չի ձգում էլ, Արմեն»,- ասեց մի աղջիկ, հեռախոսով, վրդովված:

*Ես չեմ կարող իմ քաղաքական ինքնությունը թողնել դռան ետևում ու հետո ներս մտնել: (Մի բանախոսությունից հետո քննարկմանը մասնակցող պատգամավոր)*

Դառը օղի
Քաղցր
Կլրի նման
Քունողի:

«Ինձի լսես, սոխ երևի չլցնես»,- ասեց մասկով նստած մի կին լիքը ավտոբուսում:

«Յասանելի շքեղություն», «Խաղալը հարստանալու միջոց չէ», գրված էր նույն կամրջի տարբեր կողմերում:

Ամեն ինչը թանկացել է
Գումարը քչացել է
Նույնիսկ լավ դզվածները
Էլ չեն կարողանում
Ռեգուլյար դիզել
Ու մտածում են
Մաշնի վրա
Գազ դնելու մասին:

Սանասար Բաղդասար
Յաշիվը փակենք հավասար:

«Մարդկությունը վերացել ա կոսմոսում»,
Ասեց հարևան վաթսունամյա կինը՝
Առանց կոնտեքստը ճշգրտելու:

Կանգառի ստոլբի վրա թուղթ էր կպցված,
Որտեղ վարկային պատմություն չունեցող քաղաքացիներին
Առաջարկվում էր գումար՝ արագ և հարմար,
Որը հետո, հավանաբար,
Պետք էր մարել՝ ոչ դանդաղ ու անհարմար:

«Բոզի երդումը մինչև հաստ կլիրն ա»,- ասեց վարորդը ու գազ տվեց:

«Աշխարհքը մեռնել կա»,
Ասեց կանեցում ձանձրացող վարորդ Քաջիկը:
Հետո մի կին նստեց
90-ականներից չմաշված շորերով
90-ականների լավագույն մոդայով հագնված:
«Էսի օլիկարխ ա եղել»,- ժպիտով շշնջաց Քաջիկը,
Հետո գազ տվեց, հազաց, ու շարժվեցինք կանեցից:

Տեսանք
ծանոթ դեմքերի վերածվող
կրակված փամփուշտների հետագծերը
ժամանակի ողնաշարում:
Էլի կորավ ցինիզմը:
Ժամանակ չկա մեռնելու
Անտարբերության սառույցի տակ:
Նոր «Բոնդ»-ի տիտրերն էի նայում,
Փոքր էկրանին, ինչպես միշտ:

«Ինձ ըննոյ ա անում էս էֆ ֆայֆի ձին»,
Ասեց աշակերտ Մենուան Լոսից՝,
Իրենց առավոտ՝ մեր քշերով:

«Չեսա էն արագացուցիչն էլ կքանդեն, տեղը վիսոտնիներ կսարքեն»,- ցավով արձանագրեց մի մարդ աստիճաններով իջնելիս: «Երկուշաբթի էթում են դիրքեր»,- ասեց հիսունին մոտ մի տղամարդ, տաք շորեր առնելիս: «Աստված իրանց հետ»,- մաղթեց վաճառողը, ում տարիքը թաքնվել էր հագած տաք շորերի արանքում: Ում երիտասարդությունը անցավ մեր աչքի առաջ, «Բարեկամության» տակի դանդաղացուցիչում:

«Տիկին ջան, մասկա դիր էլի, փիլիսոփայություն մի արա»,- ասեց դաբրյակ վարորդը առավոտյան:
«Վայբըռիս խի՞ եք զանգէ»,- վրդովված ասեց զանգից անակնկալի եկած մի տղամարդ, սուպերմարկետում, ցերեկը:
«Տաքսի մի վեկալ, տղա ջան, էս ժամին տրանսպորտ կա»,- ասաց կանգնած մի կին, դեղին, լիքը ավտոբուսում, երբ արդեն մութ էր:

Մի փամփլիկ կին
Ուտում էր փամփկին:

«Դելտա շտամպը վտանգավոր ա»,- ասաց մի կին ընկերուհուն:

Պրեկարային սիրո էրգոնոմիկան

«Մի օր փըչըմ էս, իրեք օր պահըմ ա»,- ասեց դուխի վաճառող տարիքով տղամարդը, անտարիք մի կնոջ:

«Սկզբից հավը, հետո ձուն»,
Կարգադրեց մի կին սուպերմարկետում
Տոպրակներում ապրանքները տեղավորող վաճառողուհուն:

«Որպեսզի հավի կոտլետը չոր չլինի
ես մեջը մի բուռ մարմնի կաշա եմ լցնում»,
Ասեց մի կին մյուսին խանութի դիմաց կանգնած:

«Մի հատ փողոցային ինձ անմակարդակ ասեց»,- դողացող ու ջղային ձայնով իրենից ետ ընկնողին բողոքեց արագ քայլող մի կին:

«Էդ հադուգ հեղուգ ա, Գերմանիայից դրե, ղրգել են»,
Վստահեցրեց կոժ հագած միջին գիրության մի տղամարդ,
Այն երկու կանանց, որոնք ջանասիրաբար պռտում էին
Դեռ չբացված խանութի բաց, ապակե դռները:

Մի ծանոթ ունեի
Տարիքով, ինտիլիգենտ
Նա շատ էր սիրում լուծել
Սովետական ամսագրերի
Վերջին էջի խաչբառերը:
Նա այդ թվերից գիտեր ամեն ինչ:

«Սա կարո՞ղ եմ վերցնել»,- հարցրեց եպիսկոպոսյանը, տեսնելով անկյունում իրեն սպասող «Նաուկա ի ժիզն»-ի 1978 թվականի համարներից մեկը:

«Տիկին, մասկա դրեք»,- ասեց գազելի վարորդը:
«Մենակ ինձ տեսա՞ր»,- պատասխանեց տիկինը
«Հա բա մենակ դու էս առանց մասկա»,- ասեց վարորդը թեթև պաուզայից հետո, որի ընթացքում մի անգամ էլ նայեց ժողովրդին:
«Հա էլի»,- չորս կողմը նայելով զարմացավ տիկինը ու սկսեց քանդել պայուսակը:

Քեյթ Մոսը էլ էն չի:
Բայց հեռավոր արվարձանում նա դեռ կա:
Ջահել, նիհար, կուպալնիկով, խունացած:

«Տասիրեք հազար դրամ տվել էս, ես քեզ յոթ հազար հետ եմ տվել, հիմա բանն ինչու՞մն ա»,- նյարդայնացավ մի մարդ ավտոբուսում, հեռախոսով:

Էս բոլոր հեռախոսով խոսողները կարո՞ղ ա իրար հետ են խոսում:

«Աբո, էս նկարը վեկալ կխփես կաբինկին»,
Գոռաց աղբի կողքի յաշիկները
Կուզովի մեջ շպրտողը
Զիբիլի ավտոյի շոֆերին:
Նկարը մի պահ տեսա,
Յասցրեցի կարդալ
«Rouge» բառը,
Ամաչեցի լռվեմ զիբիլի կողքը
Մի քիչ հեռացա, նայեցի գուգլում,
Յասկացա ով ա:
«Կաբինկում տեղ չկա»,
Պատասխանեց ուրախ վարորդը
Ու նկարը մի ձև կպցրեց կուզովին:
«Տենաս սրա ռամեն ու՞ր ա»,
Յարցրեց գտնողը, նայելով չորս կողմը:
«Լավ նայի, կարող ա գտնես,
Որ մեռնես, նկարդ մեջը կդնենք»,
Ասեց վարորդը ու երկուսով խնդացին:
Յետո նստեցին, գնացին,
Իրենց հետ տանելով

Ճանապարհին նայող
Լիվ Թայլերին:
Էդ տարածքում գեղեցկության սրահ կար
Այն փակվել էր մի քանի օր առաջ:

«Ապե եթե ինքը Կոմիտաս ա հըմի, ուրեմն ես էլ Մենդելեվ եմ ավարտե»,- հեգնեց միջին տարիքի մի երիտասարդ ու նստեց դատարկ նստարանի մեջտեղում:

Մի նախկին պատգամավորի տեսանք
Ակնոցներով, համեստ,
Նա կոշիկ էր բերել նորոգելու
«Բարեկամության» պաղզեմկի մաստերսկոյում:

Մեր հարևանները
Աերոպորտի տաքսիստների նման
Ուզում են վրիցդ մի բան քերեն:

Մարտակերտցի Տեփնանց Արամի
Մահվան կապակցությամբ
Հինգ օր ուշ ցավակցեց Մարիա Զախարովան,
Ով շատ է սիրում խմել և թուրքերին:

«Ուսլուգի մանիպուլյատըրա»,
Գրված էր ռուսերեն
Մի մեծ մեքենայի վրա:

«Ասում են լավը մոդեռնեն ա»,- հերթի քանակից հիասթափված շպրտեց մի տարիքով կին ու քայլեց մոտակա հիվանդանոցի ուղղությամբ:

«Կարոնան մեզ ոնց պտի կպնի, մենք…»:
Մնացածը չլսեցի:
Էն, ինչ ասեց ու ծիծաղեց
Բանջարեղեն վաճառող մի կին մյուսին՝ չլսեցի:

Հացատան հավատամքը

Կվարտալում, մի երիտասարդ հեծանվորդ,
Բեզռուկ քշելով անցավ կանգառում կանգնած աղջիկների մոտով,
Այդ ընթացքում նրանց ուշադիր նայելով ու ժպտալով:

«Ասա ընգեր, ասա դու քո սրտով, ես էլ ասեմ կլնի թե չի լինի»,
Առաջարկեց ջըպի մոտ կանգնած տղամարդկանցից մեկը:
«Յոթուվեց,- պատասխանեց մյուսը ու տիրեց լռություն:

«Ի՞նչ կա»,
Գոռաց մարզային ավտոկայանի ռազվադյաշչին,
Անցնող «Զըլի» իրեն ծանոթ շոֆերին:
«Զատ չկա, ապագա կա»,
Խնդալով սխոդու պատասխանեց վարորդը,
Ու անհավասարաչափ արագացումով փոխեց իր դիրքը
Կանգառում անշարժ կանգնած մարդկանց հանդեպ:

«Հասցես գրեց ճակատին, գնաց, ղախպեն»,
Նյարդայնացած ասեց բանջարեղեն վաճառող մի կին
Նայելով պապկով տղամարդու ետևից:

Ժողովրդավարության փալլոս

«Ապե, դե նրբություններում չի սխալվե որ բացըդրենք, կռւպնի ա սխալվե: Էդ հեչ ապե, դու չայ խմի, շատ չայ խմի, զզվելով խմի որ դզվես: Մեկ էլ իրիկունները չհելնես քայլես, դու տենց գեժ-գեժ բաներ սիրում ես: Ես քո տեղը կքշեմ էս քանի օրը»,- ասեց գազելի վարորդը հեռախոսով, տրասսին նայելով:

Մի տարիքով տղամարդ
Պզպզիկով ախտահանում էր
Հինգ հազար դրամանոցը
Եվ Թումանյանը
Աչքերը մի պահ փակել էր
Բաղրամյանի վրա
Աշնանային արևի
Ճառագայթների տակ:

«Փաստեր չկան, խմում ենք լուռ»,
Կարար ասեր Մեսչյանը:

Լռում ենք լուռ

«Նո փասթ, թինք օնլի ըբաութ ֆյուչը»,- գրված էր շախմատ խաղացող երեխաներից մեկի վերնաշապիկի վրա:

«Ա մի ոռի պրոբկա էր, Նվերիկ»,
Ասեց կապույտ ավտոբուսի դիմակով վարորդը ու ավելացրեց.
«Առյուծ արքայից մինչեւ Լենինգրադյան կես ժամում եմ հասել»:

«Եսլի ու ծիբյա բուդուտ կռիպյա, բուձեշ աբ էտըմ դումած»,
Ասեց զբոսաշրջիկների խմբից ետ ընկած մի ռուս կին մյուսին:

«Դրա համար դպրոցը պետք է տենց չէժանանար, որ երեխեն դպրոցի գիտելիքով ընդունվեր ինստիտուտ»,- ասեց տղամարդը:
«Հիմա կոնտինգենտը էլ էն չի»,- պատասխանեց կինը:
Նրանք հավանաբար ուսուցիչներ էին
Ու կանեցում կանգնած սպասում էին
Գազելի ու նոր կոնտինգենտի:

Մի քանի տասնյակ պարսիկ տուրիստ
Ճամպրուկներ էին քշում
«Կինո Երևան»-ի մոտով:
Կանայք առանց փարաջա:
Ռոլիկների ասինքրոն գռռոցը:

«Եթե ուզում էս մի քիչ էլ չոր թարխուն լցնենք:
Մի քիչ էլ ձեթ: Ձեթ, ձեթ:
Մի հատ էլ սոխ, կոլցեքով կտրտենք վրեն:
Խորովածի նման:
Դե լավ ես կլինեմ, տենց կես ժամից»:
Կոմայգու մոտի սվետաֆորի մոտ կանաչին սպասող մի տղամարդ էր, ում ձեռքի թափանցիկ ցելոֆանի մեջ երևում էին երեք ձկները:

«Ինտերպոլի մոտ կանգնեք»,- ասեց մի կին դիմակով ու հովհարով:
«Մետրոպոլի մոտ կանգառ չկա, մենակ կամերա կա, ես հավայի տաս հազար չունեմ մուծելու»,- պատասխանեց արևից վառված վարորդը ու ավելացրեց. «Պրոսպեկտի շուկա կիջնես»:

«Սմբո, սովխոզի աստանովկեն կպահես»,- ասեց մի կին, ում ձեռքին խաղողով լի տոպրակ կար: «Սմբատ ջան, մյուսին էլ»,- ավելացրեց մի մեղմ տղամարդ:

Մեզ հոգնեցրել են
Եղբայրական ժողովուրդների
Արմատական շահերը
Եվ այդ շահերի շահառուները:

[redacted]
- Դուք լա՞վ հիշողություն ունեք:
- Լավ հիշողություններ ունեմ:

«Ծախմատը դառնում ա մոռացվող պրոֆեսիա: Իգրոկներ, որոնք չունեն մրցումներ»,- ասեց Նալբանդյանը, կպցնելով հերթական «Արարատ»-ը:

«Մեր հայերը շատ տուժվան»,
Ասեց վարորդը «Գազել»-ի:

Առաջ անհարմար ու անծանոթ իրավիճակներում խոսում էինք եղանակից, հիմա նաև քովիդից:

Միգուցե մրսվե՞նք

Գևորգն ու Էմմին

Չախավերդյանին տեսանք
Սեռի «Օպելի» մեջ
Վարորդի կողքը նստած
Սերվիսի խաչմերուկի ու Շիրակի արանքում:
Սպասում էին որ կանաչը բացի:

Պատճենված կրքի կրկնօրինակը

Մի անգամ, տարիներ առաջ, անտուն մի մարդ
Նայեց աղբամանի կողքին դրված թղթերին
Որոնց վրա շախմատի դիրքեր էին
Ու ասեց. «Մեջները սխալներ կան»:
Դրանից հետո Ժիրիկ Սահակյանը էլ չէր գցում
Երեխեքի սխալ լուծած խնդիրների քսերոքսները:
Ուղղում էր, նոր գցում:

«Էն օրը ֆեյսբուքում ավտո էր շուռ եկել»: Լսեցինք, չտեսանք:

«Վերջը էդ տնից դաս անելուն օնլան են ասում թե՞ օֆլան»,
Լսվեց կնոջ ֆենախառն ձայնը շատ նեղլիկ վարսավիրանոցից:

Շոգ էր, վերևի հարևանը բաց էր թողել տան դուռը:
«Ես երբեք չեմ մոռանա քո անունը»,
Լսվեց լատինաամերիկուհու քաղցր ձայնը
Հուլիսյան դատարկ պադյեզդում:

«Դու էլ քո սթորիի դարդն էս»,
Ասեց մի երեխա մյուսին
Հետո նստեց հեծանիվը ու գնաց:

«Դե հմի էդ ա, պտի պրծնի»,- ասեց մի տարիքով մարդ ու մտավ սգո սրահ:

Ես ճանաչում էի Քոչարյանի վարսավիրին:

«Գնացեք, որ գոնե տորթի արարողությանը մասնակցեք»,
Ասեց մի կին բատուտում թռվռացող երեխաներին:

Սգո սրահի ճանապարհին, ավտոշուկայի մոտ, տեսա մի քանի ղազախների: Հետո մարդիկ վերջացան, մի պահ ձայները կորան ու լսվեցին ոտնաձայներս:

Հին Էտիկետկով արդեն տաքացած «Կիլիկիա» էր խմում մաշված ու պպզած մի տղամարդ:

Սամվել Գալստյանը մի ծառ էր տնկել
Եղբոր, մոր ու քրոջ գերեզմանների կողքին:
Իր տեղը թողել էր:
Գերեզմանների ստանդարտները
Այդ ընթացքում փոխվեցին
Ու տասնվեց տարի անց
Իր մահվանից մեկ օր հետո,
Մի քանի արևից սևացած տղամարդ հանեցին ծառը,
Ու փոսի մի մասը փորեցին հենց ծառի տեղում:

«Ուրախ առիթներով հանդիպենք»,
Ասեց փոս փորողներից մեկը,
Նավեսի տակ փողը վերցնելուց հետո:

Սգո սրահ ֆուրգոնով ծաղիկներ բերին, պսակներ: Դատարկեցին: Վառված, քյասիբ, ուրախ դեմքեր էին: Հեր, պապ, թոռ կարային լինեին: Երբ ավտոյով դուրս եկան, սվետաֆորի տակ կանգնած սկսեցին խնդալը, բոլորով:

«Մեռնում էի ռակից, իրեք ամսվա կյանք էին տվել: Տունը մենակ վախտ իննսունվեց գրադուսանոց սպիրտ խմեցի ու դեղձի դառը կուտ կերա մի կես կիլո: Ճնշումս հելավ երկուհարյուր ութանասուն, մեռնում էի: Զանգեցի հարևանին, չկարացա խոսամ: Տենց իրեք

անգամ: Ֆայմեց, հելավ եկավ, մարդու հետ: Դուռը բաց էի թողել: Թղթի վրա կլորակ արեցի, լեզուս չէր խոսում, մեջը գրեցի «Լ»: Մարդը ասեց լիմոն ա ուզում, գնաց արագ բերեց: Կերա, մի քիչ դզվա: Զանգեցին մերոնց, քաղաքից դուրս էին: Գնացի, լվացվեցի: Եկան: Մտա, շռեցի, իրեք ծերանի, մսից, տրեզուբեցի նման բաներ հելան: Հանեցի, ցելաֆոնի մեջ պահեցի: Հետո, բժշկին որ տարա, ասեց՝ էդ ռակի մասերն են, փրթել թափել ես»,- վերջացրեց տաքսիստը ու նայեց վրաս:

Դեղծ աղանդոց

Ավտոբուսում, քառասունն անց ներվային մի տղամարդ,
Քաշում էր «Puzzle Combat» խաղը՝
Ջարդած էկրանով «Xiaomi»-ի վրա:

«Ստագ» խանութի մոտով անցանք

Հարսի խորոված

Ռեկլամի մի աղջիկ
Նստած էր ավտոբուսում:
Նրան ոչ-ոք չճանաչեց:
Իջավ, ենթադրաբար իր կանգառից շուտ:

«Հրաշ, ո՞րդե էս, Հրաշ»,- գոռաց հեռախոսի մեջ «47» համարի ավտոբուսի վարորդը:

«Այս ծնունդը կիեքիաթացնի փոքրամարմին արջուկը»,
Ասաց մանկական սրճարանի հանդիսավարը:
Հետո մտավ արջուկը և սկսեց «հագ» անել բոլորին:

- Կինոյի մոտ ինձ կիջըցնես:
- Կինո է՞ս էթըմ:
- Հա:
- Էդ Կինոյի տունը հմի ինչ ա աշխդը՞մ:
- Եվրոյի վկաներն են:
- Չէ դրանք Լիպոյի խանութի մոտ են:
- Ստե ուրեմն Ավետարանչիները կլնեն:
- Կարող ա: Էվրոյի վկաները քանդին էս ժողովրդին:
Գնում էինք, ինչպես միշտ, չորս անծանոթներով
Մարդա իրեքհարուր դրամով, «Մոյ բրատ» երգի ուղակցությամբ:

«Դուք ունե՞ք դոկտրին»,
Հարցրեցի դոկտըրին:

Ինչ որ մի պլակատի մոտով անցանք, կնոջ ֆոտո էր,
Վրան վատ ֆոնտով գրված. «ԵԱՏՄ երկրների դեմք»:

«Չտեսնված աղջիկ ա, տղամարդ աղջիկ ա, մեր գյուղացի ա,
իսկական տղամարդ աղջիկ ա»,- ասեց բեղերով վարորդը,
երթուղայինում, հեռախոսով:

«Հաջորդ կանգառը ո՞րն ա»,- հարցրեց մի կին:
«Սրա մյուսը»,- քմծիծաղով պատասխանեց վարորդը:
«Պրիդուռըկ»,- շպրտեց կինը,
Երբ մի ոտքը ասֆալտին էր,
Իսկ մյուսը՝ դեռ ավտոբուսի մեջ:

«Մի տեսակ կալոշ կա, հետևը բաց, ունե՞ս»,
Հարցրեց ինձ տարիքով մի կին
Վաճառողի տեղ դնելով:

Պրոսպեկտի իր պատուհանից
Երևացող մասը ամբողջովին տկլոր
Նայում էր ուշադիր՝ հատկապես տուրիստ կանանց
Եվ նողկանքով՝ հատկապես տղամարդ տուրիստներին
Մի Էրևանցի:

*Միշտ հիշում ենք*
*Մեր լավ օրերը*
*Անցած:*
*(Մեղրածոր ձայնով երգիչ)*

Մի անգամ, շատ շատ շուտ,
Նուրի Ջեյլանի ասուլիսն էր «Ծիրան»-ում,
Մեկը մոտեցավ,
0.2 կամ 0.4
Մեգապիքսելանոց հեռախոսով
Սկսեց նկարել:
Բերանում կանաչ խոտ էր, ծամում էր մի կողմով
Ու վերնաշապիկի գրպանում էլ էր խոտ,
Առանց հերթի հարց տվեց.
«Մասթեր Նուրի, վա՞թ դու յու
թինք ըբաութ Արմենիան սինեմա»:
Ու շարունակեց նկարել:
Տխրեցինք, ուրախացանք:

Մնացորդաhեն

Սուպերմարկետի մսի բաժնի սառնարանը փչացել էր,
Ձկները ավել օր ունեցան իրար հետ շփվելու :

Տակառդ
Տակառե թակարդ

«Արի լռենք աստղերի մասին»,
Ձեռագրով գրված էր
Ֆիքսված ինտերնետի դեղին տուփի վրա,
«Արի լռենք ասողների մասին» կարդացվեց:

«Մենք պիտի օգնենք, որ Միերը դուրս գա»,
Էպիկական խաղի ժամանակ
Երեխաներին ասաց
Մի կին-մանկավարժ
Տուն-թանգարանի բակում:

Մի ծանոթ ունեի,
Նա միակ վստահելի միջնորդ էր մնացել
Միջին կարողության տեր
Տարեց սփյուռքահայի համար՝
Ում բազմիցս խաբել էին տեղացիները:
Բայց նա միևնույն է
Դեռ շարունակում էր օգնել
Ու գումար էր ուղարկում վիրավորներին:
Մի տղա եկավ եղբոր հետ,
Մեկի մի ձեռքը չկար, մյուսի՝ երկուսը,
Գրեցին միակ տարբերակով.
«Ես, անուն, ազգանուն
Ստացա հինգ հատ հարյուր դոլլարանոց»:
Հետո գրեցին հարյուրանոցների
համարները և ստորագրեցին:
Հետո մեկ ուրիշը եկավ,

Մեքենայով:
Իջանք ներքև
Տվեցինք գումարը
Ու գրեց նույն կերպ:
Նա մեքենա քշում էր,
Բայց չէր կարող բարձրանալ
Ութերորդ հարկ:

«Ռուսականը լավն է, նատուրալնի է, «Սպուտնիկ»-ի հետ եմ», ասեց մանթաշցի վարորդը տասնվեց կվարտալում:
«Ես ջահել վախտս, Մոսկվայում, ձմեռները սապոգիս մեջ դանակ էի պահում: Մի կողմը դանակ, մյուս կողմը սղոց: Պետք էր գալիս», միջամտեց մյուսը, տարեցը, ու մենք միասին նայեցինք նրա կոշիկներին:

«Ասֆալտը թե լայնությամբ ճաքեց, ոչինչ, թե երկարությամբ ճաքեց, վսյո, ջուրը մեջն ա»,- ասեց Անդո ձյան, ով ասֆալտի գործ էր արել Պերմում ու Լենինգրադում:

Ավտոբուսում մեկի գրպանում պատահական միացավ Դոգը:
Նորից հյուր էին գնում Գագոյի ու Ծուշանի հետ:

Ուշ աշնանը գլխարկս մոռացա գերեզմաններում:
Գարնանը գտա այն նույն տեղում, գույնը գնացած:

«Ինչ էս վրեն ապարանք սարքել, թող սաղի նման պառկի կինդ»,- զայրացավ տաքսիստը գերեզմաններից գալուց:

«Պատիվ ունեմ»-ի պլակատն էին հանում, ՀԱԿ-ինը ու «Լուսավոր»-ինը վաղուց էին հանել, ընտրությունների մյուս օրը:

«Լևանդովսկիիիի՜»
Գոռաց երեխան բակում ու վազեց:
Երեկ էլ մի ուսանող աղջիկ էր կանգնած գազելում
Լևանդովսկու «Ռոբեսպիեր» գրքով:
Ես իհարկե գիտեի վերջինս ով է
Բայց հստակ հիշում էի միայն
Վազգենի ֆրազը Վանոյի մասին:

Մի սպիտակ շուն
Ընկավ մեքենայի տակ
Եվ անշարժացավ
Արզաքանցյանի պլակատի ու
«Արարատ» պիվի ռեկլամի արանքում:
Գցողը մի քանի հարյուր մետր անց կանգնեց աբոչինին,
Ղարաբաղի հոնի օղու ու
Քոչարյանի «Կյանք ու Ազատության» արանքում:
Իջան, դժգոհ սկսեցին նայել ավտոյի շիթոկին:
Մի կին, ով տեսել էր եղածը,
«Մերսեդես»-ի մեջ գլուխը դրել էր վարորդի ուսին ու լացում էր:
Նրանց հավասար գնացինք մինչև անանուն մոստը
Որի վրա դեռ երեկ մեծ տառերով խփած էր
«Պատիվ ունեմ»-ի նախընտրական պաստառը:

- Բանանը քանիս ա՞:
- Վեցհարյուրհիսուն: «Դոն» որ գրած ա, էդ վեկալ, էդ ա լավը:

Անձրև էր հորդառատ
Ընկավ առուն
Մեր հարևան
Թոշակառուն:

Պոլուավտոբուսները նոր էին
Մարդիկ դեռ սովորում  էին
Հարյուր դրամանոցները
Ոչ թե տալու, այլ գցելու:
«Օյ, նորից սխալ անցքը գցեցի»,
Շփոթված ասեց մի կին ու հարցրեց.
«Կոնդիցիոներ չկա՞ այստեղ»:
«Պետք է որ լինի»,
Պատասխանեցեց նախորդ բարձրացածը
Ու շարունակեց ուսումնասիրել
Նոր ստացած պոլուգազելի ներսը:
Դրսից՝ սպիտակ ու բաց կապույտ,
Վայթեմ՝ նախկին «46»-ի գծով գնացող:

Արդյո՞ք կորուստ է անիմաստ ժամանակի կորուստը:

«Բարեգործական ընկերությունը բարի գործեր է անում, չար գործ անողները պետք է պատժվեն»,- հստակեցրեց արտահերթ ընտրություններին մասնակցող թեկնածուներից մեկը:

«Ինչ վերաբերվում ա արվեստին ու մնացածին, ես իմ հստակ կարծիքը ունեմ»,- ասաց ավագ դպրոցական տղան իր տարիքի մի աղջկա:

«Ապե, դե մի երկու հատ սրտիկ ավել դնեիր, չէր նեղանա»,- հանդիմանեց մի դպրոցական մյուսին:

Եթե բազմացել ես, ուրեմն կարող էս կիսվել:

Ալվարդ Ալտո

*Վեպ որ կարդում էս, հասկանում էս՝ ճակատագիրն ինչ ա:*
*(Վարդան Ջալոյան)*

«Գալուստը ոնց ա՞, վերջին անգամ Երվանդ Ղազանչյանի պանիխիդային եմ տեսել»,- հարցրեց պալտոյով ու մեծ փորով մի մարդ, թշվառ կեցվածքով մյուսին, «57» դեղին ավտոբուսում:

«Խաբում են բոլորը, ու հատկապես նրանք, ովքեր ըմբոստանում են խաբեության դեմ»,- ասեց մի տղամարդ յութուբից ու շարունակեց իր ճամփան կադրից դուրս:

«Տղա ջան, էսօր շաբաթ ա՞»,- հարցրեց մի տատի:
«Հա, տատի ջան»,- պատասխանեց Ժիրիկ Սահակյանը:
«Բա որ շաբաթ ա, խի՞ ա պասպորտ սեղանը աշխատում»,- շարունակեց տատին:
«Բայց հաստատ շաբաթ ա՞»,- կասկածեց Ժիրիկ Սահակյանը:
«Դժվար, բայց դե ինչ կարևոր ա, մեկ ա ես ընդեղ գործ չունեմ»,- ասեց ու հեռացավ տատին:
«Ես էլ ուրիշ տեղ եմ գրանցված»,- մտածեց Ժիրիկ Սահակյանը ու մտավ գառաժ, որ դասավորի բանկաները:

«Յոթ որդով սեղան նստելու ասացվածքը, որը եկել է մեր պապերից, ցավոք իրականության մեջ այլևս քիչ է հանդիպում, հիմա երկու երեխայից ավել քչերն են ունենում»,- լսվեց ռադիոնդունիչից: «Փաստորեն հինգ աթոռը դատարկ ա մնում»,- պատասխանեց գազելի վարորդը: «Հիմա մեծ խանութներում աթոռը հատով էլ են ծախում»,- միջամտեց կողքինը:

Սանձահարված տղամարդու էմանսիպացիան

«Ռուզան ջան, տանը չեմ, դրա համար ինտերնետս չի պատասխանում»,- ասեց մի կին հեռախոսով, ավտոբուսում նստած:

Յովսեփ Օրուելլի

*Աշխարհում կա մի ուրիշ աշխարհ:*
*(Գազելի մագնիտաֆոնից երգող տղամարդ)*

«Դու քա՞նի տարեկան էիր»,- հարցրեց գազելի վարորդը կողքինին:
«Երեսունմեկ»,- պատասխանեց տղան:
«Պսակված է՞ս»,- շարունակեց վարորդը:
«Չէ», պատասխանեց տղան, ձայնի մեջ լավ բանի սպասման երանգով:
«Լավ կլինի մի աղջիկ ճարես լավ, որ վաթսուներեքից չանցնի ձեր օբշին, հիպոտեկ վեկալես, տենց էժան ա, իրեք տո լի իրեքուկես տոկոս»,- եզրափակեց վարորդը, ու վերցնելով մուտքային զանգը ասեց. «Արա չէ, ես հաստատ կալոնկի մոտից աբխոդ եմ անելու կալցեվոն, էդ պրոբկեքի մեջ կոնուսըս քաքմեջ եղավ»:

«Դու խի՞ Լիպեցկ չես էթում ամառները, թոռներիդ մոտ»,
Յարցրեց Ղազարը էդ տարածքում կանգնող տաքսիստներից մեկին:
«Արա դե գործարանների քաղաք ա, գնամ ինչ անեմ, թող իրանք գան»,- պատասխանեց զրուցակիցը՝ մաշված «Օպել»-ին հենված:

«Ալո, Արման, պատասխանի»,
Լսվեց դատարկ «Ֆորդ տրանզիտ»-ի միջի բարձրախոսից,
Որի վարորդ-առաքիչը մտել էր խանութ
Մի բան տալու կամ վերցնելու:

«Էդ աղբը քից զիբիլը»,- գոռաց մի կին դիմացի մայթին կանգնած երեխային:

Տագնապի ստագնացիան

Հանրությունն ու սոցիումը

Աճպարար-մանիպուլյատորների միության համաժողով

«Հոգեպես բարոյազրկվածներ, սատկեք»,
Ասեց մի կին Յութուբի լայվից:
Անջատեցինք, մի բաժակ ջուր խմեցինք,
Ու զգացինք մեզ բարոյապես հոգեզրկված:

Կապտանռնագույն ավտոբուսի վարորդը
Բութ մատով համարներն էր սքրոլ անում:
Ոչ մի տառ չկար
Ոչ մի բառ չկար
Միայն թվեր էին՝
Սեղմեց նրանցից մեկը:

- Ասեցին էսօր մեկին անձրև պտի գա:
- Արդեն անցավ, մեկ անց կես ա:
- Չէ, հլը կես ժամ կա:
- Ասիր մեկին:
- Խառնեցի, երկուսին պտի ասեի:
- Դե մեկ ա, ես դրանց չեմ հավատում,- ասեց ու վերջացրեց կողքի նստածի հետ խոսակցությունը սահմանային տարիքի մի կին, «Գազել»-ում:

«Հիմա դու ես ճիշտ է՞ս համարում»,- ջղայնացած զանգեց ավտոբուսի վարորդը դիմացինին. «Էնքան դանդաղ ես քշում, ինձ պաասաժիր չմնաց»:

«Вергамот - 1կգ - 12000 դրամ»,
Մեծ ֆոնտով գրված էր խանութում,
Մեր երկրում, քսանմեկ թվի գարնանը,
Որտեղ բոլորը բոլորին մեղադրում էին ամեն ինչի մեջ:

«Ապե, սրանք երկուհազար դրամով ծըծըմ են»,- ասեց դեմը նստած, կիսասպիտակ մազերով մի տղա, դիմելով վարորդին ու ցույց տալով ճամփեզրին կանգնած երկու կնոջ: Վարորդը ռեակցիա չտվեց, բարձրացրեց մագի ձայնը: «Դու մի հատ ես, աննման, աշխարհիս մեջ գովական»,- երգեց վաղ իննսունականներից ծանոթ ձայնը: Դուրս եկանք Երևանից, հինգ անծանոթով, որոնց մեջ կին չկար:

«Ես էս հասարակության բնակիչ եմ»,
Ավտոբուսում ասեց մի կին
Որի նմաններին
Մեր հասարակությունում
«Խփնված» են ասում:
Նա ուզում էր
Տարբեր թեմաներով խոսել
Տարբեր մարդկանց հետ
Բայց դե խույ:

Տնային ծաղիկներ որոնց վրա երբեք անձրև չէր եկել:

Ջրի կատակասեր կանայք

- Էլի հոտ հանեցի՞ր:
- Մենք լեռնային ժողովուրդ ենք, մեզ մոտ դա հաճախ ա պատահում:

Կոենների տան շեմին
Ծխում էր Սթիվ Բուշեմին:

Դոլլարի կուրսը և
Համահարթեցման դիսկուրսը

Սուպերմարկետից «Ծիրան»
Գնեցինք ընտիր ծիրան
Տարանք տուն
Արագ կերանք
Իրան:

Ծայրադկա

Կլրիր դիմակ

Մեթոդիզմ

Բազկամարտը դա բազուկներով իրար լղելն ա:

Լեռներում հեռու
Իրար էին խեռում:

Ամեն անգամ 23.58 շենքի դիմացի լույսը անջատվում էր:
Որ 23.57 ծխում էի, ծխելու ընթացքում լույսը անջատվում էր:

Վաղրջան, Բարունգ, Լիբար

- Մրգերից փորս թուլանում ա, չգիտե՞ս որն ա պնդացնող:
- Բանանը: Մտցրու հետևդ, կպնդանա:

Մի կին կար բռնի
Ինձ ասեց՝ «Բռնի»:

- Հերիք ա կատարես, կլիրդ դառել ա լեզվի փաթաթան:
- Քո էլ լեզուն ա դառել կլրի փաթաթան:
Մոտիկների խոսակցությունից:

Էսօրվա երեխեքը էնքան ֆոտո ունեն, որ ապագայում տեղ չի մնալու հանրային հիշողության համար, անձնականը ամեն ինչ փակելու ա:

Մի կին կար պիլկի
Ֆանատ էր շպիլկի:

Համասեքսուալիստ

Հարդագողը դա վինչեստր գողացողն է:

Մորանջել

«Այս աշխարհում մի վսե հյուրի»,
Ասեց հարևանս, ում անունն էր Յուրի:

«Նաիանջի պահանջ» վիպակը հետագայում դարձավ վեպ և վերանվանվեց «Առաջընթաց»:

«Յա յիվո լիզնուլ, զնաչիտ անո սուշեստվուետ, սկազալ Կատյոնըկ Գավ»,- էն աղջիկն ա ասում, ով կատարումների ժամանակ անընդհատ մեջբերումներ ա անում տեսածից ու նայածից:

«Պոլիմպսեստ» արխիվի պահպանման կազմակերպություն:

«Ես կայֆերից կայֆ չեմ ստանում»,- ասեց Կայծը:

Թունելինգուս

Մխիթար Նպարապետ

- «Աբեղ» բառը շատ եք օգտագործում:
- Ինչու, ուժին էլ եմ անում: Այ օրինակ՝

Անենք աբեղ և ուժին,
Ապավինենք մեր ուժին:

- Մի բան էլ հիշեցի: Ֆուտբոլիստ Աբեդի Պելեյին գիտե՞ք:
- Ոչ:
- Իննսունականների աստղերից էր, աֆրիկացի:

Հրավիրեց մեզ աբեդի
Պելեն Աբեդի:

- Չեմ հավատում, նույնիսկ համոզված եմ որ այդպիսի դեպք չի եղել: Միգուցե սա ցանկությու՞ն է, որ նա ձեզ աբեդի հրավիրի:
- Ոչ:
- Էդ դեպքում ո՞րն է իմաստը:
- Իմա՞ստը: Դիմադրել իմաստներին:

«Լևիա» թան

Սրանք հորինվածքներ են, որոնց գոյությունը ես հորինում եմ:

Սերժավյու

«Խաղ» օղի՝ խաղողի օղի:

- Մի իդեա ունեմ: Կարելի է անվանել փողոցները ամիսների անվանումներով: Օրինակ «Օգոստոսի փողոց», «Մարտի փողոց»: Կարելի է մարտի հինգին գնալ «Մարտի 4»: Կարելի է տաքսիստին ասել գնանք  «Մայիսի 26» կամ «Սեպտեմբերի 3»: Օգոստոսին մարտ կգնանք, նոյեմբերին՝ ապրիլ:
- Կամ էլ կարող ենք մարտի մեկին գնալ «Հոկտեմբերի 27»:
- (մտածելով) Ճիշտ եք, երևի լավ իդեա չի:

- «Սորոս»-ից ֆինանսավորվել ե՞ք երբևէ:
- «Սորոս»-ից ոչ, «Սոռես»-ից՝ այո:
- Դա ի՞նչ ֆոնդ է:
- «Սովետական ռեսուրսներ»: Պապիս, սովետական իշխանություններից ստացած բնակարանի վաճառքի իմ չափաբաժնով բավականին երկար յոլա գնացի:

- Զարմիկս ծերաբուժությամբ է զբաղվում:
- Գերոնտոլոգիայո՞վ:
- Ուրոլոգիայով:

Հետգույք պարտքի դիմաց

Ոտանալիրներ

[redacted]ը թանկացրել են [redacted]ոը
Որ շատ ծնվեն ընձի նման [redacted]երը:

Կենցաղային փերֆորմանսներ

*Գենան ճիշտ էր, ես՝ սխալ:*
*(Ծապակլյակ)*

«Չիպավորում»,- գոռաց երեխան ու վազեց մթության մեջ:

- Ի դեպ,  «Սանձահարը» վեպակը վերջացրեցի:
- Ինչի՞ մասին է:
- Էմանսիպացված տղամարդու սանձահարման:
- Իսկ վեպակը դա վեպոտ վիպա՞կն է:
- Այո:

Էմանսիպացված տղամարդու ազատագրումը:

Էս համապարփակը դեռ ընդլայնվում ա:

- Իսկ հիմա էդ ոլորտում, այսպես ասած «ռասկլադը» ո՞նց է:
- Գիտեք, վերջին շրջանում  ես ռուսիզմներից կտրուկ անցում եմ կատարում բրիտիզմների և խորհուրդ կտամ օգտագործել «ըլայմընթ» բառը:
- Իսկ ընդհանրապես հայերենով ո՞նց է:
- Չգիտեմ, բայց կարող եմ ասել որ Գենան շորերը հանում ու նոր էր կրոկոդիլոս աշխատում: Նույն հետգաղութայինի տակ եմ ես:
- Չհանվեք:

Կոհերենտ սիրո կոմպլեմենտացիան

Կարևոր չի, տղամարդ՝ որ կին էս:
Ես արդեն խմել եմ չորս բաժակ «Գիննես»:

ՄՈՄԱվառություն:
ՄՈՄԱ-ի դիմացը մոմավառության ակցիա:

Նուդիստ ֆուտուրիստ

- Ես Թիզեր եմ նկարել:
- Ֆիլմի թիզե՞ր: Իսկ ֆի՞լմը երբ պիտի նկարեք:
- Արդեն նկարել եմ: Կոչվում է «Թիզեր»: Նկարում եմ մարդկանց ձեռքերը:
- Ո՞ղջ մարդկանց:
- Ողջ մարդկության: Իհարկե միայն ողջերի:

Կատարողական ֆիլմերի ստուդիա «Նեթֆլիր»:

Մի անգամ Ժիրիկի դիմացը կանգնեց մի երեխա, ամբողջությամբ Չելովեկ-պաուկի շորերով:
«Բարև ընկեր Ժիրիկ»,- ասաց երեխան:
«Բարև Արմեն ջան»,- պատասխանեց Ժիրիկը:
«Ո՞նց իմացաք որ ես Արմենն եմ»,- շարունակեց Չելովեկ-պաուկը:
«Ձեռքիդ տետր կա, վրեն գրած ա անունդ»,- ասեց Ժիրիկը:
«Էդ ախպորս տետրն ա»,- չհանձնվեց Չելովեկ-պաուկը:
«Ախպորդ անունն էլ ա՞ Արմեն»,- հարցրեց Ժիրիկը:
«Հա»,- պատասխանեց Չելավեկ-պաուկը ու մտավ ներս:

Մի անգամ, առավոտյան իննի կողմերը, Ժիրիկ Սահակյանը տխուր քայլում էր Երրորդ մասով: Դիմացը դուրս եկավ ծաղրածուի

շորերով ու գրիմով մի տղամարդ: Նա երեսունհինգ կլիներ ու գոռում էր հեռախոսի մեջ.
«Արա քու պատճառով խայտառակ եղա, հելե կլոունի շորերով քայլում եմ Երրորդ մասով, կիրակի օրով, տաքսի էլ չկա, նստեմ, սիքտիր ըլնեմ ստից: Հեսա հասնեմ, բերանդ ժաժ եմ տալու»:
Ու Ժիրիկ Սահակյանը սկսեց գնահատել իր գործը:
Մի անգամ էլ Ժիրիկ Սահակյանի աչքի առաջ Բեթմենը, Սուպերմենը և Մալվինան նստեցին «Յանդեքս» տաքսի: Չելովեկ-պաուկը դեռ ծխում էր, ու քֆուրը դեմքին նայում էր Ժիրիկ Սահակյանի վրա: Հետո նա գցեց կիսատ սիգարետը, նստեց վարորդի կողքին ու տաքսին շարժվեց:
«Ուպիրներն են»,- մտածեց Ժիրիկ Սահակյանը:

Մենք սիրում էինք ձանձրույթը սովետական մուլտֆիլմերում:
Երբ Գենան շախմատ էր խաղում ինքն իր հետ:

«Կարագ տուր»,- ասեց մի ծեր կին ծանոթ վաճառողուհուն:
«Որից»,- հարցրեց վաճառողուհին:
«Դե որ չայի հետ քսեմ, ուտեմ»,- պատասխանեց ծեր կինը:

- Վերջին սեքսդ երբ ա եղել:
- Բայց խի՞ էս մտածում որ վերջինն էր:

Լավ էր ապրում Պուխը Վինի
Քանզի աբեդին խմում էր գինի:

Ունեցել էր թույն ex-եր,
Նրանց հետ բազում սեքսեր,
Միգուցե եղե՞լ էր սեր՝
Համոզված չէր դեռ:

«Բայարսկի վեկալ, Բայարսկի»,- ասեց վաճառողուհին իր ծանոթին,
«Ես Բայարսկի եմ ուտում»,- ավելացրեց նա:
«Արի էս Գուսարսկին վեկալենք, էժան ա»,
Ասեց մի տղա մյուսին ապտեկում:
Ժիրիկ Սահակյանն էլ էր
Դրանից առնելու,
Բայց՝ ավելի թանգանոցը:
Ամոթից սպասեց,
Էդ տղեքը առան, գնացին,
Նոր ինքն էլ առավ, գնաց:

Մենք, որ արդեն ընդունել ենք,
Որ կրվել ենք,
Հիմա օգնում ենք նրանց
Ովքեր դեռ չեն ընդունել:
Օգնում ենք, որ չնդունեն:

- Մեծանալը գիտե՞ս ինչ ա, տղա ջան:
- Գիտեմ տատի ջան, լավ գիտեմ:

Ղազագրեր սիրո ոլորտներից

Բաղապատում

Ֆեդյա-փորձագետ

Հոսում էր Փորձագետը, Կորտասարի կողքով:

«Անհրաժեշտ է նույնականացնել ձեր ինքնությունը»,- ասեց «Իդրամ»-ը:

Էս վերջերս
Մեր մեծերից
Վինի Պուխի
Գենայի
Ու Մատրոսկինի հետ էի շփվում:
Ու նաև Չեբուրաշկայի
Ով կորցրել էր
Իր ինքնությունը:

Էս վերջերս վարկը փակեցի,
Սաղ փողերը գնացին
Համ վարկ չունեցա, համ փող:
Ջդաչի տվին երկու հատ Պետրոսյան
Ում պարտիաներով հիանում էինք ժամանակին:
«Անհաջող մարդ էր մեր Վարդանիչը»,
Օրերս ասեց մի շախմատիստ,
Ով ինձնից լավ գիտեր իմ իմացածը:
Ձեն չհանեցի
Քանի որ ես էլ
Քիչ էի հանդիպել լավ բաների
Ասված իր մասին:
Ու էլի հիանում էինք միայն պարտիաներով,
Լուռ ու ստիպված:

Կատարման աշխատանքների կատարում

«Ապեր վեկալ, չրի համար ընտիր ա, էս տարածքի ա, մեր Ռոզայի աղջանաբադն ա»,- ասեց ծիրան ծախող տղամարդը:

Դիասպորա և ձիասպորտ

Ծարքայինը շարքում

«Ծարվեք, որ շարժվենք»,
Գոռաց մայորը 2005-ին:

Կրոկոդիլ Ժենյա

Կրիայի քունը կամ չերեպաշկի նինջը

«Ապեր ես քեզ ասել եմ աղջանաբադ տու, դու վայրագ էս տվել»,- զայրացած ասեց մի ճաղատ մարդ, միրգ-բանջարեղենի խանութում:

Տանկապարտեզ

Աքաղաղապետարան

Լֆյան թմբուկ

- Կոնստանտին Օրուեյան, կոմպոզիտոր՝ ռետրոֆուտուրիստ:
- Միգուցե՞ անտիուտոպիստ:
- Թերևս հակագլոբալիստ:

«Յա աբաժայու կարտոշկու»,- ասեց մի երեխա ծնողին, փողոցում:

Բալկոնը փակեցինք
Տեղ չմնաց
Ծտերին կերակրելու:

Զըմե, Կյաժ, Յուրո, Չիբ, Վլե, Անբջիջ, Պալտազար, Ջաջուռ, Չախկալ, Պիդուլ, Տանգ, Բրատռ՝ հոպարի դրած ածականները: Իրենը Չիբ էր:

Քարքարոտ արոտներ

Եկան փոխելու
Բայց փոխարինեցին:

Հյուղաշեն գյուղակ

Ամեն անգամ «Պրոստոկվաշինոն» նայելիս
Կայծը հիշում էր մի անձնավորության՝
Ումից կարողացավ ծլկել
Փրայվըթ փարթիից հետո:
Նրան ուզում էր կատարել
Տելնյաշկով մի կին:
Բայց կին էր նա թե նավաստի՝
Տվյալ չկար հավաստի:
Վիրուսներ կային նրա վրա
Ըստ Նոդի ու Ավաստի:

Ժյուրմուղ
Ժյուրիների մատակարարման գրասենյակ

Կարոտը, կարոտը
Եվ Ֆրիդրիխ Պարրոտը
Դորպատի ճամփեքից
Այն քարքարոտը:

Կոմիվոյաժերի բահը

Կիլիմանջարոյի սյուները

- Ռեֆրենյանի «Կրկնուսույց»-ը ունե՞ք:
- Ու՞մ:
- Ռեֆրենյանի:
- Ի՞նչը, կներեք:
- «Կրկնուսույց»-ը:

Մի ճնճղուկ եկավ
Բերանում մորեխ:

Մորեխը և Մորպեխը

Սիդրոս

Նիսգիբաեմի գանդոն

Բյոթ

Գաստրոբայթեր
Մարդ, ով գնում է այլ երկիր աշխատել-ուտելու:

«Սեդրակիչ վիշըլ, Սեդրակիչ վիշըլ»,
Գոռաց շոու բիզնեսի մի ներկայացուցիչ՝
Փոքր ինչ քիչ այլ բառերով:

- Շնարդնաձեին հիշեք ինչ արեց, ժողովուրդ:
- Վանիկ չգնա՞նք:

- Չէ, բրատս, ուշով միայն:
- Անժե՞լ:
- Զարուհին սաղ նկարները դրե՞լ ա:
- Յով ջան, աշխատում է՞ս:
- Չե, հանին: Ասին չեթաս, կհանենք, ասի կեթամ, հանի:
- Ես էլ սաղ գիշեր հրապարակում եմ եղել Ֆրանսիայի:
- Անժել, բա դու աշխատում է՞ս:
- Հա:
- Դրա համար է՞ս վախում գաս ցույցի:
- Յանի ինչ հարց տվիր, «աշխըտը՞մ էս»:
- ....ս կերեք:
- Գնա քո .... .... ստրուկ:
- Եթե էդ լավ բան ա, մամայիդ տու թող ուտի:
- Տղեք ջան, գազ տվեք, մինչև հասնեմ, Հայաստանի տոմսը առել եմ, գալիս եմ իմ ներկայությամբ հայրենիքիս ազատությունը վերականգնեմ:
- Էնքան ենք միացել, վերջում հիասթափվել:
- Քանի տարեկան է՞ս արա:
- Վիժվածք:
- Գնա պատրաստվի, գամ տանեմ .... :
- Բլոկ արեք դրան ժողովուրդ, էլ չեք տենա:
- Էս ինչքան բոմժ կա էս ժամին զարթուն, արա:
- Գնա ....  .... :
- Ստեղ ըլնելով բան չեք փոխի:
- Հլը համարդ գրի:
- Հորդ խնկի ամանի մեջ էսքան տղեն .... անի:
- Էս ո՞ր փողոցն ա:
- Ֆրանսիայի հրապարակն ա:
- Ազգս անտեր, տունը ավիրված, գազանների երկրում:
- Տեր Մեր  Աստված, հրաշք գործիր այս կյանքում:

- Դուխով, բայց մտածված:
- Գալու ենք անպայման:
- ..... էս միտինգի մեջ:
- Կագեբեեշնիկ ..... :
- Վեցնոց:
- Ժողովուրդ պրավակատր ա:
- Մեկա .... անի սաղիդ վրեն .... :
- Արա, ցեղդ, մեր ու մանուկդ .... :
- Գնա .... ուտես:
- Արա էս ինչ .... տղա ա հայտնվել:
- Մի նկատեք ուղղակի:
- Ստեղ կանայք կան, խնդրում եմ մի քիչ զուսպ եղեք:
- Հաղթելու ենք:
- Պրոբլեմ ունե՞ս պայքարողի դեմ:
- Հայ աղջիկը տենց բան չի անի:
- Պողոս, անինքնասեր անասուն:
- Քա՞նի տարեկան էս:
- Ժողովուրդ, չեք տեսնում ֆեյք ա:
- Մի բուռ կարբիտ կեր, սատկի, ում .... էս պետք:
- Պողոսին դզել ա բիրիկով .... ուտելը:
- Արա էս .... տղեն ուրդուց եկավ:

Կարդում էինք քոմենթները, լայվ վիդեոյի տակի:
Մեր կոլեկտիվի անգիտակցականն էինք կարդում:
Հայաստանի Յութուբյան հանրապետության:
Մոռացել էի, 2018-ն ա թե՞ 2021-ը:
Տեքստից չհասկացա:

# ՉՖԻԼՏՐԱԾ
# ԿԱՐՄԻՐ

Աերոպորտի արտաավող զուգարանները:

Գյուղացիները պատրաստվում են մորթին ու մսեղենը ճամփեքին շարելուն:

Մի սև կատու էր նստած «Պեպսի»-ի բլոկերի վրա, մամուլի շենքի մոտ, արևոտ փետրվարին:

Շատ բան չեղավ, կոյուղաջուր շփեցին, փետրվարին,
Վարդազարյանը վատացավ Մարտին,
Քաղաքապետը շշնջաց. «Դեմը առ, դեմը առ, շուշուտ»:
Քաշքշուկ եղավ, Վասպուրակը չախեց,
Գոռը խառնվեց, բայց կոյուղին վերջը սարքեցին:

«Ինչի՞ ա Վարդան Մամիկոնյանը քշում Նժդեհի վրա, Նժդեհը խի՞ ա մեջքով կանգնած Արամ Մանուկյանին»,- հարցրեց Դավոն, չսպասելով պատասխանի:

Պապիս հորը Բերիայի հրամանով գյուլլին, իսկ նրա տղուն՝ Հիտլերի:

Ջակ Նորիսի «Աղինոկի վոլկ»-ն էինք սիրում ու Չելենտանոյի «Բլեֆ»-ը:

«Սև հաստ «Դավիդով» տվեք»,- ասեց մի աղջիկ «Սաս»-ի հերթում: Ու դրանով կարծես ինչ-որ կարևոր բան իմացանք նրա մասին:

13301594 սըրչ տալուց իմ անունը բերեց ՖԻԴԵ-ի սայթում:
«Լենինգրադ»-ի նոր կլիպի 1675143-րդ դիտողն էի:

Անծանոթ բարեկամի քելեխի խաշլամի պես համով,
Մեր հոգու հանրային տարածքների նման լքված:

Մի ֆիլմ էլ վերջացրի,
Մի քիչ էլ հանգստացա:

Յոգնել ենք խավարասերներից
Որոնց գտնում ենք ամեն առավոտ
Ռակվինի մեջ:

Կինոթատրոնից փախչողները
Կզած, արագ քայլող:

Երբ մարդիկ այնտեղ են
Դու ի՞նչ ես այստեղ անում:

Մենք ապրում ենք մի երկրում,
Ուր ԿԳԲ-ին ԱԱԾ են սկսել ասել:

Մենք,- որ խառնում ենք
Ագրեսիան՝ չարության հետ:

Փոքր գդալ էր գետնին գցած:
Մի քիչ անց կես վալետ, քյարփիինջի:

«Բարին թողած՝ պաշտվում է չարը»,
Յարցազրույցում ասեց Աշոտ Մանուչարը:

Քենիայում մահացավ հյուսիսային սպիտակ ռնգեղջյուրների ցեղի վերջին տղամարդը՝ Սուդանը:

2015-ին Բենոն ասեց
«Անցյալի համար չենք ափսոսում»,
2016-ին՝ «Ապագայից չենք վախենում»,
2017-ին ավելացրեց՝ «Ներկան ընդունում ենք»:
2018-ի սկզբին ես ասեցի՝
«Պետք ա հարգել ուրիշների երազանքները»,
Պատասխանեց. «Մի քիչ երկար ա ճշմարտության համար»:
Կոֆե խմեցի, ինքը՝ չայ:
Մեսչյանին հիշեցինք՝
Նրա երգերը մեզ փրկեցին
Քոչարյանի վախտերով,
Մովսիսյանին հիշեցինք՝
Ով հայտնվում է տարին մեկ
Ու նորից կորում միջմայրցամաքային նեյրոցանցերում:
Արհեստական ուղեպատնեշներից խոսեցինք,
Որոնք միևնույն է, ապահովության զգացում են տալիս
Տրամպից, Պուտինից ու Ձախ Հարութից խոսեցինք,
Ուֆիմցևից խոսեցինք
Ինչը չեն սիրում խաղալ
Հին հնդկական խաղացողները
Հիմնականում՝ անհասկանալի պատճառներով:
Օշոին հիշեցինք՝ Ռաջնիշ
Գիրիին հիշեցինք՝ Անիշ:
«Մի բան էլ»,
Ասեց Բենոն Բաղրամյան մետրոյի մոտ,
Ու առանց սպասելու ավելացրեց.
«Ծակ ամանը չի լցվում»:

Տնային բույսեր,
Որոնց վրա երբեք
Անձրև չի եկել:

Կվարտալի քամին սարսափելի ա դարձել,
Ճամփեքն են սարքում՝ նոր տրասը:
«Ֆայմ ու ֆասոն չունիք»,
Նայելով կանգնածներից մեկին
Յոգոց հանեց մանթաշցի տաքսիստը,
Ում հետ սպասում էինք
Եվս երեք հոգու,
Որ փախնեինք
Կվարտալի քամուց:

Ինչ որ մեկը օբեղժին էր խորովում,
Յոտը մի պահ եկավ ու անցավ:

«Ապե, ստե որդե հարմար ա, հարմարցրու»,
Ասեց մի հիասթափված տղամարդ
Ով կանգառից կանգառ ընթացքում
Ոչ մի կերպ չկարողացավ բացել
Լիքը գազելում կանգնած կնոջ պայուսակը:

Էն տարիքն ա
Որ էլի սկսում էս «Բիթլզ» լսել:

«Արա իմ Էմ-ադինը ոնց ծախեցի»,
Ափսոսանքով ասեց մի տղամարդ
Նար-Դոս վրա:

«Մի կեղտոտեք խնդրում եմ, մենք այստեղ սեքսով ենք զբաղվում»,
Գրված էր մի լքված շինության ներսում
Ոչ մեզ մոտ, ոչ մեր լեզվով:

Սաքագին

«Արա, դու չես պատկերացնում նոր դեմովս ինչ կյանք անցավ»,
Ասեց Կայծը վաթսափով,
Ում կյանքը Օդեսսա հաճախակի գնալուց հետո
Միայն նայելով չէր անցնում:

«Դու զապըդնիկ է՞ս»,- հարցրեց Յամոն,
Երբ միտինգների էի գնում 2015-ի դեկտեմբերին:
Նա քսան տարի Մոսկվայում էր ապրել, ու սիրում էր ռուսներին:
Յետո «թավշյա»-ն եղավ, Յամոն հուլիսին թռավ Գլենդել,
Երեք ամսից վատացավ, բայց լավ ա, փրկեցին
Սրտին ստենտ դրին բժիշկները հեռու երկրի, այն երկրի՝
Որտեղ մերոնք դեռ խոսում են Վազգենի վախտվա հայերենով:

Մի տաղանդավոր դաշնակահար
Դուրս եկավ Կասյանի «Բոսսինի»-ից:
Ձեռքին տոպրակ կար, հեռացավ արագ:
Դանդաղ քայլում էի
Կարդալով պատերի գրվածքները:
Տարօրինակ մտքեր էին
Սպիտակ կավիճով
Խամրած սովետական տուֆի վրա:
Դրանք կարծես տիտրեր լինեին,
Բայց՝ ուրիշ ֆիլմի:

*Ֆրանսիայում պոետները երբեք չեն մահանում:*
*(Էմմանուիլ Մակրոն)*

«Հիշում է՞ս, չեպե էինք արել, քնելուց առաջ մի կես ժամ ավել քայլեցինք պլացին՝ մենք ու մուզզվողը: Ցուրտ էր, վերջում ջազ էին նվագում: Եղել ա՝ թե՞ չէ»: «Չգիտեմ»,- գրեց Արմենը,- «Եղել ա թե՞ չէ, բայց հիշում եմ»:

Մի կատվաստակ տեսանք,
Նա թռչում էր ու մլավում:

Կյանքում կերպար ստեղծելը հեշտ ա:
Դու հլը փորձի կինոյում ստեղծես:

Մեր երկրում
Ուր մեծերը ուզում են փոքր երևալ
Կամ գոնե անտարիք:

Յ1-ի փոքր սուբտիտրերը Ֆրանկաֆոնիայի օրերին:
Կադրի տակ՝ սպիտակ, երկար գծի նմանվող:

«Մի մարդ ավելին արեց քան մի միլիոնը
Բայց էդ միլիոնը որ չլիներ
Ու՞մ համար կաներ»,- ասեց մի մարդ,
Տրոլեյբուսից իջնելիս:

- Ինձ չե՞ք հիշում:
- Ոչ:
- Ինչու՞:
- Չեմ ուզում:

«Ոբշմ, երկուհազար դոլլար ունենամ, ակկուրատնի կլցվեմ»,
Հավաստիացրեց մի երիտասարդ մյուսին,
Բարեկամության գետնանցում:

Նստած էր անսեր
Ու չուներ շանսեր:

Անիմաստ, ոնց որ exe-ն՝ Mac-ում,
Ու բանաձևի ընդունումը՝ ՄԱԿ-ում:

«Ես գոյություն չունեմ, համակերպվիր»,
Մի տառ ավել կարդացի
Գրաֆիտիի վրա:

«Ամեն տեղ հեղափոխություն է բացի արվեստից»,
Գրված էր հետհեղափոխական քաղաքի պատերին:

«Ապեր, Նժդեհը Հիտլերի մոտ, երբ ուզեր, մտնել հելնել ուներ»,
Ասել էր մեկը Էդոյին
Ռուսաստաններում:

Անձնականը հանրային դարձնելը
Հիշողությունից ազատվելու ձև ա
Այլ ոչ հայտնի դառնալու:

Հանրային զուգարանում
Նախորդ շռողը
Ծնեբեկ էր կերել:

«Հեզասահ» բառը օգտագործեց մի ընդդիմադիր գործիչ:

«Վարդանը դուք ե՞ք,
Կասե՞ք երբ եք ծնվել,
Չեչ նման չեք նկարին»,
Ասեց բանկի աշխատողը:

«Մարզերից շները գալիս են Երևան»,
Ասեց նախկին քաղաքապետը:

*Կոմպոզիտոր Իսահակ Շվարցը անընդհատ կրկնում էր,*
*որ արվեստի մեջ սրանից-նրանից մի բան թռցնելը դա*
*գողություն չէ, այլ «ոչ ամբողջովին հաղթահարված հիացմունք»:*
*(Սերգեյ Սոլովյով)*

Նոյեմբերյան ցուրտ օր էր,
Ավտոբուսը խփել էր կաթի ավտոյին:

Երեք ամիսը մեկ եմ
Մազերս խուզում
Քանզի այդ ընթացքում ինձ
Ոչինչ չի հուզում:

Չրի տախտակների վրայից
Դեռ եկող
Սալորի հոտը:

*Մեզ ծերացնում են քաղաքները:* («Հաուս ըֆ Քարդս»)

Մենք էնքան կորցրինք
Որ մի բան գտնելիս
Ամաչում ենք արդեն:

Երեկոյան խմած թեյի բաժակի մեջ
Նորից չորացած ուրցի մեղմ բույրը
Առավոտյան:

Կյանքումս առաջին անգամ
Աղբ թափող տերտեր տեսա:

ՅԱՊԿ-ի զորքից ղազախները
Առևտուր էին անում վերնիսաժից:

Թվում է արդեն, որ ճիշտ չէինք:

Մենք, որ ոչ մասնագետների հետ
Մասնագիտական հարցեր չէինք քննարկում,
Ու միգուցե՝ իզուր:

«Շնորհավորում եմ, ձեր զեղչը արդեն առավելագույնն ա,
ութ տոկոս ա մեր դեղատների ցանցում»,
Ասեց վաճառողուհին, ու ես չիմացա,
Ուրախանալ թե՞ տխրել:

«Ես այսօր սպասարկում եմ ազգի ու ժողովրդի ճաշակը, այլ ոչ թե սպառողի»,- ասեց Չալդրանյանը ռադիո-հարցազրույցում:

Սովետահայ երիտասարդ կինոգետներ,
Ծնված իննսունականներից հետո:

Կալբասները դոկտըրսկի
Էլ չեն ուրախացնում, սկի:

Սպամված աղավնին

*Վախեցիր այն մարդկանցից, ում համար իշխանությունը երազանք է, այլ ոչ խաղ: (Միխալկովը Դուծի մոտ)*

Լայվով՝ ուղիղ եթերում
Տեսանք Կարուանայի դեմքը
Անիուլյս
Նոյեմբերի 28-ին
հանձնվելուց մի քանի քայլ առաջ:
Կարլսենինը չտեսանք:

«Բանկերը լռություն են սիրում»,
Ասեց մի ֆինանսիստ:

Նստել ենք «Իկարուս» էլ,
Նաև կյանքի կարուսել:

Կանչել եմ «Ջիջի»,
Չենց հասնի՝ իջի:

Գիշերով պարզկա գալու եմ քեզ հյուր,
Դառնամ անկողումդ Ֆերդինանդ Սոսյուր:

«Փորձագետն էն մարդն ա, ով ունի փորձ»,
Արձագանքեց մեկը Չ1-ի թոք-շոուի ժամանակ:

«Ես ճիշտն ասած էդ դեպքի մասին տելեվիզրից իմացա»,
Ասաց մի կին տելեվիզրով:

Բրազիլական սերիալների դերասանները
Ավելի սիրուն են
Քան հայկական սերիալների դերասանները:
Նրանք նաև ավելի լավ են խոսում հայերեն,
Ֆ1-ով:

Տարիքով ղախպեքին փոխարինում են
Անտարիք ղախպեքը:

«Շաբաթօրյակը կշարունակվի կիրակի»,
Իրազեկեց մի նորանշանակ աշխույժ ղեկավար:

«Վաղուց ե՞ք սպասում»,
Հարցրեց մի կին կանգառում,
Առանց կոնկրետացնելու:

Ջիվելեգով ի վաստորգ

*Վերնիսաժում մարդիկ մեխանիզմներ էին գտնում իրար սփոփելու նեոլիբերալ համակարգի պայմաններում: Անվստահության մթնոլորտում կարևոր էր փոքր վստահության օջախների ստեղծումը: (Համլետ Մելքումյան)*

հակահիմնադիր

- Իսկ գիտե՞ք որ Սպիլբերգի դիոլը գողացել են:
- Բայց նա դիոլ չունի:
- Այո, էլ չունի:

Լեսբինկա

Վիբրաթոռ

Սորոս Ռոլին

- Ինձնից էս հարցում ի՞նչ ա կախված:
- Մենակ կլիրդ:

- Խի՞ էս տենց քայլում:
- Կծել ա:
- Բուսակեր չէ՞ր:

*Ես ձգտում եմ որ մարդիկ իմ նկարները նայելիս զգան, կարծես դուրս են եկել մաքուր օդի: (Մարտիրոս Սարյան)*

«Մարդկությանը առաջ ա մղում հետաքրքրասիրությունը»,- ասեց Նալբանդյանը:

- Քունողի կլիրն ա քաղցր, գիտե՞ս:
- Քաղցր չեմ սիրում:

«Տասնվեց իջնող կա՞»
Ջղային ձայնով հարցրեց
Գազելի տարիքով վարորդը:
Ոչ-ոք ձեն չհանեց, ես էլ ամաչեցի
Կարճ ճամփով գնաց
Տասնվեց չմտավ:

Ասում են, գորիսեցիները վախտին քաքել են
Սերո Խանզադյանի տուն-թանգարանի հիմքում:

- Գիտե՞ս որ բնության մեջ ամենաարագ աճող բանը կլիրն ա:
- Ես գիտեի մեր արտաքին պարտքն ա:

Նոր տարվա սեքսից
Բաստուրմի հոտ ա գալիս:

«Եկավ սովը, մեզ պահեց կովը»,
Ուրախ ասեց մի գյուղապետ Հ1-ով:

«Ֆորմ ու ֆասոն չունիք,
Ինչըխ խմորի գունդ:
Գործի տեղը գլուխներդ կախ,
Գործի տեղից հելնում եք,
Դառնում եք վունդերկինդ,
Միլիարդատեր»:
Ջղայնացավ նույն տաքսիստը
Կվարտալում, մեկ ուրիշ օր:

Պետական կառավարման մարմնի ղեկավար

«Դուք հիշեցնում եք Սանդրա Բալոքին»,
Ասացի ծանոթ անթրապալոգին:

*- Դուք ցինիկ եք, Հեմֆրի:*
*- Սովորաբար այդպես իդեալիստները անվանում են ռեալիստներին: («Յես, Մինիսթըր»)*

Հեղափոխության մասին.
Առաջ ասում էինք՝ կոխեմ ձեզ,
Հիմա ցավոք՝ կոխեմ մեզ:

«Շի իզ ինսաֆըրըբըլ վուման, հու էքսփլոդիդ մայ թրասթ»,
Խոսեց մի հայ տղամարդ մի ուրիշ հայ կնոջ մասին:

«Արա, ես էդ տղուն չեմ հարգում:
Գնում խալխի քաձին լակոտով պահըմ են,
Իրա հալալ արունը թողում են ստե:
Հետո գալիս ասում են
Կնիկը քունվել ա՝
Բաժանվում են:
Արա, ստե ըլնեիր
Կնգադ քունեիր,
Չթռնեիր,
Իրեք տարի
Ուրիշին էիր քունում՝
Ինքն էլ ա մարդ:
Գալի բաժանվում են
Ինչ ա կնիկը քունվել ա,
Բա ասա երեխեքդ հեչ
Կնիկդ մե՞ջ,
Արա դու ինչով էս մտածում»,
Ասեց մի տղամարդ կողքինին,
Երրորդի մասին:

«Հեսա կասեմ, էն դրսի ոստիկանը, քեզ կբռնի, կարմիր բերետով»,
Ձղայնացավ տատին թմբլիկ թոռան վրա, մետրոյի մոտ:
«Ազիզ ջան մի վախի, էդ Սերժի վախտով էր տենց»,
Մեջ մտավ կողքի թերթ վաճառողը:

*Այն հավատը, որ տեսախցիկը ունակ է տեսնելու ճշմարտությունը, եթե նրան չխանգարեն: (Ալեքսեյ Գուսև)*

«Ծառլ Ազնավուրը էն ֆրանսիացի տխուր հայն ա էլի»,- ասեց աշակերտ Նիկոլայը:

- Ապե, մետրոն ստե ա՞:
- Չա, բայց գնում գալիս ա:

Տեղ ենք գնում, գանք,
Դեղ ենք գնում, գանք:

Սիռոյ և համերաշխության մոնտաժ

«Փիքնիք»-ին «դաշտահանդես» ասեց Ռաֆֆին,
Իր աստեղային ժամից շատ հետո
Բախտամյանի հաղորդման ժամանակ:

Ապրենք օրենքի տառով
Չխառնենք տաքը սառով:

«Տրանսպորտի վիճակը էլի ահավոր է,
Ի՞նչ են մտածում ոլորտի պատասխանատուները»,
Ասեց մի ջահել ձայն, ռադիոյով, լիքը «Գազել»-ի մեջ:

Անցք, հորատանցք, ջրհոր:
Որտե՞ղ ես, ջրվոր:

Պարզկին մեզ փարթամ ար,
Քուկները կենարար:

Գեյերի դեմ երթը՝
Դեմներս կտրեց:

*Ինչպիսի ֆիլմ եք ուզում նկարել, պատմողական թե՞ պոետիկ:*
*Սա է գլխավորը, որ պետք է որոշեք ձեզ համար:*
*(Կլոդ Շաբրոլ)*

«Իրականությունը անընդհատ փախչում է
և պետք է կառչել ապագայից»,
Ասաց ճաղատ ու խնամքով թրաշված մի գործիչ
Տեղային նորմայից երկար բակերով
Ազատության հրապարակում
Երեկոյան սպոնտան հավաքին:

Դուրս գնաց մի ծանոթ, ջահել գիտնական,
Նա հոգնել էր փողի մասին մտածելուց
Ու ֆեյսբուքում քաղաքականությամբ զբաղվելուց:
Հիմա ուսումնասիրում է նեյտրինո ու քվարկ,
Այլ ոչ փակում վարկ:

«Մենք ջրի քաղաքն ենք,
Բաքուն էլ կրակի,
Շարունակությունը չասեմ»
Ասեց քաղաքապետը
Նորընտիր:

«Պետք է գույքագրել կարիքները»,- ասաց մի կին Հ1-ի թոք-շոուի ժամանակ:

«Էս համարը հեռու չի գնում, չէ՞»,
Հարցրեց մի սփյուռքահայ:
«Իհարկե ոչ, նստիր բարեկամս»,
Պատասխանեց երկար բակերով մի պապի:

«Քամու բերած ձրի հարդը չեմ ուզում»,
Երգում էին վինչեստրի թաղման ժամանակ:

«Նետ կարտի պամյածի»,
Գրված էր դեղինով, սևի վրա,
Փոքր ռեգիստրատորի էկրանին:
Մեքենաներն անցնում էին
Ու կորում անհետ:
«Էնգելս-Պակրովսկ»,
Ռուսերենով գրված էր
Կողքից անցնող
«Գազել»-ի վրա:
«Պերմանենտ ավելացնում ենք բյուջեի բեռը»,
Լսվեց մի ընդդիմադրի ձայն ռադիոյից:
«Չեմ զսպվում»,
Դրոշմված էր տուֆից պատին:

«Փոխիր կյանքդ» գիրքն էր անընդհատ փորձում կարդալ
Հիվանդանոցի ռեգիստրատուրայի աղջիկներից մեկը:
Հիվանդները շատ էին
Կես ժամ էր
Չէր կարողանում թերթել էջը:

«Գազի մեջ օդի առկայությունը միֆ է»,
Տեղեկացրեց «Գազպրոմ-Արմենիա»-ն:

- Ինչու՞ թողեցիր ծխելը:
- Ուզում էի երեխա ունենալ:
- Գեղեցիկ է:

«Յա ժենա Բետմենա, յա ժենա Բետմենա»,
Գոռում էր մի շեկ երեխա փողոցում:

Սումկան, մի կին տվեց մյուսին որ բռնի, մարշուտկում:
Հետո մի բան էր մեջը երկար ման գալիս,
Ոնց որ օրգազմի հասցներ նստածին:

*Հավատում եմ ես ծեզ թե ոչ, դա չէ խնդիրը: Խնդիրը այն է, թե՞ արդյոք հավատում եք դուք՝ ինքներդ ծեզ:*
*(Չոլթան Ֆաբրի, «Հինգերորդ կնիքը»)*

«Cos the trains don’t going anymore»,- լավ ալտերնատիվ վերնագիր էր «Իմպուլս»-ի համար:

- Ազգը խի՞ չի ավելանում:
- Գանդոն շատ կա:

Կրկին՝ քցին Քրքին:
Քոչարյանի վախտվա ֆրազ կարար լիներ:

Մեկը «Զվարթնոց»-ում սպասում էր՝
«Արդարություն» ու «Հույս» թղթերով:

«Սասունցի Դավիթ»-ի վրա երկրորդ անգամ բարձրացած մարդը, փրկարարներին կարար ասեր. «Նորից եմ ասում, ներքևում ես ինձ պաշտպանված չեմ զգում»:

Դատարկ հարդով, թանկանոց վիդեոքարտով
Լռված էր Կայծը տանը, բիթքոինի դարդով:

«Ապե, մեր ջուրը ուրիշ ա, մեր ջրի համար արժի ստե մնալ:
Մոսկվա որ շշով է առնում խմում, էդ ինչ ջուր»,- սկսեց մեկը:
«Ես Ցխինվալ եմ ծառայել, ընդեղի ջուրը վատը չէր»,- շարունակեց մյուսը:
«Հա դե Պյատիգորսկ, Մինվոդ ընդեերքինը հա, Բայց Մոսկվայինը խմելու բան չի»,- պնդեց առաջինը:
«Բայց Մոսկվա կալոդեցներ կան, էդ կալոդեցի ջուրը վատը չէր»,- չհանձնվեց երկրորդը:
«Ես Կրիվոյ Ռոգ եմ խմել, նեխած ձվի համ էր գալիս»,- միացավ նոր եկածը ու երեքով մի պահ բերանները ջուր առան, նստած այգու նստարանին:

«Նավաստրոյկում տուն առա, Ստավրապոլ,
Դրանց դեմը տատիները չեն նստում»,
Պատմեց թամադա Պավլիկը Պյատիգորսկում:

- Վիզս ծռվել ա:
- Քո վիզը միշտ էլ ծուռ ա եղել:

Մարդու մահը որպես թայմլայն լցնելու առիթ:

«Խի՞ մենք սխալ կքունեինք»,
Ասեց Կայծը ընթացքում:

Պարուչիկ Լուկաշը ու Ջեյմս Ֆրանկոն:
Նարեկ Դուրյանը կարար Շվեյկ խաղար, տարիքով:

*Բոլորը էդ ղախպին սիրում են, չգիտեմ խի, բայց սիրում են:*
*(«Դը թիիք ըֆ իթ»)*

«Դու մեղավոր չես, դիմացի, բալես»,
Ասեց լիքը շոր հագած մի կին
Լցված մարշուտկում:
«Ըտե ծյու՞ն եկել ա, Մոսկվա,
Սևո ջան, տաք սապոգ ունե՞ս»:
Սպասեցինք, մինչև Սևոն պատասխանի:
«Շեֆիդ ասա թող մի երկու կոպեկ տա, ռուս ա չէ՞»,
Շարունակեց տարիքով կինը.
«Ամսվա վե՞րջ, տենց չեղավ,
չե՞ք կարում բողոքեք, ռոճիկը քարտով չտան:
Լավ հասկացա, Սևո ջան, հետո կզանգես»,
Պատասխանեց ու անջատեց կինը:
Հետո պտտվելով, բողոքեց կողքի անծանոթ տղամարդուն.
«Ինչքան էլ դանդաղ ա էսի գնում»:

Հայկական ժամանակի մեքենա, որը գազով ա աշխատում,
ռուսական գազով:

*Մեզ մոտ, ցավոք, շատ է զարգացած մահացած հանճարների միջոցով կենդանի մարդկանց առաջ մղելու ինստիտուտը:*
*(Ալեքսեյ Գերման-կրտսեր)*

Էն մարդը, որ ժամանակին ասեց,
«Հայաստանի Հանրապետությունը՝
Անկախ պետություն»,
Ավտոբուսի մեջ հարյուր դրամը տվեց ինձ ,
Ասեց «փոխանցեք», փոխանցեցի
Ասեց «շնորհակալություն», ասեցի «չարժե»,
Իջավ Բաղրամյանի վրա, քայլեց մտամոլոր:

«Բայց դու լավ շուտկեք ունես, ձյաձ»,
Ասեց աշակերտներից մեկը:

- Էս կինոն հետո կարա՞նք հետ տանք, նայենք:
- Կարանք նայենք, հետո հետ տանք:

Չեսս կետ քոմում խաղացի, հաղթեցի, պարտվեցի, ջնջվեցի:
Քանզի կրվելը տհաճ էր, իսկ հաղթելը՝ ոչ նույնչափ հաճելի:

Ողջույն ապագա հանգուցյալներին

«Եվ այդ էներժին, ոնց որ կասեր Չարենցը,
որ տալիս ես օղուն ու կանանց, տուր ազգիդ»,- ասացի Կայծին:
«Սիքտիր եղի»,- պատասխանեց Կայծը:

Հայացած ռուսներ, ռսացած հայերի հետ պսակված:

*Իմ գիրքը այն մասին չէր, որ Ռոուշենբերգը կամ Պոլակը վատ նկարիչներ են: Գիրքը այն մասին էր, որ այն որոշումը, թե որ նկարիչն է լավը, կայացնում են երեք հազար մարդ, ովքեր ապրում են Նյու-Յորքում: (Թոմ Վուլֆ, գրող)*

Պյատիգորսկից դեպի Ինոզեմցովո տրասին
Երկու կին էին կանգնած
Ցածր սոցիալական պատասխանատվությամբ:
Երբ ետ էինք գալիս
Նրանք էլի կանգնած էին
Չիմացանք
Մի բան եղավ հետները էդ երկու ժամում, թե չէ:
«Կրասավչիկ բրատ, քեզ ասե՞լ եմ չէ,

Որ դու դիոլչի Էֆոյին ես նման» ֆրազը լսեցի էդ ընթացքում,
Լավ մարդկանց, ընտանիքի, հայության, ազգի
Կենացները լսեցինք մենք էդ երկու ժամում:
Կերուխումները, մշտապես հղի կանանց ընկերակցությամբ,
Որոնց երեխաները ծնվում են ռուսերենի պարտադիր
իմացությամբ:

«Փեդի սվարկի էլեկտրոդ կա՞ մոտդ»,
Ասեց Նվերիկին ծյած Սուրիկը,
Ու աչքով արեց ինձ:
Նա ձմեռը տաք նասկիներով
Ու հետևը կտրած գալոշներով էր գործ անում:
Սուրիկը ծնվել էր Ջամխորում
Ու երբեք չէր եղել ՀՀ-ում:

*Թևեր չունեմ,*
*Կյանքին հյուր եմ*
*Մի լքեք ինձ կռունկներ*
*Սեր եմ կորցրել*
*Վերքս խորն է, յար:*
*(Ժողովրդական ռաբիզ)*

- Ձեզ հիշեցի, դուք էն սովետական ժամանակների
  մասին սերիալում Նարկոման էիք խաղում:
- Նարկոմ:

Մահացածների պրոֆիլները շարունակում են շփվել իրար հետ:

«Del էս անում որ հետո  boot-ը դնես  DVD-ից, էլ ո՞նց ասեմ»,-
շպրտեց Կայծը ջղայնացած:

Ուղերձներ N աշխարհից

«Ես տեսել եմ ամեն ինչ»,- ասաց վաթսունամյա Շերոն Սթոունը:
Իսկ մենք մնացածը ու նաև «Լուսավոր Հայաստան»-ի
գաղափարների փաթեթը:

Սարդարապատում,
Մայիսի քսանութին,
Պսակների առաջ կանգնած
Փաշինյանն ու Բաքո Սահակյանը խոնարհվեցին,
Նախագահը խաչակնքեց,
Կաթողիկոսը մնաց լռված:

Կոճապղպեղ և խեժապահպանակ

Մեր օրերը
Որ բնութագրվում են
Ճիշտ խոսքեր ասող
Պաղլեցներով:

*Լուրջ բաներ իհարկե կան, բայց բանը նրանումն է, որ լուրջ բաները էլ չեն աշխատում: (Ալեքսանդր Նազրով)*

Պցցիկատո

Կետչուպները «Ասիլի»,
Բերում էր մեզ Վասիլին:

Էս օրվա քաքը նման էր «Ր» տառին:
Րաֆֆի, րոպե, քաք:

Հիշում եմ, ծառատունկ էր,
Նախագահը՝
Լրագրողների ու ոռ մտնողների
Ուղեկցությամբ՝
Մոտեցավ լրիվ նոր բահին,
Լրիվ նոր դույլի մեջ սիմվոլիկ ջուր էր լցված,
Այն բռնել էր պահեստային թիկնապահը,
Փոքր փոսի մոտ շոր էր փռած,
Որ ոտքերը չկեղտոտի նա,
Ում ձեռքերը վաղուց էին կեղտոտ,
Ով սիրում էր դանդաղ շտապել
Ստերիլ թաղումներից,
Ու անշտապ դոնդողվել
Ճոխ հարսանիքներին:

*Իրականությունը չի կարող լինել վատը, կա այն ինչ կա, եթե մենք մանկամիտ չենք: (Մերաբ Մամարդաշվիլի)*

Գրպանումս փող կար
Բայց առավոտը այնտեղից
Խավարասեր դուրս եկավ:

Չգրված ռեցենզիաները չնկարված ֆիլմերի մասին:

Էլի սկսվեց «Ծիրանը»,
Հիշեցի, որ մոռացել ենք
«Ափրիքոթ սթոուն»-ը ու «Երկիր Ծիրանին»,
Որի ղեկավարը գրավեց Կարսն ու Անին
Սակայն չհասավ Երևանին:

Ֆ1-ով Ալմադովարին Պաբլո ասեցին:

«Մի անգամ, պլացին,
Մեր կամանդիրը, Ջամբոն
Ֆանել տվեց, հավաքեց ու թումբ սարքեց
Խեբեի տակից հագած բրդյա ու ոչ բրդյա
Ժիլետներից, եղել ա չէ՞»,- գրեցի վաթսափով:
«Հա, էդքանը ես էլ եմ հիշում,
Բայց չեմ հիշում որ վառած լինի»,- գրեց Արմենը:

*Վիշեգրադի ժայռի մոտ*
*Մի աղջիկ տեսա*
*Ես վազեցի, վազեցի*
*Նրան չհասա:*
*(Յոզեֆ Ասատրյան)*

«Վերջում միշտ լավ ա լինում, Վարդան ջան, երբ որ իջացնում են պարանները, վերևինը միշտ գոռում ա «լավ ա»»,- վաթսուներորդ անգամ ասեց հարևանը, ով անընդհատ մեռնում էր՝ իր ասելով:

«Աբստրակտի դեպքում դրաման կորում ա»,
Ասեց չեմ հիշում ով, չեմ հիշում որտեղ, երբ:

- Խի՞ են արձանների բաները փոքր:
- Դու էլ էդքան արևի տակ կանգնես, քոնն էլ կփոքրանա: Չնայած, վերջերս ոնց-որ սկսել ես կանգնել:

*Խղճի բացակայությունը սահմանափակում է ձեր երևակայությունը:*
*Ձեզ թվում է թե որ բոլորը ձեզ պես են մտածում:*
*(Լեյտենանտ Կոլոմբո)*

- Խի՞ պսակվեց, ապրում էին էլի:
- Ապե, էլ ձև չուներ:
- Արա Սերժը ձև չուներ ԵԱՏՄ չմտնելու, մնացած ամեն ինչին ձև կա:

Կարոլին, Կարոլին
Ցզով չախիր կառոլին:

Արձանի ֆոտոն
Միշտ մտքներումս էր,
Բայց չէր հերիքում:
Վերջերս
Առաջին անգամ
Տեսանք արձանը:
Ու ֆոտոն սկսեց հերիքել:

«Կերան արա, Խաչատուր Աբովյանից բռնած Վազգենով պրծած սաղի գլուխը կերան, քունեմ սրանց լավի բերանը»,- ասեց մի պապի, լցված:

Մեր ֆիլմերը պետք ա հեռվից նայել
Որ նիֆոկուսը չերևա:

- Ես քեզ մինչև կյանքիս վերջ պարտք եմ:
- Ուզում էս ասես էն իրեքհարյուր դոլլարը էլ չե՞ս տալու:

- Էս երկրում:
- Էս չէ, «մեր» երկրում:
- Կներես, ձեր երկրում:

Մի ճանճ թռավ գազելում
Նստեց մի տղու բանին
Տղեն քշեց, ճանճը թռավ,
Նստեց կողքինի դեմքին:

Քիմիական գործարանների անվնաս ծուխը:

Կադրի խորությունը,
Երջանկության ինտոնացիան,
Ու մատերիալը՝
Մի կողմ դրած,
Արդեն մոնտաժված ֆիլմի:

*«Նայեք հարևան նեգատիվները», ինձ ասեց Կարտիե-Բրեսսոնը:*
*Միգուցե նրանք փոխվել են՝ քանի որ փոխվել եք դուք:*
*(Յուրի Ռոստ)*

«Եթե դու նորմալ մարդ էս, ինչքան փողով ուզում ա ընդեղից գաս, երկու-երեք ամիս հետո պրծնելու ա՝ շրջապատը քյասիբ ա: Պիտի գաս, սաղի պես ապրես»,- ասեց Չոպարը, ով երկուհազարականների ամենասկզբում Մոսկվայից հետ եկավ ու սկսեց ապրել սաղի պես:

Պապս սիրում էր «Այաքս»-ին ու հատկապես Ռոնալդ Կումանին:

«Էս ինչ էս լսըմ, չլնի՞ սիրահարվել էս, Սերոժ»,
Ասեց մի տաքսիստը մյուսին:
«Դիսկոյա էսի, սիրահարվելս ո՞րն ա»,- դժգոհեց Սերոժը,
Ու տեսնելով արդեն նստող կլիենտին,
Տաքսու զնակը կրիշից վերցրեց, դրեց ավտոյի մեջ:

Ձեռս քոր եկավ
Հետո ձեռքերս քոր եկան
«Ուրեմն համ փող ա գալու, համ էլ գնա»,- մտածեցի:
Ոչ եկավ, ոչ գնաց:

*Մեր ժամանակներում ուրիշի անձի հանդեպ բռնությունը, որը մենք տեսնում ենք յութուբում, դարձել է անձնական հարմարավետություն մի մասը: (Յուրի Արաբով)*

«Սգո սրահ չեմ ընդունում, էդքան պահել մեծացրել եմ, թող մի գիշեր էլ մեռնելուց կողքս նստեն»,- ասեց մեզ գերեզմաններ տարած տարիքով տաքսիստը, ետ գալու ճանապարհին:

Վատություն չարինք
Բայց վատամարդ դառանք:

Սերիալը կինո չի դառնում:
Նրա հիմքում ընկած չի
Կերպարվեստը
Ու պատմությունը կինոյի:

Անկումների սթարթափից

Էս վերջերս Հարվի Վայնշթեյնին կատարելուց բացի
Նաև Հարրի Վայնշտեյնին կատարեցին,
Սենթ-Լուիսի մրցաշարում,
Ով վաղուց սակայն Վայնշտեյն չէր արդեն:
Նրա մայրը Բոտվիննիկի խորհրդով
70-ականներին երեխայի ազգանունը փոխեց
Հետո կարիերան ստացվեց

Իսկ կյանքը՝ ո՞վ գիտե:
2005-ին շախմատը թարգելուց հետո
Ջաhելների հետ մեկ մեկ բոյեր է կազմակերպում
Որոնց ընթացքում կյանքը նրան շշնջում է նույնը
Անշրջելի կայունությամբ ու դառնաբար.
«Դու լրիվ ոնց որ խառնում ես սաղ»:

*-Չգիտեմ,- պատասխանեց Շվեյկը բարեհոգաբար ժպտալով:*
*Ես ոչինչ չգիտեմ: Երևի ճակատիս այդպես է գրված:*
*(Յարոսլավ Հաշեկ)*

Մի կին գիտեի յոբնուտի
Ուզում էր մեր յոբն ուտի:

- Ես կորցնելու բան չունեմ:
- Դե ուրեմն կգանք էն ժամանակ, երբ որ կունենաս: Վռազ չենք:

Հիվանդանոցների կեղտոտ ստերիլությունը:

Ու ինչ հասկացանք: Ոչ մի խեռս:

Չմոռանալ, որ սցենարում գործողությունը գրվում է միայն ներկա ժամանակում:

Մեր երկրում
Որտեղ ռեպորտաժին
Ֆիլմ են ասում:

Ժողովում ազգային, պատահմամբ տեսանք Գային
Հարցրեց մեզ «Տղերքը երեկ չպտի՞ գային»:

Եկեղեցում
Հալված մոմերը
Ավազաջրից
Ձեռքով հավաքող
Կանանց նման
Հավաքում են անցյալը
Արդեն չջերմացնող
Ու թքում հեռանում են
ԱՄՆ, Եվրոպա, Կանադա
Լավ կյանքի ձգտող
Նախկին ու ներկա
Ընդդիմադիրները:

Ֆեմալե պրոֆիլը ձեր

Պոպոքն ու սերկևիլը ասոցացվում են տատիի հետ:

Մենք ենք տերը ձեր երկրի:

*Ժամանակը տարօրինակ բան է: Երբ նրա մեջ ապրում ես, չես զգում այն որպես ոճ: Հետո անցնում է, ու սկսում ես զգալ:*
*(Ռուստամ Խամդամով)*

Հախվերդյանին տեսանք
Ու հիշեցինք
Որ սարսափելին
Ուրիշների հիշողության էր
Որը մենք թերթում էինք
Փեյջ առ փեյջ:

«Քույրիկ ջան Դեռ մի կանգառ կա, նստի հանգիստ»,- առաջարկեց վարորդը:
«Ոչինչ, կկանգնեմ»,- անտարբեր պատասխանեց քույրիկը:
«Խեռիս կանգնես»,- ասեց վարորդը շատ կամաց:

«Ուսլուգ չե՞ս, արա»,
Արագ անցավ կողքներովս
Կողքի մեքենայում ասված
Ու անորոշ ուղղությամբ
Սլացող մի ֆրազ:
«Չզորությունը պլավնիության համար ա, ոչ թե գազ տալու»,
Արձագանքեց բարակ սիգարետը նոր կպցրած  տաքսիստը,
Մեկնաբանելով աբգոն արածի գործողությունը քիչ անց:

«Արա, ասա այ խեռիս գլուխ, հազար դրամով
երկու բանվոր ո՞նց պերերիվ անեն»,
Ասեց սպարտիվկով մեկը սպարտիվկով մյուսին:
Նրանք մի քանի պեռաշկի էին առել,
Թան ու անորոշ գույնի լիմոնադ:

«Դու մտածել ես թե ինչու՞մն ա էս աշխարհի դժբախտությունների պատճառը»,- հարցրեց միջին տարիքի կինը, ոչ երիտասարդ մի տղայի, կանգառում:
«Մարդը տարօրինակ բան ա, միշտ վերադառնում ա, չգիտեմ խի, վաբշե չեմ հասկանում խի, ու քաքվում ա, փլվում ա սաղ»,- պատասխանեց տղան:
Կինը նայեց ներքև, գլխով արեց, հետո նայեց այն ուղղությամբ, որտեղից էս կողմերում գալիս էին ավտոբուսները:

*Դե Սիկան, Ջերմին, Ռոսսելինին երբեք, ոչ մի կադրում չէին մոռանում, որ մի մարդու մասին պատմությունը ըստ էության ոչնչով նախընտրելի չէ ցանկացած մյուսի մասին պատմությունից:*
*(Ալեքսեյ Գուսև)*

«Գժվել էս լրիվ, կաչաղակ»,- ասեց տաքսիստը հեռախոսով. «Չայեվոյը հետը երկու հազար հինգ հարյուր տվեցի, քո խմած գարյաչի շակալադը հազար երկու հարյուր հիսուն, իմ կոֆեն ութ հարյուր»:

*Թվում է թե կամուրջը երկրորդ անգամ է կառուցվում, արդեն մեր աչքի առաջ: Չնայած որ այն արդեն կա, գոյություն ունի: Սա ինձ բերեց այն մտքին, որ վավերագրական կինոն չի ներկայացնում ճշմարտությունը: Այն ներկայացնում է իրականությունը՝ առաջին անգամ:*
*(Յարթմուտ Բիտոմսկին՝ Յորիս Իվենսի «Կամուրջ» ֆիլմի մասին)*

«Ոչ մեկը չի տեսնում իրականութունը, ֆիլմ ա պետք որ տեսնի»,- ասել էր Կրակաուերը: «Չի ստացվում ամեն անգամ դիպչել իրերի էությանը»,- շարունակել էր Դոմինիկ Գրաֆը, տասնամյակներ հետո:

«Սիրուն ջան, ժետոն չմնաց որ քեզ լավություն անենք»,
Գոռացել էր լավ խմած Կայծը միակ հայ պարուհուն:
Աղջիկը մոտեցել էր ու ականջին ասել.
«Առաջինը ժետոն չի, կուպոն ա,
Երկրորդը՝ դու ինձ լավություն չես անում,
քո հաճույքի համար էս անում,
Երրորդն էլ՝ Աստված քո հետ»:

*Միրաժի նման փարվում է հոգուս*
*Անէ աշխարհի քնքշությունը հին:*
*(Եղիշե Չարենց)*

- Աղաբաբովը կա՞:
- Չէ:
- Դովլաթյանը ընդեղ խաղում էր, չէ՞:
- Հա:
- Ֆիլմում մահանում ա՞:
- Բոլորն են մահանում:

- Բառակուդա՞:
- Տառակա՞ն:

«Մի ժամանակ ծխում էի որ քաքս գա,
Հիմա հենց քաքս գալիս ա, ծխել եմ ուզում»
Ասեց մեկը չաստի զուգարանի մոտ,
Ու պտտվելով շտապեցրեց կողքինին.
«Հերիք ա քաշես, կեսից անցար, տուն մտնեմ, քաքեմ»:

Գազարան ու Ֆալկը
«Հասբընդսի» կատաֆալկը:

Մենք որ ներքևից իջել ենք վերև,
Ու A2-ից B4 գնացել ենք
Ոչ միայն գազելով
Այլև՝ ձիով:

*Յուզում ա երբ մի մարդու մասին էս նկարում: Մարդկանց խմբի մասին ֆիլմը կարա շատ հետաքրքիր լինի, բայց չի հուզի: Դրա համար Տարանտինոն ու Բունյուելը մեծ են, բայց չեն հուզում: (Արմեն Դովլաթյան)*

Իջնում էր Սթենլին Ավանից Առինջ,
Ձեռքին՝ լարովի նարինջ:

«Դրամատիկը թռնելը չի, դրամատիկը էն պահն ա
երբ մարդը կանգնած ա պատուհանին»,- կարար ասեր Դրամատիկի մի դերասան, բայց ասեց Քշիշտոֆ Զանուսին:

Մի մատիտ տեսանք հաստ
Մեծականջներով պրարաբի համար:

Ուշ հասած էսեմեսի նման:

Վատ ֆիլմերն էլ են հուզում:
Քանզի վատ ֆիլմերը նայելիս
Յիշում էս լավերը ու նորից հուզվում էս:

*Յայերը մեծ պրոբլեմ ունեն ազնվության հետ, դրանից գալիս է որ պրոբլեմ ունեն վստահության հետ ու ներքին պրոբլեմներ ունեն իրենք իրենց հետ: (Մեթ Բարթելյան, «Չակերտներ» հաղորդման մեջ)*

Յայ ռեժիսորների մի շարք ֆիլմերում կադրում չկա տրամադրություն, քանի որ տրամադրությունը նկարահանման պահին եղել է կադրից դուրս, ինչն էլ իր հերթին ապահովվել է օղու միջոցով:

Ակվադեմիա
Ջրային գիտությունների ակադեմիա

Իմ սպիրտը լեռներում է

Սաշա Գրեյը ասում էր, որ Էյջդին սպանում ա ատմասֆերան:
Ռեգկըսծը սպանում ա պոեզիան:

Մենք, որ միշտ չէ որ հարգում ենք դիմացինի կարծիքը:

Մենք որ ժամանակից ետ չենք մնացել,
Այլ ժամանակն ա մեզնից անցել:

Հայրենիք, որը էլ կինո չի,
Քանզի կրկեսի են վերածել:

Ըստուց, ընդուց՝ ընգանք «Դուց»:
Քաչալ էինք, նիհար
Ու չէինք տեսել պուց:

- Դե ապրում ենք էլի տատ, ինչ անպայման ա ինչ-որ որոշակիություն կյանքի մեջ, ապրում ենք էլի:
- Ապրի, բայց վերացական ձևով ապրել էլ կա,
լուրջ ձևով ապրել էլ կա: Մարդը հասարակական կենդանի է:

Երբ գիշերը չքնող մարդիկ
Չեն քնում նաև ցերեկը:

«Բարև, ես եմ»-ը,
Քո կյանքի քո չտեսած պատմությունը:

Նմանվել ենք բաժակի
Որով միայն ջուր են խմում:
Դա տհաճ է
Լողանալուց հետո
Նույն շորերը հագնելու նման:
Մարդու մեռնել ա գալիս,
Բայց թարսի պես՝ ապրելն էլ:

Գնա մեռի, արի
Միգուցե դա է բարին:
Գնա մեռի, մի արի:

«Ապե, ես լավ մարդ չեմ, ոչ թե վատ մարդ եմ,
այլ լավ մարդ չեմ, էլի»,- ասեց Կայծը:

*- Իսկ դուք հավատում ե՞ք այս հեքիաթներին:*
*- Բա ի՞նչ անենք:*
*(Առնոլդ Աղաբաբով, «Գառնի»)*

Ռ.Գ.

Երբ ուզում էի հասկանալ, թե ինչով եմ զբաղված եղել վերջին տարիներին՝ ապրելուց բացի կամ ապրելու փոխարեն, սկսեցի կարդալ բոլոր բլոկնոտները, որոնց մեջ ինչ-որ բաներ էի գրել՝ լսածից, մտածածից, կարդացածից, կարևորածից ու անկարևորից: Կարդալու ընթացքում էլի չհասկացա, թե ինչպես մոնտաժել իրար հետ այդ բոլորն ու որոշեցի ուղղակի արտագրել իրար հետևից՝ ըստ տարիների, տարբեր գույների նոթատետրերում: Արանքների դատարկը մնաց նույն չափի, տարիներ հետո կարևորն ու անկարևորը նույն էին դառել: Ընթացքում այլ գաղափարներ չեկան, բայց պրոցեսը կլանեց, զգացողություն եղավ, որ ֆորման հենց սա պետք է լինի: Հետո էդ արտագրածը արտագրեցի նորից՝ այս անգամ  «Գուգլ դոկ»-ում: Ուոլտեր Մերչը ասում էր, որ լավագույն դեպքում վերջնական մոնտաժից հետո արժի նորից նայել ողջ նյութը, բայց ես անգամ էլ դա չարեցի: Արտագրելը սկսել էի 2023-ի օգոստոսի վերջին, զուգահեռ գրվում էին ինչ-որ բաներ:

Որոշել էի ավարտել 2024-ի փետրվարի 1-ին, վերջին օրը, երբ դեռ երեսունինն էի: Վերջացնելուց հետո արդեն, ինչքան մնում էր, էնքան ավելի շատ էի դզմզում, էնքան ավելի շատ էի ամաչում գրածների համար, էնքան ավելի շատ բան էի ֆիլտրում չֆիլտրածից, ջնջում՝ չջնջածից: Ու որոշեցի թողնել մի պահ, որ վերջապես ազատվել լինի էդ բեռից: «Դոկումենտալ պոեզիա»-ն՝ գրված 2012-2017 թվերին, հիմա ընկալում եմ որպես կարճամետրաժ ֆիլմերի շարք: Յոթ տարի ֆիլմ չնկարած ռեժիսորի համար «Չֆիլտրած»-ը կարծես լիամետրաժ լինի: